



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2531-2533

1292

491.99-5

9-34

y-3 w 9

75

2010

2002


491.99-5 Ն Ո Ր

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՅՕՐԻՆԵԱՑ

Ա. Ա. ՍՈՒՐԷՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1874

17071

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ



11730-17



Ն Ո Ր

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԿԱՆ

Faint text and markings on the right page, including a small red star.



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԼՈՐԳԱՅ Գ. Ի

ՎԵՀ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏԻՎԱՐԲՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱԿԻՄՅԱՑ

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ

Սրբազան Արքեպիսկոպոսի

Ե Ի

Ի ՊԱՏԻՎԱՐԲՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՑ

Տ. Տ. ՆԵՐՍԻՍԻ

Սրբազան Արքեպիսկոպոսի

չ'էին ազգային բոլոր վարժարանաց մէջ առ հասարակ բնդունելի բնել թալու լեզուի օրինաց ուսուցման գործնական ուղղութիւնը. միւս կողմէն ալ, ժամանակիս ոգւոյն պահանջման համաձայն հարկ էր որ ուսանողք իրենց դպրոցական կեանքը միմիայն Հայերէն լեզուի ուսման վրայ չը կեդրոնացնէին. Բանգի, մինչեւ իսկ նախակրթական վարժարանաց ծրագիրներն ալ եւ այլ ուսմանց եւ գիտութեանց անուններով ստուարանալ սկսած էին. Ազգը խելամուտ եղած էր թէ միայն Քերականութիւն ուսանելով տղայք բան մ'ուսած չ'էին լինել, թէ ուրիշ խիտ հարկաւոր բազմաթիւ գիտելիք աւանդուելու էին նոցա, եւ թէ այս գիտելեաց ուսուցման համար կարեւոր եղած ժամանակը Քերականութիւն ուսուցանելու համար գոհուած ժամանակէն պիտի պահանջուէր. ուրեմն, ալ ասեմն հասած էր հնար գտնելու, որով կարելի լինէր Քերականութեան ուսումը ոչ միայն դիւրացնել, եւ անոր համար սահմանեալ ժամանակին միջոցը կարնել, ալ եւ առաւել արդիւնաւոր ու հանելի բնել գայն: Գործնական Քերականութիւնք անա այս ամեն առաւելութիւնները կրնային ունենալ:

Միայն թէ մտածութեան արժանի նոր պարագայ մ'երեւան կուգար Գործնական Քերականութեանց յօրինման մասին. արդեօք ուսանողք գրաբարէն աշխարհաբարի թէ աշխարհաբարէն գրաբարի անցնելով կրնային լեզուն առելի լաւ ունիլ. այլով բանիւ, ուսանողք գրաբարէն աշխարհաբար թէ աշխարհաբարէն գրաբար հրահանգներ վերածելով լեզուն պիտի ունիէր: Հակառակ Յարգոյ Ա. Մ. Գարագաւեան պատկերոյն՝ որ, ասկէց չորս տարի յառաջ հրատարակած Գործնական

Քերականութիւնը, գրաբարի վերածուելու համար աշխարհաբար հրահանգներով լցուցած էր, փորձառու ուսուցիչի պնդեցին թէ Գործնական Քերականութեանց հրահանգներն ամենամեծ մասամբ պէ՛տք են գրաբար լինել, որպէս զի համբալի աշխարհաբարի քարգմանելով զայնս, գրաբարին եւ աշխարհաբարին մէջ միանգամայն զարգանան :

Այս կարծիք մեզ ալ բանաւոր կ'երեւէր. սղայք Քերականութիւն սկսած ասեն, երբէք չ'են նանաչեք գրաբարը, նորա ոներն ու դարձուածները . աշխարհաբարն ալ, որքան որ գրաբարէն ծնեալ, գրաբարի հայկաբանութեան սակաւին օտար է . այնպէս որ՝ աշխարհաբար հասուած մը բառ առ բառ գրաբարի դարձուած ասեն՝ հասկցնել ուզուածէն բոլորովին տարբեր եւ ուրեք ուրեք ծաղրաւարժ իմաստներ երեւան կ'ելնեն. աշխարհաբարի սանկաբանութիւնները գրաբարի դարձնելու համար ուսանողաց աշխատութիւնը՝ լեզուին անկման գլխաւոր նշանը պէ՛տք է համարել : Դարձեալ, ազգային վարժարանաց մէջ Հայերէն լեզուի ուսուցման մասին այժմեան տրոյղ դուրսիւնն է՝ գրաբարը *հասկնալ*, աշխարհաբարը *գրել*, ուրեմն երբ գրելի լեզուն աշխարհաբարն է, պէ՛տք է որ Գործնական Քերականութեանց հրահանգները, զէք մեծաւ մասամբ, գրաբար լինին . եւ ուսանողք աշխարհաբարի քարգմանելով զնոսա, թէ գրաբարն հասկնալու եւ աշխարհաբարը գրելու վարժուին եւ թէ գրաբարին *հայկաբանութիւններն* առ սակաւ աշխարհաբարին մէջ փոխադրեն. որով այս վերջնայն աննոռնի սանկաբանութիւնն հետզհետէ տեղի կուսայ գրուածոց ու խօսակցութեանց մէջէն. միանգամայն

Ազգային վարժարանաց մէջ Հայերէն լեզուի ուսումնը նկատուեալն նպասակաւ գործածուած Քերականութիւններն երկու գլխաւոր ուղղութիւն կրնան ունենալ . Տեսական եւ Գործնական :

Այն Քերականութիւնք, որ սովորաբար նախ բառագիտութեան, յետոյ համաձայնութեան եւ ի վերջոյ շարադասութեան կանոնները միայն կ'ուսուցանեն առանց համբալիներն այն կանոնաց ունակացնող կրթութիւններ պարունակելու, *Տեսական* կը կոչուին : Այս տեսակ Քերականութեանց նպասակն է, ինչպէս իրենց արդիւնքէն կը տեսնուի, ոչ այնքան Հայերէն լեզուի ուսումը դիւրաւ աւանդել, որքան լեզուին կանոնները կարգաւ երեւան բերել :

Իսկ այն Քերականութիւնք, որ բառագիտութեան, համաձայնութեան ու շարադասութեան կանոններն աստիճանաբար, զբիւն սկիզբէն մինչեւ վերջը, խառն կ'աւանդեն, եւ այդ կանոնաց իւրաքանչիւրին վրայ համբալիները կրթելու համար բազմաթիւ հրահանգներ յառաջ կը բերեն, *Գործնական* կը կոչուին :

Երբ հին ասեցներէ մինչեւ ներկայ ժամանակս, փորձերը ցուցած են թէ ոչ միայն Քերականութեան՝ այլ եւ ուրիշ ու եւ է ուսմանց *տեսական* դասագրքերն թէպէտ բնաւ ապարդիւն չ'են, բայց ժամանակի մեծ կորուստ եւ երկարատեւ ու բուռն ջանք անհրաժեշտ են այդ ուղղութեամբ շինուած դասագրոց վրայ ուսում առնող

համբակներուն . եւ այս պատճառաւ է որ, ինչպէս դրժ-
բաղդաբար կը տեսնուի մեր Ազգային վարժարանաց մէջ,
դասասուաց եւ հոգաբարձութեանց կողմանէ եղած գո-
վելի նգանց հակառակ, Տեսական Քերականութեանց
վրայ դաս առնող համբակներէն խիստ շատեր, 3—4 տարի
դասարան յանախելէ զկնի, կը մեկնին դպրոցէն՝ առանց
որոշ գաղափար իսկ ունենալու Հայերէն լեզուին կազ-
մութեան եւ օրինաց վրայ . եւ խիստ քիչեր միայն, մտա-
ւորական հզօր կարողութեան տէր աւակներս, 5—6 տար-
ւոյ չարաչար աշխատութեամբ հագիւ կարող կը լինին
գրաբար հասուած մ'անխաղ բարգմանել ու լուծել :

Եւրոպացիք, անուրէտ քան զմեզ առաւել մտացի, ա-
ւանդելի ուսմանց տեսական դասագրքերուն տեղ հնա-
ւած են *Գործնականները*, յորս համբալք, առանց ժա-
մանակի մեծ կորստեան եւ բուռն ջանից, լաւագոյն
յառաջդիմութիւն ցուցած են միտ, բաղդատութեամբ
առաջնոց . եւ այս արդիւնաւորութիւնը միայն պէտք է
համարել պատճառ՝ վերջին ասեցներս հրատարակեալ
բազմաթիւ *Գործնական* դասագրոց, մանաւանդ Քերա-
կանութեանց :

Արդէն մեր Ազգային հայկաբաններէն շատեր ալ,
հմուտ եւ փորձ անձինք, առ ի չգոյլ գործնական Քե-
րականութեանց, մտաբերած էին Տեսական Քերականու-
թիւնները փոքր ի շատէ Գործնականի մերձեցնել, նոցա
իւրաքանչիւր կանոնաց կրթութեան համար խել մ'օրի-
նակներ յարմարցնելով, զորս աւակներս կամ գրաբարէ
աշխարհաբարի կամ աշխարհաբարէ գրաբարի վերա-
ծելով՝ ըստ կարի օգուտ կը քաղէին :

Բայց այս մասնաւոր ձեռնարկութիւնները բաւական

ուսուցիչը կրնայ երկու երեք կամ աւելի դասերու բաժնել .
ուսանողաց հարկ չ'է որ նշանակեալ կանոնները՝ դաս
առած օրերնին կամ յաջորդ դասի աւուր համար զոց ը-
նեն, այլ այն դասերուն կից կամ յետագաս հրահանգ-
ներուն մէջ բաւական է որ նոյն կանոնաց վերաբերու-
թիւն ունեցող բառեր տեսած ասեցներն նոցա առջեւ
նշանակեն կանոններուն քիւերը . ուսուցիչը կրնայ շա-
րունակել այսպէս՝ մինչեւ որ ապանով լինի քէ համ-
բալք առ հասարակ նոյն կանոնաց հմուտ եղեր են, եւ
խօսքի մէջ նոցա վերաբերութիւն ունեցող բառերը՝ կա-
րող են լուծման ասեւ ցուցնել անվերջ . յետ այնորիկ
ուսուցչին անկ է նոյն քիւերը նշանակելը շարունա-
կել կամ դադրեցնել :

Հրահանգներուն մէջ ճօտ գրով նշանակեալ բառերն
անոնք են, որ կամ բնագրին մէջ ուսանողաց առած
դասերէն դուրս բառերով գրուած ըլլալուն նոյն բառերը
վերցուած եւ տեղերնին իրենց նիւթ իմաստը յառաջ բե-
րող նոյն բառերը դրուած են, եւ կամ բնագրին մէջ
զեղչուած են եւ հրահանգաց մէջ, ուսանողաց դիւրու-
թիւն ըլլալու համար, արժան դասուեր է դնել . այս մա-
սին յարգոյ դասասուի իրենց պատճառ երեւցած կերպիւ
կրնան վարուիլ :

Ուսանողը, յաւատք Քերականութեան, իւր բարգմա-
նած եւ վերլուծած հրահանգները տեսակի մը մէջ գրե-
լով եւ ամէն մէկ բառի առջեւ անոր վերաբերեալ գործ-
նական եւ կարելու կանոնաց քիւերը նշանակելով,
ամբողջ դասագիրքը, գրեթէ բառ առ բառ, կը պատկե-
րացնէ մտացը մէջ առանց երբէք տեսնելու զնոսա . քան-
զի դասատուութեան առաջին օրէն ցվերջինը, իւրաքան-

չիւր կանոնի թիւերը հազարէ աւելի անգամներ կրկնելու պատեհութիւնը պիտի ունենայ, եւ այսպէսով բնականաբար, ամենէն բքամիտ կարծուած առակերտն ամենէն արամտիկ հաւասար պիտի յառաջադիմէ :

Քերականութեանս վերջը դրուած յաւելումներն, ուսուցիչն եթէ յարմար տեսնէ, կրնայ իւր առակերտաց ուսուցանել՝ Քերականութեան կանոնները դասախօսած միջոցին :

Ի վերջոյ կը յաւելունք նաեւ, թէ ներկայ Գործնական Քերականութիւնը գործածողներուն՝ բարգմանութեան եւ լուծման համար ուրիշ դասագրքի պէտք չը կայ, մէջը պարունակուած բազմաթիւ հրահանգները բաւական են գոհ ընելու զուսանողները, եւ եթէ դասատու կը փափակն որ իրենց առակերտաց աշխարհաբարէ գրաբար հասուածներ բարգմանել տան, կրնան դրուած հրահանգներուն լեզուին մօտ բարգմանութիւններ առաջարկել նոցա, եւ այս վերջին գործողութեան համար յատուկ դասագրքի կարեւորութիւնն այնքան զգալի չ'է. ասով ուսանողը փոխանակ երկու կամ երեք գիրք գնելու՝ միայն մէկ գրքով իւր նպատակին կը հասնի եւ այն ալ ածան ծախսով :

Այս Քերականութիւնը հրատարակելով կը կարծեմք թէ կարեւոր ծառայութիւն մը մատուցինք թէ Ազգային Մեծարոյ Հայկաբան Դասասուաց եւ թէ Հայ լեզուի ուսանողաց՝ որոց կողմանէ գտնելիք ընդունելութեանէն քաջալեւեալ, այժմէն կը խոստանամք դասագրքիս յաջորդ սպագրութեան ասեմ արժան համարուած փոփոխութիւնները մտցնել :

աշխարհաբարը, այսինքն Հայկական արդի լեզուն, գրաբարով նոխացեալ, կունենայ բուն իսկ ազգային լեզուի յատուկ կնիքն իւր վրայ եւ ժամանակիս գիտնարար պիտոյից համաձայն ազնուանալով, նեղուելով, կանոնաւորուելով ու բազմադիմի բացատրութեամբ հարստանալով, թրեւս որ մ'անզգալապէս յաջորդէ գրաբարին, ոչ իբրեւ նոր լեզու, այլ իբրեւ նոյն գրաբարը՝ դոյզն ինչ փոխակերպեալ :

Արդ այս շրջանայեաց խորհուրդները միքէ իրաւունք չէին սուր շատերուն, որ առաջին անգամն հրատարակուած Գործնական Քերականութեանէն իրեանց բաղձացած արդիւնքը չ'ակնկալէին :

Ինչ որ ալ բնուի, սա նշարիտ է որ Ազգային վարժարանները մեծ ընդունելութիւն չըրին այդ քերականութեան. ոչ թէ գործնական ուղղութեան կարեւորութիւնն զգացած չ'ըլլալուն, վասն զի այդ կարծիքն հնամիտ մի քանի դասատուներէ զատ այլոց համար անհաս էր, այլ թէ դասագիրքը չ'էր համապատասխաներ իւր վրայ դրուած ակնկալութեան. այս պատճառաւ, շատերու հետ, Քերականութեանս հեղինակն ալ իրեն յատուկ գործնական ուղղութեան մը մէջ իւր առակերտները կրթել նախամեծար համարեց, եւ 1870 էն սկսեալ իւր ներկայ Գործնական Քերականութիւնը դասախօսել սկսաւ, յարգելով միտք իւր մեծարոյ պատեհակցաց այս մասին ըրած դիտողութիւնները եւ հետզհետէ ուղղելով իւր թերութիւնները, մինչեւ որ ձեռնհաս Քերականք տեսան այս նոր ուղղութեան զգալի եւ գոհացուցիչ արդիւնքն եւ փափակեցան աւելի բարեկարգ կազմակերպութեամբ ի լոյս ածել սալ զսա :

Ահա մեք ալ, ոչ թէ Քերականութիւն շինող երեւալու փափաքով, այլ խրատուսեալ միայն նոյն պատուարժան Քերականաց համարումէն եւ ստիպումէն, հրատարակեցինք ներկայ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻԻՆԸ, յուսով որ Ազգային վարժարանաց յարգոյ Տեսուչի եւ Դասատուի, անաչառութեամբ պիտի քննեն եւ այնպէս խելամուտ լինին սորա գործնականի մասին օգտակարութեանը :

Հոս պարտ էր համարինք մի քանի կարեւոր տեղեկութիւններ տալ Քերականութեանս պարունակութեան եւ գայն գործածելու կերպին վրայ :

Ա. Դասագրքիս մէջ նշանակուած կանոնք գրաբար լեզուին մէջ համբակները վարժելու լիովին կը բաւեն . դուրս ձգուած են միայն այնպիսի կանոններ՝ որք եւ ոչ մէկ կերպիւ կը նպաստեն մտաց դասողութիւնը նրբադասելու բացատրելու, եւ որոց գրաբարի մասեմագրութիւնը կարեւոր արժէք ընծայած չ'է :

Բ. Լեզուին յատուկ էութեան վերաբերեալ երկու պարագայից, գրաբարի հայկաբանութեան եւ բառից կազմութեան վրայ, առանձին գրութիւններով խօսուած է :

Գ. Հրահանգները, ի բաց առեալ մի քանի առիարհաբար հրահանգներ, որ Դասագրքիս սկիզբները կը տեսնուին, առ հասարակ գրաբար են եւ, սակաւ ինչ բացառութեամբ, ամենքն ալ փառուած են Հին եւ Նոր Կտակարաններէն, որք մեր գրաբար լեզուին ընտրելագոյն մասեմագրութիւնը կը կազմեն :

Սոյն Գործնական Քերականութիւնը ամբողջ մէկ տարուան մէջ կ'աւարտի, եթէ ուսանողք շարքսն երեք անգամ դաս առնուն . նշանակեալ իւրաքանչիւր դասերն

ՀՈՒՈՎՈՒՄՆ. Ա.	21
Բ.	24
Գ.	30
Փոփոխմամբ հոլովներ	51
Հոլովումն Գ.	41
Ե.	49
Զ.	52
Է.	58
Անկանոն հոլովումն	69
Հոլովումն Ը.	72
Թ. Ժ.	132
ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻԻՆ.	159
ՄԱԿԲԱՅ	56
Յուցական ածականի տեղ գործածուած մակբայք	58
ՅՕԴ. Ն յօդին գործածութիւնը	27
Յասկացուցիչ ունեցող բառից վերայ Ն յօդ	49
Ն յօդ (գիտելիք)	149
Շար. կանոնաց Ն յօդին	160
ՆԱԽԴԻՒՐ. Ի կամ Յ (շարժում ցուցնող)	57
Ի կամ Յ (դադարում ցուցնող)	67
Նախդիրք եւ նախադրութիւնք	78
ԱՌ նախդիր	80
Ի կամ Յ շար.	85
Յ նախդիր	84
Ընդ նախդիր	84, 104
Զ. նախդիր	108
ԸՍՏ նախդիր	125
ԸՆԴ նախդիր շար.	150, 151

	Էջ
Ի կամ Յ շար	152
ԱՌ նախդիր շար.	152
Ի կամ Յ նախդիր շար.	154
ԸՆԴ նախդիր շար.	141, 150
Ըս նախդիր	151
Իբեւ, Որպէս, Քան նախադուրբիւնք	164
ՇԱՂԿԱՊ	50
ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ. Պարզ	125
Արտուղի	124
Հարկաւոր արտուղուրբիւնք	125
Ազատ արտուղուրբիւնք	125, 152
ՍՏՈՐՈՂԵԼԻ	58, 117
ՎԱՆԿ	20
ՏԷՐ ԲԱՅԻ	28
Սեռ, եւ սրական սէր բայիներ	112
Տարբեր դէմով սէր բայիներ	159
Տէր բայի եղող բառից վերայ գիտելիք	160

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Շ Ա .

Քերականութեան հիմնական սկզբանց եւ կանոնաց վերայ գիտելիք	196
Քերականական առածք	196

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Շ Բ .

Ընդհանուր գիտելիք բառից	202
Ածանց եւ անանցեալ բառք	202
Գիտելիք արմատ եւ անանցեալ բառից վերայ	208
Բարդեալ բառք	208

Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ



	Էջ
ԱԾԱԿԱՆ. Որական եւ Քանական	19
Ածականաց հոլովմունք	22
Ստացական ածականք	54
Խնդիրք ածականաց	52
Յուցական ածականք	60
Թուական »	119
Աստիճանք ածականաց	165
ԲԱՅ	25
Թիւ ու դէմք բայից	55
Ժամանակ եղանակ եւ խոնարհումնք բայից	56
Խոնարհումնք էական բայի	57
Խնդիրք բայից	45
Եւ լծորդուրբիւնք, ձեւ Ա.	45
» » » Բ.	55
Ստորագասական եղանակի գործածուրբիւնք	55
Իւ լծորդուրբիւնք, ձեւ Ա.	65
Ներգործական բայից կրաւորականք	64
Գիտելիք. Ասեւ, գիտեւ, կարեւ բայից վերայ	70
Աւ լծորդուրբիւնք ձեւ Ա.	74
» » » Բ.	75
Իւ » » Բ.	82
Ոււ » » Ա. եւ Բ.	86

	էջ
Անկանոն բայք	89, 92, 95
Այլեւայլ գործածութիւնք եւ բայիք	101
Շար. անկանոն բայից	102
Բաղադրեալ ժամանակք բայից	106
Շար. անկանոն բայից	140
Գիտելիք. բայի խնդիր եղող բառից վերայ	160
ԲԱՅԱՅԱՅՏԻՉ	111
ԳԻՐ. Բաղաձայն եւ ձայնաւոր	50
Չայնաւոր գրոց փոփոխումն հոլովմանց մէջ	51
ԳՈՅԱԿԱՆ բառ	17
Գոյականաց լիացուցիչ կամ յակացուցիչ	41
Գոյականաց բուռն վերայ գիտելիք	148
ԴԵՐԱՆՈՒՆ. Հոլովումն էական դերանուանց	76
Հոլովումն յարաբերական դերանուան	77
Ընդհանուր գիտելիք յբրկն. դերանուան վերայ	96
Յարաբերականի կանոնք	97
Սացական եւ ցուցական դերանուանք	150
ԴԵՐԲԱՅ. Գիտելիք	67
ՁԵՂՉՈՒՄՆ	115
Ձեղչումն ցուցական եւ սացական ածականաց	149
Ձեղչումն էական բայի	170
Ձեղչումն բառից	170
ԹԻԻ. Եզակի եւ յոհակի	18
ԿՈՉԱԿԱՆ	105
ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ	149
ՀԱՅՅԱԿԱՆ. Խնդիր սեռի	26
Անորոշ սեռի խնդիր	59
Հայցական բնութեան խնդիր	129

ՆՈՐ ԵՂԱՆԱԿ

ՈՒՍՈՒՑՄԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Բ. Տ Ա Ր Ի

Ա. Դ Ա Ս

1. Խօսքերը բառերէ կը շինուին .
2. Հայերէնի մէջ՝ բառերն ութ տեսակի բաժնուած են այսպէս. Գոյական, Ածական, Բայ, Դերանուն, Մակբայ, Շարժիւթ, Նախդիր, Չայնարկութիւն, Բառերուն այս ութ տեսակները ծառայութեամբ կ'ըսուին .

Գ Ո Յ Ա Կ Ա Ն

3. Բան մը ցուցնող բառերը Գոյական կը կոչուին . ինչպէս, Հաց, խնձոր, մարդ, ծով, կառու, ընծայ, լուսին, հրդեհ եւ այլն, Գոյական են, քանզի այս բառերը մէկ մէկ բան կը ցուցնեն .

Ե Ձ Ա Կ Ի, Յ Ո Ք Ն Ա Կ Ի

Ա. Ա. Գոյական բառ մը, երբոր մինակ մէկ հասր կը
ցուցնէ, եղանկ կ'ըսուի. զոր օրինակ, ծառ (մէկ ծառ).
տուն (մէկ տուն). քաղաք (մէկ քաղաք) կը ցուցնեն,
ուստի Եզակի են:

Բ. Երբ գոյական բառ մը մէկ հասրէ աւելի կը նշանա-
կէ, Յոռակի կ'ըսուի, զոր օր. ծառք—ծառեր— (մէկ հատ-
տէ աւելի ծառ). տունք—տուներ— (մէկ հատէ աւելի
տուն. քաղաքք—քաղաքներ— (մէկ հատէ աւելի քա-
ղաք) կը նշանակեն՝ ուստի եւ Յոքնակի գոյականներ են:

Ճ. Գրաբարի մէջ, Եզակի գոյական մը յոքնակի ընե-
լու համար, սովորաբար ծայրը + գիրը կը դնեն. իսկ
աշխարհաբարի մէջ նէ կամ էք, զոր օր,

Գ Ր Ա Բ Ս Ր

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Բ Ս Ր

Եզ. Յոք.

Եզ. Յոք.

Տուն. տուն+

տուն. տունէք

Խնճոր. խնճոր+

խնճոր. խնճորնէք եւայլն.

Հ Ր Ա, Հ Ա, Ն Ք Ա.

Աշակերտը պէտք է հետեւեալ բառերուն Եզակիներն
Յոքնակիներէն որո՞յ է եւ աշխարհաբար նշանակութիւնն
ըսէ:

Բերան. վարդապետ. Թոշունք. սեղան. ջուրք-
պատուհանք. գլուխք. ականջ. հրահանգ. լեզուք.
պարտէզք. աւազան. ծառք. Թեւ. միրատք. պնակ.
Թաւիշք. գինիք. կղզի. ծնունդ.

Ձ Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Բերան—գոյ. եզ. կը նշանակէ մէկ հատ բերան
Թոշունք—գոյ. յոք. մէկ հատէ աւելի
Թոշուն (Թոշուններ):

Ուսանողք զննութեան այս կերպն ի գործ դնելու
են վերի բոլոր բառերուն համար:

Բ. Դ Ա Ս

Ա Ս Ա Կ Ա Ն

Ե. Գոյականին ինչպէս կամ +անի հասր ըլլալը ցուցնող
բառերն Ածական կ'ըսուին, զոր օրինակ. տուն, ի՞նչպէս
տուն, մեծ տուն, փառաւոր տուն, հին տուն: Քանի՞
տուն, վեց տուն. Մէծ. փառաւոր, հին, վեց բառերն
ածական են քան գոյականին. մեծ, փառաւոր, հին՝
տունին որպէստէն կը ցուցնեն, վեց՝ քանակութիւնը
կը ցուցնէ:

Սպիտակ (հաց), կարմիր (խնճոր), ընդարձակ (ծով),
քառասուն (կատու), սոսկալի (հրդեհ), պայծառ (լու-
սին), տասն (մարդ), գեղեցիկ (ընծայ), պարկեշտ
(աղջիկ) եւայլն:

Ֆ. Ա. Գոյականին որպիսութիւնը ցուցնող ածականը
կ'ըսուի՝ Որական:

Բ. Գոյականին քանակութիւնը ցուցնող ածականն
ալ կ'ըսուի Թոռական:

Հ Ր Ա. Հ Ա Ն Գ Բ.

Նախանձ . չար . թուղթք . զգեստք . թեթեւ . ողորմած . Աստուած . փողոցք . յիսուն . սեղանք . ճաշ . գլխեր . վարդապետ . հազար . առիւծ . կատուք . բարի . աթոռք . հինգ . լայն . աղնիւ . արծաթ . սիրելի . երկչոտ . դօտիք . մամ . ծանր . տգէտ . բարձր . շունք :

Չ Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Նախանձ—գոյ . եղ . նշ . նախանձ .
 Չար—ած . որակ . նշ . չար
 Թուղթք—գոյ . յոք . նշ . թուղթեր
 Յիսուն—ած . թուակ . նշ . յիսուն

Վ Ա Ն Կ

Տ . Մէկ հնչումով բերնէ ելած բառը կ'ըսուի միավանկ . ինչպէս , աղ . օղ . ձի . հինգ . վեց . թուղթ . մեծ եւայլն :

Երկու հնչումով ելածը կ'ըսուի երկավանկ . ինչպէս , բա—րի , պար—տէղ , ա—հանջ , հա—զար . ար—քայ եւայլն .

Երկուքէ աւելի վանկ ունեցող բառերը կ'ըսուին բազմավանկ . ինչպէս՝ դա—տա—ւոր , ար—դա—րա—սէր , ա—ղբ—մա—ծու—թիւն , եւայլն :

Հ Ո Ղ Ո Վ

Չ . Գոյական ու անձական բառերը շատ անգամ վերջերին կը փոխեն , ինչպէս , ճայն , ճայն—է , ճայն—է—ձի , ձի—ոյ , ձի—ով , թաղաւոր , թաղաւոր—աց , թա—

ղաւոր—տ . եօթն , եօթ—ան , եօթ—ամբ : Բառերուն ծայրի այս փոփոխութեան Հոլով կ'ըսուի .

10 . Հայերէնի մէջ վեց հոլով կայ . հոլովելու ալ շատ կերպեր կան որոնք հոլովմունք կ'ըսուին :

11 . Ա . Հ Ո Ղ Ո Վ Ո Ւ Մ Ն .

Եզակի

հոլով .	գրաբար	աւխարհաբար
1 Ուղ .	Հաց	Հաց
2 Հայց .	Չհաց	Հացք
3 Մեռ .	Հացի	Հացի
4 Տրական .	Հացի	Հացի
5 Բացառական	է Հացէ	Հացէ
6 Գործե՛ական	Հացի—	Հացի՛

Յոֆնակի

գրաբար	աւխարհաբար
Ուղ .	Հաց+
Հայց .	Չհաց+
Մեռ .	Հացից
Տրակ .	Հացից
Բաց .	էհացից
Գործ .	Հացի—+

Այս օրինակին պէս կը հոլովին շատ մը բառեր .

Փեկայ . բարձ . խաչ . մարգարէ . բաղդ . բանտ . խաչ . բան . գուլպայ . վանկ . վարդ . ժամացոյց . ճայն . քար . քայլ . քարոզ . քահանայ . կայծ . ծնօտ . թատրոն . թաթ . ծառայ . ծրար . կասկած . ճառ :

Հ Ր Ս . Հ Ա . Ն Գ . Գ .

Նախընթաց հրահանգներուն վերայ եղած զննութիւնն հետեւեալ բառերուն վերայ ալ ընելու է , միանգամայն հորովները նշանակելով :

Ի հանդերձից . զհրդեհէս . ծառայիւք . ի քահանայէ . զկայծ . թատրոնիւ . ծայրից . ի հիւղից . բանիւ . ճառագայթ . ճանձիւք . նեախ . զպատահասս . ի ջահէ . բառիւ . զվանկս :

Զ Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի հարդերձից . Գ Դ . Ե Բ . Բ Գ . Ա . հորովումս . հանդերձներէ . զհրդեհէս . Գ Ե Կ . Ե Բ Գ . հայց . " " " հրդեհները :

Գ . Դ Ա Ս

Ա Ծ Ա Կ Ա Ն Ա Յ / Հ Ո Լ Ո Վ Մ Ո Ւ Ն Ք Ը

12. Աշխարհաբարի մէջ Ածականները գոյականներէն առաջ կը դրուին եւ միշտ ուղղական հորով կը մնան , ինչպէս , վեց ծառայ . վեց ծառայէ . վեց ծառայով . վեց ծառայներ . վեց ծառայներով . եւայլն :

13. Գրաբարի մէջ , ածականը գոյականէն թէ ետք եւ թէ առաջ կրնայ դրուիլ :

Ա . Սովորաբար , բազմամասնի ածականները , ուղղականէն , եւ հայցականէն զատ , գոյականներէն առաջ կը դրուին ու չեն հորովուիլ .

Բ . Մէկ կամ երկու վանկ ունեցող ածականները թէ

առաջ ու թէ ետքը դրուելով գոյականին հետ կը հորովուին .

14. ՕՐԻՆԱԿ ԲԱԶՄԱՎԱՆԿ ԱԾԱԿԱՆԻ

Եզակի

Յոսկանի

Ուղ . բարեկրօն քահանայ	բարեկրօն քահանայ+
Հայց . զբարեկրօն քահանայ	զբարեկրօն քահանայ+
Սեռ . բարեկրօն քահանայէ	բարեկրօն քահանայէց
Տրակ . բարեկրօն քահանայէ	բարեկրօն քահանայէց
Բաց . ի բարեկրօն քահանայէ	ի բարեկրօն քահանայէ
Գործ . բարեկրօն քահանայիւ	բարեկրօն քահանայիւ+

Մ Ր Ա Վ Ա Ն Կ Ե Ւ Ե Ր Կ Ա Վ Ա Ն Կ Ա Ծ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

15. Ա .

15. Բ .

Առաջ դրուած

Ետքը դրուած

Եզակի

Եզակի

Ուղ . մեծ ճանձ	ճանձ մեծ
Հայց . զմեծ ճանձ	զճանձ մեծ
Սեռ . մեծի ճանձի	ճանձի մեծի
Տրակ . մեծի ճանձի	ճանձի մեծի
Բաց . ՚ի մեծի ճանձ	՚ի ճանձի մեծի
Գործ . մեծս ճանձիւ	ճանձիւ մեծս

Յոսկանի

Յոսկանի

Ուղ . մեծ ճանձ+	ճանձ+ մեծ+
Հայց . զմեծ ճանձս	զճանձս մեծս
Սեռ . մեծաց ճանձից	ճանձից մեծաց
Տրակ . մեծաց ճանձից	ճանձից մեծաց
Բաց . ի մեծաց ճանձից	ի ճանձից մեծաց
Գործ . մեծօր ճանձիւ+	ճանձիւ+ մեծօր

16 ՀՈՒՈՎՈՒՄՆ Բ.

Եզակի

ԱՇԵԱՐՀԱԲԱՐ

ՔՐԱԲԱՐ

Ուղ. կանթեղ
Հայց. զկանթեղ
Սեռ. կանթեղէ
Տրակ, կանթեղէ
Բաց. ի կանթեղէ
Գործ. կանթեղու

կանթեղ
կանթեղը
կանթեղէ
կանթեղէ
կանթեղէ
կանթեղու

Յոխակի

Ուղ. կանթեղ
Հայց. զկանթեղ
Սեռ. կանթեղաց
Տրակ. կանթեղաց
Բաց. ի կանթեղաց
Գործ. կանթեղոց

կանթեղներ
կանթեղները
կանթեղներու
կանթեղներու
կանթեղներէ
կանթեղներու

Այս օրինակին պէս կը հորովին շատ մը բառեր :
Հրացան, վարժապետ, բաժակ, մկրատ, դանակ,
պնակ, համբակ, կանոն, դերձակ, կապար, քնար :

ՀՐԱ. ՀԱ. ՆԳ.

Ի հրեշտակաց. ի բանից. վանիլ. կամարաւ. դա-
տատուաց. բարձից. ի բաժակէ. ի փեսայէ. քնարի.
հացի. համբակք. ճանճք.

ՀՐԱ. ՀԱ. ՆԳ. Գ.

Ա. ի գինուորաց քաջաց. լուսաւոր ճառագայթիւք.

վայից անմեղաց. ի չարաց սատանայից. դքարող հոգեշահ-
Բ. Փառամուլ թագաւորներէ (16). քաղցրաձայն քը-
նարները. չար (16) դատաւորներու. թշուառ (16) ծա-
ռայներ. դաժան զօրապետով. լաւ նշաններէ. տկար
(16) համբակի :

ՉՆՆՈՒԹԻՒՆ

Ի գինուորաց քաջաց. քաջ գինուորներէ. Ա. ը գոյ.
Բ. ը որակական անական՝ որ միավանկ ըլլալուն գո-
յականին հետ հորովուեր է. կանոն 15. ք.

Փառամուլ թագաւորներէ. ի փառամուլ թագաւորաց.
Քառամուլ որակական անականը բազմավանկ ըլլալուն՝ գո-
յականէն առաջ է գրուեր ու չէ հորովուեր. կանոն 14.
Այս կերպով պէտք է զննել միւս բառերն ալ :

Գ. ԳԱՍ

ԲԱՅ

13. Ընէլ կամ ըլլալ սյսինքն քործողութիւն մը ցուցնող
բառերը քայ կ'ըսուին. գրեմ. գործեմ. աշխատիմ.
սիրեմ, ընէլ կը ցուցնեն, մեռանիմ, սեւանամ, տիրիմ,
ըլլալ կը ցուցնեն, ուստի Բայ են.

ՀՐԱ. ՀԱ. ՆԳ. Ե.

ձառ. յողթեմ. նիհար. ցած. ամաչեմ. ընդունիմ.
սուր. լոյս. ուտեմ. աշխատասէր. շողջորթեմ. գրա-
սեղան. տետր. երկայն. շողջորթեմ. գիր. գրեմ.
մեծ. մեծանամ. դերձակ. ուրախ. ուրախանամ.
գործ. գործեմ. սրեմ. վատ. վատանամ. մորթ. մորթեմ.

ԶՆՆՈՒԹԻՒՆ

Ճաշ . գոյական , եզակի , ուղ . ճաշ .

Գործեմ . բայ . բնել կը ցուցնէ

Նիհար . ած . որակ . եզ . ուղ . նիհար .

18 . Բայերուն վերջաւորութիւնը չորս կերպ կ'ըլլայ . Ա . եմ . Բ . իմ . Գ . ամ . Դ . ում . Այս չորս վերջաւորութիւնները քորթուելէն կը կոչուին . յալթեմ Ա .

լծ . աշխատիմ Բ . լծ . ցնծամ Գ . լծ . թողում Դ . լծ .

19 . Հայերէնի մէջ բուն եւ միայն մէկ բայ կայ , որ է եմ , եւ կը կոչուի եական բայ , ուրիշ բոլոր բայերն էական բայէն եւ ածականէ մը շինուած են . ինչպէս յալթեմ բայը շինուած է յալթու ածականէն ու եմ բայէն , գործեմ (գործող եմ) , աշխատիմ (աշխատող եմ) , մորթեմ (մորթող եմ) եւայլն .

20 . Ածական բայերն ալ բուն երկու տեսակ են ներգործական եւ Զեղ+

21 . Բայ մը ներգործական է՝ երբ քովն ունի հայցական հոլով մը՝ որուն վրայ կը յանգի քործողութիւնը , ինչպէս , ուտեմ հացը (զհաց) , գրեմ նամակը (զնամակ) , քաղեմ պտուղը (զպտուղ) ,

22 . Ներգործական բայերու քովն այս իմաստով գրուած հայցականները կը կոչուին սեռի ինքիք .

Երբեմն կ'ըլլայ որ սեռի խնդիրը ներգործական բային քով յայտնի չը գրուիր , բայց բային իմաստէն կրնայ հասկցուիլ .

Հ Ր Ա . Հ Ա . Ն Գ . Զ .

Քամեմ (18 Ա .) բան մը՝ որուն վրայ կը յանգի գործող .

դուրբիւնը . քակեմ (բան մը) . գիտեմ . կարդամ (18 Գ) . ձգեմ . պատուիրեմ . տամ . փախչիմ (18 Բ) . թռչիմ . վրասեմ . քահանայ . մեծ . չար . համեստ (7 Ա) . ի գիտնական վարժապետաց . զօրաւոր մշակները . ննջեմ . մեռանիմ . երդնում (18 Դ) . բաղդատեմ (21) . դու վեմ . դիւրաշարժ թնդանօթիւ . պայծառ (15) նկարներու . պատեհ . ժամանակը , ի պատկերաց քսանից (7 Բ) . զբօսնում (18 Դ) . լնում (21) .

23 . Չէզոք բայերը բան մը ինքնին ընէ կամ ինքնին ընէ ըլլել կը ցուցնեն , ինչպէս մեռանիմ . վատանամ . զբօսնում . դողամ . Չէզոք բայերն հայցական սեռի խընդիր չ'են ուզեր իրենց քով .

ԶՆՆՈՒԹԻՒՆ

Քամեմ—քամող եմ— , բայ ներգործ . (քանզի բան մը կը քամեմ) , ուստի հայց . հոլով սեռի խնդիր կ'առէ (21) .

Փախչիմ— փախչող եմ— , բայ չէզ . (քանզի ինքն իրենս կը փախչիմ) , ուստի հայց . հոլով սեռի խնդիր չ'առներ . (23) .

Քահանայ— գոյ . եզ . ուղ . հոլ . Ա . (4 Ա . (11)

Ե . Գ Ա Ա

Ն . ՅՕԴԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

24 . Բառի մը ծայրն աւելցուած Ն գիրն յօդ կը կոչուի .

25. Յօդ կը դրուելի գոյականի մը ծայրը, երբոր այն գոյականը որոշեալ բան մը կամ անհատ մը, եւ կամ ասոնց յորճակին կը ցուցնէ. ինչպէս, «յն խօսքը բանն (որոշեալ է)» (այն որոշեալ) բաժականերով— բաժակօքն :

26. Բայց երբոր գոյականին քովը «մն» կամ «ե» էջէ բառը կընայ դրուել, այն ատեն գոյականը գրաբարի մէջ յօդ չ'առնէր. իսկ աշխարհաբարի մէջ կ'առնէ ն կամ ը . զոր օրինակ . գիշակեր թոչունները— ամեն կամ ո եւ իցէ գիշակեր թոչուններ— ըսել կ'ուզեմ, գրաբարը կ'ըլլայ. գիշակեր թոչունք կամ թոչունք գիշակերք (ն յօդը չը դրուիր) :

Տ Ե Ր Բ Ա Յ Ի

27. Բայց, գործողութիւն, այսինքն ընել կամ ըլլալ կը ցուցնէ (17) . Տէր բային ալ գործողութիւնը ընողը կամ նոյնին ըլլողն է . Յովհաննէս մեռաւ—, մեռաւ՝ բայ (17), չէզոք (25) . քանզի ինքն իրեն ըլլալ կը ցուցնէ .

Կը հարցնեմ—մեռնիլը ըլլալ ցուցնող գործողութիւն մ'է. արդ—ո՞վ է մեռնողը, պատասխան—Յովհաննէս, ապա Յովհաննէս Տէր է Դուստր չէզոք բային .

28. Տէր բային ուղղական հօլով կը դրուելի թէ աշխարհաբարի եւ թէ գրաբարի մէջ :

Հ Ր Ա . Հ Ա . Ն Գ . Է .

Գլխարկ (16) . լեզուաց . վահան . բարեբարոյ (14 Ա) վարժապետներէն . բարեբար կլիմայները (11) .

Չօրապետը (24—27) կը յորդորէր քաջ զինուորները

(24) : Չիեպանը սանձը կը բռնէ. մշակները դաշտը (16) հերկեցին . քահանայն պայծառ հանդերձները (24) կը պատառէ . վատ զինուորը (ոչ 24 այլ 25) կը փախչի . կը վահանայ . դռնապանը ճաշը կ'ուտէ . բարկանամ (25) . խօսիմ (21) : դարմանեմ . բաւէ . մեծ . պայծառ . մեռանիմ . քաղաքներէ (16) . (այն) բառերով . (այն) մեծ բաժակները :

Ձ Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Գլխարկ . գոյ (7) եղ (4 Ա .) ուղ . հոլովումն բ . 16 . Բարեբարոյ վարժապետներէն : ն— յօդ է , քանզի որոշեալ անհատներ կը ցուցնէ :

Բարեբարոյ . ած . (6) . որակ . (7 Ա) . վարժապետներուն ինչպէս ըլլալը կը ցուցնէ . բաղմամբանկ ըլլալուն համար գրաբարի մէջ ալ գոյականէն առաջ կը դրուի ու չը հոլովուիր, անփոփոխ կը մնայ (14) :

Վարժապետներէն . գոյ (5) . յոք (4 Բ) . բաց . հոլ . բ (16) ի վարժապետաց . յօդն ալ վրան աւելցնելով եւ նաժականն սկիզբը դնելով ,

առխարհ :

գրար .

Բարեբարոյ վարժապետներէն ի բարեբարոյ վարժապետացն

Լ Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն

Չիեպանը սանձը կը բռնէ : Գործողութիւնը ցուցընող բառն է՝ բռնել, (բան մը՝ որուն վրայ կը յանգի գործողութիւնը) : ուստի ներգործական բայ է . գրաբար՝ ունի . Բ . լծորդ .—կը բռնէ ունի . ո՞վ է բռնողը , ձիեպանը . որոշեալ—ուստի եւ յօդ ունի) : Չիեպանը

Տէր է կը բռնէ (ունի) բային, Տէր բային ուղ. հոլով կ'ըլլայ (28) եւ յօդ ունի, ձիեպանն. ձիեպանն ունի— ձիեպանը է՞նչ քանք կը բռնէ, սանձը, (որոշեալ է եւ յօդ ունի), սեռի խնդիր ըլլալուն հայց. կը գրուի. զսանձն.

Աշխ. ձիեպանը սանձը կը բռնէ. գր. ձիեպանն (3. 16. 24. 26, 27) ունի (17, 18 Բ. 21) զսանձն (3. 11. 25. 22):

2. ԴԱՍ

29 ՀՈԼՈՎՈՒՄՆ Գ.

Ուղ. խնձոր (1)	խնձոր+
Հայց. զխնձոր	զխնձորո
Սեռ. խնձորոյ	խնձորոց
Տրակ. խնձորոյ	խնձորոց
Բաց. ի խնձորոյ	ի խնձորոց
Գործ. խնձորով	խնձորով+

Գետ. բերան. ձի. դի. հող. հոտ. հոր. նիւթ. ծոց. գործ. թեւ. համբաւ.

Գ Ի Ր Ե Ր

- 30. Գիրերը երկու տեսակ են, Չայնասոր ու Բաղայայն :
- 31. Գիր մը ձայնաւոր է՝ երբ անոր ձայնն առանց ուրիշ գրոյ օգնութեան կրնանք հանել. հայերէն լեզւին ձայնաւոր գրերն են. ա. ե. է. ը. ի. ո. օ :
- 32. Գիր մը բաղաձայն է՝ երբ անոր ձայնն առանց

(1) Աշխարհաբարն ա. ու բ. հոլովմանց պէս կ'ըլլայ :

ձայնաւոր գրի օգնութեան չ'ենք կրնար հանել. այսպէս են բ (բէ) գ (գէ) դ (դէ) թ (թօ). եւ բոլոր մնացած գրերը :

33. Երբ բառի մը առաջին գիրը Չայնասոր է, բացառականին սկիզբը է գրուելու տեղ, կը գրուի. չքսուիլ ի սխո—ոյ. ի է—ոյ այլ պէտք է ըսել յախո—ոյ, յէ—ոյ եւայլն :

ՓՈՓՈԽՄԱՄԲ ՀՈԼՈՎՆԵՐ

34. Երբ գոյականի կամ ածականի մը վերջին գիրը բաղաձայն է, այս բաղաձայն գրէն առաջ դրուած ձայնաւոր գրերէն ոմանք սեռ. տրակ. բաց. եւ գործիական հոլովներուն մէջ փոփոխութիւն կը կրեն.

35. Ա. Ծայրը բաղաձայն գիր ունեցող գոյական կամ ածական մը թէ որ վերջին վանկին մէջ է ձայնաւոր գիրն ունի, այդ էն կը կորսուի. օրինակ. եզ. գէծ. սեռ. գծի. բաց. ի գծէ, գործ. գծիւ.

Յոգ գիծք » գծից. » ի գծից, գծիւք : Բ. Թէ որ վերջին վանկի ձայնաւորն ա է. նոյնպէս կը կորսուի.

ՕՐԻՆԱԿ. Լոր. լրոյ. լրով. լւորք, ի լրոց. լրովք : Գ. Թէ որ վերջին վանկի ձայնաւորը ոյ է, ու ի կը փոխուի. ինչպէս, Բոյս. բոսոց. բոսով. բոսոց. Իբոսոց. բոսովք :

Գ. Թէ որ վերջին վանկի ձայնաւորը եա է, եի կը փոխուի. Որդեակ, որդեկի, յ'որդեկէ, որդեկաւ. որդեկաց, յ'որդեկաց, որդեկօք :

Ե. Թէ որ վերջին վանկի ձայնաւորն է գիր ըլլայ է գրի կը փոխուի.

վէմ, վիմի, ի վիմէ . վիմաւ . վիմաց, ի վիմաց, վիմօք :

Հ Ր Ս, Հ Ս, Ն Գ Ը (1)

Բարեկամը կարմիր (Ս.) խնձորները (կը) սիրէ (18Ս.). ընկերներս (33, 16) արծաթը (21) կը կշռեն . այն պիղծ խօսքերէ . սուրբ (35 Բ.) մարգարէներով . շատ բառերու . ուրախանամ (25) . լամ . գրեմ (այն նամակը) . պազ ջուրերը . հիւանդանամ . անիւներէ (35 Ս.) . ողջոյններով (11—55) . հանդերձներուն (11, 25) . այն (որոշեալ) մեհեաններէն (11—55 Գ) . սեաւ (29, 55 Գ) . պատմու . ճանի (16) . փոխարէն (16—54 Ե.) (2) , տամ . առնում (18 Գ) . վաճառում :

Խրատ . Ուսանողք պարտաւոր են , մինչեւ ցարդ մեր ըրած զննութեան եւ լուծման ձեւերը միշտ գործածել . իւրաքանչիւր բառի քով կը նշանակեն իրենց զննութեան ու լուծման համեմատ , նոյն բառին վերաբերեալ բոլոր կանոններուն թիւերը . այս կանոններէն դժուարին երեւցածներուն թիւերն ի հարկին մէք կը նշանակեմք :

ՕՐԻՆՍՍԿ . Աշխ . բարեկամը (25) կարմիր խնձորները կը սիրէ :

(1) Պէտք է զիտնալ որ այս հրահանգներուն մէջ նշանակեալ աշխարհաբարները զրաբարի՝ զրաբարներն ալ աշխարհաբարի դարձնելու են ուսանողք . այս կերպով լեզուին երկու ճիւղոց մէջ ալ կը զարգանան :

(2) Հրահանգներուն մէջ նշանակուած բառից բով դրուած թիւերը կը ցուցունեն թէ ուսանողք նոյն թիւերով նշանակեալ կանոններուն համեմատ վարուելու են :

Գրաբար թարգմանութիւնը . բարեկամն (3. 4 Ա. 16. 25. 27. 28) սիրէ (17. 18 Ա. 21) զխնձորսն (3. 29. 25. 22) կարմիրս (6. 7 Ա. 28. 14 Բ.) . կը տեսնուի արդ, որ իւրաքանչիւր բառի քով դրուած թիւերն ինքնին կը ցուցնեն թէ նոյն բառին նկատմամբ ինչ զիտնալ պէտք է :

Է . Դ Ս Ս

ԲԱՅՅԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԳԻՏՅԵԼԻՔ

36. Բայերն ունին՝ թիւ , դէմք , ժամանակ , եղանակ եւ խոնարհումն .

Թ Ի Ի , Գ Է Մ Ք

37. Թիւը երկու է Ա . եղակի եւ Բ . յօքնակի . ճիշդ գոյականաց նման .

38. Դէմքը երեք է . Ա^ն . Բ^ն . Գ^ն . — Ա^ն . դէմքը խօսողն է . (եւ) կը գործեմ , (մեք) կը գործեմք : Բ^ն . դէմքը ան է՝ որուն որ խօսքը կ'ուղղես . (դու) գիտես , (դուք) գիտէք : Գ^ն . դէմքն ան է՝ որուն վրայ որ կը խօսիս . (նա) կը ննջէ , (նոքա—անոնք) կը ննջեն .) :

39. Ես . դու . նա . բառերը եւ սոցա յօքնակիներն էական կամ անձնական դերանուն կը կոչուին :

40. Ա . Ես (եղ) — մեք (եւ ին յօքնակին) — միշտ Ա . դէմք է :

Բ . Դու (եղ .) — դուք (դու ին յօքն .) — միշտ Բ . դէմք է .

Գ. նա (եզ.)—նորա (նա ին յորն.)—եւ ամեն գո-
յակոններ—միշտ Գ. դէմք են :

41. Տէր բային ու բայը պէտք է որ՝ թուով (եզ.
յոր.) եւ դէմքով (Ա. Բ. Գ.) իրարու համաձայնին .
այսինքն, թէ որ տէր բային եզ. Գ. դէմք է, բայն ալ
պէտք է որ եզ. Գ. —դէմք ըլլայ . ուստի չըսուիր մեք
կը գործես, քանզի Տէ՛ր յորն. Ա. դէմք է . կը գոր-
ծես՝ եզ. Բ. դէմք . պէտք է ըսել, մեք կը գործեմք .
(երկուքն ալ յորն. Ա. դէմք) . կամ դու կը գործես ,
(երկուքն ալ եզ. Բ. դէմք) :

42. Ես . դու . նա . կամ սոցա յորնակի տէրբայի-
ները , Հայերէնի մէջ , շատ անգամ յայտնի չ'են դրուիր,
զօրութեամբ կ'իմացուին . կրնայ ըսուիլ, ես գործեմ
դու գործես , նա գործէ . կամ տէր բայիները վեր-
ցնելով՝ գործեմ, գործես , գործէ :

Գործեմ—ո՞վ է գործողը— Ես . —Ես տէր է գործե՛մ
բային :

Գործես—ո՞վ է գործողը—Դու . —Դու տէր է գործե՛ս
բային . եւայն :

ՍՏԱՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

43. Հայերէնի մէջ ստացական ածականներն են
իմ . քո . մեր . ձեր . իւր . ասոնք դրաբարի մէջ (') գո-
յականէն առաջ կամ ետքը դրուելով մէկտեղ կը հօր-
վին ,

ՍՏԱՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆԱՅ ՀՈՂՈՎՈՒՄԸ

Եզակի

Յո՛վնակի

Ուղ. իւր հաց

Իւր հաց

(1) Ստացական ունեցող գոյականաց ծայրը սովորաբար յօջ չըզրուիր:

Հացց. զիւր հաց	զիւր հացս
Սեռ. իւրոյ հացէ	իւրոյ հացէց
Տրակ. իւրո՞ճ հացէ	իւրոյ հացէց
Բաց. յիւրո՞ւ հացէ	յիւրոյ հացէց
Գործ. իւրով հացիւ	իւրովէ հացէ՛տ

Այսպէս կը հօրովին միւս ստացական ածականներն ալ :

Հ Ր Ս . Հ Ա Ն Գ Թ .

(Իմ) ընկերս ձեր բարեկամները կը սիրէ . դուք (40 Բ.)
մեր ընկերները կը սիրէք (5 Բ.) . մեք ձեր ընկերնե-
րը—22) կը խրատեմք . հաւատարիմ (14) ծառայն
(26) իւր բարերարը կը սիրէ . իմաստուն (35 Բ.) վար-
ժապետը (26) իւր աշակերտը կը սիրէ . զօրավետն (25)
իւր զօրքերը (16—25) կը յորդորէ . իւր զօրքերով . ձեր
զօրքերէն . չար ընկերներէն (25) : Հանդերձք իւր պա-
տառեցան . բարեկամք իմ լուան (լսեցին) զձայն ձեր .

Լ ՈՒԾՈՒՄՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ. Ընկերս ձեր բարեկամները կը սիրէ :
ԳՐԱԲԱՐ. Ընկեր իմ սիրէ զբարեկամս ձեր . սիրէ՛ բայ ,
քանզի գործողութիւն կը ցուցնէ . ներգործական՝ քանզի
կ'ուզէ բառ մը որուն վրայ գործողութիւնը պիտի յանդի-
Եզ. քանզի սիրողը մէկ անձ է .

Գ. դէմք . քանզի սիրողը ոչ խօսողն է եւ ոչ մտիկ
ընողը , այլ ընկերս՝ որուն վրայ կը խօսուի :

Այսպէս ընելու է նաեւ միւս բառերուն համար .

Ընկեր (3. 4 Ա. 16. 23. 27. 41) իմ (43) սիրէ (17, 18 Ա. 21) զբարեկամս (3. 4—Ա. 16. 22.) ձեր (43):



Ը. ԴԱՍ

ԲԱՅՅԵՐՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՂԱՆԱԿՆ ՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

44. Ժամանակը երեք է. ներկայ, անցեալ, ապառնի : Ա. Երբ գործողութիւնն այնպէս հասկցնել կ'ուզեմք, որ իբր թէ հիմայ կ'ըլլայ կ'որ, այս ժամանակը ներկայ կը կոչուի. գործեմ (հիմայ կը գործեմ կ'որ). աշխատիմ (հիմայ կ'աշխատիմ կ'որ). ընթանամ (հիմայ կը վազեմ կ'որ) եւն. ներկայ ժամանակ են :

Բ. Անցեալ ժամանակը երկու է. անկատար անցեալ ու կատարեալ անցեալ :

1. Գրէի (կը գրէի կ'որ), գործէի (կը գործէի կ'որ) անկատար անցեալ է, քանզի գործողութեան մէկ մասը միայն ընցած է՝ մնացածը չ'է ընցած :

2. Գործեցի, գործեցին, կատարեալ անցեալ է, քանզի գործողութիւնը բոլորովին ընցած է :

Գ. Ապառնի կ'ըսուի ժամանակը, երբ գործողութիւնը ետքը պիտի ըլլայ. դրեցից (պիտի գրեմ) գործեցից (պիտի գործեմ) եւայլն :

45. Բայերն ունին չորս եղանակ . Ա. Սահմանական, Բ. Հրամայական, Գ. Ստորագասական եւ Դ. Դերբայ :

46. Գոյականներն ու ածականները կը հոլովին. բայերն ալ կը խոնարհուին :

ԷՍԿԱՆ (ԲՈՒՆ) ԲԱՅԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

ՍՍ. ՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ ԺԱՄԱՆԱԿ

	Եզակի		Յոխնակի
Ա. Դէմք	Եմ	Ա. Դէմք	Եմք
Բ »	Ես	Բ »	Եք
Գ »	է	Գ »	Են

ԱՆԿԱՏԱՐ ԱՆՑԵԱԼ ԺԱՆԱՆԱԿ

Ա. Դէմք	էի	Ա. Դէմք	էաք (էինք)
Բ »	էիր	Բ »	էիք (էիք)
Գ »	էր	Գ »	էին (էին)

ԿԱՏԱՐԵԱԼ ԱՆՑԵԱԼ ԺԱՄԱՆԱԿ

Ա. Դէմք	եղէ (եղայ)	Ա. Դէմք	եղաք (եղանք)
Բ »	եղեր (եղար)	Բ »	եղէք (եղաք)
Գ »	եղել (եղաւ)	Գ »	եղեն (եղան)

ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

Ա. Դէմք	եղէց (պ'ըլլամ)	Ա. Դէմք	եղիցուք (պ'ըլնք)
Բ »	եղիցիս (պ'ըլլաս)	Բ »	եղիջիք (պ'ըլլաք)
Գ »	եղիցի (պ'ըլլայ)	Գ »	եղիցին (պ'ըլլան)

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Հրամայական եղանակներն առաջին եւ երրորդ դէմք չ'են ունենար :

Եզակի Բ. դէմք. լեր կամ եղիջիր — մի՛ լինիր . Յոք-Բ. դէմք. եղերուք կամ լիջիք — մի՛ լինիք :

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա	Դէմք	իցեմ	(ըլլամ)	Ա	Դէմք	իցեմք	(ըլլամք)
Բ	»	իցես	(ըլլաս)	Բ	»	իցէք	(ըլլաք)
Գ	»	իցէ	(ըլլայ)	Գ	»	իցեն	(ըլլան)

ԴԵՐԲԱՅ ԵՂԱՆԱԿ

Անորոշ դերբայ	լինել	(ըլլալ)	} Դերբայները դէմք
Անցեալ »	լեալ	(եղած)	
Ապառնի »	լինեց	(ըլլալու)	

Ս Տ Ո Ր Ո Վ Ե Լ Ի

47. Խօսքի մէջ էական բային քով երկու ուղղական կը գտնուի. այս ուղղականին մէկը տէր բայի (ենթակայ) է, միւս ուղղականն ալ այն տէր բայիին ո՞վ կամ ի՞նչ ըլլալը կը ցուցնէ եւ ստորագելի կը կոչուի ու վրան յօդ չ'առնէր. ինչպէս՝ քերականութիւնը (25) արուեստ է :

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ Ն

է. բայ էական. եղողը ո՞վ է կամ ի՞նչ բան է — բային վրայ եղած այս հարցումը տէր բային գտնելու համար է — քերականութիւնը. ուրեմն քերականութիւնն է՝ տէր բայի է բային .

Հիմայ կ'ըսեմք. քերականութիւնն է. ի՞նչ է. արուեստ (ուղղ.) . հոս արուեստ բառը՝ որ տէր բայիին (քերականութեան) ինչ ըլլալը կը ցուցնէ, նոյն +երականութեան բառին ստորագելին է :

48. Ստորագելի ուղղականը երբեմն գոյական, բայց շատ անգամ ածական բառ մը կ'ըլլայ :

49. Երբոր ածականն ինքնիրեն կ'գործածուի, այսինքն քովը յայտնի գոյական մը չ'ուենար, Գոյականաբար առնուած կ'ըսուի :

Հ Ր Ա Ն Ա Ն Գ Ժ .

Գու բարեկամք հիւանդ (47—48—16—49) է. շանբան (25) ուղիղ է. հնազանդ աշակերտը (26) մեծարոյ է. գիշակեր թուչունները (26) յափշտակող (48. 49) են. մատակ գայլը (26), ահաւոր է. պարտէզը (35 Ե.) գեղեցիկ (16) է. անոնք (նոքա) հնազանդ եւ ուսումնասէր (35 Ե.) աշակերտներ պիտի ըլլան . լապտերը (16—25) լուսատու է . իմ պտուղներս (35 Բ. 29) կը ծախեմ. չար ընկերները (26) ֆրաստակար (16. 48. 49) են. օղակէտ վայրերն (16. 26) ստողջարար (48. 49) են. ծառայն (25. 38. Գ.) իւր ընկերները (22) կը շարձարէ. ձկնորսը (16—25) իւր ուռկանը կը կազմէ. մեք (40 Ա.) ձեր օրէնքները (35 Ե.) կը մերժեմք. ձեր թագսուորն իւր ժողովուրդը կը սիրէր. ժրջան որմնադիրն (35 Ա. 16) իւր գործը (29. 22) կ'աւարտէ. մշակները ցորենը ժողովեցին. համեստ կոյսն (11) իւր գլուխը (29) դարդարեց. քաջ (48. 49) եղէք. անհոգ (48) մի ըլլար . հաւատարիմ ընկերներէն . (քու) ունեցածդ կ'սպառես. ըլլամ. ըլլալու . պիտի ըլլաք . անդամ ծառայ . անդամ ծառայէ . ֆրաստակար բոյսերը կը ջնջեն. ես քաջ (11. 48.) եմ. ես աշխատասէր (35 Ե. 48) եմ. եղած . իւր ծառայն (27) երկիրը (16. 35 Ա. 25) խռովեց . աղատեմ. բնակիմ. հասանէ վայրկեանն չարաղէտ . եզեն գ'ոչխարն պարարակ . աւաղակը ինն ուտեն զմիսն (25. 29) նխեալ (29. 15 Բ. 35. Գ.) :

Գրաբարի մէջ խօսք կազմելու բնական կարգն այս է. առաջ տէր բային, յետոյ բայը, յետոյ սեռի խնդիրը, բայց միշտ այսպէս ընել հարկ չ'է:

Երբ որ խօսքին մէջ գտնուած բայը՝ էական (եմ) բայն է, պէտք է նախ տէր բային, յետոյ բայը, յետոյ ստորոգելին դնել. կամ նախ ստորոգելին յետոյ բայը, յետոյ տէր բային:

Գու ես բարեկամ իմ. կամ, բարեկամ իմ ես դու:

ՁՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՈՒԾՈՒՄՆ

Քու բարեկամը հիւանդ է. բարեկամ քո է հիւանդ. է բայ էակ. սահմ. ներկայ. եղակի Գ. դէմք. — եղովն ո՞վ է, բարեկամը. ապա քաբեկամ տէր է է բային — բարեկամ քո է. բարեկամը ի՞նչ է — հիւանդ. բարեկամին ինչ ըլլալը կը ցուցնէ, ապա անոր ստորոգելին է. բարեկամ քո է հիւանդ — կամ — հիւանդ է բարեկամ քո. բարեկամ (3. 4 Ա. 16. 27. 28.) քո (43) է (17. 19. 37 Ա. 38 Գ.) հիւանդ (7 Ա. 48. 49. 16.)

50. Տէր բային յօքնակի եղած ատեն ստորոգելին ալ յօքնակի կ'ըլլայ. զորօրինակ, մեք եմք քաջք.

51. Բայց թէ որ ստորոգելին բայէն առաջ ու տէր բային բայէն ետքը դնես, շատ անգամ եղակի կը մնայ. զորօրինակ, հիւանդ էին ծառայք մեր:

Թ. ԴԱՍ

52 ՀՈՂՈՎՈՒՄՆ Գ.

Ուղ. բարութիւն	ուղ. բարութիւն+
Հայց. զբարութիւն	հայց զբարութիւնս
Սեռ. բարութեան	սեռ. բարութեանց
Տրակ. բարութեան	տրակ. բարութեանց
Բաց. ի բարութենէ	բաց. ի բարութեանց
Գործ. բարութեամբ	գործ. բարութեամբ+

Նեղութիւն. անկիւն. Ժողովուրդ ('). ծնունդ ('). գըթութիւն:

ԳՈՅԱԿԱՆՆԵՐՈՒ ԼՐԱՅՈՒՅԻՁԸ

53. Գոյական բառերը սեռական հոլով լրացուցիչ մը կ'առնուն. այս լրացուցիչն յարկացուցել կ'ըսուի, որ բանի մը որուն ըլլալը կը ցուցնէ. զորօրինակ, թագաւորին զօրքերը. — որո՞ւն զօրքերը, Ռաբաբի. կամ այն զօրքերն որո՞ւն են, Ռաբաբի. ըսել է որ թագաւորն այն զօրքերն իրենը կ'ընէ, իրեն կը յարկացնէ. ապա Ռաբաբի բառն յատկացուցիչ է զբո՞ր բառին. զբո՞ր բառն ալ անոր յատկացեալը կը կոչուի:

Գրչին ծայրը. — ինչի՞ն ծայրը, կամ, այն ծայրն ինչի՞նն է, գրչին. ապա քրչի բառն յատկացուցիչ է ծայր բառին. Ծայր բառն ալ քրչի յատկացեալն է:

54. Երբոր յատկացեալ մը (այսինքն յատկացուցիչ ունեցող բառ մը) իր քով ածական մ'ունի, պէտք է

(1) Այս բառերուն յօքնակիներն Գ. հոլովման պէս կ'ըլլան.

ածականը իրմէ (յատկացեալէն) առաջ դնել . չըսուիր որդի իմաստուն թագաւորին . քանզի չը հասկցուիր թէ իմաստունն ածականը որդիէն կը վերաբերի թէ չէ Խոստորին . պէտք է ըսել իմաստուն որդի թագաւորին :

55. Աշխարհարարի մէջ յատկացուցիչը միշտ յատկացեալէն առաջ կը դրուի , գրաբարի մէջ խիստ շատ անգամ ետքը կը դրուի .

Ճրագին լոյսը .

լոյս ճրագին .

Թագաւորին զօրքերը .

զօրք թագաւորին .

56. Երբոր գոյական մը երկու կամ աւելի ածական ունի , եւ անոնցմէ մէկն ստացական ածական է , պէտք է ստացականը գոյականին ամենէն մօտ դնել միւսներն անկէ ետք :

Հ Ր Ա Ն Գ Ժ Ա .

Բարեկամք իմ մուսցան զծառայ իմ . ծառայք (26) թագաւորին (53) մեռան . մեծ (15 Ա.) բանակն Հայոց հալածէր զպստտարս (49—16) . տեսէք զհանդերձս (22) իմ գեղեցիկս . Վարժարանին (25) պատուհանները (27) մեծ (48) են . գինեմուլութիւնն (26) զմարդ (26) կ'սպանանէ . գիտութիւնը (26) մեր մտքերը կը մշակէ իմաստուն իշխաններ Հայոց ազգը կառավարեցին . անզգամ (16) ընկերները մեր սրտերը կ'ապականեն , մեր համբաւը (29) կը մթացուցանեն . ես իմ օգտակար (56) գրքերս (22—55 Ա.) կը կարդամ (ընթեռնում) . մեք մեր բարեկամաց (53) ապարանքը (16) կը շինեմք . քու սիրտդ սուրբ (պիտի) ըլլայ (44 Գ.) . անզգամները (49—26) մեր ազգը (22. 16) կը կործանեն . ազատու-

թիւնը (26) մարդոց արդար (54) ժառանգութիւնը (50—48) (պիտի ըլլայ (44 Գ.) :

ԳՐԱԲԱՐ Բարեկամք իմ իմաստունը մուսցան զթուղթն ԱՇԽԱՐՀԱՐԱՐ Իմ խելացի բարեկամներս (այն) թուղթը մուսցան :

ՉՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՈՒԾՈՒՄՆ

Բարեկամք . (3 . 4 Բ . 16 . 26 . 27 . 58 Գ . 41) իմ (43) իմաստունը (6 . 7 Ա . 14 . 29 . 55 Բ . 56) մուսցան (17 , 21 , 18 Գ . 36 Բ . 37 Գ . 44 Բ . 2) զթուղթն (3 . 29 . 55 Բ . 25 . 22 .)

Ժ . Դ Ա Ս

Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր

57. Ածական բայերը , այսինքն ներգործական եւ չէզոք բայերը , շատ անգամ իրենց քովը զանազան բառեր կ'ուզեն , թէ որ ըսեմ տունը ծախեցի , հարկաւ կը հարցուի—որո՞ւ ծախեցիր . թէ որ ըսեմ հաւը մորթեցի , կը հարցուի—ինչո՞վ մորթեցիր , եւ կը սլատասխանեմ՝ դանակով . արդ՝ տունը քարեկամի ծախեցի . հաւը դանակով մորթեցի . քարեկամի եւ դանակով բառերը ծախեմ եւ մորթեմ բայերուն խորիւնները կը կոչուին .

58. Ածական, այսինքն ներգործական եւ չէզոք բայերը , տրական , բացառական եւ գործիական խնդիր կ'առնուն . (արդէն գիտենք որ ամեն ներգործական բայ հայցական հոլով խնդիր մը կ'ունենայ՝ որուն կ'ըսեմք Սեւէ խորիւն) :

Ա. Տրական հոլով խնդիրը գտնելու համար պէտք է հարցնել որո՞ւ (քիմէ՞), ինչի՞ (նէյէ՞) :

Բ. Բացառական հոլով խնդիրը գտնելու համար պէտք է հարցնել—որմէ՞, ի՞նչ բանէ :

Գ. Գործիական հոլով խնդիրը գտնելու համար պէտք է հարցնել, որով, ի՞նչ բանով .

Ա Տ Ո Ի Կ Ա Ն Ո Ի Ն Ն Ե Ր

59. Այն գոյականները, որոնք աշխարհի մէջ բանի կամ մէկ անձի մը անունն են, յատուկ կը կոչուին, զորորինակ, Աստուած. Փարիզ. Հայաստան. Հայկ. Յիսուս. Արեգակն. Լուսին. Եւայլն :

Յատուկ անունները սովորաբար յօքնակի չ'են ունենար. յօք ալ չ'են առներ :

Հ Ր Ա Ն Ա Ն Գ Ժ Բ .

Հիւանդները (49) մահիճներով (55 Ա. 16. 58 Գ.) կը բերէին (42). Յովսէփը վաճառականներու (16. 49. 58 Ա.) ծախեցին (վաճառեցին). երկինքին (11. 35 Ս.) սահանքները (քէփէնք) բացուեցան (բացան) . (իմ) ծառայիս պատմութիւնն (22) իմ (43) բարեկամներէս (58 Ա.) լսեցի (լուայ) . աւազակին (55) մարմինը (22. 29) ջրէն (29. 58 Բ.) հանեցին (հանին) . մեր աղբը բռնաւորներէ տանջուեցաւ (չարչարեցաւ) . առաջին (7 Բ. 29) մարդն հողէն ստեղծուեցաւ (արարաւ) . հազար (7 Բ. 16) զինուոր բլուրէն (25. 29) կ'իջնային . մեք ձեր հաւատարիմ (56) ընկերներն եմք . իմաստուն

բժիշկը (16) հիւանդութեանց դարմանները գիտեն. Աստուծմէ (29) կը վախնամ (երկնչիմ) :

Թող (ներէ) մեզ զյանցանս մեր . աշակերտք Յովհաննու տեսին (տեսան) զՅիսուս . Գողերը ձեր այս (56) հանդերձները գողցան (գողացան) : Բազումք (7 Բ. 49) մեռան ի չկշռելը (28) խառնուածոյն (անբարեխառնութենէ) . Թագաւորն իւր վաս (16) զինուորները պատուհասեց (պատուհասեաց) . մեք ձեր ծառայները պիտի բլանք (44 Գ) . ողջ եղի՛ր . ողջ եղէ՛ք . իմ ապերախտ (55) ծառայներէս հեռացայ :

Ձ Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ի Լ Ո Ի Ծ Ո Ի Մ Ն

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ. իմ ապերախտ ծառայներէս հեռացայ : ԳՐԱՐԱՐ. Հեռացայ յապերախտ ծառայից իմոց :

Հեռացայ. բայ չէ՛ղք սահմ. կատար. եզ. Ա. դէմք . ո՞վ է հեռացողը — ես. դերանուն եզ. ուղ. Ա. դէմք , տէր՝ հեռացայ՝ բային . որմէ՞ (որոցմէ՞) հեռացայ, (իմ) ծառայներէս. գոյ. յօք. հոլով. Ա. բաց. խնդիր. հեռացայ բային. որպիտի ծառայներէս. ապերախտ, ած. որակ. ծառայ գոյականին : Հեռացայ (17. 25. 18 Գ. 58 Ա. 40 Ա. 41. 42) յապերախտ (6. 7 Ա. 14. 16. 55) ծառայից (5. 4 Բ. 11. 58 Բ.) իմոց (45) :

Ժ Ա . Դ Ա Ս

Ա . Լ Ծ Ո Ր Գ Ո Ի Թ Ի Ի Ն — Ե Մ .

60 . Առաջին լծորդութիւնն (եմ) երկու ձեւ ունի . Ա . կան բայեր՝ որ միայն ե՞ կը վերջաւորին՝ ինչպէս

գործ—է՛մ. տիր—է՛մ. առաջնորդ—է՛մ եւն .

Բ . Կան բայեր ալ՝ որ անէ՛ կը վերջաւորին , ինչպէս .
տես— անէ՛մ . հաստ— անէ՛մ . բեկ— անէ՛մ . լուծ— անէ՛մ .
անիծ— անէ՛մ :

61 . ԵՄ — ՁԵՒՈՅՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ

Եզակի

Ա . Դէմք	սիրե՛մ	կը սիրեմ (կոր)
Բ »	սիրե՛ս	կը սիրես (կոր)
Գ »	սիրե՛	կը սիրէ (կոր)

Յոֆնակի

Ա . »	սիրե՛ս+	կը սիրեմք (կոր)
Բ »	սիրե՛+	կը սիրէք (կոր)
Գ »	սիրե՛ն	կը սիրեն (կոր)

Ս Ա Հ Մ . Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Եզակի

Ա . Դէմք	սիրե՛ի	կը սիրէի (կոր)
Բ »	սիրե՛իր	կը սիրէիր (կոր)
Գ »	սիրե՛ր	կը սիրէր (կոր)

Յոֆնակի

Ա . »	սիրե՛ս+	կը սիրէինք (կոր)
Բ »	սիրե՛+	կը սիրէիք (կոր)
Գ »	սիրե՛ն	կը սիրէին (կոր)

Ս Ա Հ Մ . Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

Եզակի

Ա . Դէմք	սիրե՛ցի	սիրեցի
Բ »	սիրե՛ցիր	սիրեցիր
Գ »	սիրե՛ց	սիրեց

Յոֆնակի

Ա . »	սիրեցա՛+	սիրեցինք
Բ »	սիրեցե՛+	սիրեցիք
Գ »	սիրեցի՛ն	սիրեցին

Ս Ա Հ Մ . Ա Պ Ա Ռ Ն Ի

Եզակի

Ա . Դէմք	սիրեցե՛ց	պիտի կամ կը սիրեմ (խօսելէս ետքը)
Բ »	սիրեցե՛ս	» » կը սիրես » »
Գ »	սիրեցե՛	» » կը սիրէ » »

Յոֆնակի

Ա . »	սիրեցցո՛ւ+	» » սիրեմք » »
Բ »	սիրեցցե՛+	» » սիրէք » »
Գ »	սիրեցցի՛ն	» » սիրեն » »

Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն

Եզակի

Ա . Դէմք	չունենար
Բ »	սիրե՛ս սիրե՛ցի մի սիրեր , սիրէ , մի , սիրեր .
Գ »	չունենար .

Յոֆնակի

Բ »	սիրեցե՛+	սիրեցցե՛+	մի սիրե՛+	սիրեցե՛+	մի սիրէք
-----	----------	-----------	-----------	----------	----------

Ս Տ Ո Ր Ա Դ Ա Ս Ա Կ Ա Ն

Եզակի

Ա . Դէմք	սիրեցե՛մ	սիրեմ
Բ »	սիրեցե՛ս	սիրես
Գ »	սիրեցե՛	սիրէ

Յոֆնակի

Ա	»	սիրեցե՛տ	սիրեմք
Բ	»	սիրեցե՛տ	սիրէք
Գ	»	սիրեցե՛ն	սիրեն

Դ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ դերբայ	սիրել	սիրել
Անցեալ »	սիրեալ	սիրած կամ սիրելով
Ապառնի »	սիրելոյ	սիրելու

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. Ե՛՛ք վերջաւորած բայերը «իբե՛տ ին պէս կը խոնարհին, թէ՛ ներգործական ըլլան եւ թէ՛ չհղփք.

Հ Ր Ա Ն Ս Ն Գ Ժ Գ .

Մեք ձեր բարեկամները կը սիրեմք (խօսելէս ետք). մեք ձեր բարեկամները կը սիրեմք (կոր). Աստուծոյ պարգեւները (23. 16. 22) մի արհամարհէք. մեր պարտէզին պտուղները (29. 35 Բ.) վաճառականներուն ծախեցինք. մրրիկը (16. 27. 25) լիճին (3. 35 Ա) խորերը (22. 29. 49) յուզեց. ձեր թուղթը գրեմ (խօսելէս ետք). ձեր ստայօղ գրութիւնները (մատեան) կը մերժեմք (կոր), մեր Աստուծոյն սուրբ (34) խորանն (16) ապականել (29) ամբարշտութիւն է. տգէտները զիւրախաբ են. մի սիրեր կեղծաւորները (49), անոնք (նոքա) ձեր մտքերը կը պղտորեն. արքայն Հրամայեց իւր (43) զօրապետներուն. պիտի գործեն (34 Գ). պիտի աղաչեն զուք մեծ (49) էք. սիրեա (ստորագ.). ազատէք (ստորագ.). Աստուծոյ արքայութիւնը խնդրեցէք. երկիւղն (26) անգթութեան ընկեր է.

Ձ Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ի Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ Ն

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ. Մեք ձեր բարեկամները կը սիրեմք. ԳՐԱԲԱՐ. Մեք սիրեսցուք զբարեկամս ձեր. Սիրեսցուք բայ ներգ. սահմ. ապառնի, յոքն. Ա. դէմք. Որոնք են սիրողները. — մեք Մեք—դեր. յոք. ուղ. Ա. դէմք. տէր՝ սիրեսցուք բախին. Մեք սիրեսցուք—ըմվ—զբարեկամս. Զբարեկամս—գոյ. յոք. հայց. հոլ. Բ. սեռի խնդիր—սիրեսցուք բային. Որոնն բարեկամները—ձեր Զեր. ստացական ածական՝ բարեկամ գոյականին :

Ժ Բ. Դ Ա Ս

62. Յատկացուցիչ ունեցող գոյականներն աշխարհաբարի մէջ ը կամ ն յօղը միշտ կ'առնեն, գրաբարի մէջ, այդ գոյականներն, այսինքն յատկացեալ գոյականներն, այն ատեն յօղ կ'առնեն, երբ աշխարհաբարը՝ ծայրը ն կամ ը յօղն ունենալէն զատ՝ սկիզբն ալ այն բառը դրուած կ'առնենայ. գոր օրինակ, Բարեկամիս տուն ը տուն բարեկամի իմոյ Բարեկամիս այն տուն ը, տունն բարեկամի իմոյ

63. Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ Ն Ե .

Ուղ. դինի	գինի՛
Հայց. դգինի	գգինի՛

Սեռ. գինւոյ
Տրակ. գինւոյ
Բաց. ի գինւոյ
Գործ. գինեւ-

գինեւոյ
գինեւոյ
ի գինեւոյ
գինեւոյ

Գօտի. կզղի. եկեղեցի. խնձորենի. տանձենի.
ոչխարենի. գայլենի. տեղի, եւ ամեն է վերջաւորուած
երկավանկ ու բազմավանկ բառեր :

Հ Ր Ա Ն Ա Ն Գ Ժ Գ .

Եթովպացոց (այն) թագուհին Սողոմոնի (55. 59)
իմաստութիւնը գովեց . հնազանդ զաւակն (որդի) իւր
ծնողաց սուրբ (54) պատուիրանքը (16) կը յարգէ .
պատկառելի ծերն (49) իւր բերնէն իմաստութիւն կը
բղխէր . օտարական եղբայրացիք անողորմ (55) իսրա-
յելացիներէն գնեցին այն գեղեցիկ երիտասարդը (25) .
Հրէից տգէտ (55 Ն.) քահանայապետներն (26) Աստուծոյ
որդին հալածեցին . զինուորները (27, 25) զօրապետը
(21 25) կանչեցին . պատգամաւորներն (25) իմ խօս-
քերս թագաւորին (58 Ա.) պատմեցին . մեծ ընկերնե-
րուս խորհուրդը վարժապետիս (1) պիտի յայտնեմ . ձեր
հաւատարիմ ծառայները մեր սիրելի բարեկամներն (47)
են . լեռնական ժողովուրդները (28) մեր նախնի թա-
ղաւորաց մեծաշուք գերեզմանները կրկտեցին : Գինիի
վեց թակոյկներ (55 Գ. 15) արծաթեայ (48) էին .
հինգ թակոյկներ կճեայ (49) էին :

Շ Ա Ղ Կ Ա Պ

61. Երկու բառեր կամ երկու խօսքեր իրարու հետ
(1) Պէտք է բայերուն տրական խնդիրը սեռի խնդրէն առաջ դնել :

կապող բառերը շարժող կ'ըսուին , ինչպէս զինուորն
և զօրապետը . հրեշտակները կամ սատանայները . ա-
րեւը ծագեցաւ՝ որովհետ ըյս է . ես կը խնդամ էսկ դու
կուլաս . կը խնդրեմ ձեզմէ որ (զի) բարեկամս մխիթա-
րէք եւն :

Շագկապները երբեմն խօսքին սկիզբը կը դրուին, եր-
բեմն մէջտեղը :

ՕՐԻՆՍԱԿ . Երբ որ քու եղբայրդ քեզի գէտ մեղանչէ , նե-
րէ անոր : Եթէ ուսումն օգտակար է , պէտք է զայն ձեռք
անցնել : Եղբօրս կը ներեմ քոյց թշնամոյս չեմ ներեր :
Ես քեզ կը սիրեմ , ինչպէս դու զիս կ'ատես :

65. Երբ քանի մը տէր բայիներ մէկտեղ դրուին ,
բաղադրեալ տէր բայի կ'ըսուին : Բաղադրեալ տէր բա-
յիներուն բայն յոքնակի կ'ըլլայ :

Հ Ր Ա Ն Ա Ն Գ Ժ Ե .

Երբ որ (մինչդեռ) նա (40 Գ.) կը քարոզէր, աշակերտնե-
րը (25) խնդրեցին որ (զի) գայլերուն առակը (16. 22.)
մեկնէ (այս խօսքէն ետք) . կրթութիւնը եւ գիտութիւ-
նը մարդուս (26. 29) միտքը (16. 22) ու սիրտը (11. 55
Ա. 26) կը մշակեն . Փարաւոն (57) իւր պաշտօնեայները
(11. 25) դատաւարտեց . արքայն պատուիրեց իւր զօ-
րապետներուն որ թշնամին հալածեն (44 Գ.) . Հերովդէս
(11. 59) ժողովեց Հրէից քահանայապետներն (25) ու
դպրները (25) . բարի մարդը (26) իր սրտին բարի
գանձերէն բարիք կը հանէ (1) , իսկ չար մարդը (26) իւր

(1) Որ կամ որպէս զի (զի) շարժական ետք բայը սովորաբար ա-
պառնի կը դրուի :

արտին չարութենէն չարիք կը հանէ (1) . անիրաւնեքը (49) . արդարութիւն (26) կը քարոզեն՝ բայց չարիք (65) կը գործեն. ներսէսի ծնողքն աղքատ՝ բայց համեստ եւ հանճարեղ էին : Ձեր ժրաջան աղախինն անկողինները կը յարդարէր : մաքրասէր աշակերտն իւր վերարկուին եւ հանդերձներուն փոշիները կը թոթուէ . դրացւոյս որդիները մաքրասէր եւ կանոնապահ են :

Ժ Գ . Դ Ա Ս

66 — Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ Ն Զ ,

Ուղ . որդն	ուղ . որդուան (2)
Հայց . զորդն	հայց . զորդուան
Սեռ . որդան	սեռ . որդանց
Տրակ . որդան	տրակ . որդանց
Բաց . յորդանէ	բաց . յորդանց
Գործ . որդամբ	գործ . որդամբէ

Հինն . կողմն . սերմն . մուկն . Արեգակն . մանուկ . տուն . շուն . անուն . աղջիկ . տունկ :

Ա Ծ Ա Կ Ա Ն Ա Յ Խ Ն Դ Ի Բ Ն Ե Բ Ը

67 . Ածականները՝ սեռական . տրական , բացառական եւ գործիական հոլովներով խնդիր կրնան առնուլ :

(1) Այս բային վրայ գիտելիք տես (176) :
 (2) Երբեմն ունի ի տեղ անի կ'ըլլայ . սերմն—սերմանի . անուն—անուանի . կողմն . կողմանի են :

68 . Բ . Ձ Է Ա . Լ Ծ Ո Ր Գ Ո Ւ Թ Ե Ա Ն

ՍԱՀՄ . ՆԵՐԿԱՅ		ՍԱՀՄ : ԱՆԿԱՏԱՐ	
Տեսանէ՛մ	տեսանէ՛մ+	տեսանէ՛ի	տեսանէ՛ա+
Տեսանէ՛ս	տեսանէ՛+	տեսանէ՛իք	տեսանէ՛ի+
Տեսանէ՛	տեսանէ՛ն	տեսանէ՛ք	տեսանէ՛ին
ՍԱՀՄ . ԿԱՏԱՐԵԱԼ		ՍԱՀՄ . ԱՊԱՌՆԻ	
Տեսի՛	տեսա՛+	տեսից	տեսցո՛ւ+
Տեսից	տեսէ՛+	տեսցե՛	տեսցի՛+
Տես, էտէս տեսի՛ն		տեսցի՛	տեսցին

Հ Ր Ս Մ Ա Յ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Տես , մի տեսանէք տեսէ՛ , մի տեսանէ՛

Ս Տ Ո Ր Ս Դ Ա Ս Ս Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Տեսանիցե՛մ	տեսանիցե՛մ+
Տեսանիցես	տեսանիցէ՛+
Տեսանիցի՛	տեսանիցին
ԴԵՐՐԱՅ	ԱՆՈՐՈՇ
»	ԱՆՑԵԱԼ
»	ԱՊԱՌՆԻ
	տեսանէլ
	տեսանէլ
	տեսանելոց

Ս Տ Ո Ր Ս Դ Ա Ս Ս Կ Ա Ն Ի Գ Ո Ր Փ Ա Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

69 . Աշխարհագրարի մէջ իբր օրինակ կամ իբր ենթադրութիւն յառաջ բերուած խօսքերը գրաբարի մէջ ստորագրասականով կը թարգմանուին :

Հ Ր Ա . Հ Ա Ն Գ

Թէ որ իմ աղջիկներէս մէկը ձեր մանուկները տեսնէ (69), երբ Հրէից քահանայապետները տեսան որ Քրիստոս արդարութիւնը եւ ճշմարտութիւնը կը քարոզէր (կոր), Յուդան կանչեցին եւ խնդրեցին որ իր վարդապետը մատնէ . երբոր զօրքերէն շատերը (67) զօրապետին հրամանաց անաստեսն (69), թշնամիք բանակին զօրութիւնը կը կոտորեն . մանուկներէն պատիկն իւր ընկերներուն գրքերը պատուեց . թէ որ մանուկ մը իւր գրամ մը կորսնցունէ (69), ճրագը կը վառէ եւ կը փնտռէ այն գրամը , ու երբոր գտնէ (69) , կը կանչէ իւր սիրելի բարեկամներն ու բարեկամուհիները , կը ցուցնէ իւր գրամը որպէս զի անոնք ալ (եւ նոքա) տեսնեն . օրէնքն ու մարգարէից խրատները պահէ . հանճարեղ խօսքեր ձեր բերնէն կ'ելնեն եւ մեր ընկերներէն շատերուն միտքը կը կրթեն :

Ձ Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ Թէ որ իմ աղջիկներէս մէկը ձեր մանուկները տեսնէ .

ԳՐԱՐԱՐ Եթէ մին աղջկանց իմոց տեսանիցէ զմանկունս ձեր :

Եթէ (64) մին (7 Բ. 49 . 67) յաղջկանց (66) իմոց (45) տեսանիցէ (69. 68) զմանկունս (66.) ձեր (45)

ՅՈՒՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

Պ. Յուցական ածականներն են՝ այս , այդ , այն եւ կը հոլովին այսպէս .

Ուղ. այս

Հայց. զայս

Սեռ. այսր այսորիկ

Տրակ. այսմ այսմիկ

Բաց. յայսմ յայսմանէ

Գործ. այսու այսուիկ

այս այսոքիկ

զայս զայսոսիկ

այսց այսոցիկ

այսց այսոցիկ

յայսց յայսցանէ

այսու այսուքիւք

Այդ , այն ցուցականներն ալ ասոր պէս կը հոլովուին :

Պ1. Յուցականները գոյականէն թէ առաջ ու թէ ետքը կրնան դրուիլ եւ միշտ մէկտեղ կը հոլովուին : Թէ որ ցուցականները գոյականներէն առաջ դրուին , կարճ հոլովները կը գործածուին , իսկ եթէ ետքը դրուին՝ երկայն հոլովները , եւ այն ատեն գոյականին վրայ « , ր , ն » գիրերէն մէկը կը դրուի միշտ ,

Պ2. Յուցականը գոյականէն առաջ դրուած

Ուղ. այդ հաց

Հայց. զայդ հաց

Սեռ. այդր հացի

Տրակ. այդմ հացի

Բաց. յայդմ հացէ

Գործ. այդու հացիւ

այդ հացք

զայդ հացս

այդց հացից

այդց հացից

յայդց հացից

այդու հացիւք

Պ3. Յուցականը գոյականէն ետքը դրուած

Ուղ. հացք այդ

Հայց. զհացք զայդ

Սեռ. հացիք այդորիկ

Տրակ. հացիք այդմիկ

Բաց. ի հացէք յայդմանէ

Գործ. հացիւք այդուիկ

հացքք այդոքիկ

զհացքք զայդոսիկ

հացիցք այդոցիկ

հացիցք այդոցիկ

ի հացիցք յայդցանէ

հացիւքք այդոքիւք

Հ Ր Ա . Հ Ա Ն Գ

Ծերունին այս մանուկներէն երկուքը տեսաւ եւ խընդ-
րեց որ իւր ծաղկալից պարտէզը ջրեն . այս աղջիկը
համեստ ու առաքինի է . երկու գերիններ անտառին ծա-
ռերը կտրեցին եւ այրեցին . այս շուրին ակը պղտոր
է . այդ մանկան բարեկամներէն շատերը մեր անդրանիկ
որդւոյն դրացինը պիտի տեսնեն , իմ թշնամիներս այն
տղուն մազերը պիտի կտրեն . ծեր վարսավիրացն իւր
յաճախորդներուն մօրուքը կը գերծէ . այն հացին պա-
տաները գտայ . այս տաճարին երկայնութիւնն ու լայ-
նութիւնը չափեցին եւ հիմերը խախտեցին .

Ժ Դ . Դ Ա Ս

Մ Ա Կ Բ Ա Յ

ՅԳ . Գործողութեան մը (բային) մէկ պարագայն
ցուցնող բառերը մակրայ կ'ըստին : Գործողութեան
պարագայներ են՝ ժամանակ, տեղ, որպիսութիւն , թիւ,
չափ , սաստկութիւն եւայլն .

Գ Լ Խ Ա Ի Ո Ր Մ Ա Կ Բ Ա Յ Ն Ե Ր Ն Ե Ն

Ա յ ժ մ , հիմայ . Յանկարծ .
Ա պ ա , ետքը . վաղիւ , վաղը .
Յայնժամ , այն ատենը . Յեռանդն , երէկ չ'է առջի օրը .
Ա յ ար , հոս . Ա ս ա , հոս . Ա ն դ ր է ն , նօրէն , դարձեալ .
Ա ն դ ր , հոն . Ա ն դ , հոն . Յաճախ , շատ անգամ .

Ա յ դ ր , հոգ . Յետոյ , ետքը . երիցս , երեք անգամ .
Ո՛ւր . Արդեօք . Ոչ .
Զիւրդ , ինչպէս , ինչու . Թեքեւս , կարելի է . Մի .
Ո՞րպէս , ինչպէս .
Ընդէր , ինչո՞ւ համար . Գուցէ , չ'ըլլայ թէ . Բնաւ .
Ո՛ւստի , ո՛ւրիշ . Միթէ . երբէք :

Ի կամ Յ

ՅԾ . Շարժում (տեղէ մը ուրիշ տեղ) ցուցնող բա-
յերը ի կամ յով հայցական խնդիր կ'առնեն , բայց պէտք
է հայցականին վրայի շ գիրը վերցնել :

Հ Ր Ա . Հ Ա Ն Գ

Այս անուշաբոյր ծաղիկները մեր տունը զրկեցէք .
երէկ չ'է առջի օրը երկու տղայք մեր տունը զրկեցին
օգտակար մատեան մը , բայց ծնողքս մերժեցին այդ
տղուն ընծայն . այս աղջիկն իւր սենեակը մտաւ եւ
յետոյ դուրս ելաւ . Ատուած զմարդիկ այնչափ սիրեց ,
մինչեւ իւր միածին Որդին աշխարհ զրկեց . երբ որ
Բրուտոս կեսարն սպաննեց , ժողովեց իւր բարեկամնե-
րը եւ ըլլաւոր զօրաց բանակաւ դիմեց Իտալիա ,
բայց Պոմպէոս յաղթեց հանրապետութեան այս մեծ
ախոյեանին , Բրուտոս անձնասպան եղաւ . Հերովդէս
հրամայեց իւր դահիճներուն որ Յովհաննէսը գլխատեն .
երեք անգամ քու մշակդ այդին զրկեցիր , բայց նա
դարձեալ չը կատարեց իւր պարտքը . դուռը դարկեք .
Ինչպէս կորսնցուցիր այդ դրամներդ . չ'ըլլայ թէ թըշ-
նամին իւր ծառայները քու անդդ (արտ) զրկէ եւ ա-

նոնք հոն (անդ) որոմնը ցանեն . միթէ խաղողը փուշե-
րէ՞ կը քաղեն (69) . թէպէտ եւ ընկերներս երէկ եւ ե-
րէկ չ'է առջի օրը մեր դրացիին տեսան , բայց ես եր-
բէք իմ ծառայներս չը տեսայ :

76. Ածեմ , բերեմ . հանեմ բայերը թէպէտ ե՞մ կը
վերջաւորին , բայց անե՞մ վերջաւորած բայերուն պէս կը
խոնարհին :

Ածեմ , կատարեալը կըլլայ անի ոչ թէ անեցի , ապառ-
նին՝ անից ոչ թէ անեցից , հրամայականը՝ անի ոչ թէ
անեա , անցեալ դերբայը անեալ եւ ոչ թէ անեցեալ :
Այսպէս նաեւ հանեմ , բերեմ բայերը . կատար , հանի ,
բերի . ապոն . հանից , բերից եւն .

77. Այսր , անդր , այդր մակբայները կը գործած-
ուին՝ երբ գործողութիւնը շարժում (տեղէ մը ուրիշ
տեղ) կը ցուցնէ .

Հոս բերէք—ածէք այսր :

Հոն դրկեցէք—առաքեցէք անդր :

78. Անդ , աստ մակբայները կը գործածուին՝ երբ
գործողութիւնը դադարում (սահմանի մէջ) կը ցուցնէ :

Հոս քարոզեց , քարոզեաց աստ .

Հոն ննջեց , ննջեաց անդ .

Ժ Ե . Դ Ա Ս

79. Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ Ն Է .

Ուղ . գառն

ուղ . գառնի+ (1)

(2) Ոմանցը ինկ տեղ ունի կ'ըլլայ . հարսն—հարսունի , մատն—մա-
տունի , դիւցազն—դիւցազունի :

Հայց . դգառն

Հայց . դգառնիս

Սեռ . գառն

սեռ . գառանց

Տրակ . գառն

տրակ . գառանց

Բաց . ի գառանէ (1)

բաց . ի գառանց

Գործ . գառածք

գործ . գառածք+

Հարսն , դիւցազն , մատն , խաշն , ազն :

Ա Ն Ո Ր Ո Շ Հ Ա Յ Յ Ա Կ Ա Ն

80. Երբ սեռի խնդիր Հայցականն անորոշ մաս մը կամ
+անի մը կը ցուցնէ , վրան ոչ չ'կը դրուի ոչ ալ յօդ , զոր
օրինակ . այն քաջ որսորդները ֆաղաներ սպաննեցին , հոս
ֆաղաներ ըսելով կը հասկնամք քանի մը անորոշ ֆաղաներ ,
ուստի զրարառի մէջ կ'ըլլայ այսպէս . որսորդքն այ-
սօքիկ քաջ սպանին ֆաղանս (առանց չ'ի եւ առանց ն
յօդի) :

Հ Ր Ա Հ Ա Ն Դ

Հայոց դիւցազուններուն գործերը նշանաւոր եղան .
երկու թագաւորներ հրաման ըրին իրենց պաշտօնեայ-
ներուն որ շուտով վնասուեն առոյգ եւ գեղեցիկ պատա-
նիներ , եւ այդ պատանիներով նոր գունդեր կազմեն :

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն Մ Ը

Արչակունեաց վերջին թագաւորն եղաւ Արտաշէս եր-
րորդ : Այս թագաւորը մեծամեծ չարիք հասոյց մեր
սիրելի երկրին . Հայոց տղէտ եւ չարամիտ նախարար-
ները Պարսից թագաւորէն խնդրեցին որ Արտաշէսը
Հայոց արքունի գահէն ձգէ եւ Պարսիկ նախարարնե-

(1) Ոմանց բացառականը անէ չ'ըլլար , նէ կ'ըլլայ . ինչպէս հարսն—
ի հարսնէ , դիւցազն—ի դիւցազնէ , ազն—յազնէ , հարսն—ի հարսնէ :

րով կառավարէ Հայաստանը . Հայոց կաթողիկոսը (այս կաթողիկոսին անունն էր Սահակ) թախանձագին աղա-
 չեց նախարարները որ այս ազգակործան գիտաւորու-
 թիւնը չը կատարեն . այս սուրբը կը յայտարարէր միշտ
 թէ՛ արդարեւ Արտաշէս իւր մոլի վարքովը ամենուն ա-
 տելի եղած էր եւ թէ նա սլարտաւոր էր իւր ընթացքը
 փոխել, բայց, կը կրկնէր շատ անգամ, ինչպէս իմ հի-
 ւանդ ոչխարս սովալլուկ գայլին մատնեմ . նախարար-
 ները մերժեցին Սրբոյն այս ազգաշահ յորդորանքներն
 ու կործանեցին Հայոց թագաւորութեան գահը . այն
 առեն Պարսից թագաւորն Արտաշէսը հեռաւոր երկիր
 (մը) աքսորեց . Սահակը բանտարկեց եւ վեհմիշտապու-
 հը Հայաստան զրկեց. (այս իշխանը Պարսից նախարար-
 ներէն մէկն (մի ոմն) էր): Այսպէս Հաստատեցին Պար-
 սիկը՝ մարդսանաց իշխանութիւնը:

Ա Մ Ա Կ Ա Ն Ա Ն Ո Ր Ո Շ

Տ1. Հայերէնի մէջ քանի մը ածականներ ալ կան որ
 անորոշ կը կոչուին, գլխաւորներն ասոնք են. ոմն—ոք
 (մը), իմն—ինչ (1) (մը), միւս, այլ (ուրիշ), ամենայն
 (ամեն), իւրաքանչիւր (ամեն մէկ), բազում, սակաւ, որ:

Տ2. Անորոշ ածականները սովորաբար գոյականնե-
 ներէն ետքը կը դրուին եւ մէկտեղ կը հոլովին:

Տ3. Անձ ցուցնող գոյականներու քով «մն—ն» կը
 դրուի, ինչպէս կին մը—կին ոմն կամ ոք, աղայ մը—
 մանուկ սմն կամ ոք:

(1) Ինչ բառը գոյական է՝ երբ հարստում իւն, ստացուածք կը նշա-
 նակէ եւ կը հոլովի ուղ. ինչ, սեռ. ընչի. գործ. ընչիւ. բաց. յ՝ ընչէ
 եւայլն (44):

Տ4. Իր ցուցնող գոյականներու քով իմն—ինչ կը
 դրուի, —թուղթ մը—թուղթ իմն կամ ինչ—տուն իմն
 կամ ինչ:

ՀՈՂՈՎ ՌԻՄՆ ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆՍՑ
 ԳՈՅԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Եզակի

Ուղ.	մանուկ	ոմն—ոք	մանուկ մը
Հայց.	զմանուկ	ոմն—ոք	մանուկ մը
Սեռ.	մանկան	ուրումն—ուրուք	մանուկի մը
Տրակ.	մանկան	ումեմն—ումեք	մանուկի մը
Բաց.	իմանկանէ	ումեմնէ—ումեքէ	մանուկէ մը
Գործ.	մանկամբ	ոմամբ—	մանուկովմը

Յոնականի

Ուղ.	մանկունք	ոմանք	քանի մը	մանուկներ
Հայց.	զմանկունս	ոմանս	քանի մը	մանուկները
Սեռ.	մանկանց	ոմանց	քանի մը	մանուկներու
Տրակ.	մանկանց	ոմանց	քանի մը	մանուկներու
Բաց.	ի մանկանց	ոմանց	քանի մը	մանուկներէ
Գործ.	մանկամբք	ոմամբք	քանի մը	մանուկներով

Եզակի

Ուղ.	թուղթ իմն—ինչ	թուղթ մը
Հայց.	զթուղթ իմն—ինչ	թուղթ մը
Սեռ.	թղթոյ իրիք	թղթի մը
Տրակ.	թղթոյ իմիք	թղթի մը
Բաց.	ի թղթոյ իմեքէ	թղթէ մը
Գործ.	թղթով իւիք	թղթով մը

Յոսփնակի

Ուղ. թուղթք ինչ	քանի մը թղթեր
Հայց. զթուղթս ինչ	քանի մը թղթերը
Սեռ. թղթոց իրիք	քանի մը թղթերու
Տրակ. թղթոց իմիք	քանի մը թղթերու
Բաց. ի թղթոց իմեքէ	քանի մը թղթերէ
Գործ. թղթովք իւիք	քանի մը թղթերով

Իւրաքանչիւր (29) միւս (29) այլ (29) ո՞ր (29) որ (28) :

Յ5. Անորոշ ածականներն ալ երբ քովերնին յայտնի գոյական չունենան՝ քոյակաբար առնուած կ'ըսուին, եւ կը նշանակեն, ո՞մն — ո՞ք, մէկը. իմն — ինչ, բան մը. միւսներուն ծայրն ալ մէկ մէկ ք կամ ն կը գրուի աշխարհաբարին մէջ՝ երբ գոյականաբար գործածուին :

Հ Ր Ս. Հ Ս. Ն Փ

Ծառայ մը իւր տիրուհւոյն որդին դանակով սպաննեց : Հայոց նախարարներէն մէկ քանիները երբ տեսան որ թագաւորը իւրաքանչիւր նախարարի ստացուածքը կը յափշտակէր, եւ երկրին չարագործներն ու աւագակները չէր պատժեր, այլ Արշակաւան կը խրկէր, ժողովեցին Հայոց զօրքերը, գիմեցին Արշակաւան, տիրեցին քաղաքին եւ բոլոր բնակիչները խողխողեցին, միայն սուրբ Ներսէսի աղաչանօք կաթնակեր երախայներն ազատեցին : Յիսուսի աշակերտներէն մէկը քահանայապետին ծառայն զարկաւ եւ մէկդի նետեց (եհան) այն ծառային ականջը. Յիսուսը բերին (ածին) եւ քահանայապետին տունը մտցուցին. Յիսուս այրի եւ աղքատ կլին մը տեսաւ որ այն գանձանակին մէջ (75) երկու

լումայ ձգեց . Աստուծոյ պատուիրանքը կ'արհամարհէք որպէս զի ձեր աւանդութիւններն հաստատէք . որովհետեւ ծարաւեցայ եւ դուք ջուր խմցուցիք, օտար էի եւ հիւրընկալեցիք, մերկ էի եւ հագցուցիք, հիւանդ էի եւ տեսաք . այն ատեն Աստուած մեղաւորները յաւիտենական տանջանքի պիտի մատնէ՝ իսկ արդարներն Աստուծոյ արքայութիւնը պիտի ժառանգեն . սյսուհետեւ Աւետարանն ամեն հեթանոս ազգերու մէջ քարոզեցէք, եւ այն ժողովուրդները մկրտեցէք հօգիով ու ջրով : ԳԻՏԵԼԻՔ. Միւս, այլ, իւրաքանչիւր, որ, անորոշ ածականները՝ կը հղովին Գ. հղովման վրայ (29). միայն եզ. տրականներն ու՞մ եւ բացառականները մէկը վերջանան . միւս — միւսում — ի միւսմէ եւայլն . ամենայն ածականն ալ առաջին հղովման վրայ կ'երթայ (11). բայց քովը գոյական բառ ունեցած ատեն առաջ կը գրուի ու չհղովիր . ամեն քաղքէ — յամենայն քաղաքէ — ամեն քաղաքներէ — յամենայն քաղաքաց եւայլն :

Ժ. Զ. Դ. Ա. Ս

Ի Մ Լ Ծ Ո Ր Գ Ո Ի Թ Ի Ի Ն

Ի՞՞ լծորդութիւնը երկու ձեւ ունի ի՞՞ եւ անի՞՞

Յ6. Ա. Ձե՛ի ԻՄ ԼԾՈՐԳՈԻԹԵԱՆ

Ս Ս. Հ Մ Ա. Ն Ա. Կ Ա. Ն Ե Ղ Ա. Ն Ա. Կ

ՆԵՐԿԱՅ

Ա.ՆԿԱՏԱՐ

Խօսի՞՞	խօսի՞՞	խօսի՞՞	խօսի՞՞
--------	--------	--------	--------

Խօսի՞ս	խօսի՜+	խօսե՛լք	խօսե՛լ+
Խօսի՛	խօսի՞ս	խօսե՛ք	խօսե՛ն

ԿԱՏԱՐԵԱԼ

ԱՊՍՈՆԻ

Խօսեցա՛յ	խօսեցա՜+	խօսեցայ	խօսեցա՞+
Խօսեցար	խօսեցայ՜+	խօսեցե՞ս	խօսեցե՛ի+
Խօսեցա՞ս	խօսեցան	խօսեցե՛ի	խօսեցե՛ն

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Խօսեաց	մի՛ խօսե՛ք	խօսեցար՞+	մի՛ խօսե՛ի
--------	------------	-----------	------------

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Խօսեցե՛՛	խօսեցե՛՛+
Խօսեցե՛՞	խօսեցե՛՛+
Խօսեցե՛	խօսեցե՛ն

ԴԵՐԲԱՅ ԵՂԱՆԱԿ	ԱՆՈՐՈՇ	խօսե՛լ
»	»	խօսեցեալ
»	»	խօսելոց

Այսպէս կը խոնարհին բոլոր է՛ վերջաւորած բայերը, ինչպէս .
 Խոստովանե՛՛. ազատե՛՛. վստահե՛՛. վաստակե՛՛. հաւանե՛՛ .

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅՅԵՐՈՒՆ ԿՐԱՒՈՐԱԿԱՆԸ

ՏՂ . Ամեն ներգործական, այսինքն քան ինչ ընել ցուցնող, բայերն իրենց կրաւորականն ունին. կրաւորական բայերը՝ Տե՛կէ ինչ ըլլա՛նէ կը ցուցնեն, զորօրինակ կը Քրե՛ ներգործական բայ է, քանզի քան ինչ ընել կը ցուցնէ . կը Քրո՛ւ կրաւորական է՝ քանզի մէկէ մը ըլլա՛նէ կը ցուցնէ . Խալե՛՛ ընել կը ցուցնէ, Խալե՛՛ կը խաչուիմ՝

Տե՛կէ ինչ ըլլա՛նէ կը ցուցնէ . առաջինը ներգ. է, երկրորդը կրաւոր: Չէ՛զք բայերը կրաւորական չեն ունենար:

ՏՏ . Ե՛ վերջաւորուած ներգործականները կրաւորականի դարձուներու համար պէտք է ե՛՛ լծորդը է՛ ի փոխել, զորօրինակ .

Ներգործական

Կրաւորական

Գործե՛՛ (կը գործեմ)	գործե՛՛ (կը գործուիմ)
Սիրեմ (կը սիրեմ)	սիրիմ (կը սիրուիմ)
Բժշկեմ (կը բժշկեմ)	բժշկիմ (կը բժշկուիմ)
Մատնեմ (կը մատնեմ)	մատնիմ (կը մատնուիմ) եւն:

Ե՛ վերջաւորուած ներգործականներն այսպէս, է՛ լծորդութեամբ, կրաւորականի դարձուներէ ետք, պէտք է խոնարհել Խօ՛ւի ին վրայ:

ՏԾ . Ի՛ լծորդութիւն ունեցող բայերուն մէջ շատ մը ներգործականներ կան, ինչպէս. խօսիմ, խոստովանիմ, շահիմ. բարբառիմ. դաւանիմ. կամիմ եւայլն . ասոնց կրաւորականն ալ ճիշդ ներգործականին պէս կը խոնարհի գրաբարին մէջ, զորօրինակ,

Ներգործական

Կրաւորական

Խօսիմ (կը խօսիմ)	խօսիմ (կը խօսուիմ)
Դատիմ (կը դատիմ)	դատիմ (կը դատուիմ)
Շահիմ (կը շահիմ)	շահիմ (կը շահուիմ)

ԳԻՏԵԼԻՔ. Այս տեսակ բայերուն ներգործականները կրաւորականներէն որոշելու համար պէտք է խմատին միտ դնել:

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ.

Մի դատէք մէկը՝ որ դուք ալ (եւ) չը դատուիք և վասն զի որ դատաստանով դատէք, այն դատաստանով պիտի դատուիք: Եւ երբոր լեռնէն կ'իջնային, Յիսուս իւր աշակերտաց պատուիրեց որ մէկու մը չը պատմեն այն անսխլը: Ամբոխը այն կոյրերուն սաստեց որ լեռն, բայց անոնք ալ աւելի կը պոսային ու կ'ըսէին, ողորմեցէք: Բայց այն ատեն Յիսուս իւր աշակերտներէն երկուքը զրկեց որ քաղաքը մտնեն եւ կերակուր գնեն: Հոն կ'ապուած էջ մը պիտի գտնէք, քակեցէք ու հոս բերէք: Որո՞ւ պէտք է այս գրիչը. — այդ գրիչը պէտք է իմ ընկերիս, ընկերիս ծառայներուն եւ այն ծառայներուն որդւոցը: Երկնից արքայութիւնը թագաւորի մը նմանեցաւ. այս թագաւորը իւր որդւոցն հարսանիքը կատարեց. զրկեց իւր ծառայներն որ հրաւիրեալները հարսանիքի կանչեն. բայց այն հրաւիրեալները չուղեցին թագաւորը պատուել, դարձեալ ուրիշ ծառայներ զրկեց որ խօսին, թէ ահա իմ ճաշս պատրաստեցի եւ ուրիշ ամեն բան (ինչ) պատրաստ է, բայց անոնք նորէն մերժեցին թագաւորին՝ հրաւէրը, եւ ժողովրդէն ոմանք ալ թշնամանեցին այն ծառայներն ու սպաննեցին. թագաւորը խիստ բարկացաւ. զրկեց իւր գորքերը. այն սպաննողները սատկեցուց եւ քաղաքն այրեց. յետոյ ծառայները թագաւորին հրամանաւ դուրս ելան եւ ուրիշներ ժողվեցին ու հարսանիքին տունը բերին. թագաւորը ներս մտաւ եւ հոն մէկը տեսաւ. այն մարդուն հանդերձն հարսանեաց հանդերձ չէր. այն ատեն թագաւորն հրամայեց իւր ամեն ծառայներուն որ այն մարդուն ոտքերն ու ձեռքերը կտան եւ դուրս հանեն:

ԺԱՄԱՆԱԿ ՅՈՒՅՈՒՆՈՂ ԽՆԳԻՐՆԵՐ

90. Ժամանակ (ատեն) ցուցնելու համար գրաբարի մէջ յ կամ է գիրերը կը գործածուին. թէ որ բառը եզակի է, յ կամ է ն տրականի վրայ կը դրուի, իսկ թէ որ բառը յոքնակի է՝ յ կամ է ն առանց շ ի հայցականի վրայ կը դրուի:

ԴԵՐԲԱՅԵՐՈՒ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

91. Անորոշ ու անցեալ դերբայները երբորդ հոլովման (29) պէս կը հոլովին. անորոշ դերբայը գոյական է եւ միայն եզակի կը հոլովի. անցեալ դերբայները թէ անական ու թէ գոյական կրնան գործածուիլ, եւ թէ եզակի ու թէ յոքնակի կը հոլովին:

ԱՆՈՐՈՇ ԳԵՐԲԱՅ. Խօսել, խօսելոյ խօսելով. յոքն. չ'ունի:

ԱՆՅԵԱԼ ԳԵՐԲԱՅ. Խօսեցեալ, խօսեցելոյ խօսեցելով:

Խօսեցեալք, խօսեցելոց, խօսեցելովք:

Խորտակել. խորտակեալ.

Կառք խորտակեալք, կառաց խորտակելոց, կառօք խորտակելովք. կոտրած կառքեր, կոտրած կառքերու, կոտրած կառքերով:

92. Անորոշ դերբայն է ով առանց շ ի հայցական եղած ատեն՝ երկու նշանակութիւն կ'ունենայ:

Ա. Առէ՛ կը ցուցնէ. զորօրինակ ի ծնանել Յիսուսի, Յիսուսի ծնելու ատեն. ի մտանել թագաւորին, թագաւորին մտնելու ատեն: Անորոշ դերբայն այս նշանակութեամբ գործածուած ատեն քովը միշտ սեռական յատկացուցիչ մը կամ վրան շ յօղը կը դրուի:

Բ. Նպարակ կը ցուցնէ. եւ այն ատեն համար կը նշանակէ, զորօրինակ. եմուտ ի խօսել, խօսելու համար (նպատակաւ) մտաւ. խօսեցաւ 'ի շարժել զսիրտ արքային, թագաւորին սիրտը շարժելու համար խօսեցաւ : Անորոշ դերբայն այս նշանակութեամբ զործածուած ատենը՝ սովորաբար է կամ յ գիրը կը գեղջուի, այսպէս. հրամայեաց ծառայից իւրոց կապել զմանուկն. փոխանակ ըսելու—ի կապել.

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ

Յիսուսի աշակերտներէն մէկ քանիներն Հրէաստանէն Սամարացոց երկիրն ելան Աստուծոյ արքայութիւնը քարոզելու համար : Երկիւքի թռչուններուն նայեցէք. ոչ կը վարեն, ոչ կը հնձեն եւ ոչ շտեմարաններու մէջ կը ժողվեն. Աստուած այդ թռչունները կը կերակրէ : Նայեցէք վայրենի շուշանին, ինչպէս կ'աճի. երկիւքին մէջ դանձեր դանձեցէք, հոն ոչ ցեցն ու ոչ ուտիճը կ'ապականեն, ոչ ալ գողեր ական կը բանան (հատանել) : Աչքը մարմնոյն ճրագն է. թէ որ քու աչքդ առատ է, բոլոր մարմինդ լուսաւոր կ'ըլլայ : Ոչ ոք կրնայ երկու իշխանաց ծառայել, կամ մէկը կ'ատէ եւ միւսը կը սիրէ, կամ մէկը կ'արհամարհէ եւ միւսը կը մեծարէ :

Հանդերձները մարմինս ցուրտէն եւ արեգական տաքէն, հովէ, անձրեւէ եւ փոշիէ կը պատասպարեն : Ձրկիրները կաշիէ բաճկոն կը հագնին :

Հապանեն յունկն իմ երգք թռչնոց եւ ձայն որոտման եւ հնչումն զանգակաց եւ շտաշխն մտրակաց եւ խխնջել ձիոց եւ խոխոջ առուի եւ բարբառ նուագարանաց :

Ահաւասիկ ելանեմք յերուսաղէմ եւ Որդի մարդոյ մատնեսցի. քահանայապետիցն եւ դպրաց եւ դատապարտեսցեն զնա 'ի մահ, եւ մատնեսցեն զորդի մարդոյ հեթանոսաց, այսպանել եւ հարկանել 'ի խաչ : Ել սերմանահան սերմանել զսերմանիս իւր :

Ժ Է. Դ Ա Ս

Ա Ն Կ Ա Ն Ո Ն Հ Ո Ւ Ո Վ Մ ՈՒ Ն Ք Գ Ո Յ Ա Կ Ա Ն Ա Յ

Կանոնաւոր հոլովմանց եօթն հատը ասից առաջ դրած եմք. պէտք է գիտնալ որ հայերէնի մէջ քանի մը բառեր կան՝ որոց հոլովման ձեւերն անկանոն են, հետեւաբար անոնց հոլովմունքն ալ անկանոն է :

93. Ա Ն Կ Ա Ն Ո Ն Հ Ո Ւ Ո Վ Մ ՈՒ Ն Ք ՈՒ Ն Ե Ց Ո Ղ Բ Ա Ռ Ե Բ

Ա. Ուղ.	հայր	հարք	Բ. Ուղ.	կին	կանայք
Հայց.	զհայր	զհարս	Հայց.	զկին	զկանայս
Սեռ.	հօր	հարց	Սեռ.	կնոջ	կանանց
Տրակ.	հօր	հարց	Տրակ.	կնոջ	կանանց
Բաց.	ի հօրէ	ի հարց	Բաց.	ի կնոջէ	ի կանանց
Գոր.	հարբ	հարբք	Գործ.	կնաւ	կանամբք

Հայր բառին պէս կը հոլովին, եղբայր, հօրեղբայր, մօրեղբայր, կնքահայր, սանահայր, մայր, կնքամայր եւայլն :

Կնք բառին պէս կը հոլովին, տիկին, առնակին եւայլն :

Գ. Ուղ.	քոյր	քորք	Գ. տէր	տեարք
Հայց.	դքոյր	դքորս	զտէր	զտեարս

Սեռ.	քեռ.	քերց	տեառն	տերանց
Տրակ.	քեռ.	քերց	տեառն	տերանց
Բաց.	ի քեռէ	ի քերց	ի տեառնէ	ի տերանց
Գործ.	քերբ	քերբք	տերամբ	տերամբք

Գոյր բառին պէս կը հոլովին մօրաքոյր հօրաքոյր եւ այլն .

Տէր բառին պէս կը հոլովին, այր, քեռայր, տանուտէր եւ այլն :

Ե. Ուղ.	օր	աւուրք	Ձ. գիւղ	գիւղք
Հայց.	զօր	զաւուրս	զգիւղ	զգիւղս
Սեռ.	աւուր	աւուրց	գեղջ	գիւղից
Տրակ.	աւուր	աւուրց	գեղջ	գիւղից
Բաց	յօրէ	յաւուրց	ի գեղջէ	ի գիւղից
Գործ.	աւուրբ	աւուրբք	գիւղիւ	գիւղիւք

Օր բառին պէս կը հոլովին կիսօր, միջօր եւ այլն :

94. ԱՍԵՄ, ԳԻՏԵՄ ԵՒ ԿՍՐԵՄ ԲԱՅԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԳԻՏԵՆԻՔ

Ասեմ, գիտեմ, եւ կարեմ (կրնամ) բայերը «էբէ՛բա- յին պէս կը խոնարհին, բայց կատարեալին՝ ապառնիին՝ հրամայականին եւ անցեալ դերբային մէջ է գիրն » ի կը փոխուի :

Ասեմ. կտ. ասացի, ապոն. ասացից, հրմ. ասա, անց. դերբ. ասացեալ :

Փոխանակ ըսելու. ասեցի. ապոն. ասեցից. հրմ. ասա. անց. դրբ. ասեցեալ .

Այսպէս են գիտեմ եւ կարեմ բայերն ալ, բայց այս վերջինն հրամայական չունի. շինել պէտք եղած ատեն կ'ըսեմք, կարող լե՛ր, կարող լե՛րուք :

Հ Ր Ս, Հ Ա, Ն Գ

Յամեանն (՝) յունուարի, երկրագործք կակղեն դգե- ալին՝ բրչու, զի սերմանեացեն անդ սերմանս յամիսս մարտի եւ ապրիլի. ի նմին ամսեան յունուարի արկանեն աղբ ի հող. կաղմեն ածուս եւ սերմանեն սերմանս՝ բու- սուցանել հաղար եւ ստեպղին . յատանեն զխնձորենիս եւ զտանձենիս :

Յաւուր միում, պատանի ոմն անմիտ շոսյլէր անձին գովութիւն, ասելով եթէ նախնիք իւր իցեն ոմանք յԱզնուացն Աթենացոց . մի ոմն յունկնդրացն կարճէ գրանս պատանւոյն՝ ասելով . չը գիտիցես դու, զի ազնուականութիւն նախնեաց քոց շիջանի է քեզ այդու տխմարութեամբ քով :

Յորժամ ոք իցէ թշնամի ուրուք եւ թագուցանիցէ զթշնամութիւնն, եւ դալտ կամիցի մնասել եւ չը գիտի- ցէ զհանգամանս մնասակարութեանն, եւ յածիցի խնդ- րել հնարս, ապա դտեալ ժամանակ, յորժամ ոք ի բժշկաց թշնամուոյն ասիցէ չը հպել յայս ինչ եւ չը ճաշակել յայս նիշ կերակրոց, զի հասանիցէ առողջութեանն, այլ թշնա- մին կեղծաւորիցի վաղվաղակի եւ պարսաւիցէ զբժիշկն եւ դրդեսցէ զնա՝ գործել հակառակ հրամանաց բժշկին եւ այնու՝ մնաս հասուցանիցէ առնն այնմիկ. թշնամին այն ապաքէն ոչ գիտէր յառաջագոյն զհանգամանս մնասա- կարութեանն, այլ ի պատուիրելոց բժշկին՝ եգիտ հնա- րըս եւ այնու եղեւ մնասակար :

(1) Դիտ. Ա. Ամիս բառին եզակի սեռականն ու տրականը կ'ըլլան ամիս, ամսեան և կամ ամսոյ :

Դիտ. Բ. ժամանակ ցուցնող բառերը գրաբարի, ինչպէս նաև աշ- խարհաբարի, մէջ սովորաբար նախադասութեան սկիզբը կը դրուին :

Թէպէտ եւ տեսի, չը կարեմ պատմել :
 Բազում անգամ տեսանեմք զի որդի թագաւորի
 Լինի (1) թագաւոր, որպէս Սողոմոն էր որդի Գաւթի
 եւ նստաւ յաթոռ հօրն, եւ որդի իւր նստաւ ի նոյն
 աթոռ՝ ընդ բազում ժամանակս (74) :

Պ Զ Ն Ո Լ Ո Վ Ո Ի Մ Ն Ը .

Ուղ.	ծով	ծովք
Հայց.	զծով	զծովս
Սեռ.	ծովու	ծովուց
Տրակ.	ծովու	ծովուց
Բաց.	ի ծովէ	ի ծովուց
Գործ.	ծովու	ծովուք

Չգեստ, շարաթ. ագուաւ. աղուէս. առիւծ. դար .
 դաս. կաքաւ. ուրբաթ. վրէժ. ձուլ. սով :

ԳԻՏ. Ա. Ոմանց եզ. բացառականը է վերջաւորելու
 տեղ «-է կը վերջաւորուի, զոր օրինակ. վնաս՝ ի վնաս-
 »-է. նախանձ՝ ի նախանձ»-է. խրատ՝ ի խրատ»-է .
 քաղց ի քաղց»-է. զօր՝ ի զօր »-է եւայլն :

Բ. Ս. յս հօրովման եղակիին պէս կը հօրովին ըբ վեր-
 ջաւորուած ածականները, բայց յոքնակիին քիչ մը
 տարբեր կ'ըլլայ, զոր օրինակ.

Ուղ.	փոքր	փոքունք
Հայց.	զփոքր	զփոքունս
Սեռ.	փոքու	փոքունց
Տրակ.	փոքու	փոքունց

(1) Լինիմ եւ եղանիմ բայերը, լինիմ ը տես անկանոն բայերուն
 մէջ, եղանիմ ին կատարեալն եւ ապառնին եմ բային հետ նոյն են.
 հրամայականը կ'ըլլայ. եղիչիր, մի եղանիր. եղերուք, մի եղանիրք.
 անցեալ դերբայ՝ եղեալ. միւս ժամանակները կանոնաւոր կ'ըլլան :

Բաց.	ի փոքուէ	ի փոքունց
Գործ.	փոքու	փոքումք

Մանր. ծանր. թանձր. քաղցր .
 Գ. Մեղր եւ ասր (բուրդ) գոյականներն այս հօրովման
 վրայ կ'երթան, բայց յոքնակիին չը գործածուիր :

Հ Ր Ս, Հ Ա Ն Գ

Օր մը, տղայ մը ծաղկալից պարտէզ մը մտաւ եւ
 հոն տեսաւ քանի մը չար տղայներ. այս չար տղայքը
 կ'ուզէին շուն մը նետել վտակին ջուրերուն մէջ. տղայն
 ուզեց ազատել այն խեղճ անասնիկն այն չար տղայոց
 ձեռքերէն, ուստի գնեց այն շունն եւ իւր տունը բե-
 րաւ. շունը շուտ մը սիրեց իւր բարերարը, ու միշտ այն
 բարի մանուկին կը հետեւէր. գիշեր մը, երբ տղան կ'ու-
 զէր իւր անկողինը մտնել, շունը սկսաւ հաչել. տղայն
 ուզեց գիտնալ թէ շունն ինչո՞ւ կը հաչէ, եւ երբ հոս
 հոն կը պտտէր բան մը տեսնելու, յանկարծ տեսաւ ժա-
 հադէմ մարդ մը. այս մարդը գող մ'էր. տղան սկսաւ
 բարձրաձայն գոչել. այն ատեն իւր հայրն ու մայրը եւ
 բոլոր տնեցիք գիմեցին տղուն սենեակը. կապեցին գո-
 ղին ձեռքերն ու ոտքերը եւ դատաւորին մատնեցին .
 մարդը վերջապէս խոստովանեցաւ որ կ'ուզէր տանը
 բոլոր բնակիչները նախ խողխողել եւ ապա տունը կո-
 ղուտել :

Տեսէք այս համատարած ծովը, այս ահաւոր երկինը,
 բարձր լեռներն եւ այն լեռներուն գագաթները, մանր
 բլուրները եւ թարձր մէգով ծածկուած հորիզոնը. տե-
 սէք, Աստուած ստեղծեց այս ամենը :



Ժ Ը . Դ Ա Ս

96. Բայերու Ա. Ը որդու թիւնն էր էմ—անէմ, երկ-
րորդը էմ—անէմ, երրորդն ալ էմ—անէմ, զոր օր. կարդ-
ած, խոստանա՛մ :

97. Ա. Զ Ե Ի . Գ. Լ Ծ Ո Ր Դ Ո Ի Թ Ե Ա Ն

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

ՆԵՐԿԱՅ		ԱՆԿԱՏԱՐ	
Կարդամ	կարդամք	կարդայի	կարդայաք
Կարդաս	կարդայք	կարդայիր	կարդայիք
Կարդայ	կարդան	կարդայր	կարդային

ԿԱՏԱՐԵԱԼ		ԱՊԱՌՆԻ	
Կարդացի	կարդացաք	կարդացից	կարդացուք
Կարդացեր	կարդացէք	կարդացես	կարդաձիք
Կարդաց	կարդացին	կարդացէ	կարդացեն

Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Կարդա՛, մի՛ կարդար, կարդացէ՛ք, մի՛ կարդայք

Ս Տ Ո Ր Ա Դ Ա Ս Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Կարդայցեմ	Կարդայցեմք	
Կարդայցես	Կարդացէք	
Կարդայցէ	Կարդայցեն	
Դ Ե Ր Բ Ա Յ	ԱՆՈՐՈՇ	Կարդալ
»	ԱՆՑԵԱԼ	Կարդացեալ
»	ԱՊԱՌՆԻ	Կարդալոց

Բ . Զ Ե Ի Գ . Լ Ծ Ո Ր Դ Ո Ի Թ Ե Ա Ն

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

ՆԵՐԿԱՅ		ԱՆԿԱՏԱՐ	
Խոստանամ	խոստանամք	խոստանայի	խոստանայաք
Խոստանաս	խոստանայք	խոստանայիր	խոստանայիք
Խոստանայ	խոստանան	խոստանայր	խոստանային

ԿԱՏԱՐԵԱԼ		ԱՊԱՌՆԻ	
Խոստացայ	խոստացաք	խոստացայց	խոստացուք
Խոստացար	խոստացայք	խոստացիս	խոստաձիք
Խոստացաւ	խոստացան	խոստացիր	խոստացին

Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Խոստացիր, մի՛ խոստանար. խոստացարուք, մի՛ խոստա-
նայք

Ս Տ Ո Ր Ա Դ Ա Ս Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Խոստանայցեմ	խոստանայցեմք
Խոստանայցես	խոստանայցէք
Խոստանայցէ	խոստանայցեն

Դ Ե Ր Բ Ա Յ	ԱՆՈՐՈՇ	Խոստանալ
»	ԱՆՑԵԱԼ	Խոստացեալ
»	ԱՊԱՌՆԻ	Խոստանալոց

Հ Ր Ա . Հ Ա Ն Գ

Օդ (29) է նիւթ ինչ լոյծ . պատէ դերկիր շուրջա-
նակի . խոսանայ ի ցրտութենէ, եւ ի ջերմութենէ ան-
գայտանայ . ուստի, օդ արեւելից կողման է ջերմ,

պայծառ եւ թեթեւ՝ ի ծագել Արեւու . իսկ օդ Արեւ-
մտից կողման է ցուրտ եւ ծանր եւ մուլթ : Օդ ընդ-
մտանէ յերակունս , ի ջիղս եւ յ'այլ մասունս մարմնոյ :

Քերականութիւն ուսուցանէ խօսել ուղիղ զլեզու
ինչ եւ գրել անսխալ . արուեստս այս է առաջնորդ եւ
ուղեցոյց մտաց՝ մխել յ'այլ եւ այլ ուսմունս . հրահան-
գէ եւ նրբացուցանէ զմիտս մանկանց , զի լիցին յառա-
ջադէմք ի գիտութեան .

Երկուք յ'աշակերտացն Յիսուսի գնային յ'աւուրն
յայնմիկ ի գիւղ մի , (անուն գեղջս այսորիկ էր Եմմա-
ուս) եւ խօսէին ի գնալն . մերձեցաւ Յիսուս յ'աշա-
կերտան եւ նոքա թէպէտ տեսին զնա , այլ ոչ գիտացին
եթէ ո՞ էր նա :

Դ Ե Ր Ա Ն Ո Ի Ն

ՊՏ . Դերանունն կ'ըսուին այն բառերը՝ որոնք ա-
ռաջուց յիշուած բառի մը տեղ կը դրուին .

Չորս տեսակ դերանուններ կան որք են , էական , ցու-
ցական , ստացական եւ յարաբերական .

էական են . ես , դու , սա , դա , նա , ինքն , իւր .
այս դերանունները սովորաբար անձ նշանակող գոյա-
կանաց տեղը կը գործածուին .

Ես՝ Ա՞ր դէմքի դերանունն է , Դու՝ Բ՞ր դէմքի . միւս-
ներն Գ՞ր դէմքի (40) :

ՀՈԼՈՎՈՒՄՆ ԷԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՅ

Եզակի Ես , զիս , իմ , ինձ , յինէն , ինեւ .
Յոյնակի Մեք , զմեզ , մեր , մեզ , ի մէնջ , մեօք .

Եզ . Դու , գբեզ , քո , քեզ , ի քէն , քեւ
Յոյ . Դուք , զձեզ . ձեր , ձեզ , ի ձէնջ , ձեօք

Եզ . Սա , զսա , սորա , սմա , ի սմանէ , սովաւ .
Յոյ . Սոքա , զսոսա , սոցա , սոցս , ի սոցանէ , սոքօք
Դա , նա դերանուններն ալ ասոր պէս կը հոլովին :

Եզ . Ինքն , զինքն , ինքեան , ինքեան , յինքենէ , ինքեամք .
Յոյ . Ինքեանք , զինքեանս , ինքեանց , ինքեանց . յինք-
եանց . ինքեամքք .

	Եզակի	Յոյնակի
Ուղ .	Չունի	Իւրեանք
Հայց .	Չունի	զիւրեանս
Սեռ .	Իւր . իւրեան	իւրեանց
Տրակ .	Իւր . իւրեան	իւրեանց
Բաց .	Յիւրմէ	յ'իւրեանց
Գործ .	Իւրեւ , իւրեամք	իւրեամքք

Յարաբերական դերանունն է «յ կամ » . թէ անձի եւ
թէ իրի տեղ կը դրուի , եւ կը հոլովի այսպէս .

	Եզ .	Յոյ .
Ուղ .	Որ , ո	որ , որք , ոյք
Հայց .	Չոր , զ'ո	զոր , զորս , զոյս
Սեռ .	Որոյ , ոյր	որոց , ոյց
Տրակ .	Որում , ում	որոց , ոյց
Բաց .	Յ'որմէ , յ'ումմէ	յ'որոց , յ'ոյց
Գործ .	Որով	որովք .

Հ Ր Ա Ն Պ

Յաւուր միում, ուսուցանէր նոցա Յիսուս բազում
ինչ. եւ նաոէին փարիսեցիքն եւ վարդապետքն՝ որք
էին ժողովեալք յամենայն քաղաքաց Գալիլեացոց եւ
Հրէաստանի եւ Նրուսաղեմի. եւ զորութիւն Տեառն ե-
րուէր՝ յորժամ բժշկէր Յիսուս գէլւանդս նոցա. եւ ա-
հա արք ոմանք բերէին մահճօք սյր մի, որ էր անդա-
մարցծ եւ խնդրէին մուծանել զնա ի ներքս, զի բժըշ-
կեսցէ Յիսուս. եւ իբրեւ ոչ գտանէին տեղի. զի մուծ-
ցեն զնա, քանզի ամբոխ բազում կայր անդ, ելին ի
տանիս եւ կախեցին զնա ի ցուոցն եւ զայրն իջուցին
մահճօքն ի տեղին՝ ուր կայր Յիսուս.

Յիսուս ուրիշ առակ խօսեցաւ անոնց, ու կ'ըսէ.
Երկնից թագաւորութիւնը նմանեցաւ խմորի (29)՝ զոր
կին (մը) պահեց (թագոյց) ալիւրի (սպեր) երեք զրիւ-
ներու մէջ, մինչեւ ամենը խմորեցաւ. այս ամենը Յի-
սուս անոնց խօսեցաւ առակներով, որպէս զի մարդա-
րէին խօսքը կատարուի (կատարեսցի). իմ բերանս ա-
ռակներով պիտի բանամ, աշխարհի սկիզբէն ծածկը-
ւածները պիտի բղխեմ:

Ժ Թ . Դ Ա Ս

Ն Ա Խ Գ Ի Բ

99. Նախդիր կամ նախադրութիւն կ'ըսուին այն

բառերը՝ որ գոյականէ կամ դերանունէ մը առաջ դր-
ւելով անոնց խմաստը կ'որոշեն կամ կ'ամբողջացնեն .

100. Հայերէնի մէջ դործածուած նախդիրներն են .
է կամ յ . շ . ա . ը . ր . յ .

101. Իսկ գլխաւոր նախադրութիւններն են հետե-
ւեալները .

1⁰. Սեռական խնդիր ուղղներ

Առաջի .	առջեւը	Յայնկոյս ,	անդիի կողմը
Զինի .	} ետեւէն	Յայտկոյս ,	աւ . քի կողմը
Զհետ .		Առընթեր .	քովը . կիցը
Ի վերայ .	վրան	Առանց .	առանց
Յանդիման .	դիմացը	Յեւ .	ետքը
Ի միջի .	} մէջտեղը	Ի ձեռն .	ձեռքովը
Ի մէջ .		Փոխանակ	տեղը
Արտաքոյ	դուրսը	Վասն	} համար
		Յաղագս	

2⁰. Տրական խնդիր ուղղներ

Հակառակ . հակառակ
Առընթեր . քովը . կիցը
Հանդէպ . դիմացը .

3⁰. Բացառական խնդիր ուղղներ .

Գաղտ . գաղտուկ
Հեռի . հեռու
Բաց . բաց ի

4⁰. Գործիական խնդիր ուղղներ .

Հանդերձ . մէկտեղ
Շուրջ . զ . բոլորաթիւքը .

5°. Հայցական խնդիր ուղղուներ

Մինչեւ ի	} մինչեւ	Քան զ	} աւելի
Մինչեւ ց			
Որպէս	} պէս	Ի վեր քան զ	} աւելի վեր
Իբրեւ			
Նախ քան զ	} (քանէ) մը առաջ		
Յառաջ քան զ			

Ա Ռ Ն Ա Խ Գ Ի Բ

102. Առ նախդիրը անձ նշանակող բառերու հետ կը գործածուի, եւ

Ա°. Երբ գործողութիւնը շարժում կը ցուցնէ, հայցական հոլով խնդիր կ'ուղէ, զոր օրինակ, առաքեաց առ թագաւորն. գնաց առ հայր իւր.

Բ°. Երբ գործողութիւնը դադարում կը ցուցնէ՝ եզակի մէջ տրական, իսկ յոքնակի մէջ դարձեալ հայցական խնդիր կ'ուղէ եւ +ով կը նշանակէ թէ անձանց եւ թէ իրաց համար: Բնակեցաւ առ Էջօր Խրոմ. Էջօրը +ով բնակեցաւ. բնակեցաւ առ Ժողոջ իւր. Ժողոջը +ով բնակեցաւ. կոյր սա դրանն. դրանը +ով կը կենար:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Գարնան օր մը, դեռ հասակ իշխան մը ծաղկալից պարտիզի մը (ուրեք) մէջ կը պտտէր. յանկարծ մեծ ձայն մը հասաւ ականջին եւ տեսաւ մեղուներու փեթակ մը մօտեցաւ (մերձեցաւ) այս՝ տեսիլին՝ որ նոր բան մ'էր իրեն համար. դարմացաւ երբոր տեսաւ սա փոքրիկ պետութեան կարգաւորութիւնը՝ խնամքը եւ աշխատութիւնը. ըջիջները կ'սկսէին կապուիլ եւ կանոնաւորուիլ. մեղ-

ուաց մէկ մասը (կէսը) կը լեցնէին զանոնք իրենց քաղցրը նեկտարովը (11). միւսները (այլք) կը բերէին ծաղիկներ՝ զորս քաղած էին գարնան ճոխութիւններէն. Անգործութիւնն ու ծուլութիւնը հալածուած էին այս փոքր պետութենէն. ամէն կողմ (ամենուրեք) գործունէութիւն կը տեսնուէր, բայց առանց խառնակութեան եւ առանց նախանձու ընդդէմ անոնց՝ որք իրենցմէ աւելի նախապատիւ էին: Մինչդեռ մանկահասակ իշխանը կը վարմանար այս երեւոյթին վրայ (ընդ այս տեսիլ), մեղու մը՝ որ միւսներուն թագուհին էր, մօտեցաւ անոր ու ըսաւ. մեր կենցաղը կը բերկրեցնէ զքեզ, բայց պէտք է որ օգտիս անկէ. մեք երբէք չ'եմք ներեր որ մեր ընկերներն անկարգ ու չարաբարոյ ըլլան. հոս ամեն ոք իւր աշխատութեան եւ իւր հանձարոյն համար եւեթ մեծարելի է. մեք առաւօտէն մինչեւ երեկոյ կ'աշխատինք (աշխատ լինել) յ'այն՝ յ'որմէ մարդիկ մեծամեծ օգուտներ կը քաղեն. աշխատեցէք դուք ալ մեզ պէս. կատարեցէք ձեր պարտիքը. եթէ ժողովրդոց իշխան էք, հայրաբար խնամեցէք զանոնք, սովորեցուցէք անոնց հպատակ կալ օրինաց՝ որոնք հիմն են աղգերու բարգաւաճման:

Ի. ԴԱՍ

103. Բ. ՁԵԻ. ԲՊ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ (86)

ՍՍ. ՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներհաս	ԱՆԿԱՏԱՐ
Ուսանի՛ճ	ուսանէ՛ի
Ուսանիս	ուսանէ՛իր
Ուսանի	ուսանէ՛ր
Ուսանիմք	ուսանէ՛աք
Ուսանիք	ուսանէ՛իք
Ուսանին	ուսանէ՛ին
ԿԱՏԱՐԵԱԼ	ԱՊԱՌՆԻ
Ուսայ	ուսայց
Ուսար	ուսցիս
Ուսաւ	ուսցի
Ուսաք	ուսցուք
Ուսայք	ուսցիք
Ուսան	ուսցին

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ուսի՛ր, մի՛ ուսանիր
Ուսարո՛ւք, մի՛ ուսանիք

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ուսանիցի՛ճ	ուսանիցիմք
Ուսանիցիս	ուսանիցիք
Ուսանիցի	ուսանիցին

ԴԵՐԲԱՅ	ԱՆՈՐՈՇ	Ուսանե՛լ
»	ԱՆՅԵԱԼ	Ուսե՛ալ
»	ԱՊԱՌՆԻ	Ուսանե՛լցց

ԳԻՏԵԼԻԲ Ա. — Աի՞ն Լծորդութեան երկրորդ ձեւին
Գեաննէին (68), պէս խոնարհուող ներք. բայերուն կրա-
ւորականը «սաննէին պէս կը խոնարհի՛» անէ՛ճ Լծորդը
անէ՛ճ ի փոխելով. զոր օրինակ .

Ներգործական Տեսանէ՛ճ— Կրաւորական Տեսանէ՛ճ
» Արկանեմ— » Արկանիմ

ԿԱՏԱՐԵԱԼ Տեսայ. արկայ— ԱՊԱՌՆԻ Տեսայց, արկայց
եւայլն :

Բ. Նստի՛ճ բայը թէպէտ ի՛ճ կը վերջաւորի, բայց իւ-
ռնէին պէս չը խոնարհուիր՝ այլ «սաննէին պէս . կար-
Նստայ, Ապու. Նստայց. անցեալ դերբայ՝ նստեալ. խե-
հրամայականը կ'ըլլայ. նիստ, մի՛ նստիր. նստարո՛ւք,
մի՛ նստիք :

Ի ԿԱՄ Յ.

(Շարունակութիւն ձևս քիւ 75)

104. Դադարում (տեղւոյ մը կամ սահմանի մը մէջ
դործողութիւն) ցուցնող բայերը՝ եղակիի մէջ տրա-
կան, յօքնակիի մէջ առանց շ ի հայցական խնդիր
կ'առնեն ի կամ, յ ով .

Բնակէին— ո՛ւր (տունը կան տան մէջ) ի տան
Բնակէին— ո՛ւր (տուները կամ տուներու մէջ) ի տունս
ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ. Ա. Ասանկ խնդիր եզող յատուկ ու-
նունները՝ միշտ ի կամ, յ ով հայցական կը դրուին, ինչ-

պէս . Հայաստանի մէջ կը բնակէին — բնակէին է Հայաստան . եւ ոչ է Հայաստանի :

Բ . Հինգերորդ հոլովման, (դինի — դինույ — 65), տակ դացող բառերը այսպէս է կամ , ով գործածուած տեսն՝ պէտք է եզակի արականին ու վերջաւորութիւնը ու՛ ի փոխել . ինչպէս, կղզիի մէջ կը բնակին — բնակին ի կղզու՛ . եւ ոչ թէ ի կղզույ , վասն զի այն տեսն բացառականի հետ կը շփոթի .

Գ . Երրորդ հոլովման (խնդիր խնդրոյ , 29) տակ դացող բառերն ալ, դադարում ցուցնող բայերու հետ , եզակիի մէջ արականով Հեն գործածուիր՝ այլ հայցականով . չըսուիր հեղձաւ (խղճուեցաւ) է քեօյն , այլ է քեօն :

Յ Ն Ա Խ Դ Ի Բ

105 . Կ . Նախդիրը հայցական խնդիր կ'տունէ եւ ասեմ որո՞մ հարցանեմ՝ բայերուն հետ կը գործածուի ու կը նշանակէ հարց . ետ զնա ցոյ՛ւն . զանիկայ ճշմերուն տուաւ . Հարցին ցնա աշակերաքն . աշակերտներն անոք հարցուցին . Ասէ ցնաս Յիսուս . Յիսուս անոց կ'ըսէ :

Ը Ն Դ Ն Ա Խ Դ Ի Բ

106 . Ընդ նախդիրը եզակիի մէջ արական, յոքնակիի մէջ հայցական հոլովի հետ գործածուելով՝ կը նշանակէ հարց : Խօսեցաւ ընդ նմա , ընդ նորս , ընդ եղբօր իւրում , ընդ եղբարս իւր . Անոր հետ , անոնց հետ , իւր եղբօր հետ , իւր եղբայրներուն հետ խօսեցաւ :

Հ Ր Ա Ն Ա Ն Գ

Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէն յայնմանէ , Յիսուս պատուիրեաց նոցա եւ ասէ . մի ասիցէք ումք զտեփիլդ՝ մինչեւ որդի մարդոյ յարեցէ ի մեռելոց ,

Ամէն ասեմ ձեզ , այն՝ զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս , եւ այն՝ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս .

Դարձեալ ասեմ ձեզ . եթէ երկու ի ձէնջ միաբանիցին յ'երկրի վասն ամենայն իրաց , զինչ եւ խնդրեացեն՝ եղիցի նոցա ի Հօրէ իմմէ :

Եւ ի մտանել նորա յ'Երուսաղէմ , դըրդեցաւ քաղաքն ամենայն , եւ ասէ . ո՞վ իցէ սա . Եւ ժողովուրդքն ասեն . սա է Յիսուս : Եւ եմուտ Յիսուս ի տաճարն եւ եհան արտաքս զամենեսին՝ որ վաճառէին եւ գնէին ի տաճարին յ'այնմիկ , եւ կործանեաց զսեղանս հատավաճառացն եւ զաթոռս աղանձեվաճառացն :

Այլ առակ լուարուք . այր մի էր տանուտէր . տընկեաց այգի , եւ պտուեաց զնա ցանգով , եւ փորեաց հնձան ի նմա , եւ շինեաց աշտարակ , եւ ետ զնա ցմբշակս եւ գնաց ի տար աշխարհ : Իրբեւ մերձեցաւ ժամանակ պտոզոյ , աւաքեաց զճառայս իւր սա մշական՝ բերել զպտուղ նորա :



ԻԱ. ԴԱՍ

ԽՈՆԱՐՀՈՒՄՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԲԱՅԻՑ

107. ՈՒՄ — Լ Ծ Ո Ր Դ Ո Ի Թ Ի Ի Ն

ՍՍ. Հ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

ՁԵԻ Ա.

ՁԵԻ Բ.

ՆԵՐԿԱՅ

Ներգործական	Կրկնորակ
Հեղում (կը թափեմ)	Հեղում (կը թափուիմ)
Հեղում	Հեղում
Հեղու	Հեղու
Հեղումք	Հեղումք
Հեղուք	Հեղուք
Հեղուն	Հեղուն

ԱՆԿԱՏԱՐ

Հեղուի (կը թափէի)	Հեղուի (կը թափուէի)
Հեղուիր	Հեղուիր
Հեղոյր	Հեղոյր
Հեղուաք	Հեղուաք
Հեղուիք	Հեղուիք
Հեղուին	Հեղուին

ԿԱՏԱՐԵԱԼ

Հեղի (թափեցի)	Հեղայ (թափուեցայ)
Հեղեր	Հեղար
Հեղ, եհեղ	Հեղաւ
Հեղաք	Հեղաք

Հեղէք	Հեղայք
Հեղին	Հեղան

ԱՊԱՌՆԻ

Հեղից (պիտի թափեմ)	Հեղայց (պիտի թափուիմ)
Հեղցես	Հեղցիս
Հեղցէ	Հեղցի
Հեղցուք	Հեղցուք
Հեղջիք	Հեղջիք
Հեղցեն	Հեղցին

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Հեղ (թափէ)	Հեղիր (թափուէ)
Մի հեղուր	մի հեղուր
Հեղէք	Հեղարուք
Մի հեղուք	մի հեղուք

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Հեղուցում (թափեմ)	Հեղուցում (թափուիմ)
Հեղուցուս	Հեղուցուս
Հեղուցու	Հեղուցու
Հեղուցումք	Հեղուցումք
Հեղուցուք	Հեղուցուք
Հեղուցուն	Հեղուցուն

ԴԵՐԲԱՅ ԵՂԱՆԱԿ

ԱՆՈՐՈՇ. Հեղուլ (թափել), Հեղուլ (թափուիլ)
 ԱՆՑԵԱԼ. Հեղեալ (թափած), Հեղեալ (թափուած)
 ԱՊԱՌՆԻ. Հեղլոց (թափելու), Հեղլոց (թափուելու)
108. ԳԻՏԵԼԻՔ. Ա. Ո՛՛՛՛ մերջաւորեալ ներգործա-
 կան բայերէն ոմանք կրաւորականի ձեւով կը խոնարհ-

ուին ինչպէս . ընթեռնում (կարգամ) , զգենում (հազ-
նիմ) . — կտր . ընթերցայ , զգեցայ , ապոն . ընթերցայց .
զգեցայց . հրմ . ընթերցիր , զգեցիր :

Բ . Նոս վերջաւորուածներէն ոմանց ն գիրը խոնարհ-
ման ընթացքին մէջ ց ի կը փոխուի .

Լնում .	լնի .	լցից
Խնում .	խցի .	խցից
Ընկենում .	ընկեցի .	ընկեցից
Զգենում .	զգեցայ .	զգեցայց
Ընթեռնում .	ընթերցայ .	ընթերցայց
Յենում .	յեցայ .	յեցայց

Այսպէս են նաեւ հրամայականներուն եւ անցեալ
դերբայներուն մէջ :

Գ . Առնում եւ զբօսնում բայերուն ն գիրը խոնարհ-
ման ընթացքին մէջ կը կորսուի .

Առնում .	առի .	առից .	առ .	առեալ
Զբօսնում .	զբօսայ .	զբօսայց .	զբօսիր .	զբօսեալ

Գ . Ո՛ս լծորդ ունեցող չէզոք բայերն ընդհանրապէս
վերի երկրորդ ձեւովը կը խոնարհին :

Հ Ր Ս . Հ Ա Ն Գ

Եւ ասէ ցնա Յիսուս , ամենեքին գայթակղեալիք յի-
նէն յայսմ գիշերի , որպէս ասեն գիրք , եթէ հարից
զհովիւն եւ ցրուեացին ոչխարքն : Ասէ Պետրոս . Թէ-
պէտեւ ամենեքին գայթակղեացին , այլ ես ոչ գայթակ-
ղեցայց :

Եւ յետ երից ամսոց ելաք ի նաւ մի՛ որ ձմերեալ էր
ի կղզւոջն եւ իջաք ի Սիրակուսա եւ բնակեցաք ի քա-
ղաքին :

Ոչ կամեցաւ ելանել ի լեառն ընդ եղբօր իւրում եւ
ընդ բարեկամն նորա . առաքեցին առ նա զմանս ի
Ծառայից ձերոց . բնակեցան առ նմա ի Փարէզ :

Եւ կային առ խաչին Յիսուսի՛ մայր նորա , եւ քոյր
մօր նորա , Յիսուս իբրեւ ետես զմայր իւր եւ զաշա-
կերտն՝ զոր ինքն սիրէր , ասէ ցմայր իւր . ահա սա է
որդի քո . ապա ասէ եւ ց՛աշակերտն . ահա՛ սա է մայր
քո : Յետ այսորիկ , իբրեւ գիտաց Յիսուս թէ ահա ա-
մենայն ինչ կատարեցաւ , ասէ . ծարաւի եմ . եւ աման
ինչ կայր անդ լի քացախով . եւ նոքա լցին սպունգ քա-
ցախովն ընդ լեղւոյ , եւ մատուցին ի բերան նորա . իբ-
րեւ էառ Յիսուս զքացախն հանդերձ լեղւովն՝ ասէ . ա-
մենայն ինչ կատարեալ (կատարուած) է եւ խոնարհե-
ցոյց զգլուխն եւ աւանդեաց զ՛ոգին :

Ի Բ . Դ Ա Ս

Ա Ն Կ Ա Ն Ո Ն Բ Ա Յ Յ Ի

109 . Անկանոն կ'ըսուին այն բայերը , որոնց խո-
նարհումը կատարեալին , տարանիւն , հրամայականին
եւ անցեալ դերբային մէջ կը զարտուղի . ինչպէս :

Ս Ա Հ Մ . Ն Ե Ր Կ Ա Յ Յ

Առնեմ	զնեմ .	ըմպեմ .	լսեմ
Առնէի	զնէի .	ըմպէի .	լսէի

ԿՐԱՌԵԱԼ

Արարի	եդի	արբի	լուայ
Արարեր	եդեր	արբեր	լուար
Արար	եդ	արբ , էարբ	լուաւ
Արարաք	եդաք	արբաք	լուաք
Արարէք	եդիք	արբէք	լուայք
Արարին	եդին	արբին	լուան

ԱՊԱՌՆԻ

Արարից	եդից	արբից	լուայց
Արասցես	դիցես	արբցես	լուիցես
Արասցէ	դիցէ	արբցէ	լուիցէ
Արասցուք	դիցուք	արբցուք	լուիցուք
Արասջիք	դիջիք	արբջիք	լուիջիք
Արասցեն	դիցեն	արբցեն	լուիցեն

ՀՐԱՄԱՅԱՅԱՆ ԵՂԱՆԱԿ

Արա՛,	դի՛ր	արբ	լու՛ր
մի՛ առներ .	մի՛ դներ .	մի՛ ըմպեր .	մի՛ լսեր :
Արարէ՛ք ,	դի՛ք ,	արբէ՛ք ,	լուա՛րուք :
մի՛ առնէք .	մի՛ դնէք .	մի՛ ըմպէ՛ք .	մի՛ լսէք :

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Առնիցեմ՛ ,	դնիցեմ՛ ,	ըմպիցեմ՛ ,	լսիցեմ՛
------------	-----------	------------	---------

Դ Ե Ր Բ Ա Յ

ՄՆՈՐՈՇ ,	Առնել	դնել	ըմպել	լսել
ԱՆՑԵԱԼ	Արարեալ	եդեալ	արբեալ	լուեալ
ԱՊԱՌՆԻ	Առնելոց	դնելոց	ըմպելոց	լսելոց

Հ Ր Ա Ն Ա Ն Գ

Ծերունի մը , փոքր մանկան մը հետ , իւր պարտէզն իջաւ . հոն մանկիկը տեսաւ վարդ , մեխակ եւ մանիշակ . խորհեցաւ քաղելանոնցմէ՝ որպէս զի իւր մօրը զրկէ ծառային ձեռքովը . սակայն վարդին փուշերը իւր մատին վրայ վէրքեր բացին . սկսաւ լալ եւ կ'ուզէր գետինը նետել այն փնջիկը՝ զոր կը շինէր : Ծերունին ըսաւ անոր . ահա վարդին փուշերը քու մատներդ ծակեցին , բայց դիտցի՛ր որ անմտութիւն է արհամարհել վարդը . անիկայ անուշաբոյր ծաղիկ մ'է . կը տեսնե՞ս անոր կարմրութիւնը , որքան (քանի՛) գեղեցիկ եւ հրապուրիչ է . ուրեմն սիրէ՛ զայն իր այս յատկութեանց համար . եւ փուշերէն միայն զգոյշ եղի՛ր :

Հ Ր Ա Ն Ա Ն Գ

Եւ երբոր Յիսուս այս ամեն խօսքերը լինցուց , իւր աշակերտներուն կ'ըսէ . գիտէ՞ք , որ երկու (1) օրէ ետք՝ զատիկ կ'ըլլայ , եւ մարդուն որդին պիտի մատնուի խաչը ելնելու համար , այն ատեն քահանայապետները , դպիրները եւ ժողովրդեան ձերերը ժողովեցան ի սրահն քահանայապետին՝ որուն անունը կայիափա էր . եւ խորհուրդ ըրին որ Յիսուսը սպաննեն . բայց , կ'ըսէին , այս ատենին ատենը չ'ընենք , որպէս զի ժողովրդեան մէջ խռովութիւն չ'ըլլայ . եւ երբոր Յիսուս եկաւ Բեթանիա՝ ուր էր բոլոտ Սիմօնին տունը , կին մը բազմութեան առջեւ անոր գլուխը թափեց շիշ մը ծանրագին իւղ :

(1) Երկու բառն եզակի չ'ունի , յորնակին հոլովելու համար տես 93 :

Ի Գ . Դ Ա Ս

110. Ա Ն Կ Ա Ն Ո Ն Բ Ա Յ Ե Ր

Շարունակութիւն

ՍԱՀՄԱՆՍԿԱՆ ԵՂԱՆՍԿ

Մատչիմ, (կը մտնեամ), կորնչիմ, (կը կորսուիմ),
զարթնում, (կ'արթննամ), ընդունիմ, (կ'ընդունիմ),

Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

Մատեայ	կորեայ	զարթեայ	ընկալայ
Մատեար	կորեար	զարթեար	ընկալար
Մատեաւ	կորեաւ	զարթեաւ	ընկալաւ
Մատեաք	կորեաք	զարթեաք	ընկալաք
Մատեայք	կորեայք	զարթեայք	ընկալայք
Մատեան	կորեան	զարթեան	ընկալան

Ա Պ Ա Ռ Ն Ի

Մատեայց	կորեայց	զարթեայց	ընկալայց
Մատիցես	կորիցես	զարթիցես	ընկալցիս
Մատիցէ	կորիցէ	զարթիցէ	ընկալցի
Մատիցուք	կորիցուք	զարթիցուք	ընկալցուք
Մատիջիք	կորիջիք	զարթիջիք	ընկալջիք
Մատիցեն	կորիցեն	զարթիցեն	ընկալցին

ՀՐԱՄՍՅԱԿԱՆ ԵՂԱՆՍԿ

Մատիր	կորիր	զարթիր	ընկալ
Մի մատչիր	մի կորնչիր	մի զարթնուր	մի ընդունիր

Մատերուք կորերուք զարթիք ընկալարուք
Մի մատչիք մի կորչիք մի զարթնուք մի ընդունիք

ՍՏՈՐՄ.ԴԱՍՍԿԱՆ ԵՂԱՆՍԿ

Մատչիցիմ կորնչիցիմ զարթնուցում ընդունիցիմ

Դ Ե Ր Բ Ա Յ

ԱՆՇ. Մատչել կորնչել զարթնուլ ընդունել
ԱՆՅ. Մատուցեալ կորուսեալ զարթուցեալ ընկալեալ
ԱՊՈ. Մատչելոց կորնչելոց զարթնլոց ընդունելոց

111. ԳԻՏԵԼԻՔ. Ա. Մարտիսին պէս կը խոնարհին
Հետեւեալ բայերը . Փախչիմ . հանդչիմ . թոչիմ . թաք-
չիմ (պահոււրիմ) եւ ուրիշ շէ՛ մերժաւորեալներ :

Բ. Կորնչիսին պէս կը խոնարհին նախ մերժաւորուած
բայերը , ինչպէս՝ մարտնչիմ . երկնչիմ . միայն անցեալ
գերբային * գիրը ցի կը փոխուի , ուստի կ'ըսուի .
մարտուցեալ , երկուցեալ :

Գ. Զարթնումին պէս կը խոնարհին . այտնում (ուռե-
նամ) . ցառնում (բարկանամ) . ոստնում (ցաթկեմ) ,
Քաղցնում (անօթեամ) . բայց ասոր անցեալ դեր-
բայը կ'ըլլայ քաղցեալ եւ ոչ քաղցուցեալ .
Դ. Ընդունիսին պէս կը խոնարհի առնի (ըռնեմ) :

112. ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԻՅ

ՍԱՀՄԱՆՍԿԱՆ ԵՂԱՆՍԿ

Յառնեմ.	ուտեմ.	տանիմ	գամ
Յառնէի.	ուտէի.	տանէի	գայի

ԿՍՏԱՐԵԱԼ

Յարեայ	կերայ	տարայ	եկի
Յարեար	կերար	տարար	եկիր
Յարեաւ	կերաւ	տարաւ	եկն
Յարեաք	կերաք	տարաք	եկաք
Յարեայք	կերայք	տարայք	եկիք
Յարեան	կերան	տարան	եկին

ԱՊԱՌՆԻ

Յարեայց	կերայց	տարայց	եկից
Յարիցես	կերիցես	տարցիս	եկեսցես
Յարիցէ	կերիցէ	տարցի	եկեսցէ
Յարիցուք	կերիցուք	տարցուք	եկեսցուք
Յարիջիք	կերիջիք	տարջիք	եկեսջիք
Յարիցեն	կերիցեն	տարցին	եկեսցեն

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Արի	կեր	տար	եկ
Մի յառներ	մի ուտեր	մի տանիր	մի դար
Արիք	կերայք	տարայք	եկէք
Մի յառնէք	մի ուտէք	մի տանիք	մի դայք

ՄՏՈՐԱԴԱՍՍԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Յառնիցեմ. ուտիցեմ. տանիցիմ. դայցեմ

Դ Ե Ր Բ Ա Յ

ԱՆՈՐՈՇ	Յառնել	ուտել	տանել	դալ
ԱՆՑԵԱԼ	Յարուցեալ	կերեալ	տարեալ	եկեալ
ԱՊԱՌՆԻ	Յառնելոց	ուտելոց	տանելոց	դալոց

ՀՐԱ, ՀԱ, ՆԳ

Այն օրը, աշակերտները Յիսուսի մօտեցան ու կ'ըսեն անոր. երկնից արքայութեան մէջ մեզմէ ո՞վ մեծ պիտի ըլլայ (իցէ). Յիսուս մանուկ մը կանչեց իրեն. կէցուց զնա նոցա մէջ ու կ'ըսէ. Տմարիտ (ամէն) կ'ըսեմ ձեզ. եթէ չը դառնաք, եւ մանկուոյ պէս չըլլաք, երկնից արքայութիւնը չէք մտներ. արդ նա՛ որ իւր անձը սցա մանկան պէս կը խոնարհեցնէ, երկնից արքայութեան մէջ մեծ պիտի ըլլայ. նա՛ որ Աստուծոյ սիրոյն համար այսպիսի մանուկ մը կ'ընդունի՛ զիս կ'ընդունի :

Այն ատեն Յիսուս խօսեցաւ ժողովրդոց եւ իւր աշակերտաց հետ եւ կ'ըսէ անոնց. դպիրք եւ փարիսեցիք Մովսիսի աթոռը նստան. անոնց պատուիրանքը ըրէք ու պահեցէք, բայց ձեր դործոց մէջ նոցա մի նմանիք. վասն զի կ'ըսեն ու չ'են ըներ, Ծանր ու դժուարակիր բռներ կը կապեն ու մարդկան ուսոց վրայ կը դնեն, եւ իրենց մատամբը չ'են ուզեր շարժել զնոսա.

ՀՐԱ, ՀԱ, ՆԳ

Եւ յետ վեց աւուր, ատնու Յիսուս ընդ իւր զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս, եւ հանէ զնոսա առանձինն՝ ի լեառն մի բարձր. եւ այլապիտոյեցաւ առաջի նոցա, եւ լուսաւորեցան երեսք նորա իբրեւ զարեգակն եւ հանդերձք նորա եղին սպիտակ իբրեւ զլոյս. եւ ահա երեւեցան նոցա Մովսէս եւ Եղիա՛ որ խօսէին ընդ նմա. Պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ց' Յիսուս.

—եթէ կամիս՝ արասցուք երկա տաղաւարս, եւ բնա-
կեացուք աստ. եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լու-
սաւոր եղեւ Հովանի ի վերայ նոցա. ճայն եկն յամպոյն
եւ ասէ. դա է որդի իմ սիրելի, դմա լուարձուք. իբ-
րեւ լուան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց խը-
եանց, եւ երկեան յոյժ: Յիսուս մատեաւ առ նոսա եւ
ասէ. արիք եւ մի՛ երկնչիք. ամբարձին զաչս իւրեանց
եւ ոչ զոք տեսին՝ բայց միայն զՅիսուս. եւ մինչդեռ
իջանէին ի լեռնէն, պատուիրեաց նոցա Յիսուս եւ ասէ.
մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ մինչեւ որդի մարդոյ ի մե-
ռելոց յարիցէ:

Ի Դ. Դ Ա Ս

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՈՐ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՄՆ ՎՐԱՅ

Յարաբերական դերանունն է «ր կամ», եւ իրմէ ան-
միջապէս յառաջ դրուած բառ մը կը յարաբերէ.

Որ կամ «ին յարաբերած բառը, կ'ըսուի Յարաբերակալ.
Յարաբերական դերանունը թէ անձի եւ թէ իրի
տեղ կը գործածուի. ինքը իրեն յատուկ դէմք չունի,
այլ իր յարաբերեալին դէմքը կ'առնու. ինչպէս

Ես որ խօսիմ } որ ք «ին մէջ Ա դէմք, երկրորդին մէջ
Դու որ խօսիս } Բ. դէմք, երրորդին մէջ Գ. դէմք է.
Նա որ խօսի, }

Յարաբերականը յարաբերեալին իբր ածականը կը

նկատուի. այնպէս որ ընդհանրապէս մի եւ նոյն է ը-
սել, Մեռնող զինուորը՝ կամ այն զինուորը որ մեռաւ. Սոր-
բակոսած ապակին կամ այն ապակին որ խորտակուեցաւ եւն. այս
խօսքերուն մէջ մեռնող եւ խորտակուած բառերն ածական
են՝ զինուոր ու ապակի գոյականներուն, եւ յարաբերական
դերանունով ալ կրցան դրուցուիլ.

Յարաբերեալն ու յարաբերականը զատ զատ նախա-
դասութիւններ, այսինքն դիմաւոր բայ ունեցող խօս-
քեր, կը կազմեն: Յարաբերեալին նախադասութիւնը կը
կոչուի ֆիխսոր, յարաբերականինը՝ միջանկեալ նախադ-
ասութիւն.

Յարաբերականը, իր ամբողջ նախադասութեամբ, կըր-
նայ գլխաւոր նախադասութեան մէջ զետեղուիլ, կամ
անոր վերջը դրուիլ. բաւական է որ յարաբերեալը յա-
րաբերականին անմիջապէս քովը դրուած ըլլայ՝ որչափ
որ կարելի է:

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆԻ ԿԱՆՈՆՆԵՐ

113. Շատ անգամ յարաբերեալը Գ. դէմք դերա-
նուն մը կ'ըլլայ. ինչպէս, նա՛ որ զիս կ'անիծէ. նո-
քա՛ որ կը ննջեն.

Այս տեսակ խօսքերու մէջ սովորաբար դերանուն
յարաբերեալները կը զեղչուին զբարարի մէջ, եւ այն
ատեն յարաբերականէն անմիջապէս ետքը դրուող բա-
ռին զրոյն ն յօղը կը դրուի. զոր օրինակ.

ԱՆԻՍՏԱՐԱՐ	ԳՐԱՅԱՐ
Նա՛ որ զիս կ'անիծէ	որ զիս անիծանէ, կամ
	որ անիծանէն զիս
Նոքա՛ որ կը ննջեն	որ կամ որք ննջեն.

114. Աշխարհաբարի մէջ, գոյականաբար գործածուած ոչ կամ ած վերջաւորութեամբ անականները՝ գրաբարի մէջ սովորաբար որ յարաբերականով կը բացատրուին, զոր օրինակ .

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

ԳՐԱԲԱՐ

Տէրը սիրողները . այսինքն, անոնք՝ որ Տէրը կը սիրեն .

Զիս սիրողը, կամ, նա՛ որ զիս կը սիրէ՛ իմ հօրմէս պիտի սիրուի .

Տեսածդ բարեկամս է, այսինքն, բարեկամս է նա՛ զոր դու տեսար .

115. Եթէ, աշխարհաբարի մէջ, ոչ կամ ած վերջաւորած անականը գոյականաբար (49) գործածուած է, գրուելիք յարաբերեալը նա կամ նոյն գերանունն է. ինչպէս .

Զիս սիրող (49) — այսինքն — նա՛ որ զիս կը սիրէ .

Զիս անարգողները (49) — նոքա՛ որ զիս կ'անարգեն .

116. Եթէ ոչ կամ ած վերջաւորածը քովը գոյականունի, այն գոյականը կ'ըլլայ յարաբերեալ . ինչպէս .

Զիս սիրող աշակերտը — այսինքն — այն աշակերտը՝ որ զիս կը սիրէ .

Զիս սիրող աշակերտ — այն աշակերտք՝ որք զիս կը սիրեն .

117. Ոչ վերջաւորած անականը զինուոր բայի դարձնելու ատեն, պէտք է գիտնալ որ գրուելիք յարաբերականն ուղղական հօլով պիտի ըլլայ . (տես վերին օրինակները) :

— 99 —

118. Իսկ ած վերջաւորած անականը զինուոր բայի դարձնելու համար գրուելիք յարաբերականն հայցական կ'ըլլայ՝ եթէ նոյն յարաբերականին բացը ներգործական է . իսկ ուղղական կ'ըլլայ, եթէ նոյն բացը ներգործական չէ, ինչպէս .

Ներգործական բայով

Ձեր սիրած երկիրը — այն երկիրը՝ շք դուք «իւրեք»

Ուրիշ բայերով

Կորսուած մատանին — այն մատանին, որ կորսուեցաւ
Մեռած զինուորը — այն զինուորը՝ որ մեռաւ
Սպաննուած մանկունք — այն մանկունք՝ որ սպաննուեցան
Ըսուած խօսքը — այն խօսքը՝ որ ըսուեցաւ
Այս օրինակները զբարարի կը դառնան հետեւեալ կերպով .

Երկիրն՝ զոր դուք սիրեցէք, Մատանին՝ որ կորեաւ, Զինուորն՝ որ մեռաւ, Մանկունքն՝ որ սպաննան, Բանն՝ որ ասացաւ .

119. Ոչ կամ ած վերջաւորած անականները կրնան նաեւ հօլովուած ըլլալ, այն ատեն գրուելիք դերանուն յարաբերեալը նոյնին հօլովը կ'առնէ, իսկ յարաբերականը վերը գրուած կամոնաց համաձայն կամ ուղղական կամ հայցական կը գրուի .

Զմեզ տեսնողներն այսինքն, անոնցք՝ որ վախճաւ տեսան .
Մեր տեսածներէն — անոնցք՝ զոր մեք տեսար .

Գեզմէ խնդրողն տուր — տուր անոր՝ որ քեզմէ կը խնդրէ .

120. Այս տեսակ խօսքերու մէջ շատ անգամ դե-
րանուն յարաբերեալը կը զեղչուի եւ յարաբերականն
անոր հարկը կ'առնու զբաժարի մէջ :

Վերի օրինակները զբարարի կը դառնան երկու կեր-
պով . այսպէս .

Ի նոցանէ՝ որ տեսին զձեզ— կամ . յ'որոց տեսինն
զձեզ :

Յ'այնցանէ՝ զոր մեք տեսաք— յ'որոց մեքն տեսաք :

Տուր այնմ, որ խնդրէ ի քէն— տուր՝ որո՞ւ խնդրէն
ի քէն :

Հ Ր Ա . Հ Ա . Ն Գ

Բայց կ'ըսեմ ձեզ , սիրեցէք ձեր թշնամիքը , ձեր
ստեղծաց բարի ըրէք . զձեզ անիծողներն օրհնեցէք եւ
զձեզ նեղողներուն համար աղօթք ըրէք : Քու մէկ ծը-
նօտիդ զարնողին միւս ծնօտդ մօտեցուր . եւ քեզմէ
քու բաճկոնդ հանողէն՝ մի՛ արգելուր նաեւ քու շապիկդ .
Քեզմէ խնդրողին տուր . եւ մի պահանջեր մէկէ մը այն
բանը՝ զոր քեզմէ կ'առնու (հանէ) : Ինչպէս որ կ'ուզէք
թէ մարդիկ ձեզ ընեն , այնպէս ըրէք եւ դուք նոցա :
Գթած եղիք , ինչպէս որ ձեր երկնաւոր հայրն ալ գը-
թած է : Մի՛ դատէք , ու պիտի չդատուիք : Մի՛ պատ-
ժէք , ու պիտի չը պատժուիք , արձակեցէք , ու պիտի
արձակուիք :

Յետ այնորիկ ելաւ անտի եւ տեսաւ մաքսաւոր մի
որոյ անունն էր Ղեւի . այս մարդը մաքսաւոր էր . Յի-
սուս անոր կ'ըսէ . իմ ետեւէս ե՛կ . նա ալ ամէն բան,
թողուց , ոտք ելաւ (յառնել) եւ նորա ետեւէն զնաց .
Ղեւի իւր տան մէջ մեծ ընդունելութիւն ըրաւ նմա :

Հ Ր Ա . Հ Ա . Ն Գ

Յարիցէ ազգ ի վերայ ազգի , եւ թագաւորութիւն
ի վերայ թագաւորութեան եւ եղիցին ի տեղիս տեղիս՝
սովք եւ սասանութիւնք եւ սրածութիւնք . սակայն այս
ամենայն սկիզբն է երկանց , Յայնժամ մատնեացեն զձեզ
ի նեղութիւնս , եւ սպա՛ն իցին զձեզ , եւ եղիջիք ատե-
ցեալք յ'ամենեցունց (1) վասն անուան իմց . եւ յայնժամ
դայթակղեացեն բազումք եւ զվիմեանս մատնեացեն , եւ
բազում սուտ մարգարէք յարիցեն եւ զբազումս մուրե-
ցուցեն , եւ ցամաքեսցի սէր բազմաց՝ վասն բազմանա-
լոյ անօրէնութեան : Բայց , որ համբերեացն իսպառ ,
փրկեսցի . . . : Յայնժամ որ իցենն զքնակեալք ի Հրէ-
աստանի , վախիցեն ի լերինս , եւ որ կայցէն ի տանիտ
մի՛ լջցէ առնուլ ինչ ի տանէ խրմէ :

Ի Բ . Դ Ա Ս

ԵՄ ԲԱՅԻՆ ԱՅԼԵԻԱՅԼ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

121. Ե՛մ բայն , իրրեւ էական բայ գործածուած ա-
տեն , տէր բայի եւ ստորոգելի միանգամայն կ'ունենայ
յայտնի կամ զօրութեամբ . բայց , Ե՛մ բայը կը գործած-
ուի նաեւ իրր չէզոք բայ , եւ կը նշանակէ կայ ըլլալ
գործել , որչէ՛ն յանձնալ . այս զէպքին մէջ Ե՛մ բայն ստորո-
գելի չ'առնուր :

(1) Ամենիկն Թուական ամական է . կը նշանակէ՝ ամենն ալ . եւ
զակի չ'ունի . կը ճողվի այսպէս . ամենքին . զամենսին . ամենեցուն
կամ ամենեցունց , յ'ամենեցուն— (g) , ամեներմբբ :

ԵՏՂ ԽԱԿԱՆ ՔԱՅ

Բարեկամ իմ է հիւանդ , Լուսին է սլայծառ , (նա) է մեծ :

ԵՏՂ ՉԿՈՐԲ ՔԱՅ

Հայր իմ է (կը գանուի) ի ասն . Աստուած է յերկինս եւ յերկրի :

Են արք եօթն հազար , որ ոչ երկիրապաշին Բահապուս էին անդ ամանք ի հաւատացելոց :

Եւ եղեւ խաղաղութիւն :

122. ԵՏ ՔԱՅԸ սեռական խնդրով անկեալ կը նշանակէ : ունեցողը՝ սեռական հոլով կը դրուի . ունեցուածք՝ ուզողական (տէրբայի) , ինչպէս՝

Հինգ եղբայր ունիմ ես : Են իմ եղբարք հինգ :

Արա ու այդիներ ունէին նոքա : Էին նոցա անդ եւ այդիք :

123. ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԻՑ (112)

ՄԱՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ

Ճանաչեմ . կեամ (ապրիմ) . երթամ . մեղանչեմ .

Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

Մանեայ	կեցի	չոքայ	մեղայ
Մանեար	կեցեր	չոքար	մեղար
Մանեաւ	կեաց եկեաց	չոքաւ	մեղաւ
Մանեաք	կեցաք	չոքաք	մեղաք
Մանեայք	կեցէք	չոքայք	մեղայք
Մանեան	կեցին	չոքան	մեղան

Ա Պ Ա Ռ Ն Ի

Մանեայց	կեցից	երթայց	մեղայց
Մանիցես	կեցցես	երթիցես	մեղիցես
Մանիցէ	կեցցէ	երթիցէ	մեղիցէ
Մանիցուք	կեցցուք	երթիցուք	մեղիցուք
Մանիջիք	կեցջիք	երթիջիք	մեղիջիք
Մանիցեն	կեցցեն	երթիցեն	մեղիցեն

ՀՐԱՄՍՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Մանիւր	կեաց	երթ	մեղիւր
Մի ճանաչեր	մի կեար	մի երթար	մի մեղանչեր
Մաներուք	կեցէք	երթիջիք	մեղարուք
Մի ճանաչէք	մի կեայք	մի երթայք	մի մեղանչէք

Ս Տ Ո Ր Ա Դ Ա Ս Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Ճանաչիցեմ կեայցեմ երթայցեմ մեղանչիցեմ

Դ Ե Ր Բ Ա Յ

ԱՆՈՐՈՇ	Ճանաչել	կեալ	երթալ	մեղանչել
ԱՆՅԵԱԼ	Մանուցեալ	կեցեալ	երթեալ	մեղուցեալ
ԱՊԱՌՆԻ	Ճանաչելոց	կելոց	երթալոց	մեղանչելոց

Հ Ր Ա Ջ Ա Ն Գ

Եւ ահա կին մի, զոր ունէր այս ⁽¹⁾ հիւանդութեան ի բազմաց հետէ , եւ էր կարկամեալ եւ ոչ կարէր ամե-

(1) Այս բառը նաև գոյական է ու կը նշանակէ, աւսանայ, դէռ . կը հոլովի . այս, այսոյ, այսով . այսք, այսոց, այսովք :

նեւին հայելի վեր: Ետեա զնա Յիսուս, կոչեաց առ ինքն՝ եւ ասէ ցնա. արձակեալ ես ի հիւանդութենէ քումմէ. եւ եղ ձեռն ի վերայ նորա. եւ կինն ուղղեցաւ առ ժամայն եւ փառաւորէր զԱստուած: Յասեաւ ժողովրդապետն եւ ասէ եթէ ընդէ՞ր ի շարաթու բժշկեաց (բժշկութիւն ըրաւ, 25) Յիսուս: Պատասխանի ետ նմա Տէրն եւ ասէ. իւրաքանչիւր ոք ի ձէնջ ո՞չ արձակէ ի շարաթու զեզն իւր կամ զէշ իւր ի մարց, եւ տանի տայ ջուր: Իսկ դուստր Աբրահամու էր կինս այս, զոր կապեաց սատանայ ի բազմաց հետէ, ո՞չ էր արժան արձակել զաա ի կապանաց իւրոց ի շարաթու, եւ ամենայն ժողովուրդն ուրախ լինէր վասն ամենայն փառաւորութեանցն որ գործէին ի նմանէ:

Ը Ն Դ Ն Ա Խ Դ Ի Ի Ն

Ո Ի Բ Ի Շ Գ Ո Բ Ծ Ա Ծ Ո Ի Թ Ի Ի Ն Ք Ը

124. Ընդ նախդիրն եզակի եւ յօքնակի հայցական խնդրով կը նշանակէ ընդարձակութիւն կամ արարածութիւն (տեղ):

Ընդ ամենայն տիեզերս. Բնուր Գեղեցիք: Ընդ երկիրն ողջոյն, Բնուր երկրք: Ընդ ծով եւ ընդ ցամաք, Ժողովուրդս Գարածաբանք:

125. Ընդ նախդիրը եզ. եւ յօքն. գործիականով կը նշանակէ, Գալը ներքեւ: Ընդ գրուանաւ, Բրտանն ներքեւ. ընդ աթոռով, ամուսն ներքեւ:

126. Ընդ նախդիրը, դարձեալ հայցական խնդրով, կը նշանակէ բանի մը մեջ կամ մեջ Գեղեւն. աշխարհաբարի մէջ սովորաբար բացառական հոլով կը թարգմանուի այս ձեւը. ուստի պէտք է իմաստին ուղղակի: Ընդ

պատուհանն. — պատուհանէն (պատուհանին մեջէն կամ մեջ Գեղեւն):

Կ Ո Չ Ա Կ Ա Ն

127. Կոչական կ'ըսուին այն գոյականները կամ գոյականաբար առնուած ածականներն՝ որոնց կ'ուղղենք խօսքը: Լուր, որդեակ, խրատու հօր քոյ — հոս Գրեթէ կոչական է, քանզի խօսքն անոր կ'ուղղենք:

128. Կոչական բառերու քով, շատ անգամ "վ կամ" բառը, եւ երբեմն Գ — դերանունը կամ Գ գիրը միայն կը դրուին սաստկութեան համար: Աղջիկ դու. ո՞վ որդեակ. ո՞ տէր. արքայդ հրէից:

Հ Ի Ա Զ Ա Ն Գ

Եւ չըլէր ընդ քաղաքս եւ ընդ գիւղս, եւ ուսուցանէր, եւ ճանապարհ արարեալ յ'Երուսաղէմ, ասէ ոմն ցնա. Տէր, եթէ սակաւք իցեն որ կեցցենն, եւ նա ասէ ցնուսա. Չանացարուք մտանել ընդ նեղ դուռնն. ամէն ասեմ ձեզ, զի բազումք խնդրեսցեն մտանել ընդ այն եւ ոչ կարացեն. յորմէ հետէ մտցէ տանուտէրն եւ փակեսցէ զդուռնն եւ սկսանիջիք կալ արտաքոյ եւ բախել զդուռնն եւ ասել Տէր, Տէր, բաց մեզ. եւ պատասխանի տուեալ ասիցէ ձեզ. ոչ զիտեմ զձեզ, ուստի էք, Յայնժամ սկսանիջիք ասել, կերաք առաջիք եւ արբաք, եւ ի հրատարակս մեր ուսուցեր: Եւ ասիցէ: Ասեմ ձեզ, ոչ զիտեմ զձեզ. ուստի էք, ի բաց կայէք յինն, ամենայն մշակքդ անիրաւութեան: Անդ եզիցի լալ եւ կրճել ատամանց՝ յորժամ տեսանիցէք զԱրրահամ եւ զԻսահակ եւ զՅակոբ

եւ զ'ամենայն մարգարէս՝ յ'արքայութեան Աստուծոյ . եւ եկեացեն յ'արեւելից եւ յ'արեւմտից եւ ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ , եւ բազմեացին յ'արքայութեան Աստուծոյ . եւ ահա իցեն յետինք , որ ելիցին առաջինք . եւ իցեն առաջինք , որ ելիցին յետինք : Ի նմին աւուր մատեան ունանք Փարիսեցիք , եւ ասեն ցնա : Ել եւ զնա աստի , զի Հերովդէս կամի սպանանել զքեզ . եւ ասէ ցնոսա . երթայք ասացէք աղուխուն այնմիկ . ահաւասիկ հանեմ զեւս եւ բժշկութիւնս կատարեմ այսօր եւ վաղիւ . եւ յ'երիբ աւուր կատարիմ : Բայց պարտ է զնալ այս օր եւ վաղիւ եւ ի միւսում աւուր . զի ոչ մարթ է մարգարէի՝ կորնչել արտաքոյ քան զ'երուսաղէմ : Երուսաղէմ երուսաղէմ , որ կոտորէիր զմարգարէս եւ քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ . քանիցս տեղամ կամեցայ ժողովել զ'որդիս քո , որպէս հաւ ժողովէ զձագս իւր քնդ թեւովք իւրովք , եւ (այլ) դուք ոչ կամեցարուք : Ահա տուն ձեր թողեալ լիցի ձեզ . բայց ասեմ ձեզ , եթէ (թէ) ոչ եւս տեսանիցէք զիս , մինչեւ ասիցէք . օրհնեալ է նա՛ որ դայ յանուն Տեառն (տիրոջ անաւնովք) :

Ի Գ . Գ Ա Ս

ԲԱՅԻՑ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

129. Անցեալ եւ ապառնի դերուայք , Իսկան (եմ) բացին ներկային , անկատարին եւ ստորադասականին Հետ գործածուելով՝ յետագայ բազադրեալ ժամանակները կը կազմեն .

Ա. — Իսկան քայն անցեալ դերուայով .

Յ Ա Ր Ա Կ Ա Տ Ա Ր

Տեսեալ եմ	տեսեալ ես	տեսեալ է
տեսեալ եմք	տեսեալ էք	տեսեալ են

Գ Ե Ր Ա Կ Ա Տ Ա Ր

Տեսեալ էի ,	տեսեալ էիր ,	տեսեալ էր .
Տեսեալ էաք ,	տեսեալ էիք ,	տեսեալ էին .

Ս Տ Ո Ր Ա Դ Ա Ս Ա Կ Ա Ն Ա Ն Յ Ե Ա Լ

Տեսեալ իցեմ ,	տեսեալ իցես ,	տեսեալ իցէ .
Տեսեալ իցեմք ,	տեսեալ իցէք ,	տեսեալ իցեն .

Բ. — Իսկան քայն ապառնի դերուայով

Ն Ե Ր Կ Ա Ց Ա Պ Ա Ռ Ն Ի

Գործեւոց եմ ,	գործեւոց ես ,	գործեւոց է .
Գործեւոց եմք ,	գործեւոց էք ,	գործեւոց են .

Ա Ն Կ Ա Տ Ա Ր Ա Պ Ա Ռ Ն Ի

Գործեւոց էի ,	գործեւոց էիր ,	գործեւոց էր .
Գործեւոց էաք ,	գործեւոց էիք ,	գործեւոց էին .

Ս Տ Ո Ր Ա Դ Ա Ս Ա Կ Ա Ն Ա Պ Ա Ռ Ն Ի

Գործեւոց իցեմ ,	գործեւոց իցես ,	գործեւոց իցէ .
Գործեւոց իցեմք ,	գործեւոց իցէք ,	գործեւոց իցեն .

130. Հայերէնի մէջ բուն ապառնի ժամանակ ցուցնելու համար ներկայ ապառնի բազադրեալ ժամանակը կը գործածուի : Ուստի կ'ըսուի . պիտի երթամ— երթալոց եմ . պիտի դամ— դալոց եմ , եւն :

131. Յարակատար գերակատար եւ ստորադասական անցեալ ժամանակներուն մէջ գործածուած անցեալ գերբայները կրնան նաեւ իբր ստորոգելի նկատուիլ :

Հ Ր Ս . Հ Ս . Ն Գ .

Եւ նորա մօտն (քով) էին (119) ամենայն մաքսաւորք եւ մեղաւորք անկէ լսելու համար . փարիսեցիք եւ դըպիրք կը տրտնջէին եւ կ'ըսէին . ինչո՞ւ սա կ'ընդունի զմեղաւորս . եւ կ'ուտէ նոցա հետ . ըսաւ նոցա՝ այս առակը . Ձեզմէ ո՞վ է այն մարդը՝ որ հարիւր ոչխար ունենայ (120) եւ անոնցմէ մին կորուսնէ . չը թողուր իննսուն եւ ինն՝ անապատը , ու չ'երթար կորուսելոյն ի խնդիր՝ մինչեւ գտնէ զնա : Եւ երբ գտնէ . կը դնէ զնա իւր ուսոց վերայ խնդարով՝ եւ կ'երթայ ի տուն , կը կոչէ զիւր բարեկամքն ու դրացիքը , եւ կ'ըսէ նոցա . ուրախ եղէք ինձ հետ (ընդ էս) . զի իմ կորուսեալ ոչխարը գտայ . կ'ըսեմ ձեզ . թէ առաւել ուրախութիւն կ'ըլլայ երկնից մէջ՝ ապաշխարող միոյ մեղաւորի համար , քան իննսուն եւ ինն արգարոց համար՝ որոց պիտոյ չ'է ապաշխարութիւն : Կամ ո՞վ է այն կինը՝ որ տանն դըրամ ունենայ . եւ եթէ դրամ մի կորուսնէ , ճրագ չը վառեր (լուցանել) . տան մէջ աւել կը զարնէ (աւել—գրածեւ աւել) եւ ստէպ կը փնտօէ (խնդրել) մինչեւ զըտնէ . եւ երբ կը գտնէ , կը կոչէ զբարեկամս եւ զդրացիս եւ կ'ըսէ նոցա , ուրախ լըրճւք ինձ հետ . զի իմ կորսուած դրամը գտայ :

Չ Ն Ս . Խ Գ . Ի Բ

132. Չ. Նախգիրը առանց էի բացառականի վրայ

դրուելով . կը նշանակէ վրայո՞ւ , նկատմամբ : զոր լուայն գըէն—քու վրայո՞ւ կամ նկատմամբ լրածս : Համբաւ չարածին զՅովնէփայ—Յովնէփայ վրայօք կամ նկատմամբ չար համբաւ բերին :

133. Չ. Նախգիրը գործիականով կը նշանակէ իրի մը , անձի մը կամ ժամանակի մը քուրբիքը , շարժը : Չնովաւ— նորա քուրբիքը կամ շարժը . դքաղաքօք— քաղաքաց շարժը կամ քուրբիքը . զհինգերորդ ժամուս— ժամ հնգին արձանէքը (քուրբիքը , այսինքն , էիւ մը առաջ էիւ մը էր) :

Ս. յապէս կ'ըսուի . Ս.րկին զինեւ ճորճս— իմ վրաս (քուրբիքս) լաթ ձգեցին . անկաւ զպարանոցաւ նորա— նորա պարանոցը (այսինքն պարանոցին բողբոսիքը) ինկաւ (փաթթուեցաւ) :

Հ Ր Ս . Հ Ս . Ն Գ .

Ս.ն միով էին երկու որդիք . սաէ կրտսերն ի նոցանէ ցհայրն . հայր , տուր ինձ զբաժինն՝ որ անկանի յ'ընչիցդ . եւ նա բաժանեաց նոցա զկեանսն (ստացուածքը) . եւ յետ ոչ բարգրում աւուր (քիչ օրէն) ժողովեաց զամենայն կրտսեր որդին եւ գնաց յ'աշխարհ հեռի , եւ անդ վատնեաց զ'ինչս իւր , զի կեսյր անառակութեամբ . եւ իբրեւ սպառեաց զամենայն , եղև (119) սով սաստիկ յ'աշխարհին յ'այնմիկ եւ սկսաւ ինքն չքաւորել . եւ դընացեալ յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ . եւ այրն այն յղեաց զնա յ'ազարակ իւր՝ արածել խոզս . եւ ցանկայր ընուլ զ'որովայն իւր յ'եզջերէն՝ զ'որ խոզքն ուտէին , եւ ոչ ոք տայր նմա զ'այն . եւ

եկն ի միտս իւր (յիշեց) եւ ասէ . քանի՞ վարձկանք ի-
ցեն ի տան հօր խնայ հացալիցք, եւ (իսկ) ես աստ սո-
վամահ կորնչիմ : Յարեայց եւ գնացից աս հայր իմ . եւ
ասացից ցնա . հայր , մեղայ յ'երկինս եւ առաջի քո
արա՛ զիս իրրեւ զմի ի վարձկանաց քոց : Եւ յարեաւ
եւ եկն աս հայր իւր, եւ մինչդեռ հեռագոյն էր, ետես
զնա հայրն եւ զթացաւ . յարեաւ եւ ընթացաւ ընդ ա-
ռաջ (74), անկաւ զպարանոցաւ նորա եւ համբուրեաց
զնա : Եւ ասէ ցնա որդին . հայր , մեղայ յերկինս եւ
առաջի քո . . . : Ասէ հայրն ցծառայս իւր . վազվազակի
հանէք զպատմութեանն առաջին եւ ազուցէք դմա . եւ
տուք զմատանին ի ձեռն դորա եւ (տուք) կօշիկս յ'ոտս
դորա : Եւ ամէք զ'եզնն պարարակ . զենէք, կերիցուք
եւ ուրախ լիցուք, զի այս որդի իմ մեռեալ էր եւ եկ-
եաց, կորուսեալ էր եւ գտաւ : Եւ սկսան ուրախ լի-
նել . եւ երէց որդի նորա էր յ'ազարակի, եւ մինչդեռ
զայր եւ մերձ եղեւ ի տունն, լուաւ զձայն երգոց եւ
զձայն պարուց . եւ կոչեաց աս ինքն զմի ի ծառայիցն եւ
հարցանէր թէ զինչ իցէ այն . եւ ծառայն ասէ ցնա .
զի եղբայրն քո եկեալ է եւ եզեն հայր քո զ'եզնն պա-
րարակ, զի ողջամբ (74) ընկալաւ զնա . բարկացաւ ե-
րէցն (1) (49) եւ ոչ կամէր մտանել, եւ հայրն ելեալ
արտաքս, աղաչէր զնա . պատասխանի ետ որդին եւ աս-
սէ ցնա . այս քանի՞ ամբ են, զի ծառայեմ քեզ եւ եր-
բէք զպատուիրանաւ քով ոչ անցի (2) . ուլ մի ոչ երբէք

(1) Երէց բառը գոյական է՝ երբ կը նշանակէ խմանայ, եկեղեցա-
կան . իսկ հոս մ' ծ . անդրակիկ կը նշանակէ և գոյականաբար անական
է . երէց . երիցու . երիցակր . երիցունք . երիցանց են :
(2) Անցանկը զպաս շիրանաւ , կը նշանակէ պատուէր ոտի սակ
առնել , բանի տեղ չդնել :

ետուր ինձ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ : Յորժամ
եկն որդիդ քո այգ, որ կերտաւ զկեանս քո ընդ պոռնիկս,
զեներ դմա զ'եզնն պարարակ . Եւ ասէ ցնա հայրն . որդե-
եակի դու հանապազ ընդ իս ես . քո է ամենայն՝ որ ինչ
իմ է : Այլ ուրախ լինել եւ խնդալ պարտ էր, զի եղբայրս
քո այս մեռեալ էր եւ եկեաց . կորուսեալ էր եւ գտաւ :

Ի Դ. ԴԱՍ

ԲԱՅԱՅԱՅՍԻԶ

134. Երբեմն, նախագաստութեան մը մէջ, երբո՞ւ
և ո՞ւր հուլիս դրո՞ւս զոյականներ կը գտնուին, որոց տե-
ղական իմաստը մի եւ նոյն է, միայն մէկը միւսոյն իրը
թէ մեկնութիւնն է, յայտնուին է, եւ կ'ըսուի Բայայայիւ-
ինչպէս .

Յովսէփ, Մարեմայ այրը . — Հոս Յովսէփ ու Մարիա-
մայ այրը զատ զատ անձեր չ'են . մի եւ նոյն անձը կը
ցուցնեն . կամ թէ ըսենք՝ իրենց տեղական իմաստը մի
եւ նոյն է, եւ մի եւ նոյն հօղովը դրուած են . այր բառն
իւր Մարեմայ յատկացուցիչով բացայայտիչ է Յովսէփ ին՝
որ բացայայտեալ է : Այն Մարեմայ բառով՝ որ Յովսէփն
ըլլալը ցուցուած է .

Վարդան զօրավար . Սահակ կաթուղիկոս . Ետ նմա
ի կնութիւն՝ զկղէսպատրա, զըուստր իւր . Ի Յակոբայ
յ'որդւոյ իւրմէ :

ԳՆՏԵԼԻՔ — Բացայայտիչները կրնան նաեւ որ յարա-
բերականով եւ ե՞՞ հական բայով բացատրուիլ . այն ա-

տեն միշտ ուղղական հօլով կը դրուին եւ ստորագելի կ'ըլլան : Վերի օրինակները կը բացատրուին նաեւ այսպէս . Յովսէփ՝ որ էր այրն Մարեմայ : Վարդան՝ որ էր զօրավար . Սահակ՝ որ էր կաթողիկոս . Ետ ի կնուծիւն գիղէսպատրա՝ որ էր դուստր իւր . Ի Յաիօրայ՝ որ էր որդի իւր :

ՍԵՌԱԿԱՆ ԵՒ ՏՐԱԿԱՆ ՏԷՐ ԲԱՅԻՆՆԵՐ

135. Սեռական Տեր քայի— Երբ երկու գիմաւոր բայ և շողկապով իրարու հետ կապուած են եւ մի եւ նոյն Տէր բային ունին , շատ անգամ և շողկապը կը գեղչուի եւ առջի բայն անցեալ դերբայ կ'ըլլայ . այն ատեն Տէր քային սովորաբար սեռական հօլով կը դրուի . ինչպէս՝

Յիսուս նոցա հաւատքը քեանս և ըսաւ . — Երկու բայերուն ալ Տէր բային է՝ Յեանս .

ԹՄԲԳ . Յիսուս ետես զհաւատս նոցա եւ ասէ (ասաց)

Այս կտորը կը թարգմանուի նաեւ հետեւեալ կերպով՝

Տեսաւ Յիսուսի զհաւատս նոցա , ասէ :

ԳԻՏԵԼԻՔ . — Դիմաւոր բայն այս կերպով անցեալ դերբայի փոխուած ատեն , աշխարհաբար գործիական հօլով կը թարգմանուի եւ նոյն հօլովով ինքի կ'ըլլայ իրմէ ետքն եկող բային . իսկ սեռական տէր բային դարձեալ ուղղականի կը փոխուի :

Վերի օրինակին թարգմանութիւնը :

Յիսուս նոցա հաւատքը քեանս ըսաւ :

Յիսուս տէր է թէ քեանս ըսաւ բայերուն :

Տեանս զործ . ինչիւր է ըսաւ բային :

136. Տէր բային սովորաբար սեռական հօլով կը դրուի նաեւ է՛ք բայով եւ անցեալ դերբայով բազադրեալ ժամանակներու եղակի Գ . դէմքին հետ՝ որ ամեն դէմքի տեղ կը դործածուի եւ թէ եղակի ու թէ յօքնակի տէր բայինը կրնայ առնուլ :

Օ Ր Ի Ն Ա Կ Ք

ԳՐԱ .

ԱՃԻԱ .

Տեսաւ է է՛ք	էս տեսած եմ
Տեսաւ է +	դու տեսած ես
Տեսայ է նորս	նա տեսած է
Տեսաւ է զք	ձե՛ք տեսած եմք
Տեսաւ է յք	դուք տեսած էք
Տեսաւ է նոցա	նոք տեսած են
Տեսաւ է եղբօր քոյ	քու եղբայրք տեսած է
Տեսաւ է եղբայր քոյ	քու եղբարք տեսած են

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Եւ յերեկոյի շարժուն յորում լուսանայր միաշաբաթին (կիրակէ օրը) : Մարիամ Մաղթաղենացի եւ միւս Մարիամն եկին տեսանել զլերեզմանն . եւ ահա եղև շարժումն մեծ , զի հրեշտակ Տեսան էջ յերկնից , եւ մատուցեալ իրաց (74) թաւալեցոց զլէմն , եւ նստէր ի վերայ նորա . եւ էր տեսիլ նորա իբրեւ զխալսին եւ հանդերձ նորա էր սպիտակ իբրեւ զճիւն : Եւ խոռվեցան պահապանքն յ'ահէ նորա , եւ եղև իբրեւ զմեռեալս : Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցկանայսն . մի՛ երկնջիք դուք . գիտեմ , զի զՅիսուս , զխաչելեան , խնդրէք . չէ՛ աստ , այլ յարեալ՝ որպէս ասաց . եկայք :

տեսէք զտեղին՝ ուր կայր : Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտացն նորա թէ յարեաւ . եւ ահա յառաջանայ քան զձեզ՝ ի Գալիլիա . անդ տեսանիցէք զնա . ահա ասացի ձեզ : Եւ կանանցն ելեալ վաղվաղակի ի գերեզմանէն յայնմանէ , ահիւ եւ խնդութեամբ բազմաւ , ընթանային պատմել աշակերտացն . եւ ահա պատահեաց նոցա Յիսուս եւ ասէ . ողջ էք (լերուք) . եւ նոքա (կամ նոցա) մատուցեալ՝ կալան՝ զոտս նորա եւ երկիրպագին նմա :

137 . Տրական տէր քայէ .— Երբ երկու բայ ղի կամ ելի շաղկապով միացած են , կրնայ ղի կամ ելի շաղկապը զանց առնուիլ եւ ետեւի բայն անորոշ դերբայի փոխուիլ . այն ատեն այդ անորոշ դերբայը տրական հոլով կ'առնու իւր Տէր բային :

Ոչ կամիմք Ձի Ռաբա—որեսցի քա .— կրնայ ըսուիլ նաեւ .

Ոչ կամիմք Ռաբա—որել քա . չ'եմք ուզեր դմա թագաւորելը :

138 . Մարի է , պարտ է , հարկ է , պէտոյ է , արժան է ասութեանց տէր բայիները՝ որոնք անորոշ դերբայ կ'ըլլան , միշտ իրենք ալ տրական հոլով տէր բայի կ'առնեն :

Մարթ է ինչ կորուսանել զամենայն . Չէ՛ քի արժան խօսել . հարկ է դալ գայլակոյն իննայ .

Այս խօսքերը կրնան ըսուիլ նաեւ՝ ղի կամ ելի շաղկապով .

Մարթ է զի (եթէ) ես կորուսից զամենայն . Չէ՛ արժան՝ զի (եթէ) քա խօսեսցիս . Հարկ է զի (եթէ) եկեսցեն գայթակղութիւնք :

Ի Ե . Դ Ա Ս

Ձ Ե Ղ Չ Ո Ի Մ Ն

139 . Նախադասութեան մը մէջ շատ անգամ տէր բային , կամ ստորդելին , կամ խնդիրը , կամ մակբայը , եւ կամ մինչեւ իսկ դիմաւոր բայը յայտնի չեն դրուիր . կը զեղչուին . բայց խօսքին իմաստէն զեղչուած բառերը դիւրաւ կը հասկցուին :

Հ Ր Ս . Հ Ա Ն Գ .

Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զպատուէր երկրոսասանից աշակերտաց իւրոց , զնաց անտի քարոզել եւ ուսուցանել ի քաղաքս նոցա : Իսկ Յովհաննէս , իբրեւ լուաւ ի բանտին զգործան Քրիստոսի , առաքեաց ի ձեռն աշակերտաց իւրոց , եւ ասէ ցնա . դո՞ւ ես՝ որ զալցն ես , եթէ այլում ակն կալցաւք . պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա . զնացէք պատմեցէք Յովհաննու՝ զոր լուսցըն եւ տեսէք , կոյրք տեսանեն , կաղք զնան . բորոտք սրբին , եւ խուլք լսեն , եւ մեռեալք յառնեն , եւ աղքատք աւետարանին . եւ երանելի է՝ որ ոչն զայթակղեսցի յ'իս . եւ իբրեւ նոքա զնացին , սկսաւ Յիսուս ասել ցժողովուրդսն զՅովհաննէ . զինչ ելէք տեսանել յ'անապատին . եղէ՞ զն շարժուն ՚ի հողմոյ . Այլ զինչ ելէք տեսանել , մարդ հանդերձիւք փափկութեան (փափուկ) զարդարեալ . ահաւասիկ ի տունս թագաւորաց են՝ որոց զփափուկսն զգեցեալ է : Այլ

զինչ ելէք տեսանել, մարդարէ՞. այո՛, ասեմ ձեզ, եւ առաւել քան զմարդարէ՛ :

ՅՈՒՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆԻ ՏԵՂ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՄԱԿԻՐԱՅՆԵՐ

140. Աստի . այրի . անոր մակրայները շատ անգամ բացառական հորովներու քով կը դրուին իբրեւ ցուցական անձական :

- Ա.յս լեռնէն, ի լեռնէս յայտմանէ կամ ի լեռնէ աստի
- Ա.յդ լեռնէն, ի լեռնէդ յայդմանէ » ի լեռնէ այրի
- Ա.յն լեռնէն, ի լեռնէն յայնմանէ » ի լեռնէ անոր
- Ա.յս լեռներէն, ի լեռանցս յայոցանէ » ի լեռանց աստի
- Ա.յդ լեռներէն, ի լեռանցդ յայդցանէ » ի լեռանց այրի
- Ա.յն լեռներէն, ի լեռանցն յայնցանէ » ի լեռանց անոր

141. Այո՛ր, անոր, այրի, մակրայները ցուցական անձականի տեղ կը դործածուին ի նախդրով հայց. գոյականներու հետ՝ երբ նախադասութեան բայը շարժում կը ցուցնէ :

Ա.յն քաղաքը գնաց . Չոքաւ ի քաղաքն յայն, կամ ի քաղաք անոր .

Ա.յդ քաղաքը գնաց . Չոքաւ ի քաղաքդ յայդ, կամ ի քաղաք այրի :

142. Ասոր, անոր մակրայները ցուցական անձականի տեղ կը դործածուին գոյականաց հետ՝ երբ նախադասութեան բայը դասարարում (տեղւոյ մը կամ սահմանի մը մէջ դործողութիւն) կը ցուցնէ .

Ա.յն քաղաքը բնակեցան . Բնակեցան ի քաղաքին յայնմիկ, կամ, ի քաղաքի անոր .

Ա.յս քաղաքը բնակեցան, Բնակեցան ի քաղաքիս յայնմիկ, կամ, ի քաղաքի անոր .

ՍՏՈՐՈՒԵԼԻ. ՇԱՐ. (47)

143. Ե՛մ էական բայէն զատ, կան քանի մը անձական բայեր ալ, որոց տէր բային կամ Սեռի խնդիրն ստորագելի մը կ'ունենայ . ինչպէս են . ասնե՛մ . կարգե՛մ . անասնե՛մ . կուլե՛մ . կացոսցանե՛մ . դնե՛մ . կա՛մ եւ ուրիշ բայեր : Ստորագելին ուղղական կը դրուի՝ երբ տէր բային ինչ ըլլալը կը ցուցնէ, իսկ առանց լի հայցական կը դրուի՝ երբ Սեռի խնդրոյն ինչ ըլլալը կը ցուցնէ .

Արարից զքեզ Ռաֆաւոր . կացուցին զձեզ դասարարս . Դու կոչեսցիս կեփաս :

Առաջին երկու օրինակաց մէջ Ռաֆաւոր եւ դասարարս բառերն ստորագելի են՝ քանզի դէպք եւ շէք բառերուն ինչ ըլլալը կը ցուցնեն . եւ անորոշ հայցական դրուած են՝ քանզի դէպք եւ շէք սեռի խնդիրներուն կը վերաբերին . երրորդ օրինակին մէջ կեփաս բառն ստորագելի է՝ քանզի դասարարս ինչ ըլլալը կը ցուցնէ . եւ ուղղական է՝ քանզի դասարարս տէր բային կը վերաբերի .

Հ Ր Ս, Հ Ա, Ն Գ

Եւ սկսաւ խօսիլ նոցա հետ առակօք եւ ըսել . մարդ մը այգի տնկեց . եւ անոր բոլորտիքը ցանդով սրտեց (ածել ցանդ), եւ հնձան փորեց, ու աշտարակ շինեց եւ մշակաց տուաւ զայն եւ ինքը գնաց հեռի (տար) աշխարհ : Եւ ժամանակին, ծառայ մը զրկեց մշակաց, որպէս զի այն մշակներէն անուր այգւոյն պտուղը : Իսկ

մշակք բռնելով ծեծեցին (զան հարկանել) զծառայն եւ ունայն արձակեցին : Դարձեալ առաքեց նոցա ուրիշ ծառայ . իսկ նոքա զնա ալ կառավինատեցին եւ արձակեցին անարգեալ : Տէրը դարձեալ ուրիշ ծառայ զըրկեց . զնա ալ սպանին . նաեւ բազում ուրիշները՝ զումանս կը հարկանէին , զումանս կ'սպաննէին : Այն մարդը սիրելի որդի մը ունէր : յետոյ զնա զրկեց նոցա եւ կ'ըսէ մտքէն (մտքին մէջէն) . թերեւս իմ այս որդիէս ամաչեն : իսկ այն մշակք , երբ տեսան զնա թէ կու գայ , կ'ըսեն միմեանց . սա է ժառանգը . եկէք սպաննենք զսա եւ մերն ըլլայ ժառանգութիւնը . եւ զնա բռնելով սպանին . եւ այգիէն դուրս հանեցին :

Հ Ր Ս . Հ Ս . Ն Գ

Եւ եղև ի մտանել նորա ի տուն ուրումն յիշխանացն փարիսեցոց յ'աւուր շաբաթու ուտել հաց , եւ նոքա սպասէին նմա : եւ ահա այր ոմն ջրգողեալ էր՝ ՚ի տան անդ . առաջի նորա : Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ց'օրինաւորան եւ ց'փարեսեցիս , եթէ արժան իցէ նմա բժշկել զ'այրն ի շաբաթու : Եւ նոքա լուս եղև . եւ բուռն հարեալ զ'նմանէ բժշկեաց զնա եւ արձակեաց : Եւ ասէ ցնոսա . ոյր ի ձէնջ էջ կամ եզն անկանիցի ի ջրհոր եւ ոչ վազվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու . եւ ոչ կարացին տալ նմա պատասխանի : Ասաց եւ առ կոչնականսն առակ մի , հայեցեալ թէ զի'արդ բարձընտիր լինէին . ասէ ցնոսա : Յորժամ կոչիցէ ոք զքեզ ի հարսանիս կամ ի կոչունս , մի բազմիցիս յառաջին բարձին . գուցէ պատուականազոյն եւս

քան զքեզ կոչեցեալ իցէ ի նմանէ . եւ եկեալ , որ զքեզըն եւ զնա կոչեաց , ասիցէ ցքեզ . տո՛ւր սմա տեղի . եւ ապա սկսանիցիս ամօթով զյետին տեղին ունել : Այլ յորժամ կոչեսցիս , երթիջիր , բազմեսջիր ի յետին տեղով . զի յորժամ գայցէ , որ կոչեացն զքեզ , ասիցէ ցքեզ . բարեկամ , ի վեր մատիր , յայնժամ եղիցին քեզ փառք առաջի բարձակցացն քոց . զի նա , որ խոնարհեցուցանէ զանձն , բարձրացիր , եւ որ բարձրացուցանէ՝ զանձն , խոնարհեցցի :

Ի Զ . Դ Ա Ս

Թ Ո Ի Ա Կ Ա Ն Ա Ծ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

144. — Գոյականներուն թիւը կամ քանակութիւնը ցուցնող ածականները Բոսական կ'ըսուին :

145. Թուականները երեք տեսակ են . Բացարձակ , Դասական եւ Անձնեական :

146. Բացարձակ կ'ըսուին այն թուականները՝ որոնք գոյականի մը ասի հար ըլլալը կը ցուցնեն , ինչպէս՝ մի տուն , երկու եղբայր , հինգ տղայ , հազար մարդ :

Մի (29) . երկու (11) . երեք (1) (11) . չորք (11) . հինգ (11) . վեց (11) . եօթն (66) . ութ (11) . ինն (11-33 Ա) (2)

(1) Կը հոլովի , երեք , երեք , յ'երեք , երեք . նաև դեռ (սատանայ) բառը կայ , որուն ե զիրը նոյնպէս ի կը փոխուի , և կ'ըլլայ դիւի , ի դիւի , դիւա , դիւաց , դիւօք :

(2) Ինն բառին ի գիրը , սկիզբը դրուած ըլլալուն , տեղը ը գիրն յայտնի կը դրուի հոլովման ընթացքին մէջ , ինն , ըննի , ըննիւ . յորնակին ալ կը հոլովի այսպէս . ինունի ինունց (93 . Բ) :

տասն (79) . մետասան (11) . երկուտասան (11) . երեք-
 տասան (11) . չորեքտասան (11) . հնգետասան (11) .
 վեցտասան (11) . եօթնեւտասան (79) . ութեւտասան (79) .
 իննեւտասան (79) . քսան (11) . քսան եւ մի (29)
 երեսուն (11) . քառասուն (11) հարիւր (29) . եր-
 կհարիւր (29) . երեքհարիւր (29) . չորեքհարիւր (29) . . .
 հազար (16) . . . բիւր (29) . . . եւն :

147. Բացարձակ թուականի մը ծայրը բոլոր կամ
 երբոր մասնիկը դնելով կ'ըլլայ Դասական՝ որ գոյականին
 կարգը , +անի երբոր ըստը , կը ցուցնէ . երկու՝ երկբոլոր .
 երեք՝ երբոլոր . չորք՝ չորբոլոր . հինգ՝ հինգբոլոր եւն .
 բայց մեբոլոր չ'ըսուիր , առաջին կ'ըսուի : Դասական եւ
 նաեւ վերջին եւ յետին ածականները : Դասականները գո-
 յականներէն առաջ դրուելով շատ անգամ , իսկ ետքը
 դրուելով միշտ , մէկտեղ կը հորովին :

Դասականները կը հորովին Բ . հորովման սէս , միայն
 եզակի տրականին ու՛մ կ'ըլլայ :

148. Բացարձակի մը ծայրը ե+ին կամ ե+եան մաս-
 նիկն աւելցնելով կ'ըլլայ անջնեական թուական՝ որ իւր
 ցուցուցած թուոյն անջն ալ կը նշանակէ . տասն՝ տասն-
 ե+ին կամ տասնե+եան . հինգ՝ հնգե+ին կամ հնգե+եան . բայց
 չ'ըսուիր երկե+ին երկե+եան . սէտք է ըսել երկո+ին երկ-
 ո+եան :

Անձներականները եզակի չ'են ունենար , ուստի եւ
 միշտ յօքնակի գոյականի հետ կը գործածուին , եւ կը
 հորովին այսպէս .

Յո՛վնակի

Ուղ .	տասներին ,	տասներեան	տասն	ալ
Հայց .	զտասներին ,	զտասներեան	տասն	ալ

Սեռ .	տասնեցուն (ց)	տասնին ալ
Տրակ .	տասնեցուն (ց)	տասնին ալ
Բաց .	ի տասնեցուն (ց)	տասնէն ալ
Գործ .	տասներումբ	տասնով ալ

149. Անձներականի հետ գործածուած գոյական-
 ները վրանին յօղ կ'ունենան . ուստի չ'ըսուիր . շնորհ
 արանե+ին . ար հնգե+ին . այլ շնորհ արանե+ին կամ արանե+ին
 շնորհ . ար հնգե+ին կամ հնգե+ին ար :

ԳՈՅԱԿԱՆՈՎ ՀՈՂՈՎՈՒՄԾ ԱՆՁՆԵՐԱԿԱՆ

ԱԾԱԿԱՆ

Յո՛վնակի

Ուղ .	արքն	հնգեքին	հինգ մարդն	ալ
Հայց .	ղ'արան	հնգեսին	հինգ մարդն	ալ
Սեռ .	արանցն	հնգեցուն (ց)	հինգ մարդուն ալ	
Տրակ .	արանցն	հնգեցուն (ց)	հինգ մարդուն ալ	
Բաց .	յ'արանցն	հնգեցուն (ց)	հինգ մարդէն ալ	
Գործ .	արամբքն	հնգեքումբ	հինգ մարդով ալ	

Հ Ր Ս . Հ Ս . Ն Գ

Այլ իբրեւ էջ ի լեռնէ անտի , գնացին զինի նորա
 ժողովուրդք բաղումբ : Եւ ահա մատուցեալ բորոտ մի
 երկիրպագանէր նմա եւ ասէր . Տէ՛ր , եթէ կամիս ,
 կարող ես զիս սրբել : Ձգեաց (երկնցուց) զձեռն իւր
 եւ հասոյց ի նա , եւ ասէ . կամիս , սրբեաց . եւ վաղ-
 վաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւնն : Եւ ասէ
 ցնա Յիսուս . զբոյշ լեր . մի ումեք ասիցես . այլ երթ

ցոյց զ'անձն քո քահանային , եւ մատո՛ղ զ'պատարադն , զ'որ հրամայեաց Մովսէս , զի վկայեսցեն նոքա (քահանայքն) : Եւ իբրեւ եմուտ 'ի կախարհաուում՝ մատեաւ առ նա հարիւրապետ մի , աղաչէր զնա եւ ասէր . Տէ՛ր մանուկ իմ անկեալ կայ իտան՝ անդամալոյծ . եւ տանջի չարաչար (74) : Ասէ ցնա Յիսուս . ես եկից եւ բժշկեցից զնա . պատասխանի ետ հարիւրապետն եւ ասէ . Տէ՛ր , չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մտցես . այլ ասս՛ բանիւ եւ բժշկեսցի մանուկն իմ : Քանզի եւ ես այր մի եմ ընդ իշխանութեամբ . ունիմ ընդ ինեւ զինուորս . ասեմ սմա , էրթ , եւ երթայ . եւ այլում թէ եկ , եւ գայ . եւ ծառայի իմում թէ արա զ'այս եւ ասնէ :

Հ Ր Ա Ն Ա Ն Գ

Եւ միւս անգամ մտաւ Ժողովրդեան մէջ եւ հոն կար (էր) մարդ մը՝ որուն ձեռքը դօսացած էր : Եւ կ'սպասէին նմա , որ շաբաթ օրով (90) բժշկէ զ'մարդը . որպէս զի անոր (Յիսուսի) վրայօք չարախօսեն : Եւ Յիսուս կ'ըսէ մարդուն՝ որուն ձեռքը դօսացած էր , ոտքի ե՛լ մէջ տեղը (ի մէջ . 74) անցիր . եւ կ'ըսէ նոցա . Ի՛նչ արժան է շաբաթ օրով , բարբ՛ բան գործել թէ չար ընել . ոգի՛ մը ապրեցնել թէ կորուսնել . իսկ նոքա լռեցին : Յիսուս լի ցատամբ նոցա վրայ (133) նայելով , եւ տրտմեալ նոցա սրտից կուրութեան համար , կ'ըսէ մարդուն . երկնցո՛ւր քու ձեռքդ , նա ալ երկնցուց եւ նորա ձեռքը ողջացաւ :

Ը Ս Տ Ն Ա Խ Գ Ի Ի Բ

150. Ըստ նախդիրը եզակի եւ յոքնակի տրականով կը նշանակէ . համբար (կէօրէ) . Ըստ օրինաց . (օրինաց համեմատ) : Ըստ բանից ձերոց . (ձեր խօսքին համեմատ) : Ըստ պատկերի մերում . (մեր պատկերին համեմատ) :



Ի Է . Դ Ա Ս

Պ Ա Ր Զ Շ Ա Ր Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ի Բ Գ Ի Տ Ե Լ Ի Բ

151. Գրաբարի մէջ , խօսք մը շարեւը բնական կարդն է . առաջ տէր բային , յետոյ բայը , յետոյ ստորոգելին :

Ա . Եթէ տէր բային ածական մը , յատկացուցիչ մը , բացայայտիչ մը կամ խնդիր մը ունի , պէտք է զայն տէր բայիէն անմիջապէս ետքը՝ եւ բայէն առաջ զնել . վասն զի անոնք փեր քայ ին լրացուցիչներն են եւ ոչ բային :

Բ . Եթէ բայն էական ե՛մբայն է , միայն իրմէ առաջ ո՛ւ կամ փ՛ մակբայը կրնայ ունենալ՝ եթէ ունի . եւ այն ատեն նախադասութիւնը կ'ըլլայ փոփական , իսկ եթէ ո՛ւ մակբայը չ'ունի , նախադասութիւնն հասարական է , եւ պէտք է ե՛մբայէն անմիջապէս ետք՝ ստորոգելի եղող բառը զնել :

Գ . Բայց թէ՛որ նախադասութեան բայն է՛մ էն ուրիշ բայ մ'է (ածական բայ մը) , պէտք է գիտնալ որ այն

ատեն ստորագրելին բային հետ միացեալ է (19). ուստի բայէն անմիջապէս ետք դնել պէտք է՝ (եթէ նոյն բայն ունի)՝ նախ մակբայը, յետոյ տրական խնդիրը, յետոյ սեռի խնդիրը, յետոյ բացառական եւ գործիական խընդիրները, յետոյ նախդիրով խնդիրն ու վերջապէս նախադրութեամբ խնդիրը:

(ԳԻՏԵԼԻՔ. Պէտք է գիտնալ որ էական ե՛մ բայը բնաւ լրացուցիչ չ'առնեք. քանզի իւր պաշտօնն ուրիշ բան չէ՝ եթէ ոչ՝ տէր բային (ենթակայն) ու ստորագրելին իրարու հետ կապել, կամ, եթէ նախադրութիւնը ժխտական է, իրարմէ հեռացնել. իսկ չէզոք ու ներգործական (ածական) բայերուն տրուած լրացուցիչները, զոր օրինակ՝ մակբայը, սեռի խնդիրը եւայլն. նոյն ե՛մ բային հետ միացած ածականին (ստորագրւոյն) կը վերաբերին: Ե՛մ բային պաշտօնը գրեթէ այն է ստորագրւոյն ու ենթակային մէջ տեղ՝ ինչ որ է շարկապին պաշտօնը երկու բառի կամ երկու խօսքի մէջ տեղը. հետեւաբար լուծման ատեն աւելի աղէկ է պէրբայիները՝ ենթակայ անունով ստորագրւոյն հետ կապուած համարիլ եւ ոչ բային հետ):

Գ. Նախադասութեան մէջ գտնուած խնդիրներն ալ շատ անգամ երկրորդական լրացուցիչներ կ'ունենան. զորօրինակ՝ սեռի խնդիր մը կրնայ ածական, բացայայտիչ, յատկացուցիչ կամ ստորագրելի մ'ունենալ. պէտք է զանոնք ալ իրենց վերաբերեալ բառերէն անմիջապէս ետքը դնել. այսպէս ընելու է նաեւ միւս խնդիրներուն համար:

ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԴՐԱԿԱՆ

152. Գրաբար շարագրութիւններն ընդհանրապէս

պարզ (ընական) կարգով գրուած չ'են ըլլար: շատ անգամ տէր բային ետքը՝ բայն ալ առաջ, կամ բայը ետքը՝ սեռի խնդիրն առաջ կը դրուին: նոյնպէս, ետքը գրուելու տեղ, առաջ կը դրուին խնդիրները, յատկացուցիչները եւայլն. այս տեսակ գրուածները կ'ըսուին «բարոյի շարագրութիւն»:

Արդարեւ շարագրութիւնը երկու է. հարկաւոր եւ սպար.

ՀԱՐԿԱՌՐ ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ

153. Հարկաւոր արդարութիւնը կ'ըլլայ հետեւեալ դէպքերուն մէջ:

Ա. Երբ հոլովուած գոյական մը բազմալմանկ ածական մը կ'ունենայ իւր քով, պէտք է առ հարկի ածականն առաջ դնել՝ որպէս զի չը հոլովուի գոյականին հետ. չ'ըսուիր Բանին յախտնականի վասն զի անախորժ է ականջի, պէտք է ըսել՝ յախտնական Բանին:

Բ. Երբ Ուղ. կամ Հայց. հոլովով գոյական մը թէ ածական եւ թէ յատկացուցիչ ունի, պէտք է ածականը իւր գոյականէն առաջ դնել՝ որպէս զի չը կարծուի թէ ետքը գրուած յատկացուցիչին կը վերաբերի. ուստի սխալ է ըսել, Զքաղաք մեծ թագաւորին, քանզի չը հասկցուիր թէ մեծը +աղա+ին թէ Լափառուն ածականն է. պէտք է ըսել զմեծ +աղա+ Լափառուն, կամ, զքաղաք Լափառուն մեծի:

Գ. Երբ յարաբերեալ մը միանգամայն յատկացուցիչ մը կամ խնդիր մը կ'ունենայ, պէտք է որ ինք այն յատկացուցիչէն կամ խնդրէն ետքը գրուի՝ որպէս զի իւր յարաբերականին անմիջապէս քովը գրուած ըլլայ, սպար

Թէ ոչ իմաստի շփոթութիւն յառաջ կու գայ . չ'ըսուիր, Եղբայրն Յովհաննու՝ որ սպանաւ սրով . հոս այնպէս կը հասկցուի որ իբր Թէ սպաննուողը Յովհաննէն է . քանզի յարաբերականին անմիջապէս քովը դրուած է . բայց սպաննուողն Եղբայրն է . ուստի պէտք է ըսել . Յովհաննու եղբայրն՝ որ սպանաւ սրով :

Գ . երբ Տէր բայի մը յարաբերական կ'ունենայ , այն յարաբերականն իւր բոլոր նախադասութեամբը տէր բայիին անմիջապէս քովը կը դրուի , որով բայը տէր բայիէն կը հեռանայ . ինչպէս : Հայրն քո երկնաւոր , « Գրեանէ է ծածուկ (74) , հատուցէ քեզ յայտնապէս : Կամ տէր բային կրնայ ամբողջ խօսքէն ետքը դրուիլ եւ ետեւէն յարաբերականն , այսպէս . հատուցէ քեզ յայտնապէս հայրն քո երկնաւոր՝ որ տեսանէ ի ծածուկ :

Ե . Ոչ , Ք , մակրայներն օրէնք է որ՝ բայերէն առաջ դրուին :

Զ . Հարցական նախադասութեանց մէջ , հարցական եզրող բառը խօսքին սկիզբը կը դրուի :

Ա Ջ Ա Տ Ա Ր Տ Ո Ւ Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

154. Ազատ արտուղութիւն կ'ըլլայ , երբ առանց խօսքին իմաստն այլայլելու , շարադրութեան մը մէջ բառերը իրենց բնական կարգաւ շարելու տեղ , զանոնք ետք յառաջ կը տեղափոխենք . յատկացուցիչն առաջ , յատկացեալն ալ ետքը . բայն առաջ , տէր բային ետք . խընդիրն առաջ , խնդրառուն ետք . եւն :

ՊԱՏՈՒԷՐ . Գրաբարի մէջ շարադրութիւնք գրեթէ միշտ ազատ արտուղութեամբ կ'ըլլան : Ուսանողք պարտին

իւրեանց թարգմանած եւ լուծած հրահանգները միանգամայն բնական ձեւի վերածել . այս կրթութիւնը շատ կարեւոր է իրենց :

Հ Ր Ա , Հ Ա , Ն Գ

Ես եմ այր Հրեայ . ծնեալ եմ ի Տարսոզն կիւլիցեցւոց . սնեալ եմ ի քաղաքիս յ'այսմիկ՝ շատ ոտս Դամազիէլի . խըրատեալ եմ ըստ ճշմարտութեան հայրենի օրինաց . նախանձայոյզ էի Աստուծոյ՝ որպէս ամենեքին դուք այսօր էք : Կապեցի իւր մատնեցի ի բանտս՝ արս եւ կանայս , որպէս եւ քահանայապետդ (այդ) վկայէ ինձ եւ ամենայն ծերակոյտդ , յ'որոց եւ թողլիս առեալ , (Գրեալ) առ եղբարս , ի Դամասկոս երթայի՝ ածել եւ անտի կապեալս յ'երուսաղէմ զի պատժեսցին , եւ ի գնալն եւ ի մերձեանալ ի Դամասկոս՝ զմիջառուրը յանկարծակի փայլատակեցաւ զինեւ լոյս սաստիկ . եւ անկայ յ'երկիր , եւ լուսը բարբառ՝ որ ասէր ց'իս . Սաւնւղ , Սաւնւղ , զի՞ հալածես զիս : Եւ ես ետու պատասխանի՝ թէ ո՞վ ես Տէր , եւ ասէ ցիս . Ես եմ Յիսուս Նազովրեցի՝ զոր դու հալածես . բայց որ ընդ իսն էին , զլոյսն տեսանէին , այլ ոչ լսէին զձայնն՝ որ խօսէր ընդ իս : Եւ ասեմ , զի՞նչ արարից , տէր . եւ ասէ ցիս տէր . յարուցեալ երթիցես ի Դամասկոս եւ անդ պատմեսցի քեզ վասն ամենայնի . որ է քեզ հրաման :

Հ Ր Ա , Հ Ա , Ն Գ

Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի ,

որ կամեցաւ համար առնուլ ի մէջ ծառայից իւրոց : Եւ իբրեւ սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ . իբրեւ ոչ ունէր ինչ հատուցանել, տէրն նորա հրամայեաց վաճառել զնա եւ զկին նորա, եւ զորդիս եւ զամենայն՝ որ ինչ եւ ունիցի, եւ հատուցանել զպարտան : Եւ ծառայն անկեալ երկիրպագանէր նմա եւ ասէր . երկայնամիտ լեր առ իս, եւ զամենայն հատուցից քեզ : Գլխացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա եւ զիտին եթող (չնորհ ըրաւ) նմա : Եւ ելեալ ծառային այնորիկ, եգիտ զմի իծառայակցաց իւրոց . որ էր նմա պարտապան հարիւր դահեկանի . եւ կալեալ զնա խեղդէր եւ ասէր . հատն ինձ՝ զոր պարտին : Ա՛րդ, անկեալ ծառայակցին առ ոտս նորա, աղաչէր զնա եւ ասէր . երկայնամիտ լեր առ իս եւ հատուցից քեզ : Եւ նա ոչ կամէր . այլ չոքաւ արկ զնա ի բանտ՝ մինչեւ հատուցէ զպարտան : Իբրեւ տեսին այլ ծառայակիցք նոցա որ ինչ եղէն, արտմեցան յոյժ . եւ եկեալ ցուցին տեսուն իւրեանց զամենայն՝ որ ինչ եղեւ : Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր, եւ ասէ . ծառայ չար, զամենայն զպարտան թողի քեզ՝ վասն զի աղաչեցեր զիս : Իսկ արդ, զչէր պարտ եւ (այլ) քեզ ողորմել ծառայակցին քում, որպէս եւ ես քեզ ողորմեցայ : Եւ բարկացեալ տէրն նորա, մատնեաց զնա դահձաց, մինչեւ հատուցէ զամենայն ըզպարտան, Նոյնպէս եւ հայր իմ, որ յերկինս է, արասցէ ձեզ՝ եթէ իւրաքանչիւր ի ձէնջ ոչ թողուցու (ներել) եղբօր իւրում ի սրտէ իւրմէ զյանցանս նորա :



ԻԸ. ԴԱՍ

ՀԱՅՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ՝ ՈՐ ՍԵՌԻ ԶԷ

155. Ներգործական բայերուն սեռի խնդիր եղող Հայցականներէն զատ (21, 22), կան ուրիշ Հայցական խնդիրներ ալ՝ որոնք «Ե-ի չ'են . ինչպէս՝

Ա. Երբ չափ կը ցուցնեն, եւ ռըափ հարցման կը պատասխանեն .

Տուր ինձ բաժակ մի ջուր : Այս խօսքին մէջ ջուր բառը սեռի խնդիր է, քանզի գործողութիւնն անոր վրայ կը յանդի : Ռըափ ջուր — բաժակ մի, Հայցական (բնութեան) խնդիր՝ չափ ցուցնող :

Բ. Երբ ժամանակի պէ-ող-ի-ն կը ցուցնեն, եւ Ռըափ արեւ հարցման կը պատասխանեն : Յաղօթս կացէք զս-նայն առ-բա կենաց ձերոց .

Ռըափ արեւ . — զսնայն առ-բա . ժամանակի պէ-ող-ի-ն ցուցնող Հայց . (բնութեան) խնդիր :

Գ. Երբ ճամբայ կը ցուցնեն : Գնասջիք զերկայնութիւն ճանապարհին . ընթացան զուղղորդն, այսինքն, զ'ուղղորդ ճանապարհն .

ԳԻՏԵԼԻՔ . Ժամանակ՝ ինչպէս նաեւ ճամբայ ցուցնող բնութեան խնդիր Հայցականները՝ շատ անգամ առանց շի ալ կը գործածուին լեզուի անուշութիւն տալու համար, ուստի կ'ըսուի . թագաւորեաց ամս ասան, ընթացան ճանապարհ երբից աւուրց :

ՍՏԱՅԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

156. Ստացականները, էժ, Գ, Վեր, Յեր, էւր, ուրոնք էական դերանուական սեռականներէն կը շինուին, երբ գոյականներու հետ գործածուին՝ ածական են. իսկ երբ առանց գոյականի գործածուին՝ դերանուն են. եւ այն ատեն վրանին Ս. Գ. Ն. դիմորոշ (զէմք որազդ) յօդերէն մէկը կ'առնուն.

Տուր զիմն. Իմիններս որոր. Ա՛ռ զքոյր, Բո՛ւնիդ աս. ճանաչեմ զիմն եւ ճանաչիմ յիմոցն:

157. Յուցականներն ալ, այս, այդ, այն, գոյականի հետ գործածուած ատեն ածական են. առանց գոյականի գործածուած ատեն ջուցական դերանուն են, եւ կը նշանակեն այս Բանը կամ Բաները, այդ Բանը կամ Բաները, այն Բանը կամ Բաները:

Ը Ն Դ Ն Ա Խ Դ Ի Բ. Շ Ա. Բ. (126)

158. Ընդ նախդիրն եզակի եւ յօքնակի հայցական խնդրով կը նշանակէ՝ անորոշ ժամանակ, եւ աշխարհաբար դէժ կը թարգմանուի. Ընդ երեկոյս, Իրեկոսան դէժ. Ընդ առաւօտս, Արտոսան դէժ:

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ

Այր ոմն տանուտէր ել ընդ առաւօտս, ի վարձու ունեւ (վարձքով բռնեւ, վարձեւ) մշակս, արտեւ յ'այդի իւր. եւ արկ վարձս (գին կտրեւ) մշակացն աւուրն՝ դահեկան Ք, եւ առաքեաց զնոսս յայդի իւր: Եւ եւեալ զերրորդ ժամու, ետես այլս (այլ մշակս) զի կային դատարկ ի հրապարակին. ասէ եւ (ալ) ցնոսս. եր-

թայք եւ դուք յայդի իմ, եւ, որ ինչ (ինչ որ) արժանիցէ, տաց ձեզ. զնացին եւ նորա. դարձեալ ելեալ զվեց ժամու, արար նոյնպէս: Եւ զվետասաներորդ ժամու եւեալ եգիտ այլս, զի կային դատարկ, եւ ասէ ցնոսս. Ընդէ՛ր կայք աստ զօրս ցերեկ (10Յ) դատարկ. ասեն ցնա. զի ոչ ոք կալաւ զմեզ ի վարձու. Ստէ ցնոսս. երթայք եւ դուք յայդին եւ զօրինչ արժանն է առնուցուք: Եւ իբրեւ երեկոյ եղեւ, ասէ տէր այդուցն ցաւառապետ (գործակալ) իւր. կոչեա՛ զմշակսն եւ տուր նոցա վարձս. սկսեալ ի յետոցն՝ մինչեւ ցառաջինսն: Իբրեւ եկին, որ եկեալն էին զվետասաներորդ ժամուն, առին մէն մի (մէյ-մէկ) դահեկան: Եկեալ եւ առաջինքն (այսինքն, որք յառաջն զնացեալ էին յայդին) համարէին (կարծեւ յուսալ) թէ աւելի առնուցուն. եւ առին մէն մի դահեկան եւ նորա. իբրեւ առին, արանջէին զտանուտեառնէն եւ ասէին. թէ դոքա յետինքդ մի ժամ գործեցին. եւ հասարակորդս (հաւասար բաժին ընդուսող) արարեր զդոսս մեզ՝ որ զճանրութիւն եւ զտօթ աւուրն բարձաք: Նա պատասխանի ետ միտում ի նոցանէ եւ ասէ. ընկեր. չը զրկեմ զքեզ. ո՛չ դահեկանի միտջ (միտում) սակ արկեր (բազարլըս ընեւ) ընդ իս. ան զքոյդ եւ երթ, կամիմ յետոցս տալ՝ որպէս եւ քեզ. չիցէ՞ ինձ (չ'իցէ՞ իմ. ես չունիմ) իշխանութիւն յիմսն (իմիններուս, իմ ունեցածիս վրայ) առնել զինչ եւ (որ) կամիմ:

Ը Ն Դ Ն Ա Խ Դ Ի Բ. Շ Ա. Բ (158)

159. Ընդ նախդիրն անորոշ դերբայի հայցականով, Բան Ք բառով դէս (ժամանակ), արտեւ կը նշանակէ. Ընդ

բուսանելն չորացաւ. բուսանելուն պէս շորցաւ: Ընդ անկանելն մեռաւ . ինկալուն պէս մեռաւ:

Այս տեսակ խօսքի մէջ, շատ անգամ անորոշ գերբայքին եւ իրմէ ետքը եկող դիմաւոր բայքին մէջ ատեղը եւ չազկապը կը դրուի իմաստին սատակութիւն տալու համար. ուստի վերի օրինակները կրնան ըսուիլ նաեւ: Ընդ բուսանելն եւ չորացաւ. ընդ անկանելն եւ մեռաւ. իր թէ ըսուէր: Ընդ անկանելն եւ ահա մեռաւ:

Ա Ր Տ Ո Ւ Ղ Ո Ի Թ Ի Ի Ն . Շ Ա Ր (154)

160. Շատ անգամ նախադրութիւն մը եւ իւր խընդիրն իրարմէ կը հեռանան. ու մէջերնին ուրիշ բառեր կը մտնեն. ինչպէս. վասն բազում ժամանակաց մոգութեամբն զնոսա ազլեցոցանելայ: Պէտք է ըսուի: վասն ազլեցուցանելոյ զնոսա՝ բազում ժամանակաց (բազմաժամանակեայ) մոգութեամբն:

Շատ անգամ ալ յատկացուցիչ մը իւր յատկացեալէն առաջ դրուելով, անոր նախդիրն ինքը կ'առնու. ինչպէս. զարբութեան սրահն, փոխանակ ըսելու, զսրահն սրբութեան:

Ի . Ն Ա Խ Գ Ի Բ . Շ Ա Ր . (104)

161. Ի նախդիրն եզակի եւ յօքնակի հայցականով գործիականի նշանակութիւն ալ կ'ունենայ: Ի լոյս երեսաց. Բոս երեսացո լուսով: Ի ճայն մեծ. Մեծ յայնով:

Ա Ռ Ն Ա Խ Գ Ի Բ . Շ Ա Ր . (101)

162. Աս նախդիրը գործիականով կը նշանակէ,

Ա. Բոյն է վեր. Աս ծովեղերբն. Ծովուն եղերբն է վեր: Աս պարսպաւն. պարխապն է վեր (բովը, շուրջը):

Բ. Ատեն (ժամանակի միջոց). Աս Հայկաւ. Հայկայ արեն. Աս կենդանութեամբ հօր իւրոյ. Իւր հօրը կենդանութեան արեն (այն ժամանակի միջոցին):

Գ. Հատմարտութեամբ. Ձիւնչ է յարդ առ ցորենով. Յարդը ցորենին հատմարտութեամբ է՞նչ է.

Հ Ր Ա . Հ Ա Ն Գ

Եկն յայնկոյս ծովուն Գերգեսացոց. եւ ընդ ելանել նորա ի նաւէ անտի, պատահեաց նմա ի գերեզմանացն այր մի, զոր ունէր այս պիղծ, որոյ եւ բնակութիւն իւր իսկ (մինչեւ անգամ) ի գերեզմանա էր. եւ ոչ ըզլ թայլք սք եւս կարէր (կարող էր) կապել զնա վասն բազում անգամ (74) ոտնակապօք եւ շղթայիւք կապելոյ, եւ վասն խղելոյ ի նմանէ զշղթայսն, եւ վասն զոտնակապսն խորտակելոյ. եւ ոչ ոք կարէր պարտել զնա. քանզի հանապազ զցայդ (մինչեւ առաւօտ) եւ զցերեկ (մինչեւ երեկոյ) ի գերեզմանա եւ ի լերինս ազաղակէր եւ կոծէր (ծեծել) զանձն իւր քարամբք: Իրրեւ ետես զՅիսուս ի հեռաստանէ, ընթացաւ եւ երկիր եպագ նմա ազաղակեաց ի ճայն մեծ եւ ասէ. Ձիւ կայ իմ եւ քո, Յիսուս, որդի աստուծոյ բարձրելոյ, երզմնցուցանեմ զքեզ յատուած, մի տանջեր զիս. քանզի Յիսուս ասէր ցնա. ել, այդ պիղծ, ի մարդոյ սցախ: Եւ Յիսուս հարցանէր ցնա թէ զիւնչ անուն է քո. եւ ասէ այն ցնա, Լեզէովիլ է անուն իմ. քանզի բազումք եմք. եւ ազալէին զնա յոյժ, զի մի առաքեսցէ զնոսա (զինքեանս):

արտաքս քան զաշխարհն: Եւ անդ էր, առ լերամբն, մեծ երամակ մի⁽¹⁾ արօտական (արածուող) խողաց՝ աղաչեցին զնա ամենայն զեւքն եւ ասեն. առաքեա՛ զմեզ ի խողան՝ զի մտցուք ի նոսա: Եւ Յիսուս հրամայեաց նոցա. եւ իբրեւ ելին այսքն պիղծք, մտին ի խողեանն. եւ դիմեաց երամակն ի դարէ անտի ի ծովակն. եւ էին Խողան իբրեւ երկու հազարք, եւ հեղձնուին (հեղձան) ի ծովուն, եւ (իսկ) խողարածքն փախեան եւ պատմեցին ի քաղաքին եւ յազարակս. եւ քաղաքի ելին տեսանել թէ զի՛նչ իցէ որ գործեցան: Գան առ Յիսուս եւ տեսանեն զգիւհարն. որ ունէր զլեզէ ովնն, եւ նստէր զգեցեալ (հագուած) եւ զգաստացեալ: Եւ սլատմեցին, որոց տեսեալն էր, թէ զի՛նչ եղև այսահարին եւ զի՛նչ վասն խողիցն:

Ի Թ. ԴԱՍ

Ի. ՆԱԽԴԻՐ. ՇԱՐ. (161)

163. Ի նախդիրը, եզակի եւ յոքնակի հայցականով շատ անգամ համար ալ կը նշանակէ. Զինչ ծախսեցեր էրս, Դորա համար է՞նչ Ժախս արէր.

Ի նախդիրն այս նշանակութեամբ գործածուած ատեն, իրեն խնդիր եղող գոյականները շատ անգամ բայանոսն կ'ըլլան. այսինքն գործողութիւն կը ցուցնեն. եւ կրնան անորոշ դերբայի կամ դիմաւոր բայի դասուալ. այն ա-

(1) Բնագրին մէջ ազատ արտուղութեան ձևով գրուած է այսպէս. Երանակ մի խողաց արօտական մեծ.

տեն՝ ի նախդիրը նպարտի կը ցուցնէ: Ի յանդիմանութիւն իւրոցն պաշտօնէից. փոխանակ ըսելու, առ է յանդիմանել զպաշտօնեայս իւր. կամ. զի յանդիմանեացէ զպաշտօնեայս իւր, իւր պաշտօնեաները յանդիմանելու համար. կամ. որպէս զի էար պաշտօնեայները յանդիմանեացէ:

Հ Ր Ս. Հ Ա. Ն Գ.

Այր մի իջանէր յերուսաղեմէ յերիբով. եւ անկաւ ի ձեռս աւազակաց՝ որ մերկացուցին զնա, եւ վէրս ի վերայ նորս եղին (վիրաւորեցին), թողին կիսամահ եւ զնացին: Դէսկ եղև քահանայի միով⁽¹⁾ իջանել ընդ նոյն ճանապարհ. եւ տեսեալ զնա զանց—արար (փոյթ չընել, անցնել), նոյնպէս եւ Ղեւտացի մի, եկեալ ընդ նոյն տեղի, ետես եւ զնաց—արար: Սամարացի ոմն ճանապարհորդեալ եկն ընդ նոյն փեղէ առ նովաւ, եւ տեսեալ զնա գթացաւ, եւ մատուցեալ պատեաց զվէրս նորս՝ արկեալ ի վերայ վերացն ձէթ եւ դինի, եւ եղեալ զնա ի վերայ գրաստու իւրոյ ամ զնա ի պանդոկ մի եւ դարմանեաց զնա: Ի վաղիւ անդր (երկրորդ օրը), իբրեւ ելանէր անտի, հանեալ ետ ցլանդովկապետն երկուս դահեկանս և ասէ, դարման տար դմա, եւ զորինչ ծախսեցես ի դա, ի միւսանգամ գալտեան իմում հատուցից (վճարել) քեզ:

164. Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ Ն Թ—Ժ

Եգ.	Եգ.
Ուղ.	Տըղատ
Ուղ.	Եւզինէ

(1) Պէտք է ըլլայ միւսմ (138):

Հայց. զՏրդատ	Հայց. զԵւզինէ
Սեռ. Տրդատայ	Սեռ. Եւզինեայ
Տրակ. Տրդատայ	Տրակ. Եւզինեայ
Բաց. ՚ի Տրդատայ	Բաց. յՆեւզինեայ
Գործ. Տրդատաւ	Գործ. Եւզինեաւ

ԳԻՏԵԼԻՒԹ. Այս երկու հոլովմանց վրայ դացող անունները Յարուհի են. անոր համար յոքնակի չունին :

Եւզինէ ին պէս կը հոլովին. ա. ի. ո. ս. վերջաւորած յատուկ անունները : ինչպէս, Եւրոպա, Ազարիա, Յուլիոս . Օգոստոս : Բայց այս վերջինները քան քանի ին պէս ալ կը հոլովին, Օգոստոս, Օգոստոսի, Օգոստոսիւ :

Հ Ր Ա. Հ Ա Ն Գ

Գայ նա (Յիսուս) իքաղաք մի Սամարացոց, որում (1) անուն էր Սիւքար, մերձ ի գիւղն՝ զոր ետ Յակոբ որդւոյ իւրում Յովսեփոյ : Եւ անդ էր աղբիւր մի Յակովբայ. եւ Յիսուս վաստակեալ (խոնջած) ի ճանապարհէն, նըստէր ի վերայ աղբերն. եւ էր ժամ իրբեւ վեցերորդ : Գայ կին մի ի Սամարեայ՝ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս. սուր ինձ ըմպել. զի աշակերտքն նորա երթեալ էին ի քաղաք անդր, զի կերակուրս գնեսցեն : Ասէ ցնա կինն Սամարացի, դու՝ որ Հրեայ ես, զիմոք խնդրես ըմպել յինէն, ի կնոջէ Սամարացոց. զի ոչ երբէք խառ-

(1) Որում պէտք է ըլլայ որոյ, քանզի յատկացուցիչ է. գիտնալ պէտք է որ անուն բառէն առաջ դրուած յատկացուցիչ որ յարաբերականը նախնիր ընդհանրապէս տրական հոլով (որում) գործածած են այս խօսքը կրնայ ըսուիլ նաև այսպէս. որում անուն տուեալ էր Սիւքար. այն ատեն որումը տրական խնդիր կ'ըլլայ :

նակին (խառնուիլ) Հրեայք ընդ Սամարացիս : Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. եթէ գիտէիր դու զսարգեւան Աստուծոյ, եւ թէ ո՞վ է որ ասէն ցբեզ, եթէ սուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր ի նմանէ, եւ ուսայր քեզ ջուր կենդանի. ասէ ցնա կինն. տէ՛ր, դու քանզի եւ դոյլ խակ ոչ ունիս, եւ ջրհորս խոր է, իսկ արդ, ո՞ւստի ունիցիս զջուրն կենդանի : Միթէ դու մե՞ծ ինչ (աւելորդ դրուած է հոս Խաբաքը) ոք իցես քան զհայրն մեր Յակոբ՝ որ դայս ջրհոր ետ մեզ, եւ ինքն աստի արբ, եւ որդիք նորա եւ խաշինք (ոչխար, այծ) նորա աստի արբն : Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. ամ մենայն, որ ըմպէ ի ջրոյդ յայդմանէ, միւսանգամ ծարաւէ. բայց, որ ըմպէ՞ն ի ջրոյն՝ զոր ես տաց նմա, մի ծարաւեսցէ յաւիտեան (74), ասէ ցնա կինն. Տէ՛ր, տուր ինձ զջուրն դայն, զի մի ծարաւեսցից, եւ մի եկից այսր հանել ջուր : Ասէ ցնա Յիսուս, Երթ, կոչեալ զայր քո եւ եկ այսր : Պատասխանի ետ նմա կինն, եւ ասէ. չիք իմ այր. ասէ ցնա Յիսուս. բարեք (74) ասացեր թէ չիք իմ այր, զի հինգ այր փոխեալ է քո, եւ ուս, զոր այժմ ունիս, չէ քո այր, զայդ արդար (74) (իրաւ) ասացեր : Ասէ ցնա կինն. Տէ՛ր, թուի ինձ թէ մարդարէ իցես դու, գիտեմք զի Մեսիս դայ (դաւոց է), անուանեալն Քրիստոս. յորժամ եկեսցէ նա, պատմեսցէ մեզ զամենայն : Ասէ Յիսուս : Ես եմ (Մեհայն) որ խօսիմ ընդ քեզ, եւ յայս բան (այն խօսքն ըսելու ատեն) եկին աշակերտքն նորա. եւ զարմանային, զի ընդ կնոջն խօսէր. բայց ոչ ոք ասաց նմա, թէ զի՞նչ խնդրես, կամ զի՞նչ խօսիս ընդ նմա :

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ

Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանիա, ի գեղջէ Մարեմայ եւ Մարթայի քեռ նորա : Այս այն Մարիամ էր որ օծ գտէրն իւղով եւ ջնջեաց (սրբել) զոտս նորա հերով (մաղ) իւրով, որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր : Առաքեցին զ+ առ նա քորքն նորա եւ ասեն. Տէ՛ր, ահաւասիկ, զոր դուն սիրէիր հիւանդացեալ է :

Իբրեւ լուա Յիսուս, ասէ. այն հիւանդութիւնն չէ ի մահ, եւ սիրէր Յիսուս զՄարթա եւ զՄարիամ, զքոյր նորա, եւ զՂազար : Իբրեւ լուա թէ Ղազարոս հիւանդացեալ է, զտեղի կալաւ (կենալ) անդէն, ուր էրն, աւուրս երկուս : Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա (ցաշա-կերտս իւր) . եկայք, երթիցո՛ւք միւսանգամ ի Հրէաստան : Ասեն ցնա աշակերտքն . Ռարբի՛ (վարդապետ), այժմ եւս (դեռ նոր) խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծ առնել, եւ դարձեալ երթա՞ս անդրէն : Պատասխանի ետ Յիսուս. ո՞չ երկոտասան ժամ է աւուր (120) . Եթէ ոք գնայ ի տուընջեան՝ ոչ գայթակղի (մոլորել, կյնալ) . զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ, ապա թէ ոք գնայ է գիշերի (1), գայթակղի . զի լոյս ոչ գոյ (է) ընդ նմա : Զայս իբրեւ ասաց, յետ այսորիկ ասէ ցնոսա . Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի զարթուցից գնա : Ասեն ցնա աշակերտքն . Տէ՛ր, եթէ ննջեաց, ապա ապրի : Այլ Յիսուս վասն մահուն նորա ասէր . նոցա այսպէս

(1) Երրորդ հոլովման (29) վրայ գաղտնի բառերէն ոմանց Եգալի տրամանը ի նախդիրով խնդիր եղած ատեն՝ ոչ վերջաւորելու տեղ ի կը վերջաւորի, ինչպէս. աժող՝ յաժող. անկողին՝ յանկողնի. բերան ի բերանի. գիշեր՝ ի գիշերի ևն :

Թուեցաւ թէ վասն ննջելոյ քնոյն ասէ : Յայնժամ ասէ ցնոսա յայտնապէս . Ղազարոս մեռաւ, եւ ես ուրախ եմ . զի չէի անդ . բայց արդ եկայք, երթիցո՛ւք առ նա : Ասէ թովմաս, անուանեալն երկուորեակ, ցաշակերտակիցսն . եկայք եւ մեք զի ընդ նմա մեռցուք :

Ձ Ա Յ Ն Ա Ր Կ Ո Ի Թ Ի Ի Ն

165. Զայնարկութեան կամ Միջարկութեան կ'ըսուին այն բառերը՝ որոնք հոգւոյն մէկ կիրքը կը յայտնեն . զորովինակ վախը, զարմանքը, բարկութիւնը, զգուանքը, արհամարհանքը, ևն :

Զայնարկութիւններն ամբողջ խօսքի զօրութիւն ունին : Գլխաւոր գործածականներն են .

Ո՛հ, ո՛հ .	կը ցուցնէ	արտօմութեան, վշտ
Ո՛վ, } ո՛վ	»	զարմանք, հիացում
Ո՛հ, }		արհամարհանք
Վա՛հ, վա՛հ	»	վրէժխնդրութեան
Վա՛շ, վա՛շ, օ՛հ	»	զարմանք, ցաս, անպշտ
Բարէ՛, Բարէ՛	»	հոմբ, հարեկցութեան
Եղո՛ւկ } ա՛սղ	»	խրատից
Սւա՛ղ }		
Հապա՛լ } օ՛ն (հայտէ)	»	Պարտաճ շինէ
Օ՛ն }		
Օ՛ն անդր } Քաւ լիցի }	»	Պարտաճ, ստիգում
Ա՛յ, ո՛յ	»	խնամանք, քարկոծութեան
Է՛, ո՛վ	»	մեղք կոչելու համար
Երանի՛, Երանի՛	»	Երանութեան արտա համար
Վայ, վա՛յ	»	վայելու, վայ կարգաւու համար

Աղնիւ , աղնիւ , քովէսոր արարու համար
 Իցիւ
 Իցիւ թէ } Էղջ , Բաղյանէր յայտնելու համար
 Յանկարծ }

Լ . Դ Ա Ս

166. Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ի Ա Յ Ե Բ . Շ Ա Բ . (125)

Ս Ա չ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Յանցանեմ . Մարթիմ . Լամ . Գոմ
 Յանցանէ Էլ քորթեմ . Կընամ . Կուլամ . Էմ , Կ'լլամ :

Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

Յանցեայ	մարթացայ	լացի	չանի
Յանցեար	մարթացար	լացեր	
Յանցեաւ	մարթացաւ	եւլաց	
Յանցեաք	մարթացաք	լացաք	
Յանցեայք	մարթացայք	լացէք	
Յանցեան	մարթացան	լացին	

Ա Պ Ա Ռ Ն Ի

Յանցեայց	մարթացայց	լացից	
Յանցիցես	մարթացիս	լացես	
Յանցիցէ	մարթացի	լացէ	դուցէ
Յանցիցուք	մարթացուք	լացցուք	
Յանցիջիք	մարթասջիք	լացջիք	
Յանցիցեն	մարթասցեն	լացցեն	դուցեն

Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Յանցիր	չանի	լաց	չանի
Մի յանցաներ		մի լար	
Յանցերուք		լացէք	
Մի յանցանէք		մի լայք	

Ս Տ Ո Ր Ա Դ Ա Ս Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Յանցանիցեմ	մարթայցեմ	լայցեմ	չանի
Դ Ե Ր Բ Ս Յ			

ԱՆՈՐՈՇ	յանցանել	մարթել	լալ	գոլ
ԱՆՏԵՍԼ	յանցուցեալ	մարթացեալ	լացեալ	չանի
ԱՊԱՌՆԻ	յանցանելոց	մարթալոց	լալոց	չանի

Ը Ն Դ Ն Ա Խ Դ Ի Ր Շ Ա Բ . (159)

167. Չարմանալ , սրանդանալ , նախանչիլ , կարեկից լինել . եւ ուրիշ ասոնց նման , հոգւոյն մէկ կիրքը ցուցնող բայերը՝ ընդ նախդիրով հայցական խնդիր կ'առնուն եւ աշխարհաբարի մէջ չբայ կը թարգմանուին : Մի նախանձիր ընդ շարս , Չարբուն չբայ մ' նախանչիք : Չարմանային ընդ շարսպետութիւն նորա : Անոր շարսպետութեան չբայ կը շարմանային :

Հ Ր Ա չ Ա Ն Գ

Թագաւորն Դարեհ արար խրախուսիլին (մեծ խնձոյք) եւ ժողովեաց զամենայն իշխանս իւր եւ զընդոճինս (իւր տունը ծնած ծառայ) իւր եւ զամենայն մեծամեծս Մարաց , Պարսից եւ Քաղղէացւոց , եւ զամենայն նախարարս եւ զգորազլուխս եւ զեանզակալս (կուսակալ) ընդ նոսա ի կողմանցն Հնդկաց մինչեւ ի կողմանս Եթով-

պէսացուց: Եւ էին նախարարք հարիւր քանն եւ եօթն,
 եւ կերանն եւ արբինն եւ յագեցան եւ ուրախ եղեն: Եւ
 յորժամ վախճանն եղեւ Խրախոսեանն, Դարեհ թագաւոր
 եմուտ ի սենեակ իւր եւ ելեալ ի գահոյս (անկողին) իւր
 ի քունն եղեւ: Յայնժամ երեք սպասանիք, որ էին սենե-
 կապանք, (եւ մինչդեռ ի քունն կայր թագաւորն, ի ներքս
 ի սենեկի սպաս կաղեալ (սպասաւորել), եւ սլան ունէ-
 ին (սպահապանել) նմա, խօսել սկսան ընդ միմեանս եւ
 ասեն. եկայք, իւրաքանչիւր ի մեզ ասասցուք բան մի.
 եւ որ ասասցէն իմաստունն եւ առաւել զօրաւոր քան քան
 զընկերս իւր, տացէ նմա Դարեհ թագաւոր սարգեւս
 մեծամեծս, եւ մեծ եւ անուանի երեւեսցի նա քան զա-
 մենեսեան, եւ թագաւորն ծիրանի զգեցուցէ նմա. եւ
 ոսկի սպասուք (անօթ) արքէ նա եւ կերիցէ, եւ ի վե-
 րայ ոսկեղինաց նստցի եւ ննջեսցէ, եւ վարեսցէ (զօր-
 ծածեւ) երիվարս ոսկեսանձս, եւ խոյր բեհեգեաց թագ-
 կապեսցի նմա, եւ մանեակ ոսկի՝ ի սարանոցի նորա, եւ
 յերկրորդ աթոռն Դարեհի նստցի վասն իմաստութեան
 իւրոյ, եւ ազգական Դարեհի անուանեսցի:

Եւ յայնժամ իւրաքանչիւր (1) ի նոցանէ զրեալ զբան
 իւր կնքեցին եւ եղին առ սնարս (գլխուն գին) Դարեհի
 արքայի, եւ ասեն. յորժամ յարիցէ աբդոն, տացուք զնա
 զգիրդ, եւ ընտրեսցէ թագաւորն եւ երեք մեծամեծ իշ-
 խանք Պարսից, եւ որոյ գտցի բան իմաստնագոյն, նմա

(1) Իւրաքանչիւր եզակի բառը Տէր է կնքեցին եւ լղին բայերուն՝
 որոնք յորնակի են. ըստ ձեռոյն տէր բային քուով համաձայնած չէ
 բային հետ, բայց ըստ իմաստին համաձայն է, բանզի իւրաքանչիւր
 (ամէն մէկ) բառը միայն մէկ անձի համար չէ ըսուեր, այլ երեք ան-
 ձի համար՝ որոնք յոխնակի են:

տացէ զյաղթողական սարգեւսն: Եւ գրեաց առաջինն, եւ
 ասէ. յաղթող եւ զօրաւոր է քան զամենայն՝ գինի: Եւ
 գրեաց երկրորդն եւ ասէ. յաղթող եւ զօրաւոր է քան
 զամենայն՝ թագաւոր: Եւ երրորդն գրեաց եւ ասէ. յաղ-
 թող եւ զօրաւոր են քան զամենայն՝ կանայք, եւ քան զա-
 մենայն՝ յաղթէ ճշմարտութիւն: Եւ յորժամ զարթեաւ
 թագաւորն, առեալ զգիրն՝ զոր ետուն ցնա՝ կարգաց, եւ
 առաքեալ աբդոն կոչեաց զամենայն մեծամեծս Պարսից եւ
 Մարաց, եւ զնախարարս եւ զսարապետս եւ զտեղա-
 կալս եւ զիշխանս, եւ նստաւ ի տեղում յայգորեկի
 (բարեւելու եկողներն ընդունելու տեղ, «Եւրօլէ»):
 եւ կարգացին զգիրն առաջի ամենեցուն:

Եւ ասէ թագաւորն. կոչեցէք այսր զսպասանիսն, եւ
 նոքա մեկնեսցեն զբանս իւրեանց, եւ կոչեալ (կոչեց-
 եալ) մտին առաջի նոցա, եւ ասեն ցնոսա ամենեքեան.
 սպասեցէք մեզ զգրեալդ: Եւ սկսաւ ասել առաջինն,
 որ ասաց վասն զօրութեան գինւոյ, եւ ասէ այսպէս.
 «Ո՞րք, զիսորդ ոչ է զօրաւոր գինի. զի ամենայն մարդիկ
 որ ընկեն զնա՝ յիմարեցուցանէ զմիտսն (1) եւ զթագա-
 ւորաց եւ զտառապելոց մի միտս առնէ (2). նոյնպէս
 զտեառն եւ զծառայի, զմեծատանց եւ զաղքատաց եւ
 զամենեցուն միտս (3) դարձուցանէ եւ չրջէ յուրախու-
 թիւն: Եւ ոչ երբէք յիշեն զտրտութիւնն եւ զսխտս

(1) Այս նախադասութիւնը պէտք է ըլլայ այսպէս, զի յիմարեցու-
 ցանկ գոյիս առնայն մարդոյ՝ որ լոյսն և զնա:
 (2) Պէտք է ըսել, եւ առնէ գոյիս յապաւորաց եւ գոյիս ստապի-
 շոց՝ մի:
 (3) Յատկացուցիչներն առաջ դրուելով միտս յատկացեալին նախդի-
 րն իրենց վրայ տուեր են:

ինչ . քանզի զամենեցուն սիրտ ընու զուարթութեամբ
 եւ մեծութեամբ , եւ տայ խօսել զմեծամեծս : Եւ յոր-
 ժամ ըմպէ , ոչ յիշէ զսիրելիս եւ զեղբարս եւ զթշնամիս .
 եւ բազում անգամ հանեալ իցէ սուր . եւ յորժամ թա-
 վի զինին (զինովութիւնն անցնի) , ոչ յիշէ էլ՛ զինչ
 գործեաց : Ո՞ արք , զի՛արդ ոչ է զօրաւոր զինի՛ որ զայս
 ամենայն բռնադատէ գործել » : Եւ ասացեալ զայս ա-
 մենայն , լռեաց :

Եւ սկսաւ խօսել երկրորդն՝ որ ասաց վասն զօրութեան
 թագաւորի : « Ո՞ արք , ո՞չ ապաքէն զօրացեալ են մարդիկ
 որ ունին զծով եւ զցամաք եւ զամենայն որ ինչ ի նոսա .
 իսկ թագաւոր զօրացեալ տիրէ ամենայն երկրի եւ մարդ-
 կան , եւ զոր ինչ ասէ՛ն եւ հրամայէ , վաղվազակի առնեն .
 եթէ հրամայէ պատերազմել ընկեր (1) ընդ ընկերի
 իւրում , ոչ իշխեն անցանել զբանիւ շոքս , եւ եթէ առա-
 քէ զնոսա ի պատերազմ ընդ թշնամիս , երթեալ վազ-
 վազակի գործեն (շինել , կազմել) մեքենայս եւ լերինս
 եւ պարիսպս եւ աշտարակս . սպանանեն եւ մեռանին ,
 եւ զհրամանաւ թագաւորին ոչ կարեն անցանել . եւ եթէ
 յաղթեացեն , զամենայն բարութիւնս բերեն թագաւորին :
 Եւ ոչ միայն զօրականք պատերազմողք , այլ եւ
 մշակք , որ գործեն զերկիր , յորժամ սերմանեն եւ հնձեն ,
 զարդիւնս իւրեանց բերեն թագաւորին . եւ հարկահանք
 դարձեալ բռնադատեալ զաշխարհ , հանեն հարկս (հարկ
 առնել) վասն թագաւորին : Եւ թագաւոր միայն զօրա-
 ցեալ իշխան է ի վերայ ամենայնի . եւ եթէ հրամայէ սպա-
 նանել , սպանանեն . եւ եթէ կեցուցանել հրամայէ , կե-

(1) երբ հ, ախայե պատեազմեց ընկերի ընդ ընկերին խառն :

ցուցանեն . եթէ շինել հրամայէ , շինեն . եւ եթէ քակել ,
 քակեն . եւ եթէ տնկել , տնկեն . եւ ամենայն աշխարհ՝
 թագաւորի զօրութեան եւ հրամանի լսեն (անսալ , հնա-
 զանդիլ) . եւ ինքն արքայ՝ զինչ եւ կամի՛ գործէ . եւ
 ինքն ի հանգստեան կայ , բազմի , ուտէ , ըմպէ եւ ի քուն
 մտանէ , եւ այլք ամենեքեան շուրջ պահեն զնա , եւ հրա-
 մանի նորա անսան , եւ ոչ իշխեն (չեն համարձակիր)
 ըստ կամս (1) իւրեանց երթալ ուրեք , եւ կամ գործել
 եւ ոչ իշխեն անցանել զհրամանաւ թագաւորի : Ա՛րդ ,
 ո՞ արք , զի՛արդ ոչ զօրաւոր է թագաւոր , որոյ բան հրա-
 մանի իւրոյ այսչափ զօրացեալ իշխէ ի վերայ ամենե-
 ցուն » : Եւ զայս ասացեալ լռեաց :

Եւ երրորդն , որ ասաց վասն զօրութեան կանանց եւ
 վասն ճշմարտութեան , այս է Զօրաբարէլ , սկսաւ խօ-
 սել եւ ասէ . « Ո՞ արք , եթէ մեծ է թագաւոր եւ կամ
 այլ բազում մարդիկ , եւ կամ զօրաւոր է զինի , ո՞ է
 որ յաղթեալն ունի եւ տիրէ ի վերայ ամենեցուն , Ո՞չ
 ապաքէն կանայք . քանզի կանայք են , որ ծնանին զթա-
 գաւորս . եւ ամենայն մարդիկ , որ տիրեն ծովու եւ ցա-
 մաքի , ի նոցանէ ծնան , կանայք ծնան եւ սնուցին զմը-
 շակս , որ տնկեն զայգիս՝ ուստի (յորոց) լինի զինի .
 եւ նոքա են , որ առնեն (շինել) զհանդերձ արանց . եւ
 նոքօք զարգարին եւ փառաւորին մարդիկ . եւ ոչ է հը-
 նար սուանց նոցա լինել մարդկան , եւ եթէ ժողովեն
 զտակի եւ զարծաթ եւ զամենայն բարութիւնս , եւ
 տեսեալ կին մի գեղեցիկ՝ զարձեալ (զառնալով) ՚ի նա
 եւ բերանարաց եղեալ հային ընդ նա (անոր վրայ ,

(1) Բ, ս կանաց իւրեանց :

զեացմամբ, կրեւ), եւ ամենայն կամօք իւրեանց սիրեն զնա առաւել քան զուսկի եւ քան զարծաթ եւ քան զամենայն բարութիւնս . եւ թողեալ (մարդոյ) զհայր եւ զմայր իւր՝ որ ծնան եւ սնուցին զնա, եւ զաշխարհ իւր, երթայ զհետ կնոջ իւրոյ . եւ այնպէս միացեալ ոգեխառնի (մէկ հոգի կ'ըլլայ) ընդ նմա, մինչեւ զի ոչ յեղէ զհայր իւր եւ զմայր էր եւ ոչ զաշխարհ իւր (հայրենիք) :

«Եւ յայսմանէ արժան է ձեզ գիտել թէ տիրեն ի վերայ ձեր՝ կանայք ձեր . զի զամենայն ինչ, զոր գործէք եւ աշխատիք, բերէք եւ տայք ցկանայս ձեր : Եւ առեալ առն գտուր իւր զնայ ի ճանապարհ հետի . եւ եթէ շահի ինչ, կամ աւագակէ եւ գողանայ, կամ ընդ ծով եւ ընդ գետս նաւէ, եւ դազանաց պատահէ եւ ընդ խաւարուստ զնայ, եւ յորժամ գողանայ եւ յախշտակէ, եւ ընդ ամենայն վիշտս անցանէ, գայ բերէ զամենայն վատտական (աշխատութիւնը, աշխատութեան արդիւնք) առ կին իւր . քանզի առաւել սիրէ մարդ զկին իւր՝ քան զհայր իւր եւ զմայր իւր : Եւ բազումք յիմարեցան ի մտաց իւրեանց, եւ վասն կանանց իւրեանց անկան ի ծառայութիւն . եւ բազումք ի կորուստ մատնեցան եւ մեռան եւ սպանին, եւ սխալեալ անկան ի մեծամեծ մեղս վասն կանանց» :

«Եւ այժմ ո՞չ հաւատայք ինձ : Ո՞չ մեծ թագաւորդ անձնիշխան (ագատ) է ինքն, եւ ամենայն ոք ի մարդկանէ ոչ իշխէ մերձենալ ի դա : Տեսանէի ես զդուստր հարձի թագաւորին, զի նստէր ընդ աջմէ (աջ կողմը) թագաւորիդ եւ առեալ զթագն ի գլխոյ դորս, զնէր ի գլխի իւրում, եւ ամեալ (ամէր) աստակ թագաւորիդ . եւ առ այս՝

թագաւորդ ոչ ցասնոյր . այլ բացեալ զբերան իւր հայէր ընդ դէմ նորա . եւ եթէ ծիծաղէր առջևն, ծիծաղէր եւ իսկապէս ընդ դէմ նորա . եւ եթէ արամէր առջևն, թագաւորդ ողբէր (սիրտը առնել) զնա, մինչեւ սթափեցուցէ (տրտուութիւնը փարատել) զնա : Ա՛րդ, ո՞ր արք, զի՞արդ ոչ են զօրաւոր՝ կանայք, որ զայս ամենայն առնեն» :

Եւ յայնժամ թագաւորն եւ մեծամեծք նորա սկսան հայել այր ընդ ընկեր իւր : Եւ սկսաւ խօսել Զօրաբարէլ վասն ճշմարտութեան եւ ասէ . «Ո՞ր արք, ո՞չ ապաքէն զօրաւոր են կանայք . մեծ է երկիր, բարձր են երկինք եւ երազընթաց է արեգակն . վասն զի ունի արչաւանս (ընթացք) ընդ կամարածեւ խորանն երկնից, եւ դարձեալ վաղվաղակի սլացեալ՝ հասանէ ի տեղի իւր ի միում աւուր : Ո՞չ ապաքէն մեծ է այն (նա), որ զայս ամենայն արար : Արդարեւ ճշմարտութիւն (Աստուած) մեծ եւ զօրաւոր է քան զամենեւեան . ամենայն երկիր ապաւինի ի ճշմարտութիւն, եւ երկինք օրհնեն զճշմարտութիւն, եւ ամենայն գործք շարժին եւ դողան առաջի նորա, եւ ոչ է ի ճշմարտութեան՝ անիրաւութիւն եւ ոչ մի» :

«Անիրաւ է զինի . անիրաւ է թագաւոր . անիրաւ են կանայք . անիրաւ են եւ ամենայն որդիք մարդկան . անիրաւ են եւ ամենայն գործք նոցա, եւ ոչ զոյ ի նոսա ճշմարտութիւն, եւ յանիրաւութեան իւրեանց կորնչին . Իսկ ճշմարտութիւն կայ եւ մնայ եւ զօրաւոր է ֆրէ ց՝ յաւելտեան, եւ կենդանի է եւ ունի (կը տեսէ) իշխանութիւն նորա յաւելտեանս յաւելտեանից, եւ ոչ գոյ ի նմա ակնառութիւն (երեսպաշտութիւն), եւ ոչ երբէք փոփոխի, այլ իրաւունս առնէ եւ մերժեալ է ի նմանէ ա-

նիրաւութիւն եւ չարութիւն . եւ ամենայն գործ ճշմարտութեան հաճոյ են ամենեցուն . եւ ոչ գոյ ի դատաստանի նորա ննիրաւութիւն . քանզի ճշմարտութիւն՝ է զորութիւն թաղաւորաց եւ իշխանութիւն եւ մեծութիւն . եւ է օրհնեալ սէր աստուած ճշմարտութեան»

Եւ ասացեալ զայս , լռեաց ի խօսելոյն . եւ ամենայն ժողովն յայնժամ մեծաձայն աղաղակեցին եւ ասեն . մեծ է ճշմարտութիւն եւ յաղթող զօրաւոր :

Լ Ա . Դ Ա Ս

ԳՈՅԱԿԱՆԱՅ ԹՈՒՈՅՆ ՎՐԱՅ

168. Կան հասարակ գոյականներ՝ որոնք յօքնակի չ'են գործածուիր, ինչպէս. քաղց, ծարաւ. սէր. ճերութիւն եւն . ասոնք անյո՞նակա՞ն կ'ըսուին :

169. Կան գոյականներ ալ , որոնք եղակի չ'են գործածուիր, ինչպէս. կամք. միտք. աղօթք. դժօխք. կեանք եւն. ասոնք ալ անյո՞նակա՞ն կը կոչուին -

170. Կան ուրիշ գոյականներ ալ , որոնց յօքնակին շինելու համար ծայրերին փոխանակ + ի ուրիշ՝ զրեր կը դրուին , եւ եղակի ձեւով կը հղովուին . բայց նշանակութեամբ յօքնակի են . ինչպէս .

Եզ .	Յոխ .
Մարդ .	մարդիկ (մարդիկ , մարդեր)
Աւագ .	աւագանի (մեծամեծներ)
Ոսկր .	ոսկրոտի (ոսկորներ)
Եշ .	իշեան (էշեր)

Չի .	ճիւղ (ճիւղ)
Գիր .	գրեան (գիրեր , գրքեր)
Մանուկ .	մանկաի (մանուկներ)
Սոզ .	խողեան (խողեր) եւ այլն :

Ն ՅՕԴԻՆ ՎՐԱՅ

171. Յատուկ անուններէ առաջ դրուած ածականները վրանին Ն յօղը կ'առնեն . Մեծն Սահակ . Բաջն Վարդան . Երանելին Տրդատ .

172. Բայց երբ ածականն յատուկ անունէն ետքը դրուի, վրան յօղ չ'առներ . Վարդան քաջ . Սահակ մեծ :

Յուցակս եւ սսացակս ւծակսնաց գեղջումն

173. Յուցական եւ ստացական ածականները շատ անգամ կը զեղչուին եւ գոյականին վրայ վիայն « . դ . ն » գրերէն մէկը կը դրուի . զոր օրինակ .

Տեսանեմք զ'աշխարհս . փոխանակ ըսելու . զաշխարհս շայն : Ասէ ցնա հայրն . փոխանակ ըսելու . հայր էր :

Հ Ա Յ Կ Ա Բ Ա Ն ՈՒ Թ Ի Ի Ն

174. Երբ բառ մը խօսքի մէջ իւր սովորական (բուն) նշանակութենէն տարբեր իմաստ մը կու տայ , բառէ հայկաթանոթեան է , ինչպէս . Բոք + բառին բուն նշանակութիւնը յայտնի է . բայց երբ կ'ըսուի ընդ Բոք որանել , իմաստը կը փոխուի եւ կը նշանակէ որժառնգութիւն : Նոյնպէս բառից հայկաբանութիւն են հետեւեալները .

Երթալ զիւրովի } ինքզինք սպաննել .
Անձին առնել }

Ը Ս Տ Ն Ա Խ Գ Ի Բ .

Ունչս առնել . արհամարհել , ծաղրել .
 Չեռն յանձին . հարկանել . պարծենալ .
 Ի ձեռն առնուլ . ձեռք ձգել .
 Չտեղի ունել . կենալ .
 Չեռն տալ . օգնել , ձեռքէն բռնել .
 Ի միտս լինել . խելքը գլուխը դալ .
 Ի բանի առնել . իր կողմը վաստկիլ .
 Չահի հարկանել . սատկապէս վախնալ .
 Յ'ապուշ կրթել . ապրիլ .
 Տալ զանձն . մտնել .
 Վանս ունել . գիշերը մէկուն տունը կենալ .
 Բարաձիգ առնել . քար նետել եւն :

ԳԻՏԵԼԻՔ . Այս տեսակ խօսքեր լուծելու դիւրին կերպն է երկու բառը միացեալ համարել . զոր օրինակ . Չահի հարան թշնամիք . զահի հարան բայ չէզոք , իշնամիք տէր զահի հարան բային :

Բառի հայկաբանութիւն՝ մեր դրաբար լեզուին մէջ ըստ գործածական է :

Ը Ն Գ Ն Ա Խ Գ Ի Բ . ՇԱՔ , (167)

175. Ըստ նախդիրն եզակի եւ յօքնակի հայցոտիան խնդրովկը նշանակէ ձեջ պեղ . այս նշանակութեամբ միշտ գէթ երկերկու խնդիր կ'ունենայ : Ընդ իս եւ ընդ քեզ . ի՞նչ էր ու ձեջ պեղը . Ընդ հովիւս իմ եւ ընդ հովիւս քո եւ ընդ հովիւս դրացեաց իմաց , ի՞նչ հովիւներուս , եւ քոս հովիւներուս եւ դրացեաց հովիւներուս ձեջ պեղը :

176. Ըստ նախդիրը բացառական հոլովի հետ կը գործածուի եւ յաջորդութեան խնաստ կու տայ , զոր օրինակ . Օր ըստ օրէ , ամ ըստ ամէ . մի ըստ միովէ . կը թարգմանուին . օրէ օր , ամբողջ ամբողջ . մէկ մէկու երես .

Հ Ր Ս , Հ Ս , Ն Գ .

Լուա Յուդա Մակաբէ զանուն Հռովմացեաց , եթէ են նոքա հզօրք զօրութեամբ . եւ նոցա բարուք թուի թէ ոք թիկունս առնէ զնոսա եւ զաշնաւոր լինի նոցա . եւ զի զօրացեալ են զօրութեամբ ի վերայ երկրի : Եւ լուա վասն մարտից պատերազմի զի հարկանէին քաջութեամբ իւրեանց զկողմանս Գաղատացեաց , զի զօրացան ի վերայ նոցա , եւ կացուցին զնոսա ի հարկի (հարկատու ընել) . լուա եւ որ ինչ արարին նոքա ընդ կողմանս Սպանիացեաց եւ զի թափեցին ի նոցանէ զըրզոն (հանք) , ուստի (յ'որոց) ոսկին եւ արծաթն հատանի (կելլէ , կը հանուի) . եւ զի բարունեցին (նուաճեցին) նոքա զտեղիս խորհրդովք իւրեանց եւ երկայնմտութեամբ , զի էր տեղին կարի , բացարձակ (խիտ հեռի) ի նոցանէ . զքաղաքս ի թագաւորաց անտի՝ որ եկեալ էին ի վերայ նոցա ի ծագաց երկրի՝ հարին ի հարուածս մեծամեծս եւ ջնջեցին զնոսա , եւ զմնացօրդան ի հարկի կացուցին տալ նոցա ամ ըստ ամէ . եւ զփրկագոս եւ զարքայն կինէացեաց՝ որ յարուցեալ էին ի վերայ նոցա՝ սատակեցին ի պատերազմի . եւ մեծն Անտիոքոս արքայն Սպանացոց՝ որ եկեալ էր ի վերայ նոցա մեծաւ պատերազմաւ , եւ ոք ընդ իւր ունէր հարիւր քսան վիղ

եւ կառս եւ երիվարս բազում յոյժ՝ պարտեցաւ ի նոցանէ . ձերբակալ արարին (բռնեցին) զնա կենդանւոյն (ողջ . 74), եւ կացուցին զնա ի տեղի մի՝ հարկ հարկանել (տուրք վճարել) . եւ զթագաւորս՝ որ ըստ նմանէ (76) էին, ստիպեցին տալ պատանդս եւ գրաւականս . եւ զաշխարհն Հնդկաց եւ Պարթեւաց եւ Լիդացոց առին եւ ի ձեռս ետուն (յանձնեցին) Եւմենեայ արքայի :

Հ Ր Ս . Հ Ս . Ն Գ .

Եւ ի ծնանել Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէաստանի , յաւուրս Հերովդի արքայի , ահա մոգք յարեւելից եկին յերուսաղէմ եւ ասեն . ո՞ր է արքայն Հրէից որ ծնաւ . զի տեսաք զաստղն նորա յԱրեւելս եւ եկաք երկիր պաղանել նա : Իբրեւ լուաւ արքայ Հերովդէս , խոռվեցաւ . եւ ամենայն Երուսաղէմ ընդ նմա . եւ ժողովեալ զամենայն քահանայապետս եւ զգալիրս ժողովրդեան , հարցանէր ի նոցանէ թէ ո՞ր ծնանիցի Քրիստոսն . եւ նոքա ասենցնա . ի Բեթղեհէմ Հրէաստանի քահանայէք է . Յայնժամ Հերովդէս գալստ (74) կոչեաց զմոգսն , եւ ստուգեաց ի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ : Եւ արձակեալ զնոսս ի Բեթղեհէմ , ասէ . գնացէք ստուգեցէք վասն մանկանն . եւ յորժամ գտանիցէք , ազգարասջիք (խմացնել) ինձ , զի եւ ես եկեալ երկիր պաղից նմա : Եւ նոքա , իբրեւ լուան ի թագաւորէն , գնացին . եւ ահա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա մինչեւ եկեալ եկաց ի վերայ Կեղանի ուր (յորում) էր մանուկն : Իբրեւ Մագն տեսին զաստղն խնդացին յոյժ ուրախութիւն մեծ (1) . եւ իբրեւ մտին ի տունն ,

տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ մարմն (ն յողն աւելորդ է) իւրով . անկեալ երկիր պաղանէին նմա . եւ բացեալ զգանձս իւրեանց , մատուցին նա պատարագըս (նուէր) , ոսկի եւ կնդրուկ եւ զմուսս : Եւ հրամանս առեալ ի տեսլեան չքաւանալ անդրէն առ Հերովդէս , ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց : Եւ իբրեւ գնացին նոքա անտի , ահա հրեշտակ տեսան երեւէր ի տեսլեան Յովսեփու եւ ասէր . արի , մո զմանուկդ եւ զմայր իւր եւ վախի՛ր յեգիպտոս եւ անդ լինի՛լիր , ցորժամ ասացից քեզ . քանզի ի խնդիր է Հեղովդէս կորուսանել զմանուկդ : Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմայր նորա է գիշերի եւ գնաց յեգիպտոս , եւ անդ էր ցվախճան Հերովդի : Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս թէ խարեցաւ ի մոգուց անտի , բարկացաւ յոյժ . եւ առաքեաց կոտորեաց զամենայն մանկունսն՝ որ էին ի Բեթղեհէմ եւ ի սահմանս նորա յերկեմենից եւ խոնարհ (երկու . տարուքնէ վար) , ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մոգուցն . Եւ ի վախճանել Հերովդի , ահա հրեշտակ Տեառն երեւէր ի տեսլեան Յովսեփու եւ ասէր . արի , մո զմանուկդ եւ զմայր իւր եւ գնա յերկիրն Իսրայելի , զի մեռան որ խնդրէին զանձն մանկանդ : Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմայր նորա եւ եկն յերկիրն Իսրայելի : Եւ իբրեւ լուաւ Յովսեփ եթէ Սրբեղայոս թագաւորեաց Հրէաստանի , փոխանակ Հերովդի հօր իւրոյ , երկեալ երթալ անդ . եւ հրամանս առեալ ի տեսեան՝ գնաց յերկիրն Գալիլեացոց :

(1) Ուրախութիւնսն ըստ :

Հ Ր Ա Ն Ս Ն Գ

Նաբուգոդոնոսոր արքայ հանդէս առնէր (այցելու թիւն ընել, քննել) զօրաց իւրոց: Կոչեաց նա զամենայն մեծամեծս իւր եւ զկուսակալս իւր եւ խորհէր ընդ նոսա զի խնդրեսցէ զվրէժ յամենայն երկրէ: Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն. սատակեսցի ամենայն զիմակաց թագաւորիդ: Եւ եղև իրբեւ կատարեաց զխորհուրդս զայս, կոչեաց նա զՀողեփեռնէս, զսպարապետ ամենայն զօրաց իւրոց եւ ասէ ցնա. Ընտրեսցես առցես դու ընդ քեզ որք յուսացեալ էն ի զօրութիւնս իւրեանց հետեւակս (հետիզօր, որ կը քալէ, էւեւ) հաղարս հարիւր քան: Եւ բազմութիւն յոյժ հեծելց (ծիաւոր զօրք) բիւրս երկոտասան. եւ ելցես դու ընդ կողմն արեւմբտից: Եւ պատուիրեսցես նոցա զի պատրաստեսցեն զերկիրն եւ զՂուրսն. զի ելանեմ ես բարկութեամբ իմով ի վերայ նոցա, եւ առնեմ զնոս կոխան ոտից զօրութեամբ իմով, եւ վիրաւորք նոցա լցցեն զճորս եւ ըզճորճ որս (պղտիկ ճոր) իւրեանց, եւ գետք խաղացեն (վազել) յարենէ նոցա: Եւ դու ելանիցես, պատիցես, պաշարիցես ինձ զսահմանս նոցա, եւ ոչ անխայեսցէ (խնայել) ակն իմ ի վերայ նոցա: Եւ դու մի զանց առնիցես եւ մի զմիով բանիւ զոր ետու քեզ հրաման:

Եւ ել Հողեփեռնէ յերեսաց տեառն իւրոյ, եւ կոչեաց առ ինքն զամենայն իշխանս եւ զզօրադլուխս, եւ ընտրէր ի նոցանէ, եւ թուէր արս ի պատերազմ բիւրս երկոտասան. եւ հեծելազօրս աղեղնաւորս երկոտասան հաղար. եւ կարգէր կազմէր զնոսս ճակատեալս ի պատերազմ: Եւ էառ նա ուղտս եւ գրաստս բազում յոյժ:

առ ի բառնալ զկահ եւ զկարասի. եւ խաչն (ոչխարի տեսակ) եւ արջատս (եգան տեսակ) եւ երամակս այժից ի դարմանս (պաշար) իւրեանց եւ տայր ամենեցուն թաշակ ի ճանապարհ՝ սակի եւ արծաթ ի տանէ թագաւորին բազում յոյժ:

Եւ գնացին նոքա ի Նինուէ քաղաքէ գնաց (ճանրայ) երկց աւուրց ի դաշտն, եւ բանակեցան նոքա մերձ առ լեռինն, ի ճախակողմն վերին կիլիկեայ. եւ էառ զամենայն զօրս իւր գհեծեալս եւ գհետեալս, զգէնս եւ զկառս, եւ գնաց անտի ի լեռնակողմն: Բանդէր եւ աւար հարկանէր զամենայն որդիսն Հաամակայ՝ որ բէնակեալ էին ընդ երեսս անապատին ընդ հարաւակողմն:

Եւ անց ընդ Եփրատ գետ, եւ շրջեցառ նա ընդ Միջագետս, եւ եհար վանեաց զամենայն քաղաքս բարձունս. եւ հարկանէր սատակէր զամենայն զիմապարսն իւր: Եւ եկն մինչեւ ի սահմանս Յաբեթայ, ի հարաւակողմն, որ է դէմ յանդիման Արարեայ. Եւ արգելեալ փակեաց զամենայն որդիսն Մագիամու եւ հրճիգ արար զամենայն յարկս եւ զկտրանս նոցա եւ աւերէր քանդէր զամենայն գոմս խաչանց նոցա: Եւ էլ նա ի դաշտս Դամակոսի յ'աւուրս հնճոց ցորենոյ, եւ հրճիգ արար զամենայն զանդս եւ զպաղարակս նոցա, եւ գծտըս եւ զանդեայս (արջատաց խուրճ) նոցա արար յապականութիւն. զքաղաքան նոցա աւար հարկանէր, եւ զմանկուսս նոցա ջարդէր, եւ հարկանէր սատակէր զերկոտասարդս նոցա ի բերան սրոյ:

Եւ անկաւ աս եւ երկիւղ ի վերայ բնակչաց ծովեզերեաց: Եւ աստքեցին առ նա խօսել ընդ նմա բաւելիւր խաղաղութեան եւ պսեն. Ահաւասիկ մեք ծառայք

Նարուգողոնոսորայ եմք. ահա տունք մեր եւ ամենայն
 դաշտք ցորենոյ եւ անդեայք եւ ամենայն գունք խա-
 շանց մերոց. եկ, մնւտ ի սոսա որպէս եւ բարի թուի
 քեզ: Եւ էառ նա ի քաղաքաց անտի արս ընտիրս պա-
 տերազմակիցս իւր, եւ ելին ընդ առաջ նորա քաղաքքն
 այնոքիկ երգովք եւ պսակօք եւ ծնծղայլուք (զիլ) եւ
 թմբկօք (տավուլ), եւ վորեաց նա զսահմանս նոցա եւ
 ի բաց ընկեց զամենայն անտառս նոցա. եւ եկն նա
 դէմ յանդիման սարոյն (լեռան ծայր) մեծին Հրէաս-
 տանի. եւ եղեւ անդ ամիս մի ժողովել ռոճիկս եւ դար-
 մանս զօրաց իւրոց:

Եւ իբրեւ լուան զայն որդիք Իսրայէլի եւ բնակիչք
 Հրէաստանի, երկեան նոքա յոյժ յերեսաց նորա, զի
 ընդ այն ժամանակս էին դարձեալ ի գերութենէ անտի
 իւրեանց եւ իբրեւ նորք (գրեթէ նոր) էին ժողովեալք
 ի Հրէաստան, եւ զսեղանն տեսուն Աստուծոյ իւրեանց
 եւ զսպասան եւ զտունն ի պղծութենէ անտի դեռ եւս
 (դեռ նոր) էին սրբեալ. եւ առաքեցին նոքա յամենայն
 կողմանս Շամրնի (Սամարեայ), եւ հասին կալան զամե-
 նայն գլուխս լերանց բարձանց. եւ պարսպեցին զգլու-
 զըս որ էին ի նոսա. եւ կազմեցին եւ եղին անդ զդար-
 մանս (պաշար) ի գործ պատերազմի. զի ընդ այն ժա-
 մանակս էին հնձեալ զանդս նոցա:

Եւ գրեաց Յովակիմ քահանայ մեծ, եւ ծերակոյտ
 ժողովրդեանն Իսրայէլի, որ նստէին յերուսաղէմ,
 բնակչացն Բետլուզայ եւ ասեն. ելէք, կալարուք զանցս
 լեռնային կողմանցն. զի ընդ այն էին մուտք ի Հրէաս-
 տան, եւ էր դիւրին նոցա արգելուլ զնոսա. քանզի նեղ
 էին անցք կրճից՝ զոր կարեին պահել արք երկու:

Եւ արարին որդիքն Իսրայէլի, որպէս եւ հրամայեաց
 նոցա Յովակիմ քահանայ մեծ. եւ կարդացին (ազաղա-
 կել, աղաչել) առ Տէր եւ խոնարհեցուցին զանձինս
 իւրեանց, ինքեանք եւ կանայք իւրեանց, եւ ամենայն
 պանդուխտք եւ վարձկանք հանդերձ անանօք իւրեանց
 պաշարեցան. եւ արծաթադին ծառայք նոցա արկին
 քուրճ զիջովք իւրեանց. եւ ամենայն այր Իսրայէլի
 կանամբք եւ մանկամբք իւրեանց ի գուճս անկեալ (ծըն-
 կան վերայ գալ) առաջի տաճարին Տեառն ազաչէին,
 եւ արկին միսիր զգլխովք իւրեանց, եւ թօթափէին
 զքուրճան առաջի Տեառն, եւ զարբութեան սեղանօքն
 քուրճ արկանէին:

Եւ պատմեցին Հոզեփեռնեայ, եթէ որդիքն Իսրա-
 յէլի պատրաստեցան ի պատերազմ, եւ զանցս լեռնա-
 յին կողմանցն վակեցին, եւ սլարսպեցին զամենայն
 գլուխս լերանց բարձանց, եւ թագուցին ի դաշտս՝ ո-
 րոգայթս. եւ բարկացաւ յոյժ Հոզեփեռնէս բարկու-
 թեամբ մեծաւ. եւ կոչեաց նա զամենայն իշխանս եւ
 զզօրապլուխս եւ զամենայն նախարարս ծովեզերեայց.
 եւ ասէ ցնոսա. «պատմեցէք դուք ինձ. ո՞վ են ժողո-
 վուրդս այս, որ նստին ի լեռնակողմանս, եւ զի՞նչ քա-
 ղաքք են, յորս բնակեալ են սոքա, եւ կամ բազմու-
 թիւն զօրաց նոցա, եւ ի՞նչ ոյժ նոցա եւ կամ զօրու-
 թիւն, եւ կամ ո՞վ է թագաւոր նոցա եւ առաջնորդ
 զօրաց նոցա, եւ ընդէ՞ր թիւրեցին (ծուկ) զմիտս
 իւրեանց, զի մի եկեացեն ընդ առաջիմ (դիմաւորել)»:
 Եւ ասէ ցնա Աքիոփր, առաջնորդ ամենայն որդուցն Ամո-
 նայ. «Ժողովուրդս այս են յազգէ Քաղզէացուց. եւ ե-
 լին նոքա ի հայրենի երկրէ իւրեանց, եւ երկիր պազին

Աստուծոյ երկնաւորի զոր ճշմարտեալ (ճշմարիտ ըլլալը հասկնալ) ծանեան : Եթէ անգիտութիւն (մեղք) ինչ լինի ի ժողովրդեան նոցա եւ մեղանշիցեն Աստուծոյ իւրեանց, գումարեացուք ի վերայ նոցա եւ տացուք ի վերայ նոցա պատերազմ : Ապա թէ չիցէ ինչ նոցա անիրաւութիւն առ Աստուածն իւրեանց, զանց արասցուք (չը դաշխլ, չը փնասել, անցնիլ երթալ) : գուցէ (չ'ըլլայ թէ) պաշտպանիցէ նոցա Տէր Աստուածն իւրեանց, եւ լինիցիմք յամօթ նախատանաց ամենայն երկրի :

Եւ եղև իրբեւ դադարեաց Աքիովր ի խօսելոյ զբանս զայս, տրտնջեաց ամենայն բանակն որ կայր շուրջ զխորանան, եւ ասեն իշխանքն ց'Հողեփեռն զի պատուհասեցէ զԱքիովր : Եւ ասէ Հողեփեռն ց'Աքիովր, «Ո՞վ ես դու, Աքիովր, որ դիմադարձ ես (կ'ըլլաս) ժողովրդեանն այլազեաց. եւ զի ասացեր թէ մի տացուք պատերազմ ընդ որդիսն Իսրայելի . ո՞չ եւս յաւելցես տեսանել զերեսս իմ յօրէս յայսմանէ, մինչեւ խեղդեցից վրէժ յազգէն, որ յեղխալտոսէ ելին . եւ սպա անցցէ (մանել, խօթուիլ) սուր զօրաց իմոց ընդ կողս քո : Այլ այժմ դարձուսցեն զքեզ ծառայք իմ ի լեռնա-կողմն, եւ պահեսցեն զքեզ յանցս քաղաքի միոյ՝ որ յանցս ճանապարհացն է, եւ մի կորնչիցիս, մինչեւ սատակեսցիս նորօք հանդերձ. եւ եթէ յուսաս թէ ոչ մատնին, յայդ ինչ (այդ բանին) մի վտաս լինիցիս :

Եւ կալան զնա ծառայք Հողեփեռնեայ, եւ ամին զնա արտաքոյ բանակին ի դաշտ անդր. եւ գնացին նոքա ի դաշտէ անտի, եւ եկին ի լեռնակողմն աղբերցն ի ներքոյ Բիտիուզայ : Եւ իրբեւ տեսին զնոսա արք քա-

ղաքին ի վերայ գլխոյ լերինն, առին նոքա զգէնս իւրեանց եւ յարձակեցան ի վերայ գլխոյ լերինն եւ ամենայն այր պարսաւոր (սափան նետող) կալան զեւ (եւնելու ճանբայ) նոցա եւ քարածիլք արարին ի վերայ նոցա. եւ մտին նոքա (թշնամիք) ընդ լեռնոտամբն եւ կապեցին զԱքիովր եւ ընկեցին զնա առ լեռնոտինն : Եւ ելին որդիքն Իսրայելի ի քաղաքէ անտի, եւ հասին ի վերայ նորա եւ լուծին զնա, եւ տարան ի Բեաիուզա. եւ կոչեցեալ զԱքիովր ի մէջ ամենայն ժողովրդեանն հարցանէին զնա (ցնա) եթէ վասն է՞ր եղեն ընդ քեզ այդ անցք. եւ նա պատմէր զբանս խորհրդոյն Հողեփեռնեայ, եւ զոր ինչ միանգամ մեծարանեալ խօսեցաւ Հողեփեռնէս վասն տանն Իսրայելի : Եւ ի գուճս լծեալ ամենայն ժողովուրդ երկրին երկիր պաղանէին Աստուծոյ. եւ մխիթարեցին զԱքիովր եւ գովեցին յոյժ զնա. եւ առ զնա Ողիա եւ տարաւ ի տուն իւր եւ արար նմա կոչուես :

Տարբեր դիմելով skr քայիներ

159. Երբ բայ մը տարբեր դէմքով քանի մը տէր բայի կ'ունենայ, յոքնակի կը դրուի եւ, դէմքով ալ, պատուաւոր դէմք ունեցող տէր բային հետ կը համաձայնի. (Ա. դէմքը Բէն, Բ դէմքն ալ Գէն պատուաւոր են) :

Ես (Ա. դէմք) եւ հայր (Գ. դէմք) իմ մի եմք (յոքն. Ա. դէմք), յորժամ դու (Բ. դէմք) եւ նա (Գ. դէմք) միայն իցէք (յոքն Բ. դէմք) :

ՏԷՐ ԲԱՅԻ ԵՒ ԽՆԴՐՈՅ ՎՐԱՅ

178. Սովորաբար տէր բայի եղող բառերն են, գոյականները, գոյականաբար առնուած ածականները, դերանուններն եւ անորիչ դերբայները: Բոլոր այս տէր բայիներն եթէ դիմաւոր բայի կը վերաբերին՝ ուղղական հոլով կը դրուին, իսկ եթէ անցեալ եւ անորչ դերբայներու կը վերաբերին՝ սեռական եւ տրական կը դրուին: Բայց երբեմն ալ, մակբայ մը, դիմաւոր բայ մը, հոլովուած բառ մը կամ ամբողջ խօսք մը տէր բայի կ'ըլլան. ինչպէս.

Եղիցի ձեր այն՝ այո, եւ ո՞ն ոչ: Արագընթացն եւ փախելն զմի միտս ունին: Նո՞վառն յայտ առնէ: Ձի՞նչ իցէ այն փոքր միս եւսն. Սաւրբ՝ եղիցի անտան տո՞քնաւին իսկ առաքինութեան է հաստատութիւն:

179. Երբեմն նաեւ, մակբայ մը, դիմաւոր բայ մը կամ ամբողջ խօսք մը կրնան խնդիր ըլլալ:

Պատուոյ սակն ասաց զո՞ն. ոչ եկին է մեզայն. Եւ զէ Բարեաց կասեցող է Ասորոսա՞՛ ուսուցանէ մեզ տէր յասեղն...

Յ Օ Գ Ի Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր . Շ Ա Ր . (171)

180. Գոյականաբար գործածուած եղանկ ածականները վրանին ն յօղը կ'առնուն, եթէ ընդհանուր մտքով առնուած են.

Անմեզն Անգոսնէ զխրատ հօր. Անմեզն հաւատայ ամենայն բանի.

181. Բայց երբ այս մտքով առնուած ածականը յորնակի է, յօղ չ'առնուր.

Արդարտ ժառանգեացն զերկիր: Երանի՛ ողորմաց. Անգլամէ անգոսնն զխրատ:

182. Երբ քանի մը բառեր կան յօղ առնող՝ եւ շաղկապով մը կապուած են, սովորաբար առաջին՝ բառին վրայ միայն յօղ կը դրուի.

Զպտուղ ցրենայն եւ բնայն եւ Յնայ. Աղտարն եւ անմի.

183. Յօղը շատ անգամ զօրութեամբ խնայուած բառ մը կը ցուցնէ. զոր օրինակ.

է Բարկու-Նիւն՝ որ գովելի է, որպէս Մովսիսն. այսինքն, որպէս բարկութիւն Մովսիսի: Եթէ ընդ մայս գալար զայս առնեն, ընդ շին զինչ լինիցի. այսինքն, ընդ չոր փոյր:

Հ Ր Ս . Հ Ա Ն Գ .

Իրբեւ առ թագ Անտիոքոս, կայսրի ի վերայ իրացն Արշունի (1)՝ կողմանցն ստորին Ատրուոց եւ Պարսաստանի՝ զԼիւսիսա եւ զՊլատոմոս՝ որո՞ւմ բարձրանձնն (այսինքն բարձրանձն Պլատոմոս 185) անէին. Լիւսիսա զիրաւունս հաստատուն պահէր առ Երրայեցիս: Վասն այսորիկ ամբաստան լինէին զնմանէ՝ ընկերք իւր առ Անտիոքոս եւ մատնիչ կոչէին զնա. յայն իրբեւ սակս նա ոչ եւս համբերէր նախաստանացն, զեզս առ անձամբ խրով (ինքզինքը թռնուորեց) եւ մեռաւ:

(1) Արբունի ածականը գոյականն ետքը կը դրուի, բայց չընտրուիր. այսպէս կ'ըլլան նաև ընդհանրապէս ունի վերջաւորած ածականը:

Գորդիաս, զօրավար վայրացն, զօրաժողով լինէր Ե-
 դովմայեցւոյքն հանդերձ՝ հասանել հարկանել զամուր
 ամուր կողմանան : Իսկ, որ զՄակարայեցւոյքն էին,
 կանխեցին հարկանել զամուրան Եդովմայեցոց : Եկին
 հասին, պատեցին, խուճարարին, առ հասարակ ի
 վերայ յարձակեցան, զամուրան փրուզին, հարին կո-
 տորեցին, զոր ի ձեռն առին (ձեռք ձգել) առ հասարակ
 սատակեցին : Էին ամանք որ փախտեսայ գնացին,
 եւ եկին ամրացան ի բերդս երկուս ամուրս. եւ (իսկ) նո-
 ճա (Մակարայեցիք), ոչ ընդ իւրեանս ունէին զամենայն
 կազմեցնայից (կազմած, թախրմ), շուրջ պահ եղին
 (պաշարել) եւ զմեքենայան առ պարիսպն կանգնեցին :
 Մակարէոս եթող ի վերայ բերդին զԾիմոն եւ զգօրան՝
 որ ընդ նմա էին՝ վասն բերդիցն պաշարման, եւ ինքն
 գնաց. իսկ Ծիմոնեանք, որ զբերդաւն նստէին, ի պատ-
 գամս անկանէին (բանակցութիւն ընել, բանադնաց լի-
 նել), կաշառագնաց լինէին (կաշառ առնուլ), առնուին
 յամրականաց անտի եւթն (եօթն) բիւր սատեր արծա-
 թոյ, եւ թող տային նոցա ելանել արձակ յամրոցաց
 անտի : Իբրեւ ազդ եղեւ Մակարեսայ վասն իրացն որ
 եղեն, ժողովէր զԼիւթանան ամենայն, ամրաստան լի-
 նէր, յայտ առնէր՝ զի արծաթոյ վաճառեցին զեղար-
 սըն եւ արձակեցին զթշնամիսն : Զայնոսիկ՝ որ այն-
 պէս մատն (մատնիչ) եղեն օրինացն՝ ամին սատակեցին,
 եւ (իսկ) ինքեանք ի բերդն արշաւեցին : Եւ Տրաթիէոս
 որ յառաջ ի պարտութիւն մատնեցաւ (յազթուեցաւ),
 դարձեալ զուարթանայր (զօրանալ), դարձեալ զօրա-
 ժողով լինէր (զօրք ժողովել) յառարկողմն կուսաց
 (շատ կողմերէ) բազում այրուծի կուտեալ ի մտի եղեալ

Գայր վարել ի գերութիւն զերկիրն Հրէաստանի : Իսկ
 որ զՄակարայեցւոյքն էին, ընդ մերձեանալ նոցա՝ ի խնդ-
 րուածս պնդէին (սաստիկ աղաչանք ընել) առ Աստ-
 ուած . հող ի գլուխ արկէալ քրձազգած լինէին (քուրձ
 հագնել) : Իբրեւ զազօթան կատարեցին, առ հասարակ
 ի վէն դարձան (զէնք առին), հարուստ մի (բաւական
 տեղ) ըստ քաղաքն (1) արտաքս ելին : Իբրեւ մերձ ե-
 ղեն ի գունդն թշնամեաց, կարդեցան, կազմեցան, օ-
 րինօք ձակատեցան : Այն ինչ վարդապետն ծայրակար-
 միր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր, եւ նոճա,
 երկրքն կողմանքն, ընդ միմեանս խառնէին . կիսոցն օր
 բարենշան (յաջող) զուարթութեամբ պատրաստեալ,
 եւ կիսոցն սրտմտութիւն բարկութեան : Յայնմ առուր
 անկեալ գտանէր ի գնդէ անտի թշնամեացն առաջի նոցա
 քսան հազար եւ չինդ հարիւր սպառազէն. եւ (իսկ) ինքն
 Տրաթիէոս պրծեալ (խուսել) ընդ ամբոխն՝ ի փախուստ
 գտնայր. եւ եկն անկաւ (ամրանալ) ի քաղաք մի ամուր :

ԱԾԱԿԱՆՍ ԱՍԻՃԱՆՆԵՐԸ

Ածականաց աստիճանները երեք տեսակ են . Դրական,
 Բազարարական, Գէրադարական :

184. Ածական մը Դրական է, երբ սղարգապէս գո-
 յականի մը հանգամանքը (որպիսութիւնը) կը ցուցնէ .
 ինչպէս են՝ մեծ, փոքր, խնաստուն, եւ այլն ածակաները :

185. Ածական մը Բազարատական է, երբ ուրիշ բա-
 ուի մը հետ բաղդատութեան մէջ կը մտնէ, եւ սովորա-

(1) Ըստ նախորդ հայցականով անդին կը նշանակէ . Ըստ բլուրն,
 բլուրին անդին :

բար քոյն մասնիկով կը վերջանայ : Այս տեսակ ածականները քան նախադրութեամբ խնդիր կ'առնուն : Փոքր քան զամենայն սերման : Մեծ քան զամենայն սերման : Եւ էք օճն իմաստաբոյն քան զամենայն բազան : Երկնաբոյն քան զհայր քո :

186. Երբեմն քոյն մասնական տեղ բազդատական ածականին քով եւ բառը կը դրուի նոյն նշանակութեամբ : Մեծ եւս քան զայս սեր՝ ոչ որ ունի : Չոր եւս լինի պարտաւորան :

187. Ածական մը Գերադրական է, երբ գոյականի մը սրբաբութիւնը վերջին աստիճանի կը ցուցնէ. եւ այս ալ չորս կերպով կ'ըլլայ :

Ա. Երբ ածականին քով կը դրուին յոյժ, կարէ, անհնարէն եւ ուրիշ ասոնց նման բառեր :

Մեծ յոյժ . կարէ երկայն . Անհնարէն բարձր :

Բ. Երբ ածականին քով կը դրուի բացատարան կամ ի նախդիրով հայցական խնդիր :

Անմեղն ի յենջ արկցէ քար : Չընտիրս ի հեծելոց : Մեծն ի լախարոս :

Գ. Երբ ածականը կը կրկնուի յօքնակի գոյականի քով : Չամուր ամուր տեղիս : Չընտիր ընտիր մայրիսն : Մանր մանր ինչ ճճիք կամ անասունք կերակուր լինին օճից :

Դ. Երբ ածականին սկիզբը ամէն կամ ամէնա մասնիկը կը դրուի . ամէնամեծ . ամէնընտիր .

Իրեւ . Որպես . Բան

ՆԱԽԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

188. Ինչեւ, որպէս, ինչպէս նաեւ, ի՞նչ, ի՞նչո՞ւ նախադրութիւնները՝ նմանութիւն կը ցուցնեն . այսինքն, յա-

Ջորգ գոյականի մը՝ առաջ դրուած գոյականին հետ ունեցած նմանութիւնը կը յայտնեն . քան նախադրութիւնն ալ Բարդարոսիէն կը ցուցնէ . այսինքն, յաջորդ գոյական մը առաջ դրուած գոյականի մը հետ կը բազդատէ :

189. Իրբեւ, իբր, իբրու, որպէս, նախադրութեանց խնդիր եղող բառերը կ'ըսուին նմանեալ, իսկ այն գոյականները կամ դերանունները՝ որոնք այն խնդրոց հետ նմանութեան կը մտնեն՝ կ'ըսուին նմանելի : Պէտք է զխոնալ որ նմանելի բառն ինչ հոլով որ է, նմանեալ բառերն ալ նոյնահոլով խնդիր կ'ըլլան, զսրօրինակ .

Ուղղակիս կողով . Ահա ծաղիկեցար դու (նմանելի) որպէս շաշան (նմանեալ) : Եղիցին իշխանս նոցա իրբեւ լեղեալ :

Հայց. կերպ զմեկեր (նմանելի) որպէս զհաց (նմանեալ) : Սատանայ խնդրեաց խարբալել զՅեղ իրբեւ զդորեան : Սեռ. Նորս՝ իրբեւ զՅ՝ զթոյնս ի բաց եղեալ : Տրակ. Նոցա՝ որպէս փխսորեկից՝ հեռամուտ եղեն : Բաց. Խորչի ի ճանապարհաց մերաց՝ իրբեւ ի պիտութեանց : Գործ. Բանիս՝ իրբեանց խոցոտեն որպէս սրով :

ՆԱԽԳՐՈՒՆԵՐՈՎ ԽՆԳԻՒԻՐՆԵՐ

Պատմէ զհօրէ իւրմէ՝ որպէս զմարդոց ումեքէ : Որ խօսի ընդ յեղ՝ իրբեւ ընդ որբեակս : Խնայեցեր ի նոսա՝ իրբեւ ի մարդիկ : Այս նախադասութեանց մէջ, նոսր գրով նշանակուած բառերն իրարու հետ նմանցուած են, ուստի եւ մի եւ նոյն հոլովով դրուած են :

190. Քան նախադրութիւնն ալ իրեն խնդիր առած բառը (որ բազդատեալ կ'ըսուի) բազդատութեան մէջ

կը դնէ իրմէ առաջ դրուած դերանուան կամ գոյականինն հետ՝ որ կ'ըսուի քաղցրատրեւի : Պէտք է որ բաղդատելին ու բաղդատեալը նոյնահորով դրուին :

Ուղ. Առաւել պատուեցաւ Յովնան՝ քան ասենայն ճարտարէր :

Սեռ. է առաւելութիւն իմաստութեան՝ քան անճարութեան :

Տրոյ. Մեղ արդարեւ ի դէպ է երկից մանկանցն երգ՝ Գոն իսրայելեան Գոնի :

Հայց. Ընտրեաց զէս՝ քան զհոյր քո եւ քան զասենայն Գոնն նորա :

Գործ. Չգաղանս սիրով՝ քան քունութեամբ սովոր են մարդիկ վարժել :

Բոց. Չարհուրին վրիպել յաստեացս (ներկայ կեանք)՝ քան յանտի կենացն (ապագայի կեանք) :

Ո՞րքան խաղաղութիւն է ի Գոնն շինականաց՝ քան ի Գոնն թագաւորաց :

Պարտաւելի է առաւել հոգալ զճարտարաց՝ քան զհոգաց :

Չար թշնամին դտաւ չարահատոյցս քաղցրութեան՝ քան քաղցրութեան :

Ընդ. Կեղ պարա է գարմանալ՝ քան ընդ էս :

191. ԳԻՏԵԼԻՔ. Նմանութեան եւ քաղցրատրեւեան ցուցնող այս նախադրութեանց վրայ դրուած վերոգրեալ օրէնքն հիմնական է. սակայն մատենադրութեանց մէջ կան արտուղութիւններ՝ որոնք իրրեւ բացատրութիւն պէտք է նկատուին : Սովորաբար այս նախադրութիւններն հայց. խնդրով գործածուած են, մանաւանդ Գոնն նախադրութիւնը՝ երբ անականի խնդիր կ'ըլլայ :

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ

Ի վաղիւ անդր պատուիրեաց Հոգովեան զօրաց իւրոց չուել զնալ ի Բեթիուղա, եւ ի վերայ եկից լեռնակողմանն, եւ հասանել տալ պատերազմ ընդ որդիսն Իսրայելի : Եւ կազմեցան պատրաստեցան զնացին յաւուրն յայնմիկ ամենայն այր պատերազմի (պատերազմող) եւ ամենայն հետեւակազօր պատերազմողացն հարիւր եւ թանասուն հազար, եւ հեծեւազօրքն վառեալք երկօտասան հազար : Թող զայլ ռամիկն ամենայն, եւ զկահ եւ զկարասի բազում սաստիկ յոյժ : Եւ բանակեցան նոքա ի հովտին՝ որ մերձ էր ի Բեթիուղա ի վերայ աղբերն, եւ հանին զառաջս (առջեւի մասը) բանակացն ընդ հարաւակողմն, ի լայնութիւն՝ մինչեւ ի Դովթայիմ, եւ յերկայնութիւն՝ մինչեւ ի կիսմ : Եւ որդիքն Իսրայելի իրրեւ տեսին զայնչափ բազմութիւն, խռովեցան յոյժ. եւ ասէ այր ցընկեր իւր : «Այժմ լիզուն նոքա զամենայն երեսս երկրի. եւ ոչ լերինք բարձունք, եւ ոչ ձորք եւ բլուրք կարացեն կալ առաջի զօրութեան նոցա : Եւ առին որդիքն Իսրայելի այր իւրաքանչիւր զղէն իւր, եւ լուցանէին ջահս ի վերայ աշտարակաց քաղաքին, եւ կային պահէին զամենայն զիշերն զայն : Եւ յաւուրն երկրորդի եհան Հոգովեանէս զամենայն զհեծեւազօրն զէմ յանդիման որդւոցն Իսրայելի՝ որ կին ի Բեթիուղա. եւ հաս նա ի վերայ եկից քաղաքին նոցա, եւ զաղբերս ջուրցն քննեաց եւ անապարէր պաշարել զնոսա. եւ հարկանէր (արձակել) ի վերայ նոցա բանակս բանակս (չատ գունդեր) յարանց պատերազմողաց, եւ ինքն չուէր զնայր անդրէն ի բանակ իւր : Եւ մատ-

եան առ նա զորագլուխք ծովեզերեսաց եւ ասեն . « ժողովուրդ որդւոցն Իսրայելի ոչ են յուսացեալ ի նիզակս իւրեանց եւ ի զէնս , այլ ի վերայ լերանց իւրեանց բարձանց , եւ ոչ իսկ հնար է հասանել ի նոսա (անոնց) . եւ արդ , Տէր , մի տար դու ընդ նոսա մարտ պատերազմի . այլ կալցին ծառայք քո զաղբերս ջուրցն՝ նոր ելանեն ի Լեռնոտանէ անտի . քանզի անտի ըմպեն ամենայն ընակիչք քաղաքիդ . եւ սատակին նոքա ի ծարաւոյ , եւ ապա ինքեանք իսկ մատնեսցեն զքաղաքն ի ձեռս քո . քանզի սպառեսցին նոքա ի սովոյ եւ ի ծարաւոյ , ինքեանք եւ կանայք իւրեանց եւ որդիք իւրեանց , մինչչեւ եկեալ իցէ ի վերայ նոցա սուր , եւ տապատ անկցին (մեռած լցնալ) ի հրապարակս քաղաքի իւրեանց) , փոխանակ զի ի կռիւ կացին (կռուելու ելան) եւ ոչ հնազանդեցան քեզ խաղաղութեամբ (74) » :

Եւ հաճոյ թուեցաւ խորհուրդն՝ Հոգեւինոնեայ . եւ գնաց բանակ որդւոցն Ամնայ եւ ընդ նոսա հինգ հազարք յորդւոցն Ասուրայ , եւ բանակեցան նոքա ի ձոր Հովտին եւ հասին կալան նոքա զաղբերս ջուրցն որդւոցն Իսրայելի : Եւ որդիքն Իսրայելի դոչեցին առ Տէր Աստուած իւրեանց . զի զահի հարեալ սպառեալ էին ողիք նոցա : Եւ լքան պարտասեցան (չուճչը հատնիլ) ամենայն ընակիչք Բեափուղա , եւ ամենայն ամանք նոցա սպառեալ էին ի ջրոյ եւ սպառեալ թափեալ (պարպուած , հատած) էին , եւ ոչ գոյր ըմպելի միում աւուր . եւ զոր ըմպէինն՝ չափով եւ կշռով ըմպէին . եւ ի վարանի եւ ի տարակուսի կային կանայք եւ մանկունք նոցա , եւ երխտասարդք նոցա լքեալ էին ի ծարաւոյ եւ զլրերալք կային ի հրապարակս քաղաքին եւ ընդ

անցս դրանցն . եւ ոչ ուստեք էր նոցա միթարութիւնս եւ ժողովեցան ամենայն ժողովուրդն ի վերայ Ողբայ եւ ի վերայ իշխանաց քաղաքին , երխտասարդք եւ կանայք եւ մանկտին , եւ լացին նոքա ճայնիւ մեծաւ առաջի ամենայն ձերոց ժողովրդեանն , եւ էին ի մեծ վարանս եւ ի տարակուսանս :

Եւ լուաւ յաւուր յայնմիկ Յուդիթ , դուստր Մերոտեայ , եւ այր նորա եր Մանասէ , որ եր յազգէ նորա եւ ի հայրենեաց նորա . եւ մեռաւ այր նորա յաւուրս հնձոց գարեաց , զի կայր նա՝ ի վերայ հնձողաց իւրոց ի դաշտին . զի յընթանալ (փչել) խորշակին (սամ եէլի) եւ ի գալ հասանել ի վերայ գլխոյ նորա , մեռաւ ի Բեափուղա , ի քաղաքի իւրում , եւ թաղեցաւ նա առ հարս իւր , յազարակին՝ որ մերձ էր առ Դովթայիմ :

Եւ նստէր Յուդիթ ի տան իւրում ամս երիս եւ ամիսս չորս եւ արար նա տաղաւար (գուլիպէ) ի տանիս տան իւրոյ եւ ամ քուրձ (քուրձ պատել) ի վերայ միջոյ իւրոյ , եւ էր արկեալ զիւրեւ հանդերձ այրութեան , եւ պահէր նա զամենայն աւուրս այրութեան իւրոյ , բայց միայն զոր շարսթուն եւ զամնամոխց եւ զտարեկանցն եւ զուրախութեան տանն Իսրայէլի :

Եւ էր նա գեղեցիկ յոյժ տեսանելով (տեսլեամբ) , եւ եթող նմա Մանասէ , այր նորա , ոսկի եւ արծաթ , ծառայս եւ աղախնայս , եւ անդս եւ աղարակս եւ անասուն . ինքն Յուդիթ դարմանէր զայն եւ ոչ ոք ասէր վասն նորա բան չարութեան (չար) , զի երկիւղած էր նա յոյժ ի Տեառնէ : Եւ առաքեաց զնաժիշտ իւր , որ էր ի վերայ ամենայն ընչից իւրոց , եւ կոչեաց զՈզիա եւ զամենայն ձերս քաղաքին իւրոյ , եւ ասէ ցնոսա « Լուարուք դուք

ինձ. Արարից ես իրս մի որ պատմեսցի ազգաց մինչեւ
 յազգս, եւ որդւոց մինչեւ յորդիս. Դուք կայջիք առ
 դրանք քաղաքիս զգիշերս զայս, եւ ելից ես նաժշտաւս
 իմով. եւ դուք մի քննէք զգործսն իմ զոր գործելոց
 եմ. քանզի ոչ իսկ ասացից ձեզ մինչեւ կատարեսցի այն՝
 զոր ես առնեմ»: Եւ ասէ Ոզիր իշխանօքն Հանդերձ
 ցնա. «Գնա դու ի խաղաղութիւն»: Եւ նաքա դարձան ի
 տաղաւարէ անտի Յուդիթայ յիւրաքանչիւր տեղիս:

Է Ա Վ Ա Ն Բ Ա Յ Ի Ջ Ե Ղ Չ Ո Ի Մ

192. Որ յարաբերականէն ետքը դրուած էական
 բայը երբեմն զեղջուած կ'ըլլայ. զոր օրինակ:

Ասեն արքն՝ որ ընդ նոսա էին: Յիշին տակաւին
 զիրսն. որ ի պանդխտութեան իւրեանց էւա էին. Չոր-
 դի Յովսեփու որ էր որդի Յակոբայ, որ էր որդի Հեղեայ:

193. Այս տեսակ խօսքերու մէջ շատ անգամ էա-
 կան բային հետ յարաբերականն ալ կը զեղջուի. զոր օ-
 րինակ:

Բերին մեզ վահան ոսկի որ էր ի հինգ հազար
 քանքարէ: Ունէր հանդերձ որ էր ի ստեւայ ուղտու: Եր-
 թային զհետ նորա ժողովուրդք բազումք որ էին ի Գա-
 լիկէէ:

Բ Ա Ռ Ի Յ Ջ Ե Ղ Չ Ո Ի Մ Ն

194. Սօսքի մը վերի մասին մէջ դրուած բառերը
 եթէ վարը նորէն յիշել պէտք ըլլայ՝ կը զեղջուին.
 Ինչպէս.

Լեր իրաւախոհ ընդ ոտիս քում վաղազոյն. գուցէ

մատնիցէ զքեզ ոտիսն՝ դատաւորի, եւ դատաւորն ճարնի-
 ցէ զէնդ դահճի: Այլ ես ասեմ ձեզ. ամենեւին մի երդ-
 նուլ. մի երդնուլ յերկիրս, զի արթու Աստուծոյ է, եւ
 մի երդնուլ յերկիր, զի պատուանդան է ոտից նորա:
 Թէպէտ եւ ամենքին զայթակղեսցին՝ այլ ես ոչ հայ-
 թեակնցայ:

Վերջապէս խօսքին իմաստէն պէտք է հասկնալ զեղ-
 չուած բառերը՝ որոնք կամ խօսքին վերի մասին
 մէջ յիշուած կ'ըլլան, կամ բնաւ առաջուց չը յիշուած:
 Մեր հրահանգաց մէջ բնադիրներէն զեղջուած բառերը
 շատ տեղ նօսր դրով դրինք ուսանողաց դիւրութեան
 համար:

195. Մեն, յորժամ, որ, ոսարի, որպէս (74), էբրե-
 (երբոր) բառերէն ետք եկող բառերուն վրայ շատ ան-
 գամ դէմորդ յօր կը դրուի, քանզի այս բառերէն առաջ
 զեղջուած բառեր կան. զոր օրինակ՝

Մինչդեռ այգն կամէր լինել. այսինքն յայնժամ մինչ-
 դեռ այգ կամէր լինել:

Մինչ էաքն մարմնով. յայնժամ մինչ էաք մարմնով:
 Յորժամ զգեհուցումքն. յայնժամ՝ յորժամ զգեհու-
 ցումք:

Ուր եմ իցեմ,	անդ՝ ուր ես իցեմ:
Ուստի եմ գիտէք.	գիտէք զտեղին՝ ուստի եմ:
Որպէս ես խօսիմ.	այնպէս՝ որպէս ես խօսիմ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Եւ անկաւ Յուդիթ ի վերայ երեսաց իւրոց. եւ ի բաց
 առ (էբրեայնէլ) զքուրձն զոր զգեցեալ էր, եւ ցանեաց

միտիքը ի վերայ գլխոյ իւրոյ. եւ էին ի նմին ժամու խունկք մատուցեալք երեկոյնք (երեկոյնք) յերուսաղէմ ի տաճարին Տեառն, եւ կարգաց նա ձայնիւ մեծաւ առ Տէր Աստուած. եւ ասէ Յուզիթ. «Տէր Աստուած հօր խնց Շմաւոնի որում ետուր զսուրն ի ձեռն խնդրել զգրէժն յայլազգեաց . որ դարչանս համարեցաւ զզլճութիւն քեռն իւրոյ : Եւ արդ, Տէր Աստուած իմ, լուր ձայնի աղախնոյ քոյ, եւ նայեաց ի խնդրուածս այրոյս. զի ամենայն ճանապարհք քո պատրաստ են եւ դատաստանք քո կանխագէտք են : Ահաւասիկ Ասորեստանեայն ելից զօրօք իւրովք զերկիրս. եւ բարձրացաւ հեծելովք երկվարացն, եւ հպարտացեալ մեծամտեաց (Քեճ համարում ասեմաւ) ի բազուկ հետեւակացն բազմութեան, եւ յուսացան ի նիզակս եւ ի սպառազինութիւնս եւ ի կորովս (ճշարտութիւն) աղեղնաւորացն եւ պարսաւորաց եւ ոչ գիտացին թէ դու, Տէր, ես որ խորտակես զպատերազմունս : Տուր ձեռն (օգնէ) աղախնոյ քում, եւ հար կործանես զծառայն խաբանօք (հրապոյր) շրթանց խնց . եւ խորտակես զաստիութիւն նոցա ի ձեռն կնոջս. զի ոչ եթէ ի բազմութենէ է քո զօրութիւնդ, եւ ոչ կար (կարողութիւն) քո յայն է որ հզօրքն են. այլ խոնարհաց ես Տէր Աստուած, եւ կարօտելոց ես օգնական, տկարաց ընդունելութիւն (ընդունում), կարօտելոց ես խնդրակ (խնդրող), անյուսից ես փրկիչ» :

Եւ իրբեւ դադարեաց Յուզիթ յազօթից իւրոց, յսան եկաց եւ կոչեաց զնաժիւան եւ իջ ի տուն իւր : Մերկացաւ յիւրմէ զքուրճն զոր զգեցեալն էր, եւ ի բաց եհան զհանդերձ այրութեան իւրոց. եւ լուաց զմարմին իւր ջրով, եւ օծաւ իւզու անուշիւ, եւ եհնաւ զհեր զըլ-

խոյ իւրոց, եւ կապեաց զսպարօշն (գլխու հաս) ի ճակատ իւր, եւ զգեցաւ զհանդերձ ուրախութեան իւրոց զոր զգեցնոյր առ կենդանութեամբ առն իւրոց Մանասէի. եւ ազանէր կօշիկս, եւ արկանէր սպարանջանս ի ձեռս իւր, եւ արկանէր քայսս (կերպանք) յականց պատուականաց ընդելուզեալս մարգարտով ի պարանոց իւր եւ մատանիս ի մատունս իւր եւ գարշապահանգս (գլխու խոշտաւ զարդ) ի դուլս իւր. եւ յօրինէր կազմէր ամենայն զարդու իւրով, եւ սոյճառանայր ատուել յոյժ առ ի խարել ի դեղ երեսաց իւրոց զամենեսին որ տեսանիցենն զնա : Եւ ետ ցաղախին իւր զմախազն . եւ ելից զնա փոխնդով (փոխնդ. եղով ճրկած ակաւ) եւ պաղատակօք (չոր խոզ շարտով. փղի կեծի) եւ հացիւք սրբովք եւ զհաղաղակն (որովճանա. զօրս) զինուց եւ զօրուակն (շէն) իւզոյ, եւ սրբէր (ճարել) կազմէր զամենայն ըստ օրինի իւրեանց եւ տայր ցաղախին իւր : Եւ ել Յուզիթ ինքն եւ աղախին իւր ընդ նմա. եւ միտ դնէին (դիտել) նմա արք քաղաքին : յերթալն նորա, մինչեւ եղև նա ընդ լերամբն, մինչեւ անց նա ընդ ծործոր (փեթ աստի ճար կեծի) հովտին, եւ ասաւ ոչ եւս տեսին զնա : Եւ երթային նոքա ընդ հովտն ուղիղ ընդ ճանապարհն. եւ պատահեցին նոցա պահապանքն Ասորեստանեայց եւ կալան զնոսա եւ տարան զնա ի խորանն : Եւ Հոզեիեռն նստէր ի դա՛ոյս իւր. եւ էր փակեալ զնա վարազուրօք շուրջանակի, զօրս էր ընդելուզեալ (հանում) ոսկով եւ մարգարտով եւ ակամբք պատուականօք : Եւ իրբեւ լուաւ նա զՅուզիթոյ, ել նա արտաքս ի սրահ խորանին ջահիւք եւ լապտերօք արծաթեօք, քանդի գիշեր էր. եւ իրբեւ ետես զնա Հոզեիեռնէն, զարմացաւ ընդ տեսիլ

դեղը նորա: Եւ անկեալ ի խոնարհ (խոնարհել)՝ երկիր պագանէր Յուդիթ՝ Հողովեռնեայ. եւ կանգնեցին զնա ծառայք նորա: Եւ ասէ ցնա Հողովեռնէս. « Համարձակեաց, կին դու, եւ մի երկնչիր: Ժողովարդ քո այդ, որ բնակեալք է ի լեռնակողմանդ, եթէ ոչ էր ապատամբեալ դոցա յինէն, ոչ իմ առեալ էր զնիզակ իմ ի վերայ դոցա. այլ դուքա ինքեանք արարին անձանց իւրեանց զայս: Արդ ասա դու ինձ, վասն որոյ ես դու փախուցեալ ի նոցանէ եւ եկեալ ես առ մեզ », Եւ ասէ ցնա Յուդիթ. « Ընկալ զբանս աղախնոյ քո, եւ խօսեցի աղախին քո առաջի քո, եւ ոչ ինչ ստութիւն պատմեմ տեառն իմում ի գիշերիս յայսմիկ: Զբանսն զոր խօսեցան Աքիւփր ի խորհրդեան սենեկի քում, լուաք եւ մեք. զի նայեցան (ընդունել, ազատական շնորհել) ի նա արք Բետիուղայ, եւ նա պատմեաց զամենայն որպէս եւ խօսեցաւ ընդ քեզ: Եւ արդ այժմ, Տէր, մի անցաներ զբանիւք նորա (անոր խօսքն առ ոչնչ զի համարեր) այլ հաստատեա զնոսա ի սրտի քում, քանզի ճշմարիտ են. զի ոչ ոք կարէ չարչարել զազգս մեր, եւ ոչ սուր թշնամեայ վնասէ մեզ, բայց՝ յորժամ մեղանչիցեն Աստուծոյ իւրեանց: Արդ արարին նաքա մեզս մեծ անօրէնութեան. եւ ես աղախին քո յորժամ գիտացի զայս, փախուցի ի նոցանէ, զի աղախին քո աստուած ապաշտ է, եւ աղաչեմ զցայդ եւ զցերեկ զՏէր Աստուած երկնից: Եւ արդ մնացից ես առ քեզ. տէր իմ, եւ ելցէ աղախին քո ի գիշերիս յայսմիկ ի ծործոր հովտին, եւ կացից յազօթս առ Տէր Աստուած իմ, եւ պատմէ ինձ յորժամ մեղանան (ժողովել) նմա. եւ ես գամ եւ պատմեմ քեզ. եւ դու ելցես ամենայն զօրօք քովք հանդերձ, եւ ոչ իցէ ի նոցանէ որ

ապրիցէ ի քէն: Եւ տարաց զքեզ ընդ մէջ Հրէաստանի, մինչեւ տարաց զքեզ յերուսաղէմ, եւ արկցես զաթոս քո ի միջի նորա, եւ ժողովեցես զնոսա որպէս զհօտ որոց ոչ իցէ հովիւ, եւ ոչ հաջեացէ շուն մի լեզուա իւրով ընդդէմ քո»: Հաճոյ թուեցան բանք նորա առաջի Հողովեռնեայ եւ առաջի ամենայն ծառայից նորա, եւ ասեն. « Ոչ գտանի կին զեղեցիկ համեմատ սմա ի ծագաց (ծագ, ծայր) երկրի մինչեւ ի ծագս, իմաստութեամբ, բանիւք եւ զեղեցիկութեամբ երեսաց իւրոց », Եւ ասէ ցնա Հողովեռնէս. « Տեսանեմ զքեզ կայտառ (աշխոյժ. վաճառ) տեսեալք. եթէ արացցէ, որպէս խօսեցար, Աստուածն քո, եղիցի նա եւ իմ աստուած. եւ դու ի տան նարուքոյնստորայ նաոցիս եւ եղիցիս անուանի քան զամենայն երկիր (քան զամենայն կայս) »:

Եւ հրամայեաց տանել զնա ի տուն գանձին. եւ հրամայեաց (կարգեց) նմա առճիկս (որտե՛լ է ընդե՛լ. լայն) յիւրոց խորակաց (կերակուր) եւ ի գիւնոյ անտի զոր ինքն ըմպէր: Եւ ասէ Յուդիթ. « Ոչ կերայց ես ի դոցանէ. այլ տացես ինձ հրաման ուտել ինձ անտի զոր բերին ինձ ի քաղաքէ անտի »: Եւ ամին զնա ծառայքն Հողովեռն ու յի խորան անդր, եւ ննջեաց նա անդ մինչեւ ի մէջ գիշերոյն: Եւ եղև նա ի բանակի անդ աւուրս երիս. եւ ելանէր նա ի գիշերին ի ճարն Բետիուղայ, եւ մկրակր (լուսնակ) ի բանակի անդ յաղբիւրս Զուրցն ըստ օրինի Հրէից:

Եւ եղև յաւուրն չորրորդի արար Հողովեռնէս կոչունս ծառայից իւրոց միայն, եւ կոչեաց ի կոչանս. եւ ոչ զմի ոք յօտարոց անտի: Եւ ասէ ցեալու ցներքինին իւր որ էր հազարապետ (սմարտ) հաւատարիմ ի վերայ

ամենայն ընչից նորա. «Երթ, հաւանեցո (համարէ) դու, ա- սէ, զկինն Հերրայեցի որ է առ քեզ, ուտել եւ ըմպել ընդ մեզ, եւ զինչ է այդ այսն կատականաց (ամբէ, նախա- փն) թողուլ մեզ զայսպիսի կին եւ ոչ բնաւ խօսել ընդ նմա. արդ եթէ ոչ աւցուք զմարդ (կն) եւ մերձեցուցուք առ մեզ, դուցէ (շուշայ որ) ծաղր ինչ առնիցէ զմեզ»։ Եւ ել Բագու յերեսաց Հողովեոնեաց, եւ եմուտ առ նա (առ Յուդիթ) եւ ասէ ցնա. «Մի դանդաղեցի աղա- խինդ գեղեցիկ գալ առ ատէր իմ եւ փառաւորել ի նմա- նէ, եւ ըմպել ընդ նմա զդինի ուրախութեան մեօք հանդերձ»։ Եւ ասէ ցնա Յուդիթ. «Եւ ո՞վ ոք եմ ես որ ընդ դէմ դառնամ տեան խնամ»։ Եւ յարեաւ զարդա- րեցաւ զարդու իւրով ըստ զարդու կանանց. եւ մատ- եաւ նաժիշտ իւր եւ արկ նմա բաղմական (նորարան, սե- փէր) ի գեանի դէմ յանդիման Հողովեոնեաց զտիւումն մաշկեա (մարմն նորարան) զոր առ նա ի Բագուայ հանապա- զորդ սպաս (շարունակ քարձածելու) նմա. եւ բազմեցաւ Յուդիթ ի վերայ նորա. եւ յիմարեցաւ Հողովեոնէս ի գութ երեսաց նորա, եւ խառնեցաւ անձն նորա : Եւ Յու- փն իս. դրէր խաբել զնա յօրէն յայնմանէ յօրմէ ետես զնա (զՀողովեոն) : Եւ ուրախ եղև Հողովեոնէս ի վերայ նորա, եւ արբ նա զին ի սաստիկ յոյժ որչափ ոչ էր արբ- եալ նորա այնչափ յօրէ ծննդենէ իւրմէ : Եւ իրբեւ ե- րեկոյ եղև, փութացոյց զձ սուսոյս իւր գնալ արտաքս. եւ Բագու փակեաց զդուրս խորանին. եւ գնացին նո- քա յիւրաքանչիւր անկողինս իւրեանց արտաքոյ քան զիւրանն, քանզի էին ամենեքեան խոնջք եւ վաստակք (յոթնաժ) իբազում գիներուաց (շար փնէ ի փէլն) անտի. եւ մնացին Յուդիթ եւ Հողովեոնէս միայն ի խորանին :

Եւ Հողովեոնէս մտեալ ի գահոյս իւր ի քուն եղև, եւ էր թմբբեալ յոյժ ի գինոյ անտի : Եւ ասէ Յուդիթ ցա- զախին իւր զի կացցէ արտաքոյ խորանին եւ սպասեցէ նմա : Եւ մատեաւ Յուդիթ առ քանուն (երկոյն ֆառալան, ֆարձալէք) գահոյիցն որ էր ընդ անարան Հողովեոնեաց, եւ եհան զդաշնն նորա յազդերէ նորա, եւ կալաւ զհերաց նորա եւ ասէ. «Չօրացս զիս, Աստուածդ Իսրայելի, յա- ւուրս յայսմիկ». եւ եհար ի պարանոցի նորա երկիցս, զօ- րութեամբ իւրով, եւ հատեալ եբարձ զգլուխ նորա, եւ թաւալեցոյց (փարբել) ընկեց զմարմին նորա ի գա- հոյից անտի : Եւ յետ ժամու միոյ ել եւ ետ նաժշտին իւրում զգլուխ Հողովեոնեաց, եւ ընկեց ի մախաղ (շախա) կերակրոյն իւրոյ : Եւ ելին երկօքին ի միասին ըստ սովորութեան իւրեանց, եւ անցին նոքա ըստ բա- նակն, եւ շրջեցան եկին ընդ ձորն. եւ ելին նոքա ի լեառնն Բեթիուղայ. եւ եկին նոքա ի դրունս քաղա- քին : Եւ ասէ Յուդիթ ի հեռաստանէ ցալահապանս զբանցն. «Բացէք, բացէք արդ զդուռնդ, զի ընդ մեզ է Տէր Աստուած մեր» :

Եւ իրբեւ լուան արք քաղաքին զձայն նորա. փութա- ցան իջանել ի դրունս քաղաքին իւրեանց. եւ կարդացին (հանչել) նոքա զձերս ժողովրդեանն, եւ ժողովեցան ի փոքուէ մինչև ցմեծամեծս, քանզի կարմացեալ էին նո- քա յոյժ ընդ գնալն նորա : Եւ բացին զդուռն քաղաքին եւ առին զնոսա ի ներքս, եւ լուցին զլապտերս իւրեանց եւ կացին շուրջ զնոքօք : Եւ ասէ Յուդիթ բարձրածայն բարբառով. «Որդիք Իսրայելի, օրհնեցէք զԱստուած որ ոչ մերժեաց զդորմութիւն իւր ի տանէս Իսրայելի, այլ եհար վանեաց զթշնամիս մեր ի ձեռն իմ ի գիշերիս

յայսմիկ» : Եւ եհան զգլուխն ի մախաղէն եւ եցոց նոցա,
 եւ ասէ ցնոսա. « Ահաւասիկ գլուխն Հողովեոնեայ զօ-
 րագլխի զօրացն Ասուրայ : եւ ահա վարագոյրքն պա-
 տուականք ընդ որովք անկեալ գնէր յարեւոյնութեան իւ-
 րում, եւ ստտակեաց զնա Տէր Աստուած ի ձեռն կնոջս»
 Եւ ասէ Յուդիթ ցնոսա. « Լուարուք դուք ինձ, եղբարք,
 զոր անունս. Ասէք զգլուխս զայս եւ կախեցէք զսա ա-
 ուաջի մահարձանաց (աշտարակ, Տիգր ծորէլով կնոսէլու պեղ)
 պարսկաց քաղաքիս : Եւ եղիցի, յորժամ մերկասցի ա-
 ուուօսն եւ ծագեացէ Արեղակն յերկիր, վառեցարուք
 անենայն արք զօրսւորք պատերազմի, եւ կոցուցանի-
 ցէք ի վերայ ձեր զօրավարս եւ ելանիցէք արտաքոյ քա-
 ղաքիս, իրրեւ թէ իջանիցէք ի դաշտ անդր ի թեւ մի
 պարսկապանաց (Բանակի պահապան) որդւոցն Ասուրայ եւ
 անդր մի իջանիցէք, այլ խոռով հարկանիցէք (Իսախիցիէլ)
 նոցա. եւ նոքա առցեն զգէնս իւրեանց եւ զնասցեն ի
 բուն բանակն եւ յարուցանիցեն զգօրագլուխան, եւ ժո-
 ղովեալք զիմեոցեն ի խորանն Հողովեոնեայ եւ զնա ոչ
 գտանիցեն եւ անկցի ի վերայ նոցա ահ եւ ի փախուստ
 դարձցին (Կախիլ) նոքա յերեսաց ձերոց. եւ դուք զկնի
 մտեալ (Էրեւնէ կնու) եւ ամենայն բնակիչք սահմանացս
 Իսրայելի՝ տապաստ արկեալ վանեալք զնոսա յսաննայն
 ճանապարհս նոցա : Եւ արդ՝ մինչչեւ արարեալ զայս՝
 կոչեցէք առ իս զԱքիլովր զի տեսցէ զայս որ ընդ ոտն
 եհար (արհամարհել, նախարեւ) զտունս Իսրայելի. որ կա-
 պեանցն զնա եւ ետ ածել այսր ի մահ» : Եւ կարգացին
 զԱքիլովր ի տանէ Ողեայ, եւ իրրեւ եկն եւ ետես նա զգլ-
 լուխ Հողովեոնեայ ի ձեռն անն միոջ ի ժողովրդեան,
 անկաւ ի վերայ երեսաց իւրոց եւ թաւալեցաւ (Իւրեւ

կնու). եւ իրրեւ անդէն զօրացաւ, անկեալ առ ոտս
 (արդ կնու) Յուդիթայ երկիր եպաղ նմա :
 Եւ յորժամ ծագեաց սուուօսն, կախեցին զգլուխն Հո-
 ղովեոնեայ ի պարսպէ անտի. եւ վառեցաւ (Էրեւնէլ) ամե-
 նայն այր զգէն իւր (Էր զնուլք). եւ ելին նոքա առնել զայն
 ընդ անցս կողմանն ի վերայ լերինն : Եւ որդիքն Ասուր
 իրրեւ տեսին զնոսա, ազդ արարին նոքա առ զօրագլուխս
 եւ առ իշխանս եւ առ հազարապետս. եւ զիմեցին նո-
 քա ի խորանն Հողովեոնեայ եւ ասեն ցսնեկապետ
 նորա. « Արդ՝ մուտ, յարո զՏէրդ մեր, զի իշխեցին ծա-
 ուայքն ի վերայ մեր ի պատերազմ, եւ սատակեսցուք
 զնոսա ի սպառ (Բնուլ վերջ, Բուրովն). եւ եմուտ Բազու
 եւ բախեաց զգուրս սնեկին. քանզի կարծէր թէ ի
 քուն իցէ հանդերձ Յուդիթա : Իրրեւ ոչ ոք ետ նմա
 պատասխանի, քաջալերեալ եմուտ ի ներքս ի սնեկակն,
 եւ ետես զի անկեալ կայր ի վերայ գետնոյն մերկ, եւ
 գլուխ իւր բարձեալ էր ի նմանէ : Եւ գոչեաց Բազու
 ձայնիւ մեծաւ եւ լալով եւ ողբամար յոյժ, եւ պատա-
 ուեաց նա զպատմութեան իւր. եւ եմուտ նա ի սնեկակն
 Յուդիթայ եւ ոչ եգիտ զնա. եւ ել ընթացաւ նա առ
 զօրան եւ ասէ. « Արար ամօթ նախատանաց կին մի Հերբա-
 յեցի՝ տան արքային՝ Նարուզդոնոսորայ, զի ահաւասիկ
 Հողովեոն յերկիր կործանեալ եւ գլուխ իւր չէ առ նմա
 (Էրեւնէ վերջ վէ)» : Եւ իրրեւ լուան զայս բանս իշխանք զօ-
 րացն Ասուրայ, պատառեցին ամենեքեան զպատմութեանս
 իւրեանց եւ երկեան յոյժ : Եւ իրրեւ լուան որք ի վրանս
 էին, յիմարեցան վասն իրացն որեղին. եւ անկաւ ի վերայ
 նոցա ահ եւ գողումն յոյժ եւ ապա ոչ մնացին (ոպսել)
 ամենեւին այր ընկերի խրոռալ. եւ հեղեալք զբաղեալք

(դրոշմաբարձրութիւնը) առհասարակ ի փախուստ դարձան ի դաշտակողմանն եւ ի լեռնակողմանն շուրջ զԲեաթիուղաւ: Եւ դարձեալ անտի փոխատեայք լինէին: Եւ ապա ամենայն այր պատերազմող որդւոցն ի սրայելի յարձակէին անկանէին ի վերայ նոցա, եւ կոտորէին հարկանէին. եւ ամենեքեան որք ի Գալիլեա՝ հասանէին հարկանէին վանէին զնոսա, մինչեւ անցուցանէին զնոսա ընդ Գամասկոս եւ ընդ սահմանս նորա:

Այլ բնակիչքն Բեաթիուղայ ելանէին անկանէին ի վերայ բնադրացն (բանակին տեղը) Ասուբայ, աւար հարկանել. ժողովել զառ եւ զապուռ (կողպոս) բանակացն, յորս լցան յղվացան (աւարոցն բանակը) մեծացան (հարստանալ) յոյժ: Եւ որդիքն ի սրայելի դարձան ի կատորածէ անտի. եւ սկսանէին ժողովել զկապուռ (աւար) կողպուռ անկեղցն (պարտաւորի մեջ մտնալ). եւ դեւղքն եւ ազարակք լեռնակողմանցն եւ դաշտականացն եկեալ առնուին զմնացորդս յոյժ աւարացն: Եւ ժողորդն կրէին զաւար բանակին զաւուրս երեսուն. եւ ետուն Յուդիթայ զխորանն Հողութեանեայ եւ զամենայն զարծաթ խորանին եւ զզահոյսն, եւ զամենայն զսպասն ոսկւոյ եւ արծաթոյ (սկեղէն, արծաթեղէն) նորա: Եւ նորա առեալ կուտէր զայն ի սայլս իւր եւ ի վերայ զրաստուոց իւրոց եւ բերէր ի ներքս ի քաղաքն: Եւ եկին առ նա ամենայն կանայք որդւոցն ի սրայելի տեսանել զնա. եւ օրհնեցին զնա եւ նուագէին նմա երգս պարուք. եւ առեալ նորա ոստս արմաւենեաց եւ ճիթենեաց, ծագկամբք հանգերձ՝ տայր նոցա: Եւ այլ եւս կանայք մեծամեծք տեղեացն գային գունդագունդք գովել զնա. եւ ամենայն ի սրայել զկնի երթային նոցա վառեալք եւ

կնզմեալք. պսակս գունակս գունակս (դէս դէս) ի գլուխս իւրեանց, եւ օրհնութիւնք ամենեցուն ի բերանս իւրեանց փառաւորել զԱստուած:

Հ Ր Ա. Հ Ս. Ն Գ.

Հայեցեալ Պաւղոսի յատեանն, ասէ. «Արք եղբարք, ես ամենայն ուղիղ մտօք գնացեալ եմ առաջի Աստուծոյ մինչեւ ցայսօր»: Եւ քահանայապետն Անանիա հրամայեաց սպասաւորացն հարկանել զբերան նորա. յայնժամ Պաւղոս ասէ ցնա «Հարկանելոց է զքեզ Աստուած, որմ բռեալ. եւ դու նստիս դասել զիս ըստ օրինաց, եւ առանց օրինաց հրամայես զիս հարկանել»: Որ շուրջն կային (Եւրոպէի կայսրները) ասէն. «Չքահանայապետ Աստուծոյ հայհոյես»: Եւ ասէ Պաւղոս. «Ոչ գիտէի, եղբարք, եթէ իցէ քահանայապետ»: Իբրեւ զխոսաց Պաւղոս եթէ մի կողմն (կասկեղութիւն) Սաղուկեցւոց է եւ միւսն Փարիսեցւոց, ազաղակէր ի մջ առենին. «Արք եղբարք, ես Փարիսեցի եմ, որդի Փարիսեցւոց: Վասն յուսոյ եւ յարութեան մեռելոց եւ ահաւաստի դատիմ»: Եւ զայս իբրեւ ասաց, եղեն հերձուածք է մեջ Փարիսեցւոցն եւ Սաղուկեցւոց. եւ սպասուեցաւ (երկարակէլ) բազմութիւնն. եւ եղև ազաղակ մեծ. յոտն կացին ոմանք ի դպրաց անտի ի կողմանէ Փարիսեցւոց, հակառակէին եւ ասէին. «Ոչինչ չարութիւն գտանեմք յառնս յայսմիկ»: Եւ իբաղմանալ ամբօխին՝ երկուցեալ հազարապետին թէ գուցէ ձեղքիցի (կոր կոր բլակ) Պաւղոս ի նոցանէ՝ հրամայեաց զօրականին լծանել յափշտակել զնա ի միջոյ նոցա եւ ածել ի բանակն:

Իբրև սյգ եղև, ժողով արարեալ Հրէիցն նզովեցին զանձինս (Երբո՞ւմ ընել) ոչ ուտել եւ ոչ ըմպել մինչեւ սպանցեն զՊաւղոս. եւ էին աւելի քան զքառասուն որոց զայս ընդ միմեանս երգմունս արարեալ էր: Մտոեան առ քահանայապետսն եւ երիցունս եւ ասեն. «Նզովիւք նզովեցաք զանձինս ոչինչ ճաշակել մինչեւ սպանցուք զՊաւղոս. Բայց դուք զգացուցէք (խնայել) հազարապետին հանդերձ ատենիւ (տրեանին ճարտիկը) զի իջուցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիք ճշմարտագոյնս ինչ գիտել (մնել, տել, իմանալ) զնմանէ. եւ մեք յառաջ քան զօտել նորս պատրաստ եմք ի սպանանել զնա»: Եւ լուեալ քեռորդւոյն Պաւղոսի զգաւածանութիւնն՝ եկն եմուտ ի բանակ անգր, պատմեաց Պաւղոսի. Եւ կոչեցեալ Պաւղոսի առ իւր զգի ի հարիւրապետաց անտի՛ ասէ. «Զպատանիս զայս տար առ հազարապետն, զի ունի ինչ պատմել նմս»: Եւ նորա առեալ զնա տարաւ առ հազարապետն եւ ասէ. «Կապիարն Պաւղոս կոչեաց զիս եւ աղաչեաց զպատանիս զայս ածել առ քեզ. ունի ինչ խօսել ընդ քեզ»: Առեալ զձեռանէ նորա հազարապետին՝ զնաց մեկուսի (Պիպի). հարցանէր թէ «Զինչ ունիս խօսել ընդ իս», եւ նա ասէ. «Հրեոցք միաբանեցին աղաչել զքեզ, զի ի վազիւ զՊաւղոս իջուցեն յատեան, իբրև թէ կամիցին ինչ ճշմարտագոյնս հարցանել վասն նորա. արդ՝ դու մի անսպայցես (ճիշի ընել) նոցա. քանզի դարան գործեալ (քաղաքի պահապանել զնախաւ համար) է նմա ի նոցանէ արանց աւելի քան զքառասուն, որ նզովեցին զանձինս ոչ ուտել եւ ոչ ըմպել մինչեւ սպանցեն զնա. արդ՝ պատրաստ են, եւ սպասեն քում հրամանի»: Ասա հազարապետն արձակեաց զպատանին՝ պատուէր տուեալ մի

ումեք ասել թէ «Զայս զգացուցեր ինձ»: Եւ կոչեաց երկուս ի հարիւրապետացն եւ ասէ. «Պատրաստեցէք զօրականս երկերիւր, սրպէս զի երթիցին ի կեսարիա. եւ հեծեալս եօթանասուն եւ տիգաւորս երկերիւր, եւ զրասա (երկվար, բեւ կող անասուն) պատրաստական՝ սրպէս զի իջուցեալ զՊաւղոս ապրեցուցեն առ Փելիքս դատաւոր»: Գրեաց թուղթ որ ունէր օրինակ զայս: «Կղաւզիոս Լիւսիաս առ քաջ (կարող) դատաւորդ Փելիքս՝ ողջոյն Զայրս զայս կալեալ ի Հրէից եւ մերձ ի սպանանել ի նոցանէ՛ հասեալ ի վերայ զօրականս ապրեցուցի (աշարիւ), խնայեալ թէ Հոովմայեցի է: Կամեցայ գիտել զվնասն (յանցանք) վասն որոյ ամբաստանէին զքե՛ մանէ, իջուցի զգա յատեան դոցա, զոր գտի ամբաստանեալ վասն խնդրոյ իրիք իւրեանց օրինաց. եւ ոչինչ արժանի մահու. կամ կապանաց (բանապահութիւն) ունէր վնաս: Իբրև ազգ եղև նենդութեան յայրդ լինելոյ ի նոցանէ, յվեցի առ քեզ՝ հրաման տուեալ եւ չարախօսացն (սքաստանող) խօսել զզմանէ առաջի քո. ողջ լեր»: Եւ զօրականացն ըստ հրամանի նորա առեալ զՊաւղոս՝ ածին գիշերայն (քէշեր տրեւ) յԱնտիպատրիս, եւ ի վազիւ անդր արձակեալ զհեծեալս ընդ նմա երթալ՝ դարձան ի բանակն. նոքա մտին ի կեսարիա. եւ տուեալ ցղատաւորն զթուղթն՝ առաջի կացուցին նորա զՊաւղոս: Իբրև ընթերցաւ, եւ հարց թէ յորմէ՞ նահանգէ (երկիր զ ուր որ տրեւեան մը մասն է) իցէ, եւ ստուգեալ եթէ ի կիւրիկեայ է՝ «Լուայց քեզ, ասէ, յորժամ եւ չարախօսքն քո եկեսցեն», եւ հրամայեաց յապարանս Հերովդի պահել զնա:

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ.

Յետ Հինգ աւուր էջ քահանայապետն Անանիա հանդերձ ձերոյք ոմամբք եւ ճարտարախօսաւ Տերտուղեաւ ոմամբք որք եւ զգացուցին դատաւորին վասն Պաւղոսի եւ ի կոչելն զնա՝ սկսաւ Տերտուղոսն ամբաստան լինել եւ ասել. « Բազում խաղաղութիւն գտեալ է ի քնն եւ իրաց ուղղութիւն ազգիս այսորիկ քով խնամով. ամենայնիւ եւ ամենայն ուրեք շնորհակալ եմք, քաջդ փելիքս, ամենայն դոհութեամբ (շորհակալութեան) : Բայց զի մի եւս աշխատ արարից զքեզ. աղաչեմ լսել մեզ կարձ ի կարծոյ (համարօտեմ) քոյին Հեղութեամբք: Քանզի գտար զայսս զայս ապականիչ եւ խռովիչ ամենայն Հրէից որք են ընդ տիեզերս. եւ առաջնորդ նազովրեցւոց Հերձուածոյն. որ եւ զտաճարն իսկ կամեցաւ պրդծել. զոր եւ կալաք եւ ըստ մերոց օրինաց դատել (դատք տեանել) կամեցաք. Եկեալ Լիւսիաս հազարապետ մեծաւ բռնութեամբ ի ձեռաց մերոց եհան (տաւա) . հրամայեաց եւ շարախօսացն նորա գալ առ քեզ. դու իսկ բաւական (կարող) լինիցիս, վերատին դատեալ, ամենայնիւ հասու լինել (հասնալ) զորոց մեքս ամբաստանեմք զդմանել » : Միաբանեցին եւ Հրէայքն, ասեն. « Այդ այդպէս է » : Պատասխանի ետ Պաւղոս յակնարկել նմա դատաւորին խօսել. « Ի բազում ամաց լինել քեզ դատաւոր ազգիս այսորիկ գիտեմ. յօժարութեամբ վասն իմոց իրաց պատասխանի առնեմ (ինչպէս որդարացիել) : Քանզի կարող ես զիտեւ զի ոչինչ աւելի է իմ քան զաւուրս երկոտասան յորմէ հետէ ելի յերուսաղէմ. եւ ոչ ի տաճարի անդ գտին զիս ընդ ումեք խօսեցեալ, եւ

կամ ժողովս արարեալ բազմաց, ոչ ի ժողովուրդս եւ ոչ ի քաղաքի, եւ ոչ յանդիման առնել (պարտաւորել) կարեն քեզ վասն որոյ այժմեղ շարախօսեն զինէն » : Եւ յապագեաց (որել զորան յիւել) զնոսս փելիքս. զի ստուգագոյնս գիտէր վասն ճանապարհին. ասէ. « Յորժամ Լիւսիաս հազարապետ իջցէ այսր, տեղեկացցց վասն ձեր » : Հրամայեաց հարիւրապետին պահել զնա, եւ ունել յընդարձակի (խորհրտան ընել), եւ մի զուք յիւրոց անտի արգելու ի սպառելոյ (շարայորտան ընել) զնա : Յետ աւուրցին նկն փելիքս հանդերձ Դրուսեղաւ կնաւ իւրով որ էր Հրէայ, կոչեաց զՊաւղոս, եւ ի խօսել նորա վասն արդարութեան եւ ժոժ կալութեան (բարեխառնութեան առաքինութեան) եւ հանդերձեալ դատաստանին՝ զահի հարեալ փելիքս ետ պատասխանի. « Դու առ այժմ (նիմա համար) երթ. եւ յորժամ ժամ լիցի (պարեհորտան ընել) կոչեցից զքեզ » : Միանգամայն եւ ակն ունէր (յոտալ) թէ տացի ինչ նմա ի Պաւղոսէ. վասն որոյ ստէպ կոչեցեալ զնա խօսէր ընդ նմա : Եւ ի կատարել երկուց ամաց՝ եկն փոխանակ փելիքսի փեսոտս Պորկիոս. իրբեւ կամեցաւ շնորհս առնել (աւել յարել) Հրէիցն փելիքս, եթող զՊաւղոս կապեալ :

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ.

Փեսոտս իրբեւ եհաս յիշխանութիւնն. յետ երից աւուրց ել յերուսաղէմ ի կեսարեայ. եւ զգացուցին նմա քահանայապետքն եւ գլխաւորք Հրէիցն զՊաւղոսէ, եւ աղաչին խնդրել շնորհս ի նմանէ զի կոչեցցէ զնա յերուսաղէմ՝ զարան գործեալ սպանանել զնա ի ճանապարհի : Իսկ փեսոտս արար պատասխանի պահել զնա

ի Կեսարիա . թէ ինքն իսկ ընդհուպ (սիւ ասնէն) անդր երթալոց է : «Եւ որ ի ձէնջ» կարողք իցեն, ասէ, ընդ իս իջցեն . եւ եթէ իցէ ինչ յառնն վնաս (յանցանք,) ամբաստան լիջին զնմանէ» : Եւ լեալ անդ աւուրս ոչ աւելի քան զութ կամ զտասն՝ եկն էջ ի Կեսարիա . եւ ի վաղիւ անդր նստեալ յատենի, հրամայեաց ածել զՊաւղոս : Եւ իբրեւ եկն, կային շարջ զնովաւ որ յերուսաղեմէ իջեալ էին Հրեայք (1) . բազում եւ ծանր վնասս զնէին (ամբաստանել) զոր ոչ կարէին ցուցանել . քանզի առնէր պատասխանի Պաւղոս եթէ «ոչ յորէնս Հրէից եւ ոչ ի տաճարն եւ ոչ ի կայսր վնասակար (յանցասր) եմ» : Բայց Փետոսս կամեցեալ Հրէիցն շնորհս առնել՝ պատասխանի եւ Պաւղոսի եւ ասէ . «կամիս յերուսաղեմ՝ ելանել եւ անդ վասն դոցին իրաց դատել առաջի իմ» : Եւ ասէ Պաւղոս . Յատենի կայսեր հասեալ կամ՝ ուր պարտ է ինձ դատել, Հրէից չեմ ինչ վնասակար, որպէս եւ դու իսկ քաջ գիտես : Ապա թէ վնասակար իցեմ եւ արժանի մահու ինչ զործեցի, ոչ զանդիտեմ ի մեռանելոյ . իսկ եթէ ոչինչ իցէ զորոց սոքա ամբաստան լինին զինէն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել (յետքսր) . ի կայսր բողոքեմ» : Յայնժամ Փետոսս խօսեցեալ ընդ խորհրդակցին՝ արար պատասխանի . «ի կայսր բողոքեցեր, առ կայսր երթիջիր» :

Իբրեւ անցին աւուրք ինչ, Ագրիպպաս արքայ եւ Բերենիկէ եկին ի Կեսարիա յողջոյն (շնորհասորութիւն) Փետոսի . եւ իբրեւ աւուրս բազումս հանէին (անցնել) անդ,

(1) Յարարեալը «Հրեայք» յարարեալանէն ետքը դրուր է . պիտի ըլլայ այսպէս . Կային շարջ զնովաւ Հրեայք՝ որ իջեալ էին յերուսաղեմ :

Փետոսս զեկոյց (Իմացել) արքայի զՊաւղոսէ եւ ասէ . «Այր մի է աստ մնացեալ կապեալ ի Փեղիքսէ . վասն որոյ, իբրեւ չորայ յերուսաղեմ, զգացուցին ինձ քանանայապետքն եւ զլիսաւորք Հրէիցն . խնդրէին յինէն առնել նմս պատուհաս . որոց ետու պատասխանի եթէ չէ օրէն Հոռնայեցւոց շնորհել ումեք զոք . մինչչեւ ամբաստանեալն յանդիման ունիցի զդատասխազն (ամբաստանող) եւ տեղի պատասխանոյ առնուցու (Իստիս արքարացնելու արքանութիւնն ասնելու) վասն ամբաստանութեանն . Եւ իբրեւ եկին այսր, ոչինչ յապաղեցի, այլ ի վաղիւ նստեալ յատենի՝ հրամայեցի ածել զայրն : Վասն որոյ մատուցեալ ամբաստանքն եւ ոչ մի ինչ վնաս չարութեան ի մէջ բերէին (ցուցնել) զորոց եսն կարծէի . բայց խնդիրս ինչ վասն իւրեանց պաշտաման ունէին ընդ նմա, եւ վասն Յիսուսի ուրումն մեռելոյ զորմէ ասէր Պաւղոս թէ կենդանի է : Իբրեւ յանձնարս մտի (ծար ք շնորհս քրտնել) վասն այնպիսի իրաց քննութեան, ասեմ թէ կամիցի՞ երթալ յերուսաղեմ եւ անդ դատել վասն նոցին իրաց : Բայց ի Պաւղոսի բողոքելն զի պահիցի ի քաջի արանցն (կայսր) յանդիմանութիւն՝ հրամայեցի պահել զնա մինչեւ տաց տանել առ կայսր» : Ագրիպպաս ցփետոսս ասէ . «Կամիմ եւ ես լսել առնն» . եւ նա ասէ . «Վաղիւ լուիցես» : Եւ ի վաղիւ անդր իբրեւ եկն Ագրիպպաս եւ Բերենիկէ բազում երեւելի սպասուք (փառասորութիւն) եւ մտին յատեանն հանդերձ հազարապետօքն եւ արամք պատուականօք (պարտասար) քաղաքին, եւ հրամայեալ Փետոսսի՝ ածին զՊաւղոս . Եւ ասէ Փետոսս . «Արքայ Ագրիպպա եւ ամենայն արք որք ընդ մեզ էք, տեսանէ՞ք զսա . վասն սորա ամենայն ժողովք Հրէից ամբաստան եղեն

ինձ յերուսաղէմ եւ աստ. աղաղակէին թէ ոչ է պարտ
 դամ կեալ: բայց ես ի վերայ հասի (որեղէկանս) թէ ո-
 չինչ է դորա արժանի մահու գործեալ. եւ դորա ինք-
 նին բողոք կալեալ առ քաջ արանցն՝ խորհեցայ յղեւ
 առ նա. վասն որոյ ստուգութեամբ ինչ գրեւ տեսան ի-
 մում ոչ ունիմ. վասն այնորիկ ան ի զգա առաջի ձեր
 եւ մահաւանդ առաջի քո, արքայ Ագրիպպա, որպէս զի
 վերտոին քննեալ մարթացից ինչ գրեւ, քանզի անպա-
 տեհ իմն թուի ինձ տալ տանել կապեալ մի, եւ ոչ ինչ
 վնաս զնմանէ նշանակել (Իսայիէլ):»

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ.

Եւ Ագրիպպա ասէ ցՊաւղոս. «Հրամայեալ է քեզ
 վասն քո խօսել»: Յայնժամ Պաւղոսի ձգեալ զձեռն առ-
 նէր պատասխանի. «Վասն ամենայն ամբաստանութեան
 Հրէից զիննն, արքայ Ագրիպպա, համարիմ զանձն երա-
 նելի, զի քո առաջի սյսօր տալոց եմ պատասխանի Մա-
 նաւանդ զի գիտակ ես իսկ ամենայն կրօնից եւ խնդրոց
 Հրէից. վասն որոյ աղաչեմ երկայմտութեամբ (Երրորդ-
 ծորոնիս) լսել ինձ: Գանզի զկենաց խնոց որ ի մանկու-
 թեանէ՝ տեղեակ են ամենայն Հրեայք. յառաջագոյն զի-
 տեն ի վաղուց հետէ (չորրորդ), եթէ կամիցին վկայել, զի
 ըստ ձմարտագոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ
 Փարիսեցի: Ես իսկ ինքնին պատշաճ համարելի զբազում
 ինչ հակառակ անուանն Յիսուսի նազովրեցուց գործել
 զբազումս ես բանտարգել աննի, եւ զսպանելոցն նո-
 ցա բերելի համար (Ինչ). բազում անգամ պատժեալ զնո-
 սա բռնադատելի հայհոյել. առաւել ես մոլեալ (կորսողեալ)

ի վերայ նոցա՝ հալածէի մինչեւ յարտաքին քաղաքս :
 Գնացեալ ի Դամասկոս իշխանութեամբ եւ հրամանօք.
 քահանայապետիցն՝ զմիջառուրն (կէս օրոսն որեւէ) ի ճա-
 նարարհի տեսի, արքայ, յերկնից՝ առաւել քան զլուսա-
 ւորութիւն արեղական՝ ծագեալ (երևալ) զինեւ լոյս, եւ
 զնքօք՝ որ ընդ իսն երթային՝ լուայ ձայն որ ասէր ցիս
 Հեբբայեցուց բարբառովն. «Սաւուղ, Սաւուղ, զի՞ հա-
 լած ես զիս. խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել (կէց
 շարեւ)»: Եւ ես ասեմ. «Ո՞ր ես Տէր». եւ տէր ասէ. «Ես
 եմ Յիսուս զոր դու հալածեա. այլ արի եւ կաց ի վերայ
 ստից քոց. զի վասն այսորիկ երեւեցայ քեզ առնուլ զքեզ
 ի ձեռն պաշտօնեաց, փրկել զքեզ ի ժողովրդենէդ եւ
 ի հեթանոսաց՝ յորս ես առաքելցից զքեզ»: «Ուստի, ար-
 քայ Ագրիպպա, ոչ եղէ անհաւան (անհապանդ) երկնա-
 ւոր տեսլանն»: Նորա զայս պատասխանի տուեալ՝
 Փեստոս ի ձայն մեծ ասէ. «Մոլիս (Ինչոր կորսնցորդա՞
 ես), Պաւղէ. բազում զպրութիւնք (ոստանէ) զքեզ
 ի մոլութիւն (Ինչորեցեւ)» զարձուցանեն: Իսկ Պաւղոս
 ասէ. «Ոչ մոլիմ, քաջդ Փեստոս, այլ զցածութեան (Ին-
 լադորեւ) եւ զձմարտութեան բանս բարբառիմ Գիտակ
 իսկ է այսորիկ արքայ ընդ որում եւ համարձակեալդ
 խօսիմ. քանզի ծածկել ի քէն իմիք ի սոցանէ չառնում
 յանձն (չե՞մ որեւէ). զի ոչ եթէ յանկեան ուրեք գործեալ
 իցէ այս: Հաւատաս, արքայ Ագրիպպա, մարդարէից.
 գիտեմ զի հաւատաս»: Եւ ասէ Ագրիպպա ցՊաւղոս.
 «Փոքու իմնն (Ինչ ճայ որ) հաւանեցուցանես զիս լինել
 քրիստոնեաց»: Յոտն եկաց արքայն եւ դատաւորն եւ
 Բերինիկէ եւ որ ընդ նոսայն նստէին, եւ զնային խօսէին
 ընդ միմեանս եւ ասէին թէ՛ «Ոչինչ արժանի մահու կամ

կազանաց գործէ այրս այս» : Իսկ Ագրիպպա ցփեստոս
ասէ. «Արձակել մարթ էր զայս զայս, եթէ ոչ էր բողոք-
եալ ի կայսր» :

Հ Ր Ս . Հ Ա Ն Գ .

Իբրեւ հրամայեցաւ մեզ նաւել յիտալիա . տային
զՊաւղոս եւ զայլս ոմանս կապեալս ցհարիւրապետ մի
որում անուն էր Յուզիոս , սեբաստեան գնդին : Եւ ել-
եալ ի նաւ մի Անդրամինտացի որ երթալոց էր ի կող-
մանս Ասիացոց՝ գնացաք . էր ընդ մեզ եւ Արիստարքոս
Մակեդոն թեսաղոնիկեցի : Եւ ի վաղիւ անդր իջաք ի
Սիզուզն . եւ մարզասիրութիւն ցուցեալ Յուզեայ առ
Պաւղոս՝ հրամայեաց առ բարեկամսն երթալ եւ դարման
գտանել : Եւ անտի ելեալ խոնարհագոյն (քեպէ վար) նա-
ւեցաք ի կիւրոս վասն հողմոյն ընդդէմ լինելոց : Յայն-
ժամ ընդ մէջ (երկոս բանի յերթեղեն) ծովուն կիւլիկեայ եւ
Պամփիլիեայ նաւեալ իջաք ի Սմիրնայ Լիկիացոց . եւ անդ
դտնալ հարիւրապետին նաւ մի Աղեքսանդրացի որ եր-
թայր յիտալիա՝ եմոյծ զմեզ անդր : Եւ ի բազում աւուրս
ծանրանաւեալք՝ հազիւ (քոթոարաւ) հասաք առ կնիդաւ .
եւ ի չթողացուցանել մեզ հողմոյն՝ նաւեցաք խո-
նարհագոյն ի կրետէ առ Սաղմոնեաւ : Հազիւ անցեալ
առ նովաւ՝ եկաք ի տեղի ինչ որ կոչէր գեղեցիկ նաւա-
հանդիստ յոր հուպ (ձոթ) էր քաղաքն Ղասեայ : Եւ իբ-
րեւ բազում ժամանակք անցանէին՝ եւ սխալ եւս լինէր
նաւելոյն եւ վասն այն ինչ եւս պահոցն (քոթ խամանկ)
անցանելոյ, տայր խրատ Պաւղոս եւ ասէ ցնոսս, Սրբ,
տեսանեմ զի թշնամանօք (նեղութիւն) եւ բազում վնասու

ոչ միայն բեռինդ եւ նաւիդ սյլ եւ անձանց մերոց լի-
նեւոց է նաւարկութիւնս : Իսկ հարիւրապետն նաւապե-
տին եւ նաւավարին առաւել անսայր քան բանիցն Պաւ-
ղոսի : Իբրեւ դժպատեհ (անյարմար) իմն թուէր նաւա-
հանդիստն առ ի ձմերել (յօթան անցանել), բազումք խոր-
հեցան (արդարձ ընել) գնալ անտի . թերեւս կարոսցեն
հասանել ի Փիւնիկէ ձմերել ի նաւահանգստին կրետա-
ցոց որ հայէր ընդ հարաւակողմն : Եւ ի շնչել հարաւոյն
համարեցան ուր դիմեալն էին (երեսն փոքր քրոթ փեղս)
հասանել . եւ արկեալ (ճանքայ ելնել)՝ մօտ անցանէին
զկրետաւ : Եւ ոչ յետ բազում ժամուց անկաւ զնովաւ
(քանոտեցան) հողմ ուռուցիկ որ կոչի եւրակիկոն . ընդ
յալլչտակել նաւին եւ ի չհանդուրժել (չբիճանալ) ընդ-
դէմ հողմոյն՝ թոյլ տուեալ երթոյցաք եւ գոյցաք : Ի կզգի
ինչ դիմեալ որ կոչէր կղաւղեայ՝ հազիւ կարացաք ըմ-
բանել զմակիցն . զոր առաւել յողնականութիւն՝ կա-
պէին ընդ նաւն, երկուցեալ թէ գուցէ ի յորձանուտն
անկանիցին . իջուցեալ զառագաստն՝ այնպէս երթային
եւ դային : Եւ ի սաստկագոյն վշտանալոյն մերոյ՝ ի վա-
ղիւ անդր զկարասին ընկեցիկ առնէին (նեպել) եւ յե-
րիբ աւուր (երբորդ օրս) ընդ իւրեանց ձեռն (երեսն յեռ-
տոլս) զգործիս նաւին ընկեցին : Իբրեւ ոչ արեւ եւ ոչ
ատտեղք երեւէին ի բազում աւուրս՝ եւ ձմեռն ոչ սա-
կաւ կայր ի վերայ (վրայ հասած էր), ապա բառնայր ամե-
նայն յոյս իրկութեան մերոյ : Եւ զի բազում աւուրս
նօթի էին, յայնժամ Պաւղոս կացեալ ի մէջ նոցա ասէ.
Պարտ էր ձեզ, ոյլ արք, անսալ ինձ եւ ոչ ելանել ի
կրետեայ եւ շահել զվիշտս զայս եւ զվնաս . եւ արդ խը-
րատեմ զձեզ քաջալերել . զի վնաս անձին եւ ոչ միում

ի ձէնջ լինիցի բայց ի նաւէդ. բայց ի կղզի ինչ հասանէ մեզ անկանել (պիտէ էյնան) :

Իբրեւ չորեքտասաներորդ գիշեր լինէր, մինչդեռ ծփէաք (սարսփերուել) ի Հանդրին (Արբէակն) անդունդըս, ի միջ գիշերին կարծէին նաւարարքն եթէ հասեալ իցեն յաշխարհ ուրեք. եւ ընկեցեալ զգունդան (քնարակ) դաին գիրկս (խաւած) քսան. եւ սակաւ ինչ դադարեալ դարձեալ ընկեցին եւ դաին գիրկս հնդետասան : Չահի հարեալ թէ դուցէ ի խիտ (սարսփ) ինչ տեղիս անկանիցին՝ յետուստ կողմանէ ընկեցին խարխախըս (սասի երկաթ) չորս. ըզձանային այգուն լինելոյ : Բայց նաւավարքն խնդրէին փախչել ի նաւէ անտի՝ իջուցեալ զկուրն (նասակ) ի ծով անդը՝ պատճառանօք որպէս թէ առաջոյ կողմանէ խարխիս ձգեալոյ իցեն : Ասէ Պաւղոս ցհարիւրապետն եւ ցզօրականն. «Եթէ ոչ դօքա մնան ի նաւիս, դուք ապրիւ ոչ կարէք.» յանժամ զօրականքն հատին զլարս (չաւան) կրին եւ ի բաց ընկեցին : Եւ մինչդեռ այգն կամէր լինել, աղաչէր Պաւղոս զամենեսեան առնուլ կերակուր. ասէ. «Այս չորեքտասաներորդ օր է որում ակն ունիք նօթիս կատարել (անխաւած) անցնել. կերակուր, հաց սարեւ, եւ չէ ինչ ճաշակեալ. վասն որոյ աղաչեմ զձեզ ճաշակել կերակուր, զի այն խոկ վասն ձերոյ փրկութեան է : զի ոչ ուրուք ի ձէնջ մաղ մի ի գլխոյ կորիցէ» : Եւ քաջալերեցան ամենեքին, եւ առին կերակուր : Եւ էաք ամենայն հօգիք ի նաւին երկերիւր եւ թանասուն եւ վեց : Իբրեւ յազեցան կերակրողն, թեթեւացուցին զնաւն՝ թափեալ (դարպեւ) զցորեանն ի ծովս : Եւ իբրեւ այգ եղեւ, զերկիրն ոչ ճանաչէին. բայց զգող (ծոց) մի նշարէին թէ ամին

ծովուն իցէ, յոր խորհէին, թէ հնար ինչ իցէ, զերծուցանել զնաւն : Եւ զխարիսխն հատեալ ընկեցին ի ծովն, թողացուցին (խող սաւ) զխառնելիս (կաս) թեւոցն (պեկ), եւ ի բաց առին (քնարակ) զառազաստն. եւ ետուն հողմոցն յաին կոյս (դեպ եղբոյք) ծովուն : Անկեալ ի տեղի մե երկծով՝ թիւրեցին զնաւն, եւ առաջին կողմն նաւին խրեալ անշարժ մնայր, եւ յետին կողմն քակէր ի բռննութեմէն : Եւ զօրականացն խորհուրդ արարեալ զի զկապեալն սպանցեն եւ մի ոք լուղիցէ եւ փոխիցէ, հարիւրապետն, քանզի կամեցաւ ապրեցուցանել զՊաւղոս, արգել զնոսա ի խորհրդոյն. հրամայեաց զի որ կարողքն իցեն լուղել՝ անկանիցին նախ եւ ի ցամաք ելանիցեն : Եւ զայլն ասպրեցուսցեն՝ զորս ի տախտակս եւ զլորս յայլ ինչ կահ (քոթեթ) ի նաւէ անտի. եւ այսպէս եղեւ ամենեցուն պրծանել (աղապել) յերկիր :

Եւ ապրեալք՝ յայնժամ գիտացաք թէ Մելիտոնէ էր անուն կղզոյն : Բայց բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ. քանզի լուցին խարոյկ եւ ընկալան զամենեօին զմեզ վասն անձրեւին՝ որ ստիպէր՝ եւ վասն ցրտոյն : Եւ ի ժողովել Պաւղոսի խուլ ինչ բազում եւ դնել ի վերայ խարուկին, իժ մի ի ջերմութեմէն ելեալ կալաւ զձեռանէ նորա : Իբրեւ տեսին բարբարոսքն կախեալ զգազանն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս. ուրեմն սպանող է այրս այս, որ թէպէտեւ ապրեցաւ ի ծովն, իրաւունքն չետուն կեալ : Եւ նորա թօթափեալ զգազանն ի հուրն՝ եղեւ նմա չար եւ ոչ ինչ. եւ նոքա ակն ունէին նմա այտնոյ կամ անկանելոյ եւ յանկարծակի մեռանելոյ : Իբրեւ շատ (քնարակ) ակն կալեալ՝ եւ տեսանէին թէ ոչինչ վնաս եղեւ նմա,

դարձեալ դարձուցեալ զբանսն՝ ասէին թէ աստուած
ունն է : Եւ շուրջ գտեղեաւն զայնուիկ էին գեօղք գլու-
խաւորի կղզւոյն որում անունն էր Պոպղիոս, որ առ զմեզ
յերաշխիս (Գրիգորիոս քնեւ) զերիս աւուրս եւ սիրով ըն-
կալաւ : Եւ եղև Կօրն Պոպղեայ ի ջերմն եւ յախտ թան-
ջից (Կրիստոս երկաւ) հիւանդանալ դնել (Կարգիւ) . առ որ
մտեալ Պաւղոս եւ կացեալ յազօթս՝ եղ զձեռն եւ
բժշկեաց զնա : Եւ իբրեւ այս եղեւ , այլ հիւանդք որ
էին ի կղզւոջն՝ գային եւ բժշկէին . որք եւ բազում պա-
տուովք պատուեցին զմեզ . եւ իբրեւ գնացաք , ետուն
որ ինչ պէտք էին : Եւ յետ երից ամսոց ելաք ի նաւ մի
աղեքսանդրացի որ ձմեռնեալ էր ի կղզւոջն . եւ իջեալ
ի Սիրակուսա , եղաք անդ աւուրս երիս , ուստի գնացեալ
հասաք ի Հռեգիօնիս . եւ յետ աւուր միոյ ի չնչել հարա-
ւոյն՝ երեքօրեայք եկաք ի Պատիօղոս , ուր եւ գտաք
եղբարս . աղաչեցեալք ի նոցանէ լինել աւուրս եօթն՝ եւ
սպա ելաք ի Հռովմ : Եւ անտի լուեալ եղբարք զմէնց՝
եկին ընդ առաջ մեր . զոր տեսեալ Պաւղոսի՝ գոհացաւ
զԱստուծոյ եւ քաջալերեցաւ : Եւ իբրեւ մտաք ի Հռովմ,
հրամայեցաւ Պաւղոսի լինել առանձինն հանդերձ զի-
նուորանն , պահապանաւ իւրով : Եւ եղև յետ երից ա-
ւուրց կոչել նմա զՀրէիցն զլիսաւորս . եւ իբրեւ եկին,
ասէ ցնոսա . Ես , արք եղբարք , ոչ ինչ հակառակ գոր-
ծեալ ժողովրդեանն կամ կրօնիցն հայրենեաց , կապեալ
յերուսաղէմ՝ մատնեցայ ի ձեռս Հռովմացեաց . որք ,
իբրեւ դատեցան զիս , կամեցան արձակել վասն եւ ոչ
մի ինչ մնաս մահու գտանելոյ յիս : Ի հակառակել Հը-
րէիցն՝ հարկ եղև բողոքել ի կայսր , իբր ոչ եթէ զազ-
գէն իմմէ ունէի ինչ չարախօսել : Վասն այսր պատճա-

ռանաց աղաչեցի զձեզ տեսանել եւ խօսել , քանզի վասն
յուսոյն իսրայելի կամ ի շղթայս յայտոսիկ : Եւ նոքա
ասեն ցնա . Մեք ոչ թուղթս ինչ վասն քո ընկալաք ի
Հրէաստանէ , եւ ոչ եկեալ ոք յեղբարք պատմեաց կամ
խօսեցաւ ինչ վասն քո չարութիւն . բայց աղաչեմք ի քէն
լուել թէ զմէն խորհիցիս . զի վասն հերձուածոյդ այդորիկ
յայտ իսկ է մեզ զի ամենայն ուրեք հակառակութիւն կրէ :

Ժամ եղեալ նմա օր մի (օր յը որոշեւ)՝ եկին ի վասնն
(Բնակարան) առ նա բազումք , որոց պատմէր վկայութեամբ
զարքայութիւն Աստուծոյ , եւ հաւանեցուցանէր զնոսա
(ապացուցանել) վասն Յիսուսի յօրինացն եւ ի մարգարէից
յայգուէ մինչեւ ցերեկոյ : Եւ ոմանք հաւանէին բանիցն,
եւ կէսքն չհաւատային , եւ անմխարանք լեալ միմեանց՝
արձակէին (Բեշեւ , երկաւ) : Եւ եղև Պաւղոս զերկեամ
մի (Երկու Գրիգ) բովանդակ իւրով վարձու , եւ ընդունէր
զամենեսեսն որ մտանէին առ նա :



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՅԱԻԵԼՈՒՍԾ Ա.

ՔԵՐԱԿԱՆՈՒՅԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՁԲԱՆՑ ԵՒ ԿԱՆՈՆԱՑ ՎՐԱՑ

Քերականութեան մէջ քերականական սկզբունք կը ստեղծին այն օրէնքները որոց վրայ հաստատուած են լեզուին բոլոր գործնական կանոնները .

Հայերէն լեզուի քերականութիւնն ունի այնպիսի հիմնական օրէնքներ կամ սկզբունքներ որոնք ամեն ազգի քերականութեանց հետ նոյն են . այս հիմնական օրէնքները կամ սկզբունքները կը կոչուին նաեւ քերականական առածք . ունի նաեւ երկրորդական օրէնքներ որոնք հայերէն լեզուին յատուկ՝ եւ որոնք քերականական օրէնք կամ կանոնք կը կոչուին :

Մինչեւ հիմայ բաւական ցուցուեցան քերականական թէ՛ առածներն եւ թէ՛ կանոնները . բայց որպէս զի ուսանողք , իբր հայելի , իրենց առջեւ ունենան դէժ առածներն՝ որոնք միւս կանոնաց հիմն կը նկատուին , արժան համարուած է հոս նշանակել զնոսա :

ԱՌԱԾ Ա. Խօսքի մը մէջ որքան ղիմաւոր բայ՝ այնքան նախադասութիւն կայ :

ՕՐԻՆԱԿ. Այլ իբրեւ եջ ի լեռնէ անտի , փայլն զկնի նորա ժողովուրդք բազումք :

Այս խօսքին մէջ երկու նախադասութիւն կայ , քան զի երկու ղիմաւոր բայ կայ . եջ եւ փայլն :

ԱՌԱԾ Բ. Խօսքի մը մէջ ղտնուած անորոշ եւ անցեալ ղերբայները կրնան ղիմաւոր բայի ղառնալ , եւ այն առտեն միայն կրնան նախադասութիւն կազմել :

ՕՐԻՆԱԿ. Տեսեալ ղժողովուրդան ել ի լեռն : Ի քննել Յիսուսի ի Բեթլեհէմ Հրէաստանի , ահա եկին մոգք յԱրեւելից .

Այս նախադասութեանց առաջնոյն մէջ մէկ անցեալ ղերբայ կայ (տեսեալ) եւ մէկ ալ ղիմաւոր բայ (եւ) , ուստի նախադասութիւնը թէպէտ մէկ է , բայց եթէ տեսեալ անցեալ ղերբայը ղիմաւոր բայի ղառնայ , այն ատեն ղիմաւոր բայն երկու ըլլալով՝ նախադասութիւնն ալ երկու կ'ըլլայ ինչպէս .

Իբրեւ ետս ղժողովուրդան՝ ել ի լեռն :

Երկրորդ նախադասութեան մէջ է քննել անորոշ ղերբայը նոյնպէս ղիմաւոր բայի վերածելով՝ երկու ղիմաւոր բայ՝ ուստի եւ երկու նախադասութիւն կ'ըլլայ . ինչպէս ,

Իբրեւ քնն Յիսուս ի Բեթլեհէմ Հրէաստանի , ահա եկին մոգք յԱրեւելից :

ԱՌԱԾ Գ. Նախադասութեան մը մէջ ղիմաւոր բայէն ղատ յայտնի կամ ղօրութեամբ պէտք է ղտնուի նաեւ Տէր բայի (ենթակայ) մը եւ Ստորոգելի մը :

ՕՐԻՆԱԿ. Մեծ է : Հայր իմ է յանկողնի :

Առաջին նախադասութեան մէջ ենթակայն լռելեայն իմացուած է , որ է ու . Երկրորդին մէջ ալ ստորոգելին , որ է նշեալ , կամ ուրիշ բառ :

ԱՌԱԾ Դ. Դիմաւոր բայի մը ենթակայն ուղղական հօրով կ'ըլլայ եւ բային հետ, գէթ ըստ իմաստին , թուով նաեւ ղէմքով կը համաձայնի :

ՕՐԻՆԱԿ . Զորաժողով լինին արայն Ասորուց եւ Իսրայելացուց :

Նախադասութեան բայը , լինին , յոքնակի է . ենթակայն , արայն , թէպէտ եզակի ճեւղով դրուած է , բայց իմաստը , առածին համաձայն , յոքնակի է . քանզի Ըսեղ կ'ուզուի . արայն Ասորուց եւ արայն Իսրայելացուց , որով փոխանակ միոյ՝ երկու արայն կը լինին :

ԱՌԱՅ Ե . Նախադասութեան մը մէջ ո եւ իցէ բառ՝ ուրիշ բառի մը վերաբերութիւն պիտի ունենայ :

ՕՐԻՆԱԿ . Յորժամ զԱնբերուածէն եւ զնորին մշտնջենաւոր զօրութենէն ճառիցէ ոք , քանզի մարմնաւոր լեալ է , պարտի զմիտան յստակել . . . :

Ասոր՝ ինչպէս նաեւ ուրիշ նախադասութեանց մէջ , ամէն բառեր իրարու վերաբերութիւն ունին :

ԱՌԱՅ Զ . Բառ մը մի եւ նոյն նշանակութիւնը պահելով՝ տեղ մը իբր գոյական եւ ուրիշ տեղ մը իբր ածական չը կրնար գործածուիլ :

ԱՌԱՅ Է . Բառ մը տարբեր առումով կրնայ տեղ մը իբր ածական եւ ուրիշ տեղ մը իբր գոյական գործածուիլ :

ՕՐԻՆԱԿ . Տեսցեն զմեծամեծան Աստուծոյ :
Շինեցին շտեմարանս մեծամեծս .

Աստղին նախադասութեան մէջ , Բեժաթեժա՝ գոյականաբար առնուած ածական է , այսինքն իւր մէջ գոյական մը կը պարունակէ լուրեպայն . զԲեժաթեժա՝ կը նշանակէ խիստ Բեժ սահլեւիմեբը , յայտնուիմեբը .

Իսկ երկրորդին մէջ , Բեժաթեժա՝ կը նշանակէ միայն կարէ . եւ որակական ածական է , քովն ունենալով իւր գոյականը :

ԱՌԱՅ Ը . Բառ մը մի եւ նոյն նախադասութեան մէջ երկու Ման քանի չը կրնար ըլլալ :

ԱՌԱՅ Թ . Գոյական բառի մը եւ իւր ածականին մէջ շաղկապ չը գրուիր :

ՕՐԻՆԱԿ . Զըսուիր . կարմիր եւ գինի . այլ՝ կարմիր գինի :

ԱՌԱՅ Ժ . Ածական մը կամ ուղղական կը մնայ գոյականէն առաջ դրուելով (երբ գոյականն հոլովուած է) , կամ թէ՛ առաջ ու թէ՛ ետքը կրնայ դրուիլ համաձայնելով գոյականին հետ թուով ու հոլովով :

ՕՐԻՆԱԿ . Մեծամեծ տունք , մեծամեծ տանց , եւայլն կամ մեծամեծ տունք , մեծամեծաց տանց , եւայլն կամ տունք մեծամեծք , տանց մեծամեծաց եւայլն : Բայց չըսուիր . տունք մեծամեծ , տանց մեծամեծ , եւայլն :

ԱՌԱՅ ԺԱ . Բացայայտեալ եւ բացայայտիչ բառեր՝ միշտ հոլովով ու թուով , գէթ ըստ իմաստին , իրարու համաձայն կը դրուին :

ՕՐԻՆԱԿ . Ետ զկղեւարարս , զբոսարար իւր , ի կնութիւն :
Շրջէր զԲեժաթեժա իւրով , զբոսարար իւրայելի :

ԱՌԱՅ ԺԲ . յատկացուցիչ բառը միշտ սեռական հոլով կը դրուի :

ՕՐԻՆԱԿ . Արարածք Աստուծոյ . ըյտ Արեւո . տուն Յուժեայ :

ԱՌԱՅ ԺԳ . Յարաբերող ու յարաբերեալ թէ՛ թուով եւ թէ՛ գէմբով իրարու համաձայն կը դրուին :

ՕՐԻՆԱԿ . Երանի այնոցիկ , որոց ոչ իցէ տեսեալ եւ հատասցեն : Տուր այնձ , որ խնդրէ ի քէն .

ԱՌԱԾ ԺԳ. Յարաբերական ղերանունը, սեռ կամ տեսակ ցուցնող անուններ, եւ անորոշ մաս մը ցուցնող անուններ գիմորոշ յօղ չեն առնուր :

ԱՌԱԾ ԺԵ. Ածական բառ մը, երբ գոյականաբար առնուած է, կրնայ խնդիր, ենթակայ, յատկացուցիչ եւայլն ըլլալ. իսկ երբ իւր գոյականը քովն ունի, բնաւ պայպիսի պաշտօն չըկատարեր. միայն ուղղականէն զատ ուրիշ հոլով խնդիր կրնայ առնուր :

ՕՐԻՆԱԿ. Ներէ տէր յանցանաց անգրինն: Փրկեա՛ զմեզ ի շարեն: Անգրա՛ս անգոսնեն զխրատ:

Բազում արբ է յենջ եկին առ մեզ: Եղեն նոքա ծառայք անպիտանք արեան իւրեանց:

ԱՌԱԾ ԺԶ. Ամեն ներգործական բայ յայտնի կամ լռելեայն սեռի խնդիր մը կունենայ՝ որ հայցական հոլով կը դրուի :

ՕՐԻՆԱԿ. Հերովդէս առաքեաց գլխատեաց ի բանտի զՅովհաննէս:

Առաջին բային, առաւելաց, սեռի խնդիրը լռելեայն իմացուած է, որ է՝ արեան:

ԱՌԱԾ ԺԷ. Ներգործական չեղող բայեր սեռի խնդիր չեն չեն ունենար :

ԱՌԱԾ ԺԸ. Դերանունները բացայայտիչէ զատ բնաւ խնդիր կամ ածական չունենար :

ԱՌԱԾ ԺԹ. Նախադրութիւն մը յայտնի կամ զօրութեամբ խնդիր մը ունենալու է. ապա թէ ոչ կատարեալ իմաստ չտար :

ՕՐԻՆԱԿ. Առաջի եղին զխնդրուածս իւրեանց. Առաջի նախադրութեան խնդիրը, որ է նորս կամ նոցա, լռելեայն իմացուած է:

ԱՌԱԾ Ի. Շաղկապները բնաւ խնդիր կամ ածական կամ ուրիշ ո եւ է լրացուցիչ չեն ունենար :

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ.



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ ԲԱՌԻՑ ՎՐԱՅ

Հայերէն լեզուի մէջ, բառերն երեք վիճակ կ'ունենան. արձապ, ածանցեալ, բարբեալ:

Բառ մը արմատ է, երբ սկիզբը կամ վերջը գիր կամ վանկ աւելցուած է. ինչպէս. գեղ, կին, սէր, շունչ, ուղ, տիղմ, եւայլն:

ԱԾԱՆՅԵԱԼ ԲԱՌԵՐ

Ածանց կ'ըսուի այն գիրը կամ վանկը, որ ինքնիրեն նշանակութիւն չ'ունի, բայց արմատ բառի մը վրայ դըրուելով անոր նշանակութիւնը կը փոխէ. այս գիրերը կամ վանկերը ծանօնի կ'ըսուին: Ինչպէս. քգեղ, անկին, սիրող, անշունչ, սպուշ, ժողովուրդ, տղմոսք եւայլն:

Այս բառերն ածանցեալ են:

Մասնիկներէն ոմանք բառին սկիզբը կը դըրուին ոմանք վերջը:

Բառին սկիզբը դըրուող ածանցական գլխաւոր մասնիկներն են. ք. շ. ան. սպ. դժ. որոնք արմատ բառին առջեւ դըրուելով անոր նշանակութիւնը կը ժխտեն. քգէտ. շգէտ. անգէտ. սպերախտ. դժբախտ:

Բառին վերջը դըրուող դըրծածական մասնիկներն են.

Այլն. ակն. արք կամ արք. եղն. արք. ող. ան. արք. արք.

արք. էայ. էան. ան. է. էնէ կամ անէ. էլ. արք. ող կամ անող. ոյլն. քոյն. էլ. էլէ. էլ. էակ. արք. արք եւայլն, եւայլն:

Հայերէն լեզուն ածանցներու մեծ հարստութիւն ունի. բայց անոնց՝ բառերու վրայ ըրած նշանակական ազդեցութիւնն աղէկ ըմբռնելու համար՝ վութիւնն եւ մտադիր վարժութիւնն պէտք է. ահաւաստիկ ածանցաւոր բառերու խել մը օրինակներ:

Ա. Արտադրութիւն ցուցնող մասնիկներ

ան. արք. — Արարան. այրեցան. հիւստանան. զանգուանան. ան. արք. — Զուլան. կոմեան. հիւստանան:

Բ. Առատութիւն կամ յաճախութիւն ցուցնող մասնիկներ:

արք. — Խորխորարք. հրարք:

գին. արք. — Ցաւագին. տրամագին. եռանդագին. ուժագին:

եղ. էղ. — Ուժեղ. հանճարեղ. աղաւթ:

ան. արք. — Երկարան. արտաքան. ներքան:

ակ. էլ. — Սիրելի. անձկակ. տեղակ. ընդունելի:

կն. կո. — Հիւսկն. ծախակն. հոժկո:

էճան. ճան. — Գեղեճան. խրախճան:

արք. արք. — Ծախարք. տղմարք. թաւարք. աղաւթ:

ան. — Յեղեղան. աղաւթան.

ան. արք. — Պաղաւթ. երջանկաւթ:

Գ. (Բան մը) ընկըու ընդունակութիւն ցուցնող մասնիկներ:

ան. — Ողորման. դժան:

ակ. էակ. — Կարուակ. ուղղակ:

ան. — Իշխան. խիտան:

է. — Գործի. աղօրի :
 էճ. էլ. — Պատէճ. ուտէճ. երգէլ. կաքաւէլ :
 էկ. — Մարտիկ. երգեցիկ :
 էկն. ախն. — Վաճառական. օգնական. գուժական :
 ակեր. սպակ. — Համոզակեր. խոհակեր. փակազակ :
 որբ. ոց. — Սարտոց. կշտորբ. սղոց :
 սուլ. սաս. — Պարզուս. տեսուլ. ընկալուլ :
 սրան. սասր. — Նուագարան. ժառանգասոր. աղաչասոր :
 Ծանօթ. Այս մասնիկները ոչ մասնական գորութիւնն
 ունին.

Դ. Թուոյ վերաբերութիւն ցուցնող մասնիկներ :
 ակ. եակ. երեակ. — Միակ. երկեակ. քառեակ. եօթներեակ :
 ան. ին. եր. — Վեշտասան. չորեքտասան. առաջին. վեր-
 ջին. երէր. չորեր :
 ական. կէ. կէն. — Յոքնական. նախիկ. չորեքիկն :
 որբ. բորբ կամ երորբ. — Քառորբ. երկրորբ. հինգերորբ :
 պարիկ. եփին կամ եփեան. — Երկպարիկ. տասնպարիկ :
 տասնեփին. տասնեփեան :

Ե. Ազգի, տեղւոյ, դաւանութեան, ազանդի, գերդաս-
 տանի, պաշտօնի եւայլն վերաբերութիւն ցուցնող
 մասնիկներ :
 ական. — Մահմետական. պարսկական. վանական. պիւ-
 թագորական. հանրավարական. թագաւորական :
 եան. — Հայկեան. պիւթագորեան. մամիկոնեան. պօղոս-
 եան .
 եայտ. այտ. — Միջերկրեայտ. Հայաստանեայտ. պիւթա-
 գորայտ :
 անսլ կամ անուլ. — Սմբատանսլ. կոստովանուլ :

եայ. — Քրիստոնեայ. հայկազնեայ. թուռեայ :
 է. — Բեռէ. հանէ :
 էկ. — Հնդէկ. պարսէկ :
 ու. — Հօրու. մօրու :
 ունի. — Թագուանի. վարդուանի :
 ունի. — Արշակունի. արծրունի :
 եցի. սցի. — Փարիսեցի. վանեցի. անտիոքացի. պօլսեցի :

Զ. Նուագեցուցիչ կամ պակասեցուցիչ մասնիկներ .
 ակ. եակ. — Որդեակ. նաւակ. լեռնակ :
 էկ. ոյ. ուլ. — Գառնիկ. գառնուկ. դրբոյկ :
 է. — Այրի :
 սար. — Ձեռնաս. գլխաս :

Է. Բառին խմաստը նոյնը պահող մասնիկներ .
 ակ. ակն. — Տեսակ. խառնակ. դիակն :
 այն. ան. — Ամենայն. կուսան. պատուիրան :
 սր. դի. լսար. — Տիպար. անջրդէ. վատխար :
 է. էլ. — Կենդանի. նմանի. տեսիլ. կաթիլ :
 էկ. ական. եփ. — Տոհմիկ. չուսուական. վաղեփի :
 սփ. ոյ. սր. սրի. — Նորոփ. երեկոյ. ստորոփ. օտարոփ .
 հնորի :

որբ. ոան. ոանի. — Կցորբ. աւելորբ. ցածուան. ծերունի :
 սանլ. — Անտէրունլ :
 սասրան. սրակ. — Դատասրան. գումարակ :
 էն. սփեայ. — Սորէն. դիւրէն. դուզնատեայ :

Ը. Ստացումն (ունենալ) ցուցնող մասնիկներ .
 ակ. ան. սր. — Դիմակ. պարարակ. արժան. տիպար. խմով
 սան. արդար. մոլար :
 եայ. — Բաղմաջեայ. հասակեայ. միօրեայ :

էան. — Գունէան. քառաթեւէան :
 էճ. — Սոհէճ. համէճ :
 էն. — Նկարէն. ծուէն :
 է. — Մտացի. ծարաւի. եռոտանի :
 էն. էճ. — Բաժէն. լուսէն. ուշէճ :
 էան. ճոյն. — Բանական. բարեճոյն. հօրաճոյն :
 նակ. իրտորնակ. յաղթանակ :
 նի. շի. — Լեզուանի. բոլորի :
 ող. — Սանձող. ձախող :
 ոյի. — Սարոյի. պարոյի :
 որ. — Բեկոր. հատոր :
 իճ. — Ոխերիճ. մտերիճ :
 ատոր. — Լուսատոր. թեւատոր. ոտանատոր :
 օր. ծն. Կարօր. կարճառօր. կտրծն. զգծն :
 օլի. — Մանօլի :

Թ. վերաբերութիւն ցուցնող մասնիկներ.
 այ. ային. — Կամայ. ախամայ. մարդկային. Աստուածային :
 էայ. — Միաջէայ. միօրէայ. առհասարաջէայ :
 էղէն. — Ոսկեղէն. արծաթեղէն :
 ի. — Կանացի. առնի. երկաթի :
 ի՛. — Բնի՛. գոեհի՛ :
 էն. — Սաւարէն. լւէն. երեկոյէն :
 ահան. — Մարմնական. շինական. ցանկական :
 էնի. — Հայրէնի. մայրէնի :
 նի. — Մատանի. յայտնի :
 էնի. — Սողէնի. դայլէնի. նունէնի. տանձէնի (1) :

(1) Պտղոյ անուններու վրայ դրուած եւ ի մասնիկով նոյն պտուղներն յառաջ բերող ծառերը կ'իմացուին. ինչպէս. նուննի, տանձե-

Ժ. Տեղական (տեղւոյ պարագայ ցուցնող) մասնիկներ.
 ալ. ան. — Դիտակ. տապակ. իջեւան. օթեւան. դարան :
 էան. Պատէան. կայէան :
 անոց կամ նոց. — Վաճառանոց. ձմերոց. մատնոց. հոլմանոց. հիւանդանոց :
 ասոր. ասրոր. — Աւազասոր. շամբասոր. ժողովարոր. կայարոր :
 պն կամ սպն. — Դունապն. բազպն. սոնապն. պարաիզպն :
 արան. — Հարսարան. վարժարան. դործարան :
 ասրան. — Մասասրան, հայասրան. վրասրան :

ԺԱ. վերացական կամ բայածական մասնիկներ՝ որոնք բառին վրայ դրուելով վերացեալ ֆաղաբար միայն կը յայտնեն եւ իբր քայի արձար կը դործածուին :
 աժ. — Կոտորաժ. կատարաժ :
 ասոր. — Ուրասոր. իմասոր :
 ասոր. իսոր. — Գալասոր. մախասոր. հանգիսոր :
 էան. — Լալէան. գոջէան. հնչէան :
 ասն. թխասոսն. կուչոսն. հնչոսն :
 ասրոր. — Յազասրոր. արծախորոր :
 ծն. — Պաշտծն. կրծն :
 ոյլի. — Երեւոյլի. ձանձրոյլի :
 ուլիէան. — Նեղուլիէան. ցանկուլիէան :
 Հայերէն լեզուն ունի ասոնցմէ զատ, նաեւ բազում մասնիկներ՝ որոց ուսմանը համար մտադիր եւ երկար վարժութիւն պէտք է :

նի, կը նշանակեն, նռան, սանձի ծառ. իսկ կենդանեաց անուններու վրայ դրուած են ի մասնիկն անոնց մօրթը կը ցուցնէ. խոզնի, գայլենի՝ խոզի, գայլի մօրթ բնի է :

ԳԻՏԵԼԻՔ Ա. Շատ բառեր կան որ առանց մասնիկի չ'են գործածուիր . ինչպէս . չ'ըսուիր պաշտ . յանձր . այլ պաշտօն ճանճրոյթ :

Բ. Կան բառեր ալ , որք արմատ եղած ատեն տարբեր նշանակութիւն կ'ունենան . սակայն հետախոյզ ջանքով կրնայ հասկցուիլ որ արմատ եւ նոյն արմատէն ածանցեալ բառից մէջ ներքին կողմը , ժրջա-որո-թիւն մը , կայ . ինչպէս . կրծն (կրօնք) . արմատ կեր (կիրք) :

Ուրաստ . Արմատ՝ որ :
Դիտակ . Արմատ դէպ . եւայլն :

Գ. Բառերն երբեմն , փոխանակ մէկի , երկու կամ աւելի մասնիկներ կրնան ունենալ . ինչպէս .

Նոր . նորագ . նորագոթիւն :
Հաստ . հաստոպ . անհաստոպ . հաստոպող , հաստոպողական :

Դ. Հայերէնի մէջ հ . շ . ք . շ . գրերն արմատ բառի մը սկիզբը դրուելով նշանակութեան սաստկութիւն կուտան . ինչպէս . այր՝ հայր . արդ՝ զարդ . ահ՝ վահ . արի՝ քարի . եւայլն .

Նաեւ ք . շ գրերն արմատ բառին սկիզբը դրուելով ժխտական նշանակութիւն կուտան . ինչպէս .
Գէտ՝ րդէտ . գեղ՝ րդեղ . մարդ՝ րմարդի .
Գէտ՝ շըգէտ . ագգ՝ շարգ . եւայլն :

ԲԱՐԴԵԱԼ ԲԱՌԵՐ

Բառ մը բարդեալ է , երբ երկու կամ աւելի արմատ բառերու միմեանց հետ միանալովը կազմուած է . ինչպէս .

Զօր—գլուխ . զօրագլուխ
Վարժ—պետ—սէր . վարժապետասէր :

ԳԻՏԵԼԻՔ Ա. Բարդ բառերն իրարու հետ կը միանան սովորաբար = կամ է կամ է գրով եւ կամ առանց շաղկապող գրի . ինչպէս . հնարագէտ . զօրագլուխ . բարեջան . ասղնեգործ . քնշած . ումպէտ . ռոնդուայ : Երբեմն աւել , շաղկապներով ալ բարդութիւն կ'ըլլայ . ինչպէս . տանատէր . աղահացք . այրածի , հարցափորձ կամ հարցափորձ . ցանկցիր . եւայլն :

Բ. Բարդութեանց , ինչպէս նաեւ ածանցմանց , մէջ նախադաս բառը կրնայ ուղղական , սեռական , եւայլն հոլովներով դրուիլ . սակայն ընդհանրապէս թէ՛ բարդութիւնք եւ թէ՛ ածանցմունք սեռական հոլովներէ կը շինուին . պէտք է միայն սեռականին վերջաւորութիւնը բառնալ . ինչպէս .

Գիր . գրոյ . գրաոր :
Գիր . գրոյ . գրասէր :



Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ Ք

Իբրեւ ծերացաւ Իսահակ, եւ վատեցին (տկարանալ) աչք նորա ի տեսանելոյ, կոչեաց զԵսաւ զորդի իւր զեւրէց, եւ ասէ ցնա. որդեակ իմ. եւ նա ասէ ցնա. ահաւասիկ ե՞մ ես. Եւ նա ասէ ցնա. ահաւասիկ ես ծերացեալ եմ եւ ոչ գիտեմ զօր վախճանի իմոյ. առ դու զգործի քո, զաղեղն, զկապարձս, եւ ել ի դաշտ, եւ որսա ինձ որս, եւ արա ինձ խորտիկս՝ որպէս եւ ես սիրեմ. բեր մատո՞ ինձ՝ զի ես կերայց, եւ օրհնեսցէ զքեզ անձն իմ մինչչեւ մեռեալ իցեմ:

Եւ լուաւ Ռեբեկա զի խօսէր Իսահակ ընդ որդւոյ իւրում Եսաւայ: Գնաց Եսաւ ի դաշտ որսալ որս հօր իւրում: Եւ խօսեցաւ Ռեբեկա ընդ Յակոբայ չրաբէր որդւոյ իւրում եւ ասէ. ահա լուայ ես ի հօրէ քումմէ զի խօսէր ընդ եղբօր քում եւ ասէր. բեր ինձ որս եւ արա ինձ խորտիկս զի օրհնեսցից զքեզ առաջի Տեառն՝ մինչչեւ մեռեալ իցեմ. եւ արդ, որդեակ իմ, լուր ինձ որպէս ես պատուիրեմ քեզ. զնա դու ի դաշտ եւ առ ինձ անտի երկուս ուլս փափուկս եւ ընտիրս. եւ արարից զնոսա խորտիկս հօր քում որպէս եւ սիրէ. եւ մատուցես հօր քում եւ կերիցէ, եւ օրհնեսցէ զքեզ հայր քո մինչչեւ մեռեալ իցէ. եւ ասէ Յակոբ ցՌեբեկա, ցմայր իւր. եղբայր իմ, Եսաւ, այր թաւ է եւ ես լերկ. գուցէ շօշափիցէ զիս հայր իմ եւ լինիցիմ առաջի նորա իբրեւ արհամարհոտ, եւ ածիցեմ ի վերայ իմ անէծս եւ ոչ օրհնուիմ իւն. եւ ասէ ցնա մայր իւր, յիմ վերայ անէծք՝ այնոքի, որդեակ, բայց միայն լուր (անսալ) ձայնի (պատուէր) իմում եւ երթ ած ինձ:

Գնաց Յակոբ եւ ած մօր իւրում զաւան եւ ծայրն արար խորտիկս որպէս եւ սիրէր հայր նորա. եւ առեալ Ռեբեկայ զագնիւ պատմուճան որդւոյ իւրոյ երիցու, որ կայր առ նմա ի տան, զգեցոյց Յակոբայ որդւոյ իւրում կրտսերայ, եւ զուլենիսն աղոյց ի բաղուկս նորա եւ ի վերայ մերկոյ պարանոցի նորա. Եւ ետ զխորտիկն եւ զհացն, զոր արար, ի ձեռս Յակոբայ որդւոյ իւրոյ. եւ Յակոբ տարաւ հօր իւրում եւ ասէ. հայր իմ, եւ նա ասէ աւասիկ եմ եւ ասէ. ո՞վ ես դու, որդեակ, եւ ասէ Յակոբ ցհայրն. Ես եմ Եսաւ, անդրանիկն քո: արարի որպէս եւ խօսեցար ընդ իս, արի նիստ եւ կեր յորոտ իմմէ զի օրհնեսցէ զիս անձն քո. եւ ասէ Իսահակ ցորդիս իւր. զի է զի վաղվաղակի գտեր, որդեակ, եւ նա ասէ. որպէս սպտրաստեաց Տէր Աստուած առաջի իմ, եւ ասէ Իսահակ ցՅակոբ. մօտ եկ եւ շօշափեսցից զքեզ, որդեակ, եթէ դո՞ւ իցես որդի իմ Եսաւ թէ ոչ. մատեաւ Յակոբ առ Իսահակ հայր իւր եւ Իսահակ շօշափեաց զնա եւ ասէ. ձայնդ ձայն Յակոբայ է եւ ձեռքդ ձեռք Եսաւայ. եւ ոչ ծանեաւ զնա զի էին ձեռք նորա իբրեւ զձեռս Եսաւայ եղբօր իւրոյ՝ թաւ: Եւ Իսահակ օրհնեաց զնա (զՅակոբ) եւ ասէ. դո՞ւ ես որդի իմ Եսաւ. եւ նա ասէ. Ես եմ. եւ Իսահակ ասէ. մատ ինձ եւ կերայց յորոտ քումմէ, որդեակ, զի օրհնեսցէ զքեզ անձն իմ. եւ Յակոբ առ մատոյց նմա եւ նա կերաւ եւ Յակոբ երեր նմա գինի եւ նա արբ: Եւ ասէ ցնա Իսահակ հայր իւր. մօտ եկ եւ համբուրեա զիս, որդեակ. եւ Յակոբ մատեաւ համբուրեաց զնա. եւ Իսահակ առ զհոտ հանդերձից նորա եւ օրհնեաց զնա եւ ասէ. ահա հոտ որդւոյ իմոյ իբրեւ զհոտ անդոյ լիոյ՝ զոր օրհնեաց Տէր: Եւ տացէ քեզ

Տէր աստուած ի ցօղոյ երկնից եւ ի սարարտութենէ երկրի եւ բազմութիւն ցորենոց եւ գինւոյ , եւ ծառայեսցեն քեզ ազգք , եւ երկիր պազցեն քեզ իշխանք , եւ եղիցիս տէր եղբօր քում , եւ երկիր պազցեն քեզ որդիք հօր քոյ . որ անխնայիցէ զքեզ՝ անխնայ լիցի , եւ որ օրհնեսցէ զքեզ՝ օրհնեալ :

Եւ եղև յեա դադարելոյն յօրհնելոյ անտի զՅակօբ զորդի իւր , իբրեւ ել Յակօբ յերեսաց իսահակայ հօր իւրոյ , եկն Եսաւ եղբայր նորա յորսոյ . արար եւ նա խորտիկս եւ մատոյց հօր իւրում , եւ ասէ ցհայր իւր . յարկցէ հայր իմ եւ կերիցէ յորսոյ որդւոյ իւրոյ՝ զի օրհնեսցէ զիս անձն քո : Եւ ասէ ցնա իսահակ հայր իւր . ո՞վ ես դու . եւ նա ասէ . ես եմ որդին քո անդրանիկ , Եսաւ : Եւ զարմացաւ իսահակ զարմացումն յոյժ մեծ (փոխանակ զործիականի) , եւ ասէ . իսկ այն ո՞վ էր որ որսացաւ ինձ որս երբեր մատոյց եւ կերայ յամենայնէ մինչչեւ եկեալ էր . եւ օրհնեցի զնա . եւ եղիցի օրհնեալ :

Եւ եղև իբրեւ լուաւ Եսաւ զբանսն Սահակայ հօր իւրոյ , ազաղակեաց ի ձայն մեծ , դառնացեալ յոյժ , եւ ասէ ցհայր իւր . օրհնեա արդ եւ զիս , հայր : Եւ նա ասէ . եկն եղբայր քո նենգութեամբ եւ առ զօրհնութիւնս քո . եւ նա ասէ . յիրաւի կոչեցաւ նա Յակօբ , զի այս երկիցս խաբեաց զիս . առ զանդրանկութիւնն իմ , եւ արդ առ զօրհնութիւնս իմ . եւ ասէ Եսաւ ցհայր իւր . եւ ո՞չ մի ինչ օրհնութիւն թողեր ինձ , հայր : Պատասխանի ետ իսահակ եւ ասէ ցԵսաւ . որովհետեւ տէր արարի զնա քեզ , եւ զամենայն եղբարս քո արարի նմա ծառայս , ցորենով եւ գինւով հաստատեցի զնա , քեզ զինչ

արարից , որդեակ : Ասէ Եսաւ ցհայր իւր . միթէ մի՞ օրհնութիւն իցէ քո , հայր , օրհնեա եւ զիս , հայր : եւ իբրեւ ատրջացաւ իսահակ , ամբարձ զձայն իւր Եսաւ եւ ելաց : Պատասխանի ետ իսահակ հայր նորա եւ ասէ , ահա ի սարարտութենէ երկրի եղիցի բնակութիւն քո , եւ ի ցօղոյ երկնից ի վերուստ . եւ սրով քով կեցցես եւ եղբօր քում ծառայեսցես : Եւ եղիցի յորժամ քակեսցես եւ լուծցես զլուծ նորա ի սարանոցէ քումնէ :

Եւ պահեր Եսաւ յիս Յակօբայ վասն օրհնութեանցն զոր (որով) օրհնեաց զնա հայր իւր . եւ ասէ Եսաւ ի մտի իւրում . Մերձեցին աւուրք կարեաց հօր իմոյ զի սպանից զՅակօբ զեղբայր իմ . Ազդ եղև Ռեբեկայ բանն Եսաւայ որդւոյ իւրոյ երիցու . յլեաց կոչեաց զՅակօբ զորդի իւր զիրտսեր եւ ասէ ցնա . ահա Եսաւ եղբայր քո սպառնայ սպանանել զքեզ . արդ լուր , որդեակ , ձայնի իմում . եւ արի զնա ի միջագետս առ Լաբան եղբայր իմ ի կառան , եւ բնակեսցես ընդ նմա աւուրս բազումս , մինչեւ անցցէ սրմտութիւն բարկութեան եզբօր քոյ ի քէն . եւ մոռացի զոր ինչ արարեր նմա , ապա առաքեցից կոչեցից զքեզ անտի . դուցէ անգաւակիցիմ յերկոցունց ի ձէնջ ի միում աւուր :

Եւ ասէ Ռեբեկա ցիսահակ . ճանճրացեալ է անձն իմ ի դատերաց որդւոց Բետայ . եթէ առնուցու Յակօբ կին ի դատերաց անտի Բետայ ի դատերաց երկրիս այտորիկ , ընդէ՞ր իցէ ինձ կեալ :

ԵՄԵՂՈՅ ԳԼ . ԻԷ

Կոչեաց առ ինքն իսահակ զՅակօբ . օրհնեաց զնա , եւ պատուիրեաց նմա եւ ասէ . մի առնուցուս կին ի դատե-

բաց աստի Քանանացւոց . Այլ արի դնա ի միջագետս Ասորւոց , ի տուն Բաթուէլի՝ հօր մօր քոյ , եւ առ անտի քեզ կին ի դստերաց Լարանու՝ եղբօր մօր քոյ : Եւ Աստուած իմ օրհնեացէ զքեզ եւ աճեցուցէ զքեզ եւ բազմացուցէ զքեզ եւ եղիցիս ի ժողովս ազգաց . եւ տացէ քեզ զօրհնութիւնն Աբրահամու հօր իմոյ , քեզ՝ եւ զաւակի քում յետ քո , ժառանգել քեզ զերկիր պանդըխտութեան քոյ զոր ետ Աստուած՝ Աբրահամու : Եւ արձակեաց իսահակ զՅակոբ , եւ Յակոբ՝ դնաց ի Միջագետս Ասորւոց առ Լարան որդի Բաթուէլի Ասորւոյ , որ եր եղբայր Ռեբեկայ մօր Յակոբայ եւ Եսաւայ :

Եւ իբրեւ ետես Եսաւ եթէ օրհնեաց իսահակ զՅակոբ եւ աս դնաց ի Միջագետս Ասորւոց առնուլ իւր անտի կին , եւ յօրհնելն դնա պատուիրեաց եւ ասէ , մի առնուցուս քեզ կին ի դստերաց աստի Քանանացւոց , եւ ունկնդիր եղիւ Յակոբ հօր եւ մօր իւրում , եւ ետես Եսաւ թէ չար թուին դստերք Քանանացւոց առաջի իսահակայ հօր իւրոյ , դնաց Եսաւ առ իսմայէլ եւ առ զՄալայէթ զգուտար իսմայելի որդւոյ Աբրահամու , զքոյր Նարէութայ ի վերայ այլոց կանանց՝ իւր ի կնութիւն .

Եւ ել Յակոբ ի ջրհորոյ անտի երդման եւ դնաց ի Խաւան , եւ հասեալ ի տեղի մի՝ ննջեաց անդ , քանզի Արեւն ի մուտս էր . եւ առ ի քարանց տեղոյն եւ եղ ընդ սնարիւք իւրովք եւ ննջեաց ի տեղւոյն յայնմիկ . Եւ ետես տեսիլ եւ ահա սանդուղք հաստատեալ յերկրի որոյ գլուխն հասանէր մինչեւ յերկինս եւ հրեշտակք Աստուծոյ ելանէին եւ իջանէին ընդ նա , տէր հաստատեալ կայր ի նմա . Եւ ասէ փրց՝ Ես եմ եւ տէր Աստուած Աբրահամու հօր քոյ եւ Աստուած Սահակայ .

մի երկնչիր , զի զերկիրդ՝ յորում դու ննջեցեր՝ քեզ տաց զդա (աւելորդ է) եւ զաւակի (սերունդ , ցեղ) քում . եւ եղիցի զաւակ քո իբրեւ զաւազ երկրի եւ ընդարձակեսցի ի ծովակողմն եւ ընդ արեւելս եւ ընդ հիւսիս եւ ընդ հարաւ եւ օրհնեսցին ի քեզ ամենայն ազգք երկրի եւ ի զաւակի քում : Եւ ես ահաւասիկ ընդ քեզ եմ , պահել զքեզ յամենայն ճանապարհս քո յոր վայր եւ գնասցես . Եւ զարձուցից զքեզ յերկիրս յայս . զի ոչ թողից զքեզ՝ մինչեւ արարից զամենայն ինչ զոր խօսեցայ ընդ քեզ :

Եւ զարթեաւ Յակոբ ի քնոյ անտի իւրմէ եւ ասէ . տէր է ի տեղւոյս յայմիկ եւ ես ոչ գիտէի . զահի հարաւ եւ ասէ . ահեղ իմն է տեղիս այս եւ ոչ է սա՛ եթէ ոչ տուն Աստուծոյ , եւ այս է դուռն երկնից . Եւ յարեաւ Յակոբ ընդ առաւօտն , եւ առ զվէմն զոր եղ ընդ սնարիւք իւրովք , եւ կանգնեաց դնա արձան եւ արկ իւղ ի գլուխ նորա . եւ կոչեաց Յակոբ զանուն տեղոյն այնորիկ՝ տուն Աստուծոյ . եւ յառաջ անուն էր քաղաքին այնորիկ՝ Ուլմաուս . Եւ ուխտեաց Յակոբ ուխտ եւ ասէ . եթէ եղիցի տէր Աստուած ընդ իս եւ ապրեցուցէ զիս ի ճանապարհիս յայմիկ զոր ես երթամ , եւ տացէ ինձ հաց ուտելոյ եւ հանդերձ զգեւելոյ , եւ զարձուցէ զիս ողջութեամբ ի տուն հօր իմոյ , եւ եղիցի ինձ տէր յԱստուած , եւ վէմն զոր կանգնեցի արձան , եղիցի ինձ տուն Աստուծոյ . եւ յամենայն զոր տացես ինձ տաց քեզ տասանորդս : ԵՆՆՈՒՅՑ . ԳԼ . ԻԸ .

Յամին ութ եւ տասներորդի Նաբուգոդոսորայ արքայի , արար պատկեր ոսկի . բարձրութիւն նորա վաթսուն կանգուն , եւ լայնութիւն նորա կանգուն վեց , եւ

կանգնեաց զնա ի դաշտին Դեհէրայ յաշխարհին Բաբիլաացոց : Եւ արձակեաց ժողովել զգորավարս եւ զգորադրուխս եւ զգործակալս եւ զամենայն իշխանս աշխարհաց, դալ ի նաւակատիս (տօնախմբութիւն) պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր : Եւ ժողովեցան հուսակալք, զօրավարք եւ զօրադրուխք, պետք եւ բռնաւորք, մեծամեծք եւ գործակալք եւ ամենայն իշխանք աշխարհաց դալ ի նաւակատիս պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր՝ եւ կային առաջի պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր : Եւ քարոզ կարգայր զօրութեամբ եւ ասէր, Չեզ ասի, ազգ եւ աղինք եւ լեզուք, յորժամ լիցցէք զձայն փողոյ՝ սրնդի՝ թմբկի եւ քնարի եւ տաւղի եւ զերգոց միաբանութեան եւ զամենայն ազգաց արուեստականաց, անկանիջիք եւ երկիր պազանիջիք պատկերին, զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր : Եւ որ ոչ անկեալ երկիր պազանիցի, ի նմին ժամու անկանիցի ի հնոց հրոյն բորբոքելոյ : Եւ եղեւ իբրեւ լուան ազգքն զձայն փողոյն զսրնդին զտաւղի եւ զնուագարանաց եւ զամենայն ազգաց արուեստականաց, անկանէին ամենայն ազգքն եւ աղինք եւ լեզուք եւ երկիրպազանէին պատկերին ոսկւոյ՝ զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր :

Յայնժամ մատեան արք Բաղդէացիք եւ եղևն չարախօս զՀրէից առ Նաբուգոդոնոսոր . եւ ասեն . Արքայ, յաւիտեան կաց, դու հրաման ետուր ամենայն մարդոյ, որ լիցցէ զձայն փողոյ զսրնդի եւ զքնարի եւ զտաւղի եւ նուագարանաց եւ զամենայն ազգաց արուեստականաց, եւ որ ոչն անկեալ երկիր պազանիցէ պատկերին ոսկւոյ՝ անկցի ի հնոց հրոյն բորբոքելոյ :

Արդ եւն աստ արք Հրեայք, զորս կացուցեր ի վերայ գործոց աշխարհիս Բաբելացոց, Սեդրաք, Միսաք եւ Աբեղնագով, որ ոչ հնազանդեցան հրամանի քում, արքայ, եւ զգլխս քո ոչ պաշտեն եւ պատկերիդ ոսկւոյ՝ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պազանեն : Յայնժամ Նաբուգոդոնոսոր սրամտութեամբ եւ բարկութեամբ հրամայեաց անել զՍեդրաք զՄիսաք եւ զԱբեղնագով, եւ անին առաջի թագաւորին : Պատասխանի ետ Նաբուգոդոնոսոր եւ ասէ ցնոսա . թէ արդարեւ, Սեդրաք, Միսաք եւ Աբեղնագով, զգլխս իմ ոչ պաշտիցէք եւ պատկերին ոսկւոյ՝ զոր կանգնեցի՝ երկիր ոչ պազանիցէք : Բայց արդ եթէ պատրաստ լինիցիք, զի յորժամ լիցցէք զձայն փողոյ սրնդի թմբկի եւ քնարի եւ զմիաբանութիւն ամենայն ազգաց արուեստականաց, անկանիցիք եւ երկիր պազանիցէք պատկերին՝ զոր արարի . ապա թէ ոչ պազանիցէք երկիր, ի նմին ժամու անկանիցիք ի հնոց հրոյն բորբոքելոյ . եւ ո՞վ է Աստուած՝ որ վրկէ զձեզ ի ձեռաց իմոց : Պատասխանի ետուն Սեդրաք, Միսաք եւ Աբեղնագով, եւ ասեն ցարքայ Նաբուգոդոնոսոր : Ոչ ինչ է պիտոյ վասն բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի . զի է մեր Աստուած յերկինս, զոր մեքն պաշտեմք, կարող է փրկել զմեզ ի հնոց հրոյն բորբոքելոյ՝ եւ ի ձեռաց քոց, արքայ, ապրեցուցանել զմեզ . ապա թէ ոչ այս ինչ յայտնի լիցի քեզ, արքայ, զգլխս քո մեք ոչ պաշտեմք, եւ պատկերիդ ոսկւոյ՝ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պազանեմք :

Յայնժամ Նաբուգոդոնոսոր լի եղև սրտախորթեամբ, եւ գոյն երեսաց նորս շրջեցաւ ի վերայ Սեդրաքայ Միսաքայ եւ Աբեղնագովի, եւ ասէ . ջլեռացէք զհնոցն եօթնպա-

տիկ զի մինչեւ ի վախճան այրեսցին: Եւ արք Հինդ, զօրաւորք զօրութեամբ, կապեացեն զՍեղրաք, Միսաք եւ զԱրեղնաքով արկանել 'ի Հնոց հրոյն բորբոքելոյ: Յայնժամ արքն այնոքիկ կապեցան պատմուճանօք եւ վարտեօք, արտախուրակօք եւ զանկապանօք իւրեանց եւ ընկեցան ի մէջ Հնոցի հրոյն բորբոքելոյ զի հրաման թագաւորին սաստկանայր եւ Հնոց բորբոքէր եօթնպատիկ առաւել յոյժ: Եւ երեքեան նոքա, Սեղրաք, Միսաք եւ Արեղնաքով, անկան ի մէջ Հնոցին կապեալք: Գնացին ի մէջ հրոյն, օրհնէին եւ գովէին զտէր Աստուած:

Եւ հրեշտակ Աստուծոյ էջ եկաց ընդ Ազարեանս ի Հնոցի անդ եւ թօթափեաց զրոց հրոյն ի Հնոցէ անտի, եւ արար ի մէջ Հնոցին իբրեւ զհողմ որ ցօղազին շնչիցէ, եւ ոչ մերձենայր ամենեւին հուրն ի նոսա, ոչ արտակեցուցանէր եւ ոչ նեղէր զնոսա: Յայնժամ երեքեան իբրեւ ի' միովէ բերանոյ օրհնէին եւ գովէին եւ փառաւոր առնէին զԱստուծ ի մէջ Հնոցին:

Եւ Նաբուգոդոնոսոր իբրեւ լուաւ զօրհնութիւնս նոցա, զարմացաւ, յարեաւ տազնապաւ եւ ասէ ցմեծամեծս իւր. ոչ արս երիս կապեալս արկաք ի մէջ հրոյն. եւ ասեն ցթագաւորն. այն, արդար ասես, արքայ. եւ ասէ թագաւորն, այլ ես տեսանեմ արս չորս արձակս եւ գնան ի մէջ հրոյն եւ ապականութիւն ինչ ոչ գոյ ի նոսա, տեսիլ չորրորդին նման է որդւոյ Աստուծոյ:

ԴԱՆԻԷԼ ԳԼ. Գ.

Իսրայել սիրէր զՅովսէփ առաւել քան զամենայն որդիս իւր. քանզի որդի ծերութեան էր նմա, եւ արար

նմա պատմուճան ծաղկեայ. իբրեւ տեսին եղբարքն նորա եթէ սիրէ զնա հայրն քան զամենայն որդիս իւր, ատեցին զնա. եւ ոչ կարէին խօսել ընդ նմա խաղաղութեամբ: Եւ ետես երազ Յովսէփի եւ պատմեաց եղբարց իւրոց, եւ յաւելին եւ եւս ատել զնա, եւ ասէ ցնոսա, լուարուք զերազն որ տեսի, թուէր եթէ որայ կապէաք ի դաշտի միում. կանգնեցաւ որայն իմ. եկաց ուղղորդ. եւ դարձան որսցքն ձեր եւ սլազին երկիր իմում որայոյն: Եւ ասէն ցնա եղբարքն իւր. միթէ թագաւորելով թագաւորեսցես ի վերայ մեր. կամ տիրելով տիրեսցես մեզ. եւ յաւելին եւս ատել զնա վասն երազոցն նորա եւ վասն բանիցն նորա: Եւ ետես միւս եւս երազ. եւ պատմեաց հօր իւրում եւ եղբարց իւրոց եւ ասէ. ահա տեսանէի միւս այլ երազ. որպէս թէ արեգակնդ եւ լուսին եւ մետասան աստղք երկիրպագանէին ինձ. սաստեաց նմա հայր իւր եւ ասէ. զի՞նչ է երազն զոր տեսեր. արդ զալով գսցցեմք ես եւ մայր քս եւ եղբարք քս եւ երկիր պագանիցեմք քեզ. եւ նախանձեցան ընդ նմա եղբարքն իւր: Բայց հայրն է մօ՛՛կ պահէր զբանսն:

Եւ զնացին եղբարք նորա արած ել զխաչինս հօր իւրեանց ի Սիւքէմ, եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ. ոչ ապաքէն եղբարք քս արած են զխաչինսն ի Սիւքէմ. եկ առաքեցից զքեզ սաւ նոսա. եւ ասէ ցնա Յովսէփ. առափիկ ե՛՛ս ես. եւ ասէ ցնա Իսրայէլ երթ տես թէ ողջ իցեն եղբարք քս եւ խաչինք եւ բեր ինձ զրոյց. եւ առաքեաց զնա ի ծործորոյն Գերբոնի. Յովսէփ եկն ի Սիւքէմ եւ եզիտ զնա այր մի մորտեալ ի դաշտին. եհարց ցնա այրն եւ ասէ. զի՞նչ խնդրես, եւ նա ասէ զեղբարսն

իմ ինդրեմ . պատմեա ինձ ելի՛ ուր արածքցեն . եւ ասէ ցնա այրն բարձին աստի զհօր խաղանցն եւ լուայ զի ասէին երթիցուք ի Դովթայիմ . եւ գնաց Յովսէփի գհետ եղբարց իւրոց եւ եգիտ զնոսա ի Դովթայիմ . տեսին զնա եղբարքն յառաջագոյն ի հեռատանէ մինչչեւ մօտ եկեալ էր առ նոսա , խորհուրդ վատ ի մէջ առին սպանանել զնա , եւ ասեան իւրաքանչիւր ցեղբայր իւր . ահա երազատեսն գայ , եկայք սպանցուք զսա եւ ընկեսցուք ի մի ի գբեաց աստի , եւ ասացուք եթէ գազան չար եկեր (կերաւ) զնա . եւ տեսցուք զլինչ լինիցին երազքն նորա : Իբրեւ լուաւ Ռուբէն կորզեաց զնա ի ձեռաց նոցա , եւ ասէ մի հարցուք զգա հոգի . եւ ասէ ցնոսա Ռուբէն . մի հեղցուք արիւն . այլ արկէք զգա ի գուր մի յանապատի աստ . եւ ձեռն մի արկանէք ի նա , զի թափիցէ զնա ի ձեռաց նոցա եւ հատուցանիցէ առ հայր իւր : Եւ եղեւ , իբրեւ եկն Յովսէփ առ եղբարսն իւր , մերկացին զպատմուճանն նորա ծաղկեաց ՚ի նմանէ . եւ առին ընկիցին զնա ի գուրն . եւ գուրն ունայն էր , եւ ջուր ոչ դայր ի նմա . եւ նստան ուտել զհացն : Ջաչս ի վեր բարձեալ տեսին , եւ ահա ճանապարհորդք Իսմայելացիք գային ի Գաղաաղէ եւ ուղտք նոցա լի էին խնիովք , ստալխամբ եւ ռետնիւ , եւ երթային իջուցանել յեգիպտոս : Եւ ասէ Յուդա ցեղբարս իւր զլինչ օգուտ է եթէ սպանանիցեմք զեղբայրն մեր , եւ թաղուցանիցեմք զարիւն նորա . եկայք , վաճառեսցուք զնա Իսմայելացուցն . եւ ձեռք մեր մի շաղախեցին ի նմա . զի եղբայր եւ մարմին մեր է , եւ լուան նմա եղբարքն իւր : Եւ անցանէին արք Մատիանացիք վաճառականք . եւ ձգեցին հանին զՅովսէփի ի

գբոյ անտի . եւ վաճառեցին զՅովսէփ Իսմայելացուցն քսան դահեկանի . եւ նոքա իջուցին զՅովսէփ յեգիպտոս :

Դարձաւ Ռուբէն ի գուրն եւ ոչ եգիտ զՅովսէփի ի գբի անդ . պատուեաց զհանդերձս իւր եւ դարձաւ առ եղբարսն եւ ասէ . պատանեակն չէ՛ անդ , եւ ես արդ յո՞ երթայց . եւ առեալ զպատմուճանն Յովսէփայ զենին ուլ այժեաց եւ թաթաւեցին զպատմուճանն յարեսնն . եւ առաքեցին զպատմուճանըն ծաղկեաց տանել առ հայր իւրեանց , եւ ասեն . զայդ գտաք . ծանիր եթէ որդւոյ ըր իցէ պատմուճանդ եթէ ոչ . եւ Իսրայել ծանեաւ զնա եւ ասէ . պատմուճանս որդւոյ իմոյ է . գազան չար եկեր զնա , գազան յափշտակեաց զՅովսէփի : Եւ պատառեաց զհանդերձս իւր , եւ քուրձ զգեցաւ ի վերայ միջոյ իւրոյ եւ սուգ ունէր ի վերայ որդւոյն աւուրս բազում :

ՅՆՆԳՈՑ. ԳԼ. ԼԵ.

Վախճանեցաւ յերկին եգիպտոսաց Յովսէփի եւ ամենայն եղբարք նորա եւ ամենայն ազգն այն , եւ որդիքն Իսրայելի աճեցին եւ յուռացան . բազմանային եւ զօրանային յոյժ , զի բազմացուցանէր զնոսա երկիրն :

Եկաց այլ թաղաւոր որ ոչ գիտէր զՅովսէփի . եւ ասէ յազգն իւր . ահա ազգ որդւոյն Իսրայելի մեծ է զորու թեամբ , եւ զօրանայ քան զմեզ . արդ եկայք , հնարեսցուք ինչ նոցա , գուցէ բազմանայցեն , եւ յորժամ գիւպեացի մեզ պատերազմ , յաւերուցուն եւ նոքա ի թշնամիսն , եւ մարտացեալ ընդ մեզ , ելանիցեն յերկրէ աստի :

Եւ կացոյց ի վերայ նոցա զործառաւարս , զի չարչարես-

ցեն զնոսա ի գործ եւ շինեցին Փարաւոնի քաղաքս ամուրս , գփեղոն եւ զԹամեսէ եւ զՍիվըն՝ որ է Արեգքաղաք : Եւ որչափ ճնշէին զնոսա , այնչափ առաւել բազմանային եւ զօրանային յոյժ . եւ դարչէցուցանէին Եգիպտացիք զօրդիսն Իսրայելի եւ յազթահարէին Եգիպտացիք զօրդիսն Իսրայելի բռնութեամբ , եւ կէղէին զկեանս նոցա ի գործ խիստ՝ կաւոյ եւ ազիւսարկի , եւ յամենայն գործ դաշտաց . ըստ ամենայն գործոց իւրեանց , որով ծառայեցուցանէին զնոսա բռնութեամբ :

Եւ խօսեցաւ արքայն Եգիպտացւոց ընդ ծնուցիչսն Երբայեցւոց , ըստ միումն որում անուն էր Մեփօսփոս եւ անուն երկրորդին Փուս . եւ ասէ . յորժամ ծնուցանիցէք զկանայս Եգիպտացիս , եւ իցեն մերձ ի ծնունդըս , թէ արու իցէ սպանլիք զնոսա , եւ թէ էգ՝ ապրեցուցանիլիք : Եւ երկեան ծնուցիչքն յԱստուծոյ եւ ոչ արարին՝ որպէս եւ հրաման ետ նոցա արքայն Եգիպտացւոց , եւ ապրեցուցանէին զարուսն . գոչեաց արքայն Եգիպտացւոց զծնուցիչսն եւ ասէ ցնոսա , զի՞ է զի արարէք զիրան զայնօսիկ եւ ապրեցուցէք զարուս : Եւ ասեն ծնուցիչքն ցփարաւոն . ոչ իբրեւ զկանայս Եգիպտացիս են Եգիպտացիքն՝ քանզի նախ ծնանին մինչեւ մտեալ առ նոսա մանկաբարձաց , եւ ծնանէին : Եւ բարի առնէր Աստուած մանկաբարձացն , եւ բազմանայր յոյժ ժողովուրդն եւ զօրանայր յոյժ : Յորմէ հետէ երկեան մանկաբարձքն յԱստուծոյ , արարին իւրեանց տունս , Հրաման ետ Փարաւոն ամենայն ժողովրդեան իւրում եւ ասէ . զամենայն արու , որ ծնանիցի Երբայեցւոց : Ի գետ ընկեսլիք , եւ զամենայն էգ ապրեցուցանիլիք :

Եւ էր անդ ոմն յազգէ Ղեւեայ . . . , Ե Զնա Զնա ամուրս եւ տեսանէին զնա կոյտառ , եւ թագուցին զնա ամիսս երես . եւ իբրեւ ոչ եւս կարէին թագուցանել , մայր նորա տապանակ պրտաւեայ եւ ճեփեաց զնա սծիւթով եւ եդ ի նմա զմանուկն եւ ընկէց զնա ի մի առ ափն զետոյն , եւ զիտէր քոյրն նորա ի տաստանէ տեսանել թէ զինչ անցքն անցանիցեն ընդ նա . իջեալ դուստրն Փարաւոնի լուանալ ի գետն , եւ նաժիշտք նորա չրջէին առ գետովն , Եւ տեսեալ զտապանակն ի խաղլ անդ . առաքեաց զնաժիշտ մի առնուլ զնա . երաց եւ ետես զմանուկն , եւ լայր մանուկն ի տապանակի անդ : Խանտալատեցաւ զնովաւ դուստրն Փարաւոնի եւ ասէ , ի մանկանց Երբայեցւոց է դա , եւ ասէ քոյրն նորա ցգուստրն Փարաւոնի , կամիս զի կոչեցից քեզ զայեակ մի յԵրբայեցւոց անախ . եւ սնուցանիցէ քեզ զմանուկդ : Ասէ դուստրն Փարաւոնի , երթ . եւ զնաց աղջիկն եւ կոչեաց զմայր մանկանն . եւ ասէ ցնա դուստրն Փարաւոնի . առ զմանուկդ , եւ ածինձ զդա , եւ ես տայ քեզ զվարձս քո . Եւ առ կինն զմանուկն , եւ սնոյց զնա . եւ իբրեւ հաստատեցաւ (զօրանալ , մեծնալ) մանուկն , ած զնա առ դուստրն Փարաւոնի , եւ եղեւ նմա յօրդեգիրս , եւ անուանեաց զանուն նորա Մովսէս : Ասէ , ի ջրոյ անտի հանի զդա :

Եւ եղեւ յետ աւուրց բազմաց իբրեւ եղեւ մեծ Մովսէս , եւ առ եղբարս իւր որդիսն Իսրայելի . նայեցեալ ի չարչարնս նոցա , ետես այր մի Եգիպտացի՝ զի հարկանէր զոմն Երբայեցի յեղբարց իւրոց յօրդուցն Իսրայելի : Հայեցեալ յայս կոյս յայն կոյս ոչ զոք տեսանէր . եհար զԵգիպտացին եւ ծածկեաց զնա ընդ ա-

ւազով : Եւ ելեալ յերկրորդում աւուր , տեսանէր եր-
 կուս արս Եբրայեցիս ընդ միմեանս մարտուցեալս , եւ
 ասէ ցայրն՝ որ զրկէր , ընդէ՞ր Հարկանեա զընկերդ . եւ
 նա ասէ , Ո՛ր կացոյց զքեզ , այր , իշխան եւ դատաւ
 ի վերայ մեր . եթէ սպանանել զիս կամիցես որպէս
 րէկ սպաներ զեգիպտացին : Զահի Հարաւ Մովսէս
 ասէ , Թէ այնպէս յայտնի եղեւ բանն : Եւ լուաւ Փա-
 րաւոնն զբանն եւ խնդրէր սպանանել զՄովսէս , եւ փա-
 խեաւ Մովսէս յերեսաց Փարաւոնի եւ բնակեաց յերկ-
 րին Մադիամու , եւ եկեալ յերկիրն Մադիամու նստաւ
 առ Զրհորի միում : Եւ քրմին Մադիանացոց էին զըս-
 տերք եօթն , որ արած էին զխաշինս Հօր իւրեանց , եւ
 եկեալ էին Հանել ջուր , մինչեւ լցին զաւազանսն ար-
 բուցանել խաշանց Հօր իւրեանց . եւ եկեալ այլ Հովիւք
 մերժեցին զնոսա ի բաց : Յարուցեալ Մովսէս թափեաց
 զնոսա եւ եհան նոցա ջուր եւ արբոյց զխաշինս նոցա :

ԵԼԻՑ ԳԼ. Ա. Բ.

Վ Ե Ր Զ



2531-2533

2013

« Ազգային գրադարան



NL0059653

« Ազգային գրադարան



NL0059654

« Ազգային գրադարան



NL0059655

